2067
2067
2069

Հեքիաթ ժ.

Մօնթե-Քրիստօ

Մասն Ա.

Կ - 9 -

84
Ե-46

Կ Պոլիս
1888

2011

ԺԻՒԼ ԼԷՐՄԻՆԱ

ՄՕՆԹԷ-ՔՐԻՍԹՕՅԻ ՈՐԴԻՆ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՂԷՔՍԱՆԴՐ ՏԻՒՄԱՅԻ

ԿՈՄՄ ՄՕՆԹԷ-ՔՐԻՍԹՕՅ

ՎԻՊԱՍԱՆՈՒԹԵԱՆ

ԹԱՐԳՄԱՆԻՉ
ՊԵՏՐՈՍ ԱՏՐՈՒՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏԱՓՈՐԵԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

معارف نظارت جلیله‌سنك رخصتنامه‌سیله طبع اولنمشدر

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ
—
1888

ՄՕՆԹԷ-ՔՐԻՍԹՕՓԻ ՈՐԴԻՆ

ՄՕՆԹԷ—ՔՐԻՍԹՕՓԷՆ ԱԻԵԼԻ ՀԱՐՈՒՍՏ

Ը.

Ուր Ֆուրու խեճրուբիւճներ կ'ըճէ

(Շարունակութիւն)

—Է՛, չարաճճի, վերջապէս միտքդ պիտի բացատրե՞ս. ես շատ խօսքը չեմ սիրեր։ Ուղղակի նպատակին ըսելու է. ամենէն կարճ և լաւագոյն ճամբային այս է։ Վաղը առաւօտ կը մեկնիս... Ո՞ր պիտի երթաս

—Ալճէրի... անապատը... սատանին դէրկը...

—Զօրաբաժնով քո՞վ պիտի երթաս։

—Ո՛չ... կերևւի թէ անսահմանն արձակուրդ մ'ունիմ...

—Բայց, անիծա՜ծ, խօսքերը բերնէդ խցահանով քաշելու է՛... Վերջապէս պիտի ըսե՞ս թէ ասոնք ինչ կը նշանակեն։

—Գիտէք որ հարիւրապետս մ'ունէի, զոր շատ կը սիրէի, Թօլիէթի հարիւրապետը, Տին. Մէրսէտէսի որդին... և թէ նա աներեւութացաւ, գողցուեցաւ, սպանուեցաւ... չենք գիտեր ինչ եղաւ...

—Այո՛. եւ քը՞։

—Աչդ չեմ գիտեր ուր տեղէն մէկը եկաւ . . . ո՛հ , սեւ մօրուքով պատկառելի մարդ մը , և աչքերը . . . ո՛հ , աչքերը՛ . . . ի՛նչ որ է : Մէկ խօսքով՝ վաղն առաւ ճամբայ պիտի ելլէ հարիւրապետս վինտուելու համար՝ նոյն իսկ եթէ դժոխքին խորն ըլլայ , և դիս ալ հետ կը տանի . . .

Եթէ Քուքու և մայր Քարաման իրենց խօսակցութեան ղբաղած չըլլային բոլորովին , պատուհանին տակ , հնդկարմաւենեաց տրցակի մը մէջէն զարմացման թեթեւ աղաղակ մը պիտի լսէին :

—Որո՞ւ համար կ՛ըսես . . . սեւ մօրուքովմարդն ո՞վ է :

—Ես ղինքը չեմ ճանչնար , բայց Մօնթէ-Քրիսթօյի կոմս կը կոչեն . . .

—Եւ ինքն է՛ որ Սահարա անապատը պիտի երթայ Ժօլիէթ հարիւրապետը վինտուելու . . .

—Այո՛ , ես ալ հետը պիտի երթամ : Ո՛հ , երթալուս չեմ ցաւիր , ո՛չ : Հարկ եղածը քաջասրտութիւն է , ես ալ քաջասիրտ եմ . . . Ուսոի առաւօտուն կանուխ , ժամը 6ին պիտի մեկնինք . . . Ուսոի որովհետեւ ձեզի հետ խօսակցութեան սկսեր էինք և ընդմիջուեր էր , խնդիրս վչնչց որ հոս գամ . . . և այն խօսակցութիւնը շարունակենք հանդարտօրէն : Պատմը կար : Բայց ես պատը փոյթ չեմ ըներ : Ինձի համար պատ մը ճամբու վրայի կոպճէ մը նման է : Վրայէն անցայ , և աւսոիկ եմ : Բայց քանի որ կը սրդոդիք . . . ահա՛ կ՛երթամ . Ձեա՛ք բարո՛վ , մայր Քարաման :

Եւ Քուքու դդակ ի ձեռին բարեւելով՝ դէպ ի պատուհանը կ՛երթար :

Մայր Քարաման գինքը կը դիտէր : Նա բարեսիրտ էր և այս աղնիւ տղան իւր սիրտը կը չարժէր : Դէը կանանց վրայ ամէն տեսն քիչ մը մայրական զգացում կը պտնուի : Երբեք որդի ունեցած չէր . իրեն այնպէս թուեցաւ թէ իւր որդին էր որ Ջնաս բարով կ՛ըսէր իրեն , որ վտանգաւոր ճամբորդութիւն մը պիտի ընէր և զոր թերեւս մէկ մ՛ալ չի պիտի տեսնէր :

—Պարոն Քուքո՛ւ , ըսաւ :

Քուքու քիթը անկած կանգ առաւ :

—Մի՞թէ ասկից երթալու չէ՞ , հարցուց : Ո՛հ , մի՛ վախնաք , անվարժ չեմ :

—Այդ ըսել չեմ ուզեր . պարո՛ն Քուքու , հոս եկէք . . . օ՛ն . . . մօտեցէ՛ք : Բայց քիչ մ՛առաջ աւելի համարձակ էիք :

Աչդ պահու Քուքու փոքր քայլերով կը յառաջանար նման այն դպրոցականին , որ կը վախնայ թէ ծեծ կ՛ուտէ :

—Ո՛հ , ձեզ վշտացնել չեմ ուզեր , չարունակեց Քարաման բայց ձեռքն անոր կարկառելով : Ջեմ ուզեր որ կարծէք թէ ձեզի դէմ բարկացած եմ : Ջեռքերնիդ տուէ՛ք :

Քուքու կարմրեցաւ :

—Ե՛ս . . . Թաթս ձեր Թաթին . . . ո՛չ , ձեր ձեռքի՛ն մէջ . . .

—Օ՛ն . . . կ՛ուզեմ ձեռքերնիդ սեղմել . . . իբր ընկերուհի . . . իբր բարեկամուհի . . . կեցի՛ք , ենթադրեցէք թէ ես ձեր մայրիկն եմ . . .

—Մայրի՛կ , գոչեց Քուքու : Ա՛հ . . . ի՞նչ կ՛ըսէք . . . եթէ խեղճ մայրս հոս ըլլար , պիտի ընէր ինչ որ ըրաւ վերջին անգամ գիս տեսնելուն . երկու ձեռքով գլուխս պիտի բռնէր . . . և երկու այտերէս պիտի համբուրէր

... Ա՛յ, այն համբոյրներուն չնորհիւն է որ գլուխս ուսերուս վրայ մնաց...

Եւ մայր Քարաման —որու աչաց մէջ փոքրիկ արցունք մը կար— զուարճին գլուխը բռնեց... և չէնք չնորհ.ք... երկու այտէն... համբուրեց։

—Անհնա՛ծ, գոչեց Քուքու։ Ես ալ լ՛ինչ աւանակութիւններ կ՛ըսէի ձեզ։ Ա՛յ՛։ մայր Քարաման, դուք անանման կին մ՛էք... և ինձ երջանկաբեր պիտի ըլլաք... Դեռ էք որ ո՛ւր երթալս կամ ամիս մը վերջը ո՛ւր գըտնուելս չեմ գիտեր... բայց կ՛երդնում թէ... եթէ պէտք ունենաք անանկ մարդու մը որ ձեզի համար ինքզինքն հարիւր հազար միլիոն կտոր ընել տայ, ես պատրաստ եմ։ Մնաք բարո՛վ, մայր Քարաման, և այն երկու խոշոր համբոյրներուն համար չնորհակալ եմ։

—Ի կրկին տեսութիւն, տղա՛յս, ըսաւ Քարաման, որու ձայնը կը դողդղար քիչ մը։ Եւ յաջողութիւն կը մաղթեմ։ Նայեցէ՛ք որ հարիւրապետը բերէք։

—Պիտի բերենք... քանի որ դուք կը վախցնէք։ Ի կրկին տեսութիւն։

Եւ զուարճը իւր Շնագայլի դիւրաշարժութեամբ պատուհանէն անցաւ, այժմին բո՛ւֆ մը հանելով պարտէզը ցատկեց, յետոյ պատին քով վազելով՝ մէկ վայրկենի մէջ անկից վեր մագլցեցաւ։

Զի հեծնելու պէս պատին վրայ նստելով՝ դարձեալ գոչեց.

—Ի կրկին տեսութիւն, մայր Քարաման։

Եւ անհետեւութացաւ։

—Խե՛ղճ տղայ, մրմնջեց բարի կինը, ճշմարիտ բարեկիցն մ՛է նա. գլուխը տաք և սիրտն անման... սիրտ պիտի կոտրի՝ եթէ մէկ մ՛ալ չի տեսնեմ զայն...

Ծանկարծ խօսքն ընդմիջեց։ Թեթեւ ձեռք մը ուսին դպեր էր։

—Դո՛ւք, միս Քլարի, գոչեց խնամածուհին՝ յանցանք գործած աղեն բռնուող աշակերտուհւոյ մը պէս։ Լսել է տեսա՞ք...

—Զուա՞վը, ըսաւ Քլարի ժպտելով։ Ա՛յ՛, այո՛։

—Բայց կը հաւատամ թէ... ինքը եկեր է... ես չէի գիտեր... պատուհանը... պատը...

—Կը կարծէք որ ձեզ կ՛ամբաստանե՞մ, մայր Ոսոկան։ Բայց թողունք զայդ... ըսել է... Պ. Քուքու Ալճէրի՞ կ՛երթայ...

—Ա՛յ՛, օրիորդ... ժօլիէթ Հարիւրապետը բընտրուելու... կամ...

Անունը չարտասանած՝ Քլարի անոր խօսքն ընդմիջեց.

—Եւ ըստ դիպաց պիտի երթա՛ն... առանց գիտնալու թէ հարիւրապետն ո՛ւր է...

—Ա՛յ՛, ըստ դիպաց... սոսկալի բան է այս. եթէ գիտնայիք թէ այն երկիրն ի՛նչ երկիր է... անապատը... խորշակը... աւազները, առանց հաշուելու մարդիկն, որք վայրի կենդանեաց կը նմանին և իրենց թշնամեաց գլուխը կը կտրեն...

—Ալճէրիի քաղաքէս մ՛ունի՞ք։

—Ա՛յ՛... աշխարհացոյցին մէջ... կեցի՛ք. թըղթատուեցէ՛ք։ Ա՛հաւասի՛կ...

Քլարի նստաւ, բաց աշխարհացոյցն առջին առաւ և վարդագոյն եղունգով մայրը կը պտըտցընէր լերանց ու գետերուն վրայ...

...—Բայց, Հարցուց, այս երկրին մէջ ի՞նչպէս կը ճամբորդեն...

—Կարաւանով... խաւիխներով, ուղտերով, որք ամիսը կը կրեն... շատ մեծ տանջանք մ'է, և շատերըն ալ այս ճամբորդութենէն չեն վերադառնար...

—Այս միջոցիս ո՞րքան ատակ ունիք, Հարցուց Փըլարի, որու գաղափարաց մէջ խառնակութիւն մը կը տեսնուէը։

Քարաման դրպանէն փոքրիկ կաղմուած տետրակ մը հանեց և նայելով՝ պատասխանեց.

—Հոս... երեք հարիւր սթերլին ոսկի ունինք, դրեթէ 7,500 ֆրանսական ֆրանք։

—Շատ քիչ է...

—Ի՞նչ պիտի ընէք... Ասկից զատ հարիւր հազար ֆրանքէ աւելի փոխանակագիր ունիք...

—Ժամը քանի՞ն է, Հարցուց Փլարի, որ մէկ նիւթէն անմիջապէս միւսին կը ցատկէր։

—Տասնի մօտ է։

—Այս ժամուս Մարսիլիոյ մէջ խանութները դեռ բաց են։

—Ո՛հ, անշո՛ւշտ, մինչեւ կէս գիշեր։

—Լա՛ւ։ Կը բարեհաճի՞ք ըսել որ մեր ձիերը թամբեն։

—Հէ՛, ձիե՞րը, այս ժամո՛ւս, գոչեց Քարաման, որ կը կարծէր թէ սխալ լսած էր։

—Այո՛. ձիերը։ Շուտ ըրէ՛ք. ես ալ անմիջապէս հագուիմ ու գամ։

—Ի՛նչպէս, օրիորդը կ'ուզէ... կը մտածէ...

—Սիրելի՛ մայրիկ, դեռ մտածածս ես ալ ազէկ մը

չեմ դիտեր... ժամէ մը... երբ Մարսիլիա երթանք... կ'ըսեմ։ Աղէկ միտքս եկաւ, երեք հարիւր ոսկին հետ առէ՛ք...

—Կը կարծէ՞ք որ այս իրիկուն երեք հարիւր ոսկի կարենաք ծախսել...

—Ո՞վ գիտէ... բայց կ'աղաչեմ, ժամանակ չի կորսընցնենք։ Քիչ մը վերջը կը տեսնուինք, մայր Քարաման, քիչ մը վերջը... Ա՛, փոխանակագիրներն ալ առէ՛ք...

Եւ Փլարի դուրս ելաւ այս խօսքն ըսելով, որ խոր զարմանաց մէջ կը թողուր զՔարաման։

Խնամածուհին վայրկեան մ'անշարժ մնաց։

Ի՞նչ կը նշանակէին այս բաները... ատա՛կ, փոխանակագի՛ր, և իրիկուան ժամը 11 ին Մարսիլիա երթա՛լ...

Այսու հանդերձ երթէ մտահաճութիւն մ'ալ ըլլար, Փլարի շատ քիչ անգամ մտահաճութիւններ ունենալուն՝ պէտք էր ներել։

Եւ տասը վայրկեան վերջը երկու կանայք ծառայի մ'ուղեկցութեամբ դէպ ի Փովկէսական քաղաքը (Մարսիլիա) կը սուրային։

Թ.

Մամուկի զառիվերը

Նախ ի՞նչ է զառիվեր մը։

Հարկ չկայ շատ հեռուն բնտռելու և արհեստով

ատուգաբաններուն դիմելու։

Զառիվեր (calade), վերելակութիւն (escalade), սանդուղ (escalier), ելնարան (échelle), ամէնքն ալ միմեանց նմանող բառեր են և միևնոյն արմատէ եկած ըլլալով՝ փոխոխութիւն ալ չեն կրած։ Ուրեմն Մեծ Օբէրայի սանդուղը Մամուկի Զառիվերին եղբայրն է։

Միայն թէ՝ թէեւ բառը նոյն ընտանիքէն է, սակայն ինքը միևնոյն պայմաններուն մէջ չէ։

Շատ կը տարակուսիմ որ Մամուկի Զառիվերն այսօր դոյութիւն չունի, բայց 1848 ին, այսինքն այն թուականին որ Մօնթէ-Քրիսթօ կը պատրաստուէր Ալճէբի երթալու և Քուքու իբր ճամբու պաշար հետը կը տանէր ոսոխականին այրուոյն մայրական երկու համբոյրներն, Մարսիլիոյ Մեծ փողոցին մէջ դանուած աառնդեթէ Ալդարութեան Պալատին եռին դառնայիը և անցնելով Վիլնէօվ-Պարժմնն հրապարակէն, որու վրայ Վերսահաստատութեան թուականի մէկ նախկին քաղաքապետը ներկայացնող պղնձէ մարդուկ մը կանդնած է, ճամբայ բռնայիը այն Մալթացւոց, Սուլացւոց, Սիկիլիացւոց, Իտալացւոց, Պրիթանիացւոց, Բրօվանսցոց, Անկլիացւոց, Շուետաց, Ռուսներուն, Տալմաթներուն մէջէն (դեռ լսադոյնները զանց կ'առնում), որը մուրթը կոխածին պէս այդ հրապարակը կը լեցուէին, եթէ վերջապէս ձախ կողմէ դառնայիը և բանտին փողոցն անցնէիը, այս վերջին փողոցին ղուդահեռական տեսակ մը աղտոտ, գձուձ, նեղ, սեւորակ ճամբայ կը դտնէիը —որու առջեւ ամենէն կարծրասիրտ բնապաշան իսկ պիտի վարանէը թերեւս, յոյժ ցամաք զառիվեր ուղի մը, որու աստիճաններուն սալաքարերը լրենց առաձնահատկութիւնն մէջ երերացող փոտած ակռաներու պէս կ'երերային, վերջապէս անանկ ուղի մը, որու ձեվրը փողոցէն իսկ պիտի խոչնէր բաղդատուելու և որ Մամուկի Զառիվեր մոռացածին անունը կը կրէր։

Եւ զարմանալին սա է որ, երբ հոն մտնէիր, այնպէս կը թուէր թէ ուրիշ որ և է անուն չէր կրնար յարմարիլ անոր։

Տուները, որք գինովներու նման կ'երերային և կարծես ամէն վայրկեան պատրաստ էին փողոցին մէկ կողմի տանիքէն միւսը գատաթ բաղխել և որոց մէջտեղէն երեւցած կտոր մը երկինքն օր ըստ օրէ կը նեղնար, իրարու կապուած էին սեւ ցանցօղատոր ահագին ուռկաններով, որոց մէջտեղէն հսկայական մամուկի մը երեւնան յոյժ բնական կը թուէր։

Սակայն ոչինչ այնքան անշնաս, լաւ եւս է ըսենք այնքան պատկառելի էր որքան այս ուռկանները, որք այլազան անուններով խոշոր ցանցեր են, ծովու աչխատաւորաց գործիքներ, որք յարատեւ կռուի մէջ են լաստաբեկիներուն (rascasse), կոպճաձկանց (galinette), քարաձկանց (saint-pierre), պատենաձկանց (bogue) և Միջերկրականի ուրիշ բնակչաց հետ։

Մինչդեռ՝ սոսկալի կերպիւ կը նմանէր սա սարդի ոստայնի մը։

Միայն թէ Զառիվերին սատանայական դրոշմն այս չէր։

Այս տուներն ո՛րքան դրաչն, նոյնքան ալ ներսէն տարօրինակ էին։

Նման հսկայի մը, որու գլուխն ողջ և ոտքերը խըլըրտացած են, Մամուկի Զառիվերին դարչելի չէնքե-

բուն վերի յարկերը կը բնակէին ձկնորսի ընտանիքները, որք աշխատութենէ յետոյ կուգային հանդարտօրէն իրենց բնակարանները կը մտնէին, և, ինչպէս որ ըսինք, տանիքներու անկիւններէն կառչած ուռկանները կը տարածէին։

Բայց դէտնայարկներ՛ը, առաջին յարկե՛ր՛ը։

Գինովութեան կամ կռիւ կը բերու բոլոր մեղութիւնները, բոլոր անբանութիւնները, բոլոր վայրենութիւնները իրարու վրայ դիզեցէք, և հազիւ կրնաք այս պիղծ տեղերու բարձրութեան հասնիլ։

Ժանտահոտ գինետուները, կորուսեալ աղջկանց ապաստանարանները. ամէն տուն իր ապականութիւնն ունէր։

Երբ մուրը կոխէր, փողոցին մէկ անկիւնը կախուած գաբշիլի կանթեղ մը իր դեղին ու աղոտ լոյսը կը ձգէր իւղոտ սալայատակին վրայ, ուր ամենէն լկտի շուայտասիրաց դեղեւոտ քայլերը կ՛սկսէին սահիլ։

Ա՛յն ժամանակները Մարսիլիոյ ոստիկանք որոշած էին —կէս գիշերը ըլլալուն պէս— իրենց պահականոցներուն մէջ ամրանալ և դուրս չելլել։

Որովհետեւ մարդ ամենէն առաջ պէտք է իր անձը մեղքնայ, այս մենաշնորհեալ քաղաքաց պահակք նախ և առաջ իրենց անձնական ապահովութեան հարկ եղած զգուշութիւնները ձեռք կ՛առնուն։ Բնակիչք ալ թո՛ղ իրենց դէմուն ճարը տեսնեն։ Իրենք անոնց օրինակ կը հանդիսանան՝ այնչափ։ Ոստիկանութիւնը խոհեմութեամբ դուրս չելլեր. միւսներն ալ իրեն պէս թո՛ղ ընեն։

Ա՛յնպէս որ գիշերը թաղերն և ամբողջ քաղաքը կը

պատկանէր այն կոպիտ և անբան ժողովրդեան, որու բոլոր ախորժակները հարիւրապատկուած էին սոսկալի հեղուկներու արբեցութեամբ, այն է կարմիր պըղպեղով խառն ալքոոլ։

Օղի աստուածն էր որ կ՛իշխէր։

Իր իշխանութիւնն անժխտելի է, ոչ ոք կը համարձակի ուրանալ զայս։ Սիրոյ աղջկունք միանդամայն անոր տաճարին քրմանոյշներն են. գինետունն ալ կրկին արբեցութեանց տեղին է։ Մամուկի Զաւիվերը լի է տեսակ մը վայրի որոտմամբ, որ կ՛արձակուի բոլոր այս որջերէն, յորս կարծես կատաղի գազաններ փակուած են, եւ մի՛ կարծէք թէ այս բանը երեւոյթ մ՛է միայն։

Շատ հեղ յանկարծ աղաղակներ կը լսուին։ Դոչիւններ կ՛իմացուին. երբեմն ալ հռնչիւններ։ Սկովտիացւոյ մը դանակը մէկուն միսը ճեղքած է կամ Պրիթանեացւոյ մը գաւազանը մէկուն գանգը փշրած է։ Շիշեր նետուելով ապակիներ կը կոտրին. կանայք կուլայ կը խառնուին, և նոցա սուր ճիչերը այս ղօղանջիւններու դաշնանուագաց կ՛աւելցնեն նաեւ վհկային աղաղակ մը։

Լսենք թէ այն իրիկուն լուսինը կը փայլէր։

Ա՛յո՛, ամէն տեղ, բացի Մամուկի Զաւիվերէն։

Սեղմ տանիքներու մէջէն լուսնի ճառագայթները չէին կրնար ներս թափանցել, վասն զի սեւ ցանցերը կը խափանէին զանոնք։ Եթէ այս զաւիվերը վարէն դիտէիր, սեւ բիծի մը կը նմանէր, որու վրայ արեան նման կարմիր ուրիշ բիծեր կ՛երեւէին տեղ տեղ։

Գինետանց կարմիր վարագոյրներուն ետին վառող

գարշելի կանթեղներն էին այս բիծերը ձեւացնողն։

Գրեթէ առաւօտեան ժամը երկուքն էր։ Կարծես վոգը հանգարտութիւն մը կը տիրէր։

Ա.յս դժոխքին մէջ դատապարտեալք անշուշտ յոգնելով՝ զինադադար մը ստորագրեր էին։

Կերկերեալ ձայներու խուլ քրթմնջիւնը միայն կը լսուէր այլ եւս, վասն զի գուցէ պօռալու ոյժ չունէին։

Ա.յս ժամուն Վիլնէօվ հրապարակին վրայ մարդ մ՚երեւաց և արձանին մօտենալով՝ պատուանդանին կռթնեցաւ, դրպանէն տետրակ մը հանեց և լուսնի սպիտակ լուսոյն բռնելով թղթատեց, յետոյ բնաւածը դոնելով՝ առանց վարանելու դէպ ի ձախակողմեան փողոցներն սկսաւ յառաջանալ։

Կարճ բաճկոնակ մը հագած էր. իւր առնադդեստը կարմիր գօտիով մը սեղմած էր մէջքին։ Մոմազօծ գըլխարկ մը ճակատը կը ծածկէր, և առաստ ու խարտեաշ մազերուն գանգուրները կ՚երեւէին։ Իւր ամբողջ մօրուքը դրեթէ չէկ կարմիր էր։

Ծայռնի էր որ Անկլիացի նաւաստի մ՚էր այս։

Միայն թէ՝ եթէ մէկը մօտէն դիտելու ըլլար, տեսնելով անոր համարձակ և հաստատամիտ կերպարանքը և նշմարելով որ քայլերը դիւռվարութենէ չէին դեղեւէր, աներկիւղ կերպիւ Մամուկի Ջառիվները մտնելուն պիտի զարմանար։

Սկսաւ վեր երթալ։ Ոտքերը չէին վարաներ։

Մինչեւ զառիվերին կէսն երթալ և դիւռեւտանց առջեւէն անցաւ առանց իսկ նայելու անոնց։

Բայց երբ հոն հասաւ՝ քայլերն յանկարծուց, և ներքնուղղոյն կողմը մտնելով՝ խնամօք դիտեց այն դիւռեւտները, որոց առջեւէն կ՚անցնէր։

Վերջապէս երբ գրեթէ կատարն հասաւ՝ գոհունակութեան շարժում մ՚ըրաւ։

Ծայռնի էր որ բնաւածը գտեր էր։

Ա.յն գիւռեւտան արտաքին դրան վրայ, որու առջեւ կանգ առեր էր, գէշ դարբնուած երկաթեայ բռնատեղ մը կար, որ գէշ աղեկ առիւծի թաթի մը ձեւն ունէր։

Խանութին նշանակն, որ գիշերն անտեսանելի էր —սա բառերը կը կրէր. ՁԼՐԱՆԻ ԳԻՒՌԵՒՏԱՆ։

Անկլիացին ձեռքն այն բռնատեղին վրայ դրաւ, դարձուց և հաստատամտութեամբ անմիջապէս դուռը բացաւ։

Սրահին մէջ ամենքը ցնցուեցան։ Ա.յս տեսակ մարդիկ անակնկալ բաները չեն սիրեր։

Թերեւս անոնցմէ չատերը գործին քնէութեանց մէջ դահիճը կ՚երազէին։

Ի՛նչ սրահ, ի՛նչ մարդիկ։

Խտացեալ ծուխով կապուտցած մթնոլորտ մը կը պատուէր այն անորոշ ձեւերուն չուրջն, որք սեղաններուն կամ նստարաններուն վրայ կռթնած, ծռած, տարածուած լսկած ձնացեր էին։ Ոմանք խմկ գետինն էին։ Թանձր ու մածուցիկ հեղուկներով ծեփուած սեղաններուն վրայ գաւաթներ կը ծփային։

Անբանացեալ դէմքով մարդ մը, որու աչերը գրեթէ ամբողջապէս ծածկուած էին մազերու պէս արտեւանունքներուն վրայ իկող յօնից ներքեւ, հաշուեսեղանին մէջ ընկողմանած և ահագին գլուխը թաւ ձեռքին կռթնցուցած էր։

Բիչ մը չակուելով՝ նորեկը դիտեց։

Ապա քրթմնջեց, թերեւս բարի եկաը ըսելու համար, և իր անփոյթ դիրքը ձեռք առաւ վերստին։

Անկլիացին դուռը դոցեց և պահ մ՚անշարժ կեցաւ, թերեւս ճամբայ դնելու համար, ինչ որ դիւրին չէր։

Պարապ տեղ մը տեսնելով՝ անվրդով դէպի հոն յառաջացաւ անանկ դիւրութեամբ մը որ, կարծես թէ ձիրանի ամենէն հին յաճախորդներէն մին էր։

Ձեռայ ձեռքին ափովը սեղանին վրայ զարնելով՝

—Մէկ քառորդ մանո՛ր, գոչեց։

Մանրոր օղիի և ճիճի գարշելի խառնուրդ մ՚էր։

Այս ձեռքի բաղխիւնն ալ ըմպողաց հանգստութիւնը վրդովեր էր, և անոնց մին ակառայներուն մէջէն սկըսաւ այնպէս մը մռլտալ, որ բնաւ հիւրասիրական երեւոյթ չունէր։

Գինեպանը խղճմտութեամբ պատրաստելով այս խառնուրդը, որ անագեայ լայն ամանով մը կը հրամցուի, բերաւ նաւաստւոյն առջեւ սեղանին վրայ դրաւ զայն, յետոյ մարդոց մեքենայի մը անտաշ շարժմամբ՝ ձեռքը երկնցուց ստակն առնելու համար։

Սովորութիւնն այս էր։ Անօգուտ էր վիրաւորուիլ։ Չի խմած պէտք էր վճարել։

Այսու հանդերձ մեր Անկլիացին այս սովորութենէն ո՛չ թէ միայն չառնուեցաւ, այլ եւս անանկ բան մը ըրաւ որ ձիրանի գինետան մէջ չ՚ըսենք միակ, այլ հազուագիւտ էր։ Գրպանէն քսակ մը հանեց, որ բաւական ծանր կ՚երեւէր, մէջէն ոսկի մ՚առաւ և յայտնոյ սեղանին վրայ ձգեց։

Ոսկին յստակ ձայն մը հանեց, որ անմիջական, դրեթէ ելեքտրական ազդեցութիւն մ՚ունեցաւ։

Ճանկարծ քանի գլուխներ կանդնեցան, ոմանց աչերը կրակի պէս սկսան փայլիլ։

Ձիրանի գինեպանը ոսկին մատերուն մէջ առաւ, այնքան խնամոք դիտեց որ, կը հասկցուէր թէ կը կասկածէ, և յետոյ ղէնակին զարնելով հնչեցուց։

Նորէն ցնցուեցան։ Կարմրցած արտեւանանց ներքեւ նոր կայծեր երեւցան։

Պէտք է ըսել նաեւ թէ գինեպանը կրկին սոխնակով գոցուած դարակը բացեր և արծաթ դրամներ խառներ էր, որոց բաղխիւնն առաջին եղանակին մէկ զանազանութեանը կը նմանէր, յետոյ ափ մը համրելով այն ստակէն՝ մատեցաւ նաւաստւոյն և բաց ձեռքն անոր երկնցուց։

— Keep il for you (ձեզի պահեցէք զայս), ըսաւ Անկլիացին։

Գինեպանը, որ ամէն լեզու կը հասկնար, ժպտեցաւ։

—Օ՛, ըսաւ միեւնոյն լեզուաւ։ Կ՚երեւի թէ գործերըն յաջող գացեր են, հէ՛, Անկլիացի՛։ բայց ստակդ պահէ, old fellow! (ծերո՛ւկս)։ Ես իրաւունքս միայն կ՚առնեմ։

Անկլիացին կռնակը սեղանին զարկաւ, իր կերպարանքին վրայ յանկարծական փոփոխութիւն մը եղեր էր։ Բիչ մ՚առաջ հանդարտ էր և իր կանոնաւոր դէմքին վրայ համարձակ պարկեշտութիւն մը կ՚երեւնար։

Բայց արմունկի միակ հարուածով մը կուլ տուեր էր իրեն բերուած զաղիը խառնուրդը։

Եւ յանկարծ աչացը մէջ բոց մ՚սկսեր էր փայլիլ և

բերանը տարօրինակ կերպիւ կծկուիլ։

—Ուրեմն, յարեց Ֆրանսերէն լեզուաւ, բայց Անգլիական դգալի հնչմամբ, ատակս կը մերժէ՞ք...

—Բա՛յց, բարեկա՛մս, դարձեալ կ'ըսեմ թէ... այս օրը վաղուան չնմանիր, այսօր ատակն ըստ դիպաց նետելով հաճոյք մը կ'զգաք... և վաղը պիտի լաք։

—Այդ ոչ ուրուք դիտնալիք բանն է, ըսաւ Անգլիացին ձայնը բարձրացնելով։ Եթէ ուզեմ առատաձեռնութիւն ընել, իրաւունք ունիմ, ո՞վ կը խառնուի... Այս ատակը պիտի առնե՞ս, այո՛ կամ ոչ։

—Ո՛չ, դիտես ա՛, Անգլիացի, ականջներս մի՛ տաքցըներ։ Ինքզինքդ հարուստ ցուցունել կ'ուզես, բայց ձիրանի դինեպանը քենէ հարուստ է...

—Ինչէ հարո՞ւստ։ կրո՛ղ։

Եւ Անգլիացին բուռն չարժմամբ մը սեղանին վրայ պարպեց այն կաշիէ քսակը, զոր ձեռքին մէջ կը սեղմէր։

Խել մը ոսկի դրամներ թափեցան տախտակին վրայ. մի քանին ալ դլորելով դացին ըմպողաց դատաթներուն զարնուելու։

Այս անգամ ամէնքը դլուխնին տնկեցին։

Այս աչերը որ քիչ մ'առաջ վառած էին —շէկ լոյս մ'արձակեցին։

Ձիրանի դինեպանը ուսերը ցնցեց։

—Դո՛ւ, ըսաւ անոր Անգլիերէն, դու ինքզինքդ ըսպաննել տալ կուզես։ Չդուշացի՛ր։

—Վերջը՛, յարեց նաւատան։ Ինձ նայեցէ՛ք, դիտէ՞ք ի՛նչ կ'ըսէ. կ'ըսէ թէ կրնայ ըլլալ որ ատակս դողնալու համար պիտ սպաննէք։

Պահ մը լռութիւն տիրեց, ցուրտ և սոսկալի լռութիւն մը։

Հոն գտնուող մարդիկ ամենքն ալ ծովային ատաղակաց այն դասերէն էին, որք ամբողջ կեանքերնուն մէջ ալեաց և մրրկաց ու դիպուածի մը եաեւէ կը վաղեն որ հարստանան։

Արդէն չատերն իրենց արիւնաներկ ձեռքերն ալեաց մէջ լուացեր և գրեթէ հարուստ վերադարձեր էին։ Վրայէն մի քանի օր անցեր էր։ Մարսիլիոյ շուայտութիւնը զանոնք բռներ, կողոպտեր և մէկդի նետեր էր ագքատ, ամէն բանէ զուրկ, բայց կատաղի... և նոքա այժմ ամէն ատենուընէ աւելի ամէն բան աչք առած էին վերստին ձեռք ձգելու համար այն մէկ աւուր հարստութիւնը, զոր մէկ օրը բաւական եղած էր կուլ տալու։

Եւ ահաւասիկ անծանօթ մը, օտարական մը ոսկի կը գլորէր այն թշուառականներուն առջեւ, որք իրենց անյագ կատաղութիւնը մոռնալու եկած էին հոն։

Եւ իրենց երեսին ամբաստանութիւն մը կը ժայթքէին... կ'ըսէին թէ գողնալու և սպաննելու կարող են։

Ձիրանի դինեպանը զայս լսելով՝ իւր հաշուեսեղանը քաշուեր և ձեռքը դարակին մէջ մխեր էր։ Բայց այս անգամ ատակ առնելու համար չէր։ Մարդը ինքզինքը պաշտպանելու վիճակի մէջ կ'ուզէր դանուիլ։

Գիտեր թէ դինուիներու մէջ այս տեսակ անցքերն ինչպէս կ'աւարտէին։

Զէր ուզեր որ իւր վրայ տիզմ ցատկէ։

Սակայն գլխով և արտասանութեամբ բրօվանսցի

երկայնհասակ սրինկայ մը եկաւ սեղանին վրայ ճիշդ Անկլիացւոյն քով նստաւ և ձեռքը ոսկինեղուն վրայ երկնցուց։

—Ըսել է, ըսաւ, ատոնք բոլոր քուկդ են, բարեկա՛մ։

—Ա՛յո՛, լմն... և պատուաւոր կերպիւ շահած եմ։

—Այդ քու դիտնալու բանդ է։ Բայց դիս մտիկ ըրէ՛. այս միջոցիս ատակի նեղութիւն ունիմ... անշուշտ չի պիտի մերժես բարեկամի մը օգնութեան հասնի.... ուստի ես իմ բաժինս կ՛առնեմ...

Մատերովը ափ մը ոսկի առաւ։

Բայց այս վայրկենին ցաւագին աղաղակ մ՛արձակեց։ Անկլիացւոյն ձեռքն իւր դաստակին վրայ ինկեր և այնպէս մը սեղմեր էր որ, նաւաստակին մատները բացուեցան։ Ստակները դետին դլորեցան։

Բրովանսցին երկու քայլ ետ դնաց։

—Հէ՛, ըսաւ ակռայները կրճտեցնելով, կ՛երեւի թէ չուզեր որ իւր կառքերուն դպչին. ուրեմն պէտք չէր այսպէս ցոյց տալ... Ձես ուզեր յօժարութեամբ վոխ տալ... վասն զի ես վոխ առնել ուզեցի... և օր մը պիտի վճարէի։

—Ո՛չ, ըսաւ Անկլիացին, դու դինով ես և կ՛արդիլեմ քեզ ատոնց դպչիլ...

—Տեսնե՛նք, դոչեց Բրովանսցին։

Եւ ձեռքը, զոր դրպանը մխեր էր, դուրս քաշեց ոսկեայ դանակով մը զինեալ։

Միանդամայն դաւառաբարբառով քանի մը բառ արտասանեց։

Տասերկուքի չափ մարդիկ ոտք ելեր և դանակ ի ձեռին կը յառաջանային դէպի Անկլիացին։

Իսկ սա ամենայն հանդարտութեամբ ստակները առնելը քաշեր և պատկառելի կոյտ մը ձեւացուցեր էր։

—Ըսել է, ըսաւ, կ՛ուզէք սպաննել զիս...

—Խօսք չ՛ուզեր... Ստակովդ եկար զմեզ նախատելու. անոր կէսը կ՛ուզենք... կ՛ուտա՞ս...

—Բրօվանսցի՛, դու տխմարին մէկն ես... կ՛ուզեմ ըսողը կրնամ ալ ըսելու է։

—Դու ինքզինքդ շատ պժով կը կարծես...

—Կ՛սպասեմ։

—Լա՛ւ ուրեմն, ընկերնե՛ր, թողէք զիս... Սա անիծեալ Անկլիացւոյն խերն անիծեմ... ու կողոպուտը բաժնենք...

—Ա՛յո՛, այո՛, դոչեցին մուանները... մենք հոս ենք...

—Ըսել է, ըսաւ Անկլիացին, պիտի մենամարտինք. թո՛ղ այնպէս ըլլայ... դանակով... բայց, Բրօվանսցի, ի՞նչ հարկ կայ ատանկ ահագին դանակով մը կռուելու... տե՛ս, ահա՛ ես ասով պիտի կռուիմ։

Եւ Անկլիացին մի քանի հարիւրերորդամեթր երկայնութեամբ բարակ և կնոջ դոհարեղէնի մը նման փայլուն դաշոյն մը հանեց մէջքէն։

Արհամարհանաց և սպառնալեաց ոսկեալի և ահագին ծիծաղ մը տեղի ունեցաւ։

Նաւաստեաց դաթալան դանակներու նման լայն դաշոյններն ու այս ծաղրելի զործիքը տեսնողը պիտի կարծէր թէ զանոնք բազդատելն իսկ յիմարութիւն էր։

—Անառակի հարուածները պիտի տաս ինձ, ըսաւ Բրօվանսցին հեգնելով։ Մինչ դիս ասեղնանկարի ոստայնադործի մը կարծեցիր...

—Դու դիս դրդռեցիր... հիմայ ալ իմ ըսածս մտիկ

ըրէ. եթէ դանակովդ կարենաս ինձ դպչիլ, ստակին ոչ թէ կէսն, այլ ամբողջը քուկդ է...

—Ուրեմն, ընկե՛րք, տեղ բացե՛ք, դուշեց Բրօվանսցին: Առքը զարնելով՝ սեղաններէն մին գետին տապալեց և պատին քով նետեց: Մեսներն ալ փութացին սեղաններն ու նստարանները ետ քշելու, և անոնց վրայ մագլցելով՝ կը խնդային, կ'ոռնային, սադայեներու ակումբ մը կը ձեւացնէին:

Մեսյն գինետանը հանդարտ և անշարժ կը կենար:

Խոհեմ մարդ մ'էր սա, որ ի վաղուց գիտէր թէ աղէկ բան չէ մատը ծառին ու կեղեւին մէջտեղ դնել:

Ամէնքը կանգներ էին: Բնաւ անտարբեր մը չկար:

Կը սխալինք: Մին միայն անշարժ կեցած էր և բնաւ չէր մտանակցեր իւր շուրջն եղածներուն:

Այս մարդուն միսիայն երկար և սեւ մազերը կ'ետեւնային, որոց մէջ տեղ տեղ գորշ թելերը կային: Գլուխն երկու բաց ձեռքերուն մէջ թաղուած էր:

Մարդը նաւաստիի հագուստներ հագած էր, բայց իւր հագուստները գէշ և պատառատուն էին:

Իւր առջեւ կը գտնուէր օղիի սրուակ մը, որուն եւրեք քառորդը պարապ էր:

Ոչ ոք կրնար ըսել թէ կը լսէր կամ կը տեսնէր:

Անտարբերութեան և յուսահատութեան արձան մ'էր գոդցես:

Անկլեսացւոյն պղպջաձի պէս փայլուն աչերը քանիցս իւր վրայ յառած էին: Ահա՛ այրուած: Սակայն հակայ Բրօվանսցին, որու կիսաբաց շապիկը թոյլ կուտար տեսնել իւր ջղուտ վիզն ու մազոտ էրանն, սրբուածքները բացած կեցեր էր՝ չրթունքն վայրագ ժըպտով մը լայնցած, դանակ ի ձեռին և պարզելու պատրաստ:

Այս մարդը —մին այն կարգընկերներէն, որք ամէն դասի մէջ կը գտնուին— քառասուն տարեկանէն աւելի էր: Կեանքն ո՛ր անցուցեր էր. իւր կրքերը, նախանձներն ու տեսլութիւնները ո՛ր ընդ քարշ ածեր էր: Այժմ որ ուղեղը գինովութեան մէջ էր, մէկ բան միայն կը տեսնէր, այն էր ոսկին: Եւ բնական կը թուէր իրեն սպանութիւն մը գործելով ձեռք ձգել զայն:

Եւ արդարեւ ամէն երեսպէ կ'ըսէր թէ պիտի յաջողէր:

Քանի որ գինքը չրջապատողներէն և ոչ մին ձայն կը հանէր գինքը կասեցնելու համար, ոչ ոք կ'իմացներ իրեն թէ օղին ոճիր մը գործել պիտի տար իրեն, նորա յաղթանակն ապահով կ'երեւնար:

Մեսներն —անբանի մը անբան մեղսակիցք— կը հաւանէին ձգել որ այս կռիւն առժամեայ կերպիւ պատուաւոր կռուոյ մը, մենամարտութեան մը երեւոյթն ունենայ: Բայց նոցա ցցուած խնձորակները կարմրցնող կամ դեղնեցնող գրգիռը, դանակնուն գամուած ձեռքերնուն կարկամիլն, ամէն ինչ կ'ապացուցանէր թէ ամենափոքր կայծ մը նոցա վայրագ գաղանութիւնն երեւան պիտի հանէր:

Այսու հանդերձ ակներեւ էր որ նոցա միջամտութեան հարկ չպիտի ըլլար:

Բրօվանսցին հուժկու, յաղթանդամ, մեծ կերտուածարձան մ'էր, և ոտքերուն ուռեցած դնդեղքը երկաթեայ կը թուէին:

Անկլխացին ալ թէեւ բարձրահասակ էր, բայց մարմինը չափազանց փափուկ էր, ողու պէս ձեռքեր և հինոջ նման ոտքեր ունէր։ Հապա դէնքը՝ ասեղ մ'է եւ սեր էին։ Կրնային զմեղի մը կոչել զայն։

Ապա եռանդուն Բրօվանսցին կռուելու կը պատրաստուէր։

Կատաղի մոադրութենէն ճակատը կը կնճռոտէր։ Ծնօտներուն վրայ որճացող կենդանեաց անդիտակից շարժումը կը տեսնուէր։

Մինչդեռ Անկլխացին ժպտոյն բայց հանդարտ դէմքով, խոր այլ անվրդով աչքերով կեցած էր այն վտանգին դէմ, որու ծանրութիւնը չէր հասկնար անշուշտ։

Բրօվանսցին թաթը գինքը պիտի ջախջախէր, սուրի մը պէս ամուր և կոր դանակը իր դաշոյնը պիտի կոտրէր և առանց դիծ մ'իսկ չեղելու՝ իր կուրծքը պիտի մտնէր։

—Պատրա՞ստ ես, ոռնաց Բրօվանսցին։

—Ա՛յո՛, աւազա՛կ, ըսաւ Անկլխացի նաւաստին։

Եւ միայն ծունգերը թեթեւակի ծռելով՝ ցատկելու համար ընկրկելու պատրաստ դիրքի մը մէջ կեցաւ։

Ընկրկի՛ր. բայց այս կանխատեսութիւնն անպատշաճ բան էր, որովհետեւ տեղ պատ կար։

Ա՛յն ատեն Բրօվանսցին երկար դանակին ի՛ ձեռին, բաղուկը խոնարհած, բայց դնդերաց ձգտման հնազանդելու պատրաստ, սկսաւ դառնալ այն նեղ միջոցին մէջ, որ իրը կռուոյ տեղի կը ծառայէր։

Աչքը հակառակորդին կուրծքին յառած՝ կարծես կանխաւ կ'որոշէր այն կէտն, ուր պիտի զարնէր։

Պահ մը սոսկալի և սպառնալի անշարժութիւն մը

տեղի ունեցաւ։

Յետոյ Բրօվանսցին յարձակեցաւ։ Մէկ ոստմամբ Անկլխացւոյն վրայ ցատկեր էր։

Երկուքն ալ բազկաց շարժման մը մէջ աներեւոյթ եղան։

Ճանկարծ Բրօվանսցին վայրագ ճիչ մ'արձակեց և բերանը լցցունքով լի ետ քաշուեցաւ։

Անկլխացւոյն դաշոյնը դանակին վրայէն սահելով՝ այրէն մինչեւ երախակալն ամբողջ դամուեր էր յարձակողին ձեռքին մէջ և ոսկորներուն մէջէն ծակ բանալով՝ միւս կողմէն դուրս ելեր էր։

—Անիծա՛ծ, ոռնաց Բրօվանսցին դիտելով ձեռքն, ուսկից արիւն ժայթքեր էր։ Ո՛հ, քեզ պիտի պատռեմ։

Անկլխացին միշտ միեւնոյն հանդարտութեամբ կ'ըսպասէր։

Վատ Բրօվանսցին բաղուկը վեր առաւ և անլուր արագութեամբ մը դանակը նիզակի մը նման նետեց իր հակառակորդին դէմքին բարձրութեամբ։

Իսկ սա ձախ ձեռքն երկնցուց և գէնքին դպչելով՝ դարձուց զայն։ Դանակին կոթը ձեռքին մէջն էր։ Երկու ձեռքն ալ գինեալ էր այժմ։

Բրօվանսցին կատղեցաւ։

Ետին դառնալով՝ հոն գտնուողներէն մէկուն դանակն առաւ և յախուռն ու արբշիռ՝ յարձակեցաւ Անկլխացւոյն վրայ։

Իսկ սա, այն վայրկենին որ միւսը կը յարձակէր, երկու դանակն ի բաց նետեց, ապա հակառակորդին դաստակներէն բռնեց և տղու մը նման հեռուն նետեց

զայն սեղաններուն և աթոռներուն մէջէն։

Գաւաթներն ու սրուակները հոդոն վրայ իյնալով՝ կոտրտելու ձայները հանեցին։

Բրօվանսցին, որ սեղանի մը զարնուելը և ճակատն արիւներ էր, կիսովին կանգնեցաւ և գոչեց։

—Սպաննեցէ՛ք զինքն, օ՛ն, վառե՛ր։

Եւ բոլորը այն թշուառականք, զորս արիւնը կը դըղդռէր, Անկլիացւոյն վրայ յարձակեցան։

Բայց նա մէկ ոտտմամբ սեղաններուն վրայէն ցատկեց, ուղղակի գնաց այն մարդուն որ մինչեւ այն ատեն, իւր գինովութեան մէջ ընկղմած, այս վատ կըռուոյն չէր մասնակցած, և ձեռքն անոր ուսին դնելով։

—Ելի՛ր, գոչեց, յանո՛ւն Մաննէլլիթայի։

Մարդը կարծես էլեկտրական ցնցումէ մ՚ղդաց։

Մէկ վայրկեանի մէջ ելաւ կայնեցաւ, երկու ձեռքը դրաւ խօսողին կուրծքին, ապա կատաղի բացագանչութիւնն մ՚արձակելով՝ մարդասպաններուն դէմ նետուեցաւ և առաջին պատահածին այնքան ոյժգին զարկաւ որ մարդն լնկաւ։

—Ա՛ւազակնե՛ր, կ՚աղաղակէր։ Ա՛յս մարդուն դըպչողը մեռած է...

Ա՛յս ձայնը դաժան ու վայրագ էր։ Եւ կարծես անմեկնելի ազդեցութիւն մը կ՚ընէր այն թշուառականներուն վրայ։

Ամենքն անվախներն ետ քաշուեցան՝ Ժապօլիոն անունը մրմնջելով։

—Դո՛ւրս, գոչեց ակռաները կրճտելով, դո՛ւրս, ապա թէ ոչ կենացս վրայ կ՚երդնում որ... ամենքդ ալ թիարան կը զրկեմ, ուսկից բնաւ ելլելու չէիք։

Անոր դէմ քսան հոգի էին։ Եւ սակայն ամենքն ալ սոսկալի կերպիւ դեղնեցան։

—Լա՛ւ, լա՛ւ, կ՚երթանք, ըսաւ մին։ Օ՛ն։ տղա՛ք, Ժապօլիոն այսպէս կ՚ուզէ։

Թշուառականները սրտերնուն քրթմնջելին։

Բայց խօսող մարդը, որու դէմքն աւերեալ, աչքերը խորացած, թաւ մազերը ալեխառն էին, ձեռքը հրամայական կերպիւ երկնցուցած՝ անոնց կը մօտենար։

—Հապա ոտա՛ղն, ըսաւ մին։

Անկլիացին, որ իւր պաշարիւնութիւնը չէր կորուսած, ըսաւ Ժապօլիոնի։

—Սա ոսկին ա՛ռ և դուրս նետէ. թո՛ղ ժողվեն...

Ժապօլիոն հնազանդեցաւ։ Ոսկիները ափովն առաւ և տիզմին մէջ նետեց։

Աւազակները վերայ հրմշտկելով դուրս գլորեցան և իւրաքանչիւրն ալ վրայ էնկան։ Մարմիններու ծածանում մը կը տեսնուէր, և անոնց մէջէն կը նչմարուէին ճերմկորակ բիծեր, որք ձեռքեր էին և ապերուն մէջ կը պրպտէին...

Դուռը գոցուեցաւ։

Եւ Ժապօլիոն նիզդը դնելով՝ վերադարձաւ այն մարդուն քով, որ գինքը կոչեր էր, անոր առջեւ ծնրադրեց և ըսաւ.

—Տէ՛ր, ի՞նչ կը հրամայէք։

Ժ.

Մանկիլիթա

Ո՞վ էր այս ծագօրօն։

Ամիսներ շատ ժամանակ առաջ, քանի որ ըսածնիս 1829ին էր, և այսօր 1848 տարին կը լրանայ, վաստակաբեկ և անօթութենէ մեռնելու վիճակի հասած մարդ մը, դլուխը կարմիր գոտակ մը դրած, ղոր ալիք մեռնող թշուառի մը գլխէն կորզեր ու իրեն նետեր էին, կը նշմարէր փոքրիկ առագաստանաւ մը, որ Իֆի դղեակին ու Բլանթիէի աշտարակին մէջտեղէն հովուն դէմ կը նաւէր։

Այս մարդը՝ թէեւ աննուաճելի այժով մ'ու յանդգնութեամբ մ'օժտեալ, յուսահատեր էր։ Իրեն այնպէս կ'երեւնար որ մահն իւր ճիրաններն առ ինքն կ'երկնցնէ։

Եւ սակայն այս մարդը —որ տասն և չորս տարի բանտի մը մէջ հիւծեր էր— այս մարդն ինքնիրեն կ'ըսէր թէ սոսկալի ոգեւարէն կ'աղատէր և կրնար —մի միայն իրեն ծանօթ գաղտնիքի մը ղօրութեամբն— աշխարհի տէր ըլլալ։

Ի՞նչ պէտք էր այս բանին համար։

Պէտք էր որ կատաղի ալիք մը դէպ ի ին իրեն. մանաւանդ պէտք էր որ իր դէմ եկեղեցի առաջին մարդը բարի և դէպ ի երա ըլլար։

Այդ այն առագաստանաւուն մէջ մարդիկ կային։ Ո՞յք էին։ Բարեկամ կամ թշնամի, մարդասէր էակներ կամ աւազակներ...

Եւ այժմապատ թշուառն, ամէն բան աչք առնելով, ծովը նետուեր էր, վասն զի աւելի կը վախնար մարդոցմէ քան թէ ի տարերաց։ Սակայն իւր ամենէն մեծ երկիւղն այն էր որ առագաստանաւն առանց զինքը տեսնելու չանցնի։

Լուղորդը կխոովին կանգնեցաւ իւր նեցուկն եղող առարկային վրայ և լուռ միջոցին մէջ երկար և սոսկալի աղաղակ մ'արձակեց. անձկութեան յուսահատ կոչումն, գերագոյն հառչիւնն էր այս։

Ցանկարծ առագաստանաւը ճամբայն փոխեց. այն մարդիկ լսե՞ր էին ու գթայի՞ն։ Թաջութիւնն գոչող ձայներ մինչեւ իրեն կը հասնէին.

Նաւաբեկեալը դերագոյն ճիգ մ'ըրաւ, բայց զգաց որ ծովը զինքը կը չրջապատէր ու կը ցնցէր... Ապա ոչինչ, թմրութիւն, սոսկալի բաղխիւն մը... թերեւս մահ։

Եւ երբ այս մարդն սթափեցաւ, առագաստանաւուն կամուրջին վրայ էր, կը լսէր որ բարեկամ ձայներ կը խրախուսէին զինքը։ Զայն կը խնամէին, է կեանս կը կոչէին, իւր զգայութիւնը կ'արթնցնէին, անցեալըն յիշատակն ու ապագային յոյսը կը զարթուցանէին յինքեան...

Այս մարդը, որ պիտի մեռնէր, Էտմոն Տանթէսն էր, Ֆարիաի գաղտնեաց ժառանգորդն, Իֆի դղեկին փախստականը, Մոնթէ-Քրիսթոյի կոմսն էր։

Զինքը փրկողը Լիվորնական առագաստանաւուն մէկ նաւաստին էր և ծագօրօ կը կոչուէր։

Նա՛ բռներ էր մահամերձին մազերէն. նա՛ պաչտպաներ էր զայն մի քանի ժամ յետոյ առագաստանա-

ւուն տիրոջ տարակուսանաց և պահանջմանց դէմ։ Նախ և առաջ ինքը ներկայացուցեր էր դժուսպատ Տանթէսի այն դիւնեդդուծն, որով ապրելու ղօրութիւն գտեր էր։

Ժապօքօ այն առեն առդպ նաւաստի մ'էր, օրէ վաստկածը կ'ուտէր և ընկերներուն պէս իւր յոյսն ալ այն աւարներուն վրայ էր, որոց համար կեանքերնին վտանգի կը դնէին։

Խոշոր, թուխ, ծխծաղկոտ և միանգամայն խոր աչեր ունէր։ Իւր սեւ մազերն ագռաւի թեւերու ցոլքն ունէին։ Սիրտը գթութեամբ լի էր և դէմն եղնող բոլոր տառապելոց կը կարեկցէր։

Կը յիշենք թէ Տանթէս ի՛նչ խորամանկութիւն մտածեց, երբ Մօնթէ-Քրիսթոյի ժայռին վրայ առանձին ձնալ ուզելով՝ սոսկալի անկում մը կեղծեց։

Ջինքն ամենէն առաջ ո՞վ վերուցեր էր. Ժապօքօ։

Եւ Էմմօն խնդալով ըսեր էր իրեն։

—Ո՞վ գիտէ. թերեւս օր մը նաւու նաւապետ ըլլաս. ո՞չ ապաքէն քու հայրենակիցդ Պօնապարթի կայսր եղաւ։

Ժապօքօ ալ ժպտեր էր։ Նաւապետ ըլլալ. երազ մ'էր այս, և այնքան բարձր երազ մը որ տակաւին աչքերը մինչեւ հոն չէր բարձրացուցած։

Եւ առանց այս դուշակութեան հաւատալու, չարունակեր էր Տանթէսի նկատմամբ անանկ համակիր սէր մը տածել որ վտանգի եղբայրակցութեամբ կ'աւելնար։

Երբ Տանթէս ուժ աւուր համար Մօնթէ-Քրիսթոյի կղզւոյն վրայ ձգուելով՝ առագաստանաւուն սպիտակ առագաստներուն հորիզոնին վրայ անհետացած ըլլալը տեսաւ, մրմնջեց.

—Զարմանալի է որ ասանկ մարդոց վրայ բարեկամութեան ապացոյցներ և անձնուիրութեան օրինակներ տեսնուին։

Եւ Ժապօքօյի անունը յիշողութեանը մէջ նշանակեր էր։ Սա այնպիսի տուման մ'էր, որու և ոչ մի տողը կ'աւրուէր։ Անոր մէջ պարտքեր ու պահանջքներ կային։

Ժապօքօ նշանակուած էր Մօնթէ-Քրիսթոյի կոմսին պահանջատեառց ցանկին վրայ —որ այն առեն չոյժ կարճ էր։

Եւ երկար տարիներ վերջը Մօնթէ-Քրիսթօ այս անունը դտեր էր։

Ուղղակի Ժապօքօյի վաղեր ու ըսեր էր.

—Կը յիշե՞ս որ առենով նաւաստի մը —որու կեանքը վրկեր էիր— գուշակեց թէ նաւապետ պիտի ըլլաս։

Ժապօքօ կարմրեցաւ։ Անշուշտ մոռցած չէր։

—Լա՛ւ ուրեմն, յարեց կոմսը, ես այն նաւաստին ճանչցայ։ Եւ ինձ յանձնարարեց որ ձեզ ունեցած պարտքը վճարեմ...

—Ձեմ հաւկնար...

—Նաւու մը նաւապետ, ծովու վրայ Աստուծմէ հետքը միակ տէր ըլլալ կ'երազես։

Ժապօքօ, որ Իտալացի էր, գլուխը ծռելով՝ երեսը խաչակնքեր էր։

—Ես այդ երազը իրացնելու եկայ։

—Դո՛ւք։ Ա՛հ, վրայս մի՛ խնդաք, մանաւանդ այս միջոցիս...

—Ձեմ խնդար, Ժապօքօ՛, նայէ՛... սա գլօսանաւը կը տեսնե՞ս։

—Այո՛ւշտ. իւր պատճանը իմ երկրիս դեռերուն

վրայ վազող չերեփագինեբու մարմնոյն պէս նուրբ է...

—Լա՛ւ, այն պզօսանաւն իմն է, քեզ անոր նաւապետ կ'անուանեմ...

Եւ Ժապօքօ քիչ մնաց ուրախութենէն պիտի խենթեւնար։ Եւ երկար ամիսներ Մօնթէ-Քրիսթոյի կոմսին պզօսանաւն ամէն ծովերու վրայ իւր յանդուգն թեւերը պարզեր էր, սակայն Ժապօքօ երբեմն մոռախոհ էր։

Եղաւ օր մը որ կոմսը —իւր վշտակրեալ սիրտն ամէն գթութեան դէմ զինելով— Բարիզ եկաւ՝ ոճրագործներն իւր անողոք արդարութեամբն հարուածելու համար։

Ժապօքօի ճամբայ, լաւ եւս է ըսենք առժամնակեայ աղատութիւն տրուեցաւ։

—Տէ՛ր, հարցուց Մօնթէ-Քրիսթոյի, պիտ կը ճամբէք։ Ինձմէ գանգատ մ'ունի՞ք։

—Ո՛չ, Ժապօքօ· բայց կարելի է որ երկար ատեն չի նաւարկեմ։

—Ամէն պարագայի մէջ, տէ՛ր, դիտէք որ երբ ինձ պէտք ունենաք՝ մէկ նշան մ'ընելնուդ պատրաստ եմ վազելու։

—Ո՞վ դիտէ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ ժպտելով։

—Ի՞նչ ըսել կուզէք, տէ՛ր, կը կարծէ՞ք ուրեմն որ Ժապօքօ խօսքը չպահէ։

Ո՞վ դիտէ, կրկնեց կոմսը դարձեալ։

Ծեռայ թղթապանակը բանալով։

—Զիս մոխիկ ըրէ՛, Ժապօքօ։ Դու գաղտնիք մ'ունիս...

—Ե՛ս։

—Ի՛նչ պէտք է ասել... նախ կը կարմրիս, և յետոյ՝ տակաւին գիս չի ճանչցար։ Ձի՞ս գիտեր որ ինձ համար բաւ է աչերս քու աչացդ վրայ յառել... ինչպէս այս պահուս... հոգւոյդ խորը կարդալու համար...

Ժապօքօ գլուխը ծռեց· բրդէ գոտակը մատերուն մէջ կը գալարէր։

—Եւ հիմայ կ'ուզե՞ս որ ըսեմ քեզ թէ այդ ամրափակ կարծած սրտիդ խորը խոշոր տառերով գրուած ի՞նչ կը կարդամ...

—Տէ՛ր·

—Անուն մը կը կարդամ...

Ժապօքօ այնքան յուժդին սարսռաց որ չի ինալու համար պարտաւորեցաւ կռթնիլ։

—Կնոջ մ'անունը կը կարդամ։

—Տէ՛ր, տէ՛ր։ Ո՛հ, կը պաղատիմ...։ Այն անունը մի՛ ըսէք։ Մեծ ցաւ պիտի պատճառէք ինձ...

Մօնթէ-Քրիսթօ ձանր կերպարանք մ'առաւ։

—Վարպետ Ժապօքօ՛, անգամ մ'ալ կ'ըսեմ ձեզ, լաւ մտածեցէք։ Ինձ վստահողին նկատմամբ ներողամիտ և վեհանձն եմ։ Ձիս խաբել ուզողին համար անողոք եմ։ Եթէ կ'ուզէք կը լռեմ։ Բայց այս օրէն ակնթարթ մը առաջ պիտի ըլլանք... Գացէ՛ք, ալ գիս չպիտի տեսնէք։

Մօնթէ-Քրիսթօ իւր շուրջն եղողներուն վրայ այնքան տարօրինակ իշխանութիւն մ'ունէր որ յաւիտենական բաժանման սպառնալիքէ աւելի ոտկայ կը թըւէր իրենց։

Ժապօքօ ծունգի վրայ ինկաւ։

—Խօսեցէ՛ք, տէ՛ր, ըսաւ, եթէ մեռնիմ իսկ՝ ձեզ մոխիկ պիտի ընեմ...

Մոնթէ-Քրիսթօ վերստին սկսաւ ժպտիլ, և ձեռքը նաւաստիին սեւ մազերուն վրայ դնելով՝

—Տղա՛յ, ըսաւ անոր այն ծանր ու լեցուն ձայնիւ, որ մարդուս սիրտը կը լեցնէր, դուն կը սիրես և կ'ուզես որ ոչ ոք սիրոյդ վրայ խօսի քեզ, ասոր պատճառն ալ այն է որ առ յաւէտ բաժնուած ես քու ընտրած կնոջմէդ...

—Ո՛հ, աէ՛ր, ըսել է ամէն բան դիտէք...

—Եթէ սխալիմ՝ խնդց տուր..., Քաթալաններու դիւղին մէջ ձկնորաններու, քաջ և չարքաշ մարդոց ընտանիք մը կայ, որք հօրէ յորդի ծովին արհամարհելով, ծոցուռկան, թիւնոսի համար թիւնացանց և Թրաձկան համար բալխատարա գործածելով, մեծ հարստութիւն մը դիզած են...։ Ութ զաւակ ունին, եօթն մանչ որք այսօր առոյգ մարդիկ եղած են և ծովու պատերազմ ներու մէջ ոչ յուժիքէ կը վախնան... և աղջիկ մը... չնորհալի և փափուկ... սեւ ու կրակոտ աչքերով, դանդուր մազերով, զորս հոգին իւր մանկական ճակտին վրայ կը սիւէ...։ Ժագօքօ, անունը տա՞մ։

—Մանէլիթա, մրմնջեց Ժագօքօ։

—Դուն այն նորատի աղջիկը կը սիրես... չատոնց ի վեր ամբողջ յոյսդ, ապագայի բոլոր իղձերդ ինձ կեդրոնացուցած ես... և օր մը յանդգնութեամբ գացիր Մաննէլիթայի հայրը գտար...

—Եւ դուն կշտամբե՞ց, վռնտե՞ց, դոչեց Ժագօքօ բառնները սեղմելով։

—Կը սխալիս։ Միայն ըսաւ թէ՝ Մաննէլիթա քունդ չկրնար ըլլալ, վասն զի ազգատ ես...

—Այդպէս պատասխանելը դուն նախատե՞լ չէ։ Հաբուստ չըլլալը ոճի՞ր մ'է։

—Բայց Մաննէլիթայի հայրն ուրիշ բան չըսա՞ւ։

—Այո՛, միտքս կը ձգէք... ըսաւ ինձ թէ. Տղա՛յս, այն օրը որ մէն մի ձեռքիդ մէջ երկու հազար սկուտով ներկայանաս, Մաննէլիթա քունդ է։

—Աւելի աղէկ չէ՞ր դուն ճամբել՝ առանց այս հեգնութեամբ նախատելու...։ Մէն մի ձեռքիս մէջ երկու հազար սկո՛ւտ...

Եւ Ժագօքօ մեքենաբար կը նայէր իւր լայն ձեռքերուն, որ բաց ու դատարկ էին։

Մոնթէ-Քրիսթօ ուշադրութեամբ կը դիտէր զայն։

Կը տեսնէր որ նորա պատուաւոր և անկեղծ դէմքն անձկութեան մէջ էր։

Եւ թէ և իւր որոշումը տուած էր, սակայն տակաւին կը վարանէր։

Աչքն աստեն կը մտածէր զմէրսէդէս, զոր լինքն ալ սիրած էր, մէրսէդէս որ զինքը մոռցեր ու մատներ էր, և երեն հաւատարմութիւն խոստանալէ յետոյ՝ լինքըզինքն ուրիշի մը տուեր էր։

Աջդ լինքն, էտմոն Տանթէս, Ժագօքօյի անիրանալի խղճը կատարելով, բարի դո՞րծ մը ըրած պիտի ըլլար։

Բայց Ժագօքօ սաստիկ կը սիրէր և Տանթէս սիրոյ ցաւոց ի՛նչ ըլլալը գիտէր։

—Ա՛ռ սա, ըսաւ Ժագօքօյի՝ տետրակին վրայ մի քանի բառ գրելով և ըրցուցած թուղթը անոր տալով։

Ժագօքօ աչքը դրուած տողերուն վրայ դարձուց։

Ապա գլուխը վեր առաւ և զարմանօք Մոնթէ-Քրիսթոյի երեսը նայեցաւ։

—Այս ի՛նչ է, աէ՛ր։

—Կարդալ չե՞ս գիտեր։

—Գիտեմ... Ձեր աստղագրութիւնն քան հազար ֆրանքի փոխանակագիր մ'է այս...

—Որո՞ւ վրայ քաշուած է...

—Հռովմի Թօմբաբն և Ֆրէնչ տան վրայ...

—Կը կարծե՞ս որ ներկայացուցած առենդ վճարուի։

—Ո՛հ, տէ՛ր... Ձեր աստղագրութիւնը ոսկիէ աւելի կ'արժէ...

Լա՛ւ ուրեմն. սեղանաւորի մը գնա՛ և այս դումարըն ա՛ռ...

Ժագօբօ տակաւին չէր հասկնար։ Կը կարծէր որ Լուբ սէրոյն վերաբերեալ լօսակցութիւնն աւարտեր էր։ Եւ այժմ յանձնարարութիւն մը կ'ընէին իրեն։

—Ա՛յս աստակը ո՞ւր պիտի յանձնեմ... պարոն կոմսի՞ն...

—Զայն ինձ չպիտի յանձնես։

—Հապա ո՛րու։

—Ոչ ումեք։

—Սակայն այդ աստակը չեմ կրնար պահել։

—Ինչո՞ւ համար։

—Ինչ կ'ուզէք որ ընեմ զայն։

—Մէն մի ձնձղիդ մէջ երեք հազար սկուտով կ'երթաս Մաննէլլիթայի հայրը կը գտնես և կ'ըսես իրեն։ Խոստումնիդ յիշեցէ՛ք։

Ժագօբօ այնքան այժմէին այլայլեցաւ որ, գեղնած, անշարժ ու բերանաբաց մնաց։

—Չի լսեցի՞ր ըսածս. հարցուց Մօնթէ-Քրիսթօ։

—Լսեցի...բայց կարծեմ թէ... չի հասկցայ...

—Օ՛ն, երեսուն տարեկան լակո՛տ, որ տասնեւհինգ տարեկանի չափ խելք չունիս։ Չհասկցար թէ աշխար-

հի վրայ անանկ հունտեր կան, որք վաղ կամ անադան իրենց հունձքն ու պտուղը կուտան... Ժագօբօ՛, անցեալդ մէջ բարի և վեհանձն գործ մը կայ... այդ գործն ամուլ հողի վրայ չինկաւ. այսօր այն ցանուած հունտն հասկ եղաւ... ա՛լ մի՛ տարակուսիր, այս քսան հազար ֆրանքը քուկդ է... դու չահեցար զայն։

—Շահեցայ, ե՛ս։ Ո՛հ, գիտէք որ այդպէս չէ։ Ձրօսանաւուն վրայ տուած աշխատութեանս փոխարէնն առատօրէն ստացայ...

—Աշխատութեանդ փոխարէնն, այդ կարելի է...։ Բայց Ժագօբօ՛, գիտցիր որ, թէեւ կան աշխատութիւններ, որոնք իրենց մեծութեան համեմատեալ գումարով մը կրնան վարձատրուիլ, բայց կան բաներ ալ որոնք երբեք ըստ արժանւոյն կարելի չէ փոխարինել...։ Ատոնք են անձնուիրութիւնը, ուղղութիւնը, քաջասրտութիւնը։ Ժագօբօ՛, այս քսան հազար ֆրանքը տալէս վերջը տակաւին պարտական կը մնամ քեզ...

—Քսան հազար ֆրա՛նք, կ'ըսէր ձրօսանաւուն նաւապետը թեւերը կախած, չրթունքը կիսաբաց։

—Է՛հ, այդ գումարն ի՞նչ է որ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ ուսերը ցնցելով։ Ատոր հարիւրապատիկը կրնայի տալ քեզ։ Բայց ի՛նչ օգուտ ունի... Ատով քու թշուառութեանդ պատճառ պիտի ըլլամ։ Իշձ մը —պատուաւոր մարդու իշձ մ'ունիս։ Քու միակ փափաքդ է սիրած կնոջդ օգնութեամբն ու սիրովն խրախուսեալ՝ քաջ աշխատաւորի կեանք մ'անցնել...։ Ասկից աւելի բանի մը կը փափաքի՞ս...

—Ո՛չ, ո՛չ։ Ո՛հ Մանէլլիթա՛։

—Լա՛ւ, Մաննէլլիթան քեզ տուի։ Երջանիկ եղի՛ր...

Ա.ղնիւ տղուն սրտի զեղումն այնքան արտայայտիչ էր որ, Մօնթէ-Քրիսթօ պարտաւորեցաւ վերջ տալ այս բանին։

—Կ'ընդունի՞ս, այո՛, կամ ո՛չ։

Ժագօբօ ի պատասխանի անոր ձեռքերը կը համբուրէր։

—Լա՛ւ ուրեմն. դիս մտիկ ըրէ՛, այս ստակին փոխարէն մէկ բան միայն կը պահանջեմ քենէ...

—Ըսէ՛ք, ըսէ՛ք...

—Գիտեմ որ երբ քանի մ'ամսէն հոս վերադառնամ, յարեց կոմսը· որու ճակատը յանկարծ մթագներ էր, պիտի մերժես ինձ հետ ճամբայ ելնել...

—Մերժե՜լ։ Ո՛հ, այդպէս մի՛ խօսիք։ Կեանքս ձեռքը չէ՞։

—Ա.ակից վերջը քու կեանքդ Մաննէլիթայինն է, բաւական մի՛ ժխտեր... մանաւանդ թէ մի՛ երդնուր, վասն զի երդումդ չպիտի պահես։ Նոյն ինքն Պետրոս երեք անգամ ուրացաւ զՅիսուս... և Պետրոս սիրահար չէր...։ Վեց ամսէն, տարիէ մը, Մաննէլիթայէն բաժնուելու գաղափարն իսկ անանկ սոսկալի տանջանք մը պիտի ըլլայ քեզ համար որ այսօր յաւիտենական բաժանման մը ցաւն յոյժ թեթեւ է անոր բաղդատմամբ...։ Ես մարդիկը կը ճանչնամ, քեզ ալ կը ճանչնամ...

Ժագօբօ կարմրեցաւ և չէր պատասխաներ։

Խղճին խօրէն կ'զդար որ կոմսին բաւածը ճշմարիտ էր։

—Ուրեմն այս բանը չեմ պահանջեր քենէ...

—Կ'ապաւեմ, բաւ Ժագօբօ։

—Երդուի՛ր ինձ որ Ժագօբօ՛, ո՛ր օր, ո՛ր ժամուն

որ զքեզ կոչեմ յանուն Մաննէլիթայի, ինձ հնազանդելու պատրաստ ըլլաս...

Ժագօբօ ձեռքը դէպ ի հորիզոն երկնցուց։

—Ցէ՛ր, կ'երդնում։

—Խօսքիդ կը հաւատամ։ Հիմայ գնա՛ և երջանիկ եղի՛ր։

Ժագօբօ ուրախութենէն խենթեցած, հազիւ հաւատալով այն դէպքին իրականութեանն, զոր հրաշք մը կը կոչէր, բամբասանքներուն գիւղը վազեց, ուր Մաննէլիթա ժպտով մը բարեւեց զայն։

Եւ որովհետեւ հայրը կը բարկանար և կ'սպառնար վռնտել այս յանդուգն երիտասարդը, որ սիրելէ չէր յափրանար, Ժագօբօ ոսկւով լեցուն երկու ձեռքը ցոյց տուաւ անոր։

Ծանը դուռը բացուեցաւ իր դիմաց։ Եօթն եղբարք ուրախութեամբ ընդունեցին զինքը։

Եւ հազիւ ամիս մը վերջը Քամթալաններու փոքրիկ եկեղեցւոյն մէջ քահանայ մը քաջ նաւաստին և չնորհալի Մաննէլիթան կ'օրհնէր։

Աւուրք ուրախութեան։ Աւուրք երջանկութեան։ Մարդ կը կարծէ թէ նոքա բնաւ չպիտի լմննան։

Ձիրար կը սիրեն։ Օրն հարիւր անգամ կը կրկնեն զայս իրարու· Ժպտով մը կը քնանան, համբոյրով մը կ'արթննան։

Ցեսոյ առաւօտ մը...

Մաննէլիթա չքնաղ էր և չքնաղ ըլլալը գիտէր. պչրող և վառվռուն էր։

Ժագօբօ նոր և սքանչելի մակոյկ մը դներ և իւր սիրեցեալոյն անուամբը մկրտեր էր. և իւր ընկերաց օդ-

նուիրեամբ ուռկանը ծովը կը նետէր։

Ամէն ինչ յաջող կ'երթար։ Հարուստ էր։ Եւ ամէն անգամ որ ծովեզր կը վերադառնար՝ ուռկաններըը պատռելու չափ լեցուն, կը տեսներ զՄաննէլիթա որ տօնի օրուան մը պէս զարդարուած՝ իրեն կ'սպասէր։

Ժապօքօ երբեմն կ'երթար իւր ընկերաց հետ զուարթօրէն խմելու և երկրին երգերն երգելու։

Ինչո՞ւ ապագային վախնար։ Ո՛չ ապագէն արեգակն ամէն առաւօտ առջի օրուընէ աւելի փայլուն կը ծագէր։ ո՛չ ապագէն Մաննէլիթա ամէն օր աւելի գեղանի էր։

Օր մը Մօնթէ-Քրիսթօ Մարսիլիա եկաւ և կոչեց զԺապօքօ, որ վազեց։

—Կ'ուզե՞ս հետս մեկնիլ, հարցուց անոր։

Նաւաստին կարմրեցաւ։ չէր համարձակիր մերժել։

Բայց կոմսն հասկցաւ։ ո՛չ ապագէն այս բանը դուշակած էր։ Ժապօքօ երջանիկ էր, իւր ուզածն ալ այս չէ՞ր։ Ուստի խնդրեց միմիայն Ժապօքօէն որ Մաքսիմիլիէնի ու Վալանթինի տանի այն նաւահանգիստն, որուն հրաժեշտ կուտար անոնց։

Յետոյ Հայտէի հետ Աղկիոց գրօսանաւը մտաւ, և սպիտակ առագաստներն հորիզոնին վրայ անհետացան հեռուն։

Ժապօքօ պահ մը տեսակ մ'ակամայ խղճի խայթերը զգաց և մտախոհ տուն վերադարձաւ։

Ի՞նչու համար այն օրէն սկսեալ իրեն այնպէս թուեցաւ որ Մաննէլիթա փոխուած էր իրեն նկատմամբ։ Բայց յաստի ճշմարիտ էր այս։ Ո՛չ ապագէն աչերը միշտ այնքան փայլուն, մազերը նոյնքան սեւ, չրթունքը

նոյնքան կարմիր էին։ Ո՛չ ապագէն առաջուան պէս չընորհալի կերպիւ ճակատն ու այտերն ամուսնոյն կը ներկայացնէր որ համբուրէ։

Ժապօքօ չէր կրնար պատասխանել։ Եւ սակայն իրեն այնպէս կը թուէր որ սրտէն բացուեր էր։ կը տխրէր և երբեմն, երբ հորիզոնը կը դիտէր, արտասանութենէն տակ կարծես արցունք մը կը դլորէր։

Ժամանակն անցաւ։

Ժապօքօ ճշմարտութիւնն յանկարծ ի՞նչպէս իմացաւ։ Ո՞վ դիտէ երբեք շէյ ստուգութիւն մը ո՛րքան դիպուածներէ կը բաղկանայ, թէ հեղեղը քանի՞ կաթիլ ջրով կ'ուռի։

Հոս բառ մը կը լսես, հոն նայուածք մը կը նշմարես, ոչինչ և ամէն բան, չունչ մը, հառաչ մը։ արցունք մը... և օր մը կը հասկնաս որ աշխարհի վրայ այլ եւս երջանկութիւն չկայ քեզ համար... կը հասկընաս։ հաւատալ կ'ըլլաս որ այս կինն, որու տուած էիր ամբողջ կեանքդ, նա զոր ընկերը ընտրած էիր, նա որու համար ուրախութեամբ պիտի մեռնէիր, վերջապէս Մաննէլիթա այլ եւս զքեզ չսիրեր, զքեզ կը խաբէ, ուրիշ մը կը սիրէ։

Ա՛յն ուրիշն ո՞վ է։

Նա ալ մատնիչ մը և անամօթ մ'է, վասն զի նա ալ ամէն ժամու Քարեկամն, ընկերն է, վասն զի նա այն մարդն է, որ ձեռքը ձեռքիդ մէջ դրած է և զոր եղբայր կոչած ես։ Անունն ի՞նչ է։ ի՞նչ փոյթ։ Նա մէկ անուն ունի միայն։ Ծուդաշ։

Ո՛հ, երբ Ժապօքօ այս սոսկալի ստուգութիւնն իմացաւ, երբ հասկցաւ, երբ գիտցաւ թէ Մաննէլիթա,

իւր պաշտեցեալ Մաննէլիթեան երդուեցներն ոտնակոխ ըրեր և հարսանեաց գօղը պատուեր էր, երբ իրիկուն մը որ Մաննէլիթա գինքը չէր տեսներ, ինքը տեսաւ որ նա չրթներն այն անսահմին չրթանց կը ներկայացներ և կը ժպտէր անոր ինչպէս որ ժպտած էր իրեն, ամուսնո՛յն, ժապօքօ իւր երակաց մէջ մահուան ցուրան զգաց։

Եւ ա՛յնքան կատղեցաւ որ հանդարտ մնաց։

Տապար ի ձեռին անոնց վրայ չի յարձակեցաւ։

Ո՛չ, այս յիմարական կատաղութիւնը չունեցաւ։ Զլացաւ։ Միայն միտքը դրաւ որ սոսկալի կերպիւ վրէժ լուծէ։

Պաշարիւնութեամբ ինքզինքն հարցափորձեր էր։ Ծանցանք մը գործե՞ր էր, տուած խօսքը դժե՞ր էր, Մաննէլիթայի մէկ մտահաճութեան դիմադրե՞ր էր, նորա կանացի փափկութեան դպչելու բան մը ըրե՞ր էր··· Ո՛չ, միշտ ներողամիտ, միշտ սիրալառ եղեր էր։

Ա՛յն կինը հրէշ մ՛էր։ Եւ գինքն ամէն բանէ աւելի կատղեցնողը սա էր որ, իրեն հետ ամէն առնուընէ աւելի անուշ, աւելի չնորհօք, աւելի սիրով կը վարուէր։

Ծանդգնութեամբ կուգար թեւերը կը բանար անոր և գինքն առաջուան պէս ամենասիրելի՛դ իմ կը կոչէր։

Ա՜հ, եթէ անկեղծօրէն և համարձակ գոչէր իրեն.

—Կ՛ատե՛մ զքեզ։

Թերեւս գլուխը ծռեր, թերեւս իրը անիծապարտ խոյս տար։

Բայց ո՛չ, Մաննէլիթա, կեղծաւո՛ր, վա՜տ, դորո-

վանաց գո՛ղ Մաննէլիթա ապականեալ համբոյրներ կ՛ընծայէր իրեն։ Ամօ՛թ և նչաւակութի՛ւն։

Ժապօքօ սոսկալի որոշում մ՛ըրաւ։

Մաննելիթա Մկրտչականը ճեղքող ամենէն վայելուչ առագաստաւորաց մին էր։

Երբ եաեւի կողմէն դիտէր զՄաննելիթա մեծ կայմին ձողաւոր և թակաղաղաւոր առագաստը։ չոգեկայմին ձողաւոր առագաստն և յառաջակայմին երկու եռանկիւն առագաստները պարզած, կը նմանէր այն ագրիւններուն, որք ծառոց մէջէն կ՛արձկեն իրենց թուխ մարմինն, որու վրայ երկար և թափանցիկ թեւերն առագաստներու նման կը բարձրանան։

Ժապօքօ Մաննելիթա առագաստաւորը Մաննէլիթա կնոջ չափ կը սիրեր։

Նաւուն նուրբ և վայելուչ կողերուն կը հիանար։ Ինչպէս կը հիանար Մաննէլիթայի նուրբ իրանին վրայ։ Եւ երբ զայն իւր բազկաց մէջ կը սեղմէր, իրեն այնպէս կը թուէր թէ անտեսանելի առագաստներ, որ թեւեր էին, գինքը դէպ յանդունութիւն կը տանէին։

Ուզեց երկու Մաննէլիթան միեւնոյն վրէժխնդրութեամբ հարուածել։

Դիտա՞ծ էք որ երբ սիրող էակ մը տեսլու սկսի, ուրիշէ մ՛աւելի կատաղօրէն կ՛ատէ։ Կ՛ուզէ փչրել ինչ որ հեռուէն կամ մօտէն անցեալ ուրախութիւնները կը յիշեցնէ իրեն։

Ա՛յսպէս էր ժապօքօ ալ։

Թշուառը տակաւին վրէժը լուծելու կը վարանէր և տաքօրինակ յիմարութիւններ կուգային իւր վրայ։

Ինչպէսէն ժապաւէն մը կը գողնար։ ապա ծովեզրի մէկ

ծալքին մէջ պահուըտելով՝ դանակը կը հանէր. ժապաւէնը կը ճեղքէր կը պատռէր, կը հերձնուր և սեղմեալ ակռաներուն մէջէն կը մրմնջէր։

—Իրեն է, ինչ որ անոր դպած է պէտք է ոչնչանայ։

Ա.յս անտեղի եղծմանց պատճառը չէր հասկնար խոստովանիլ նոյն իսկ ինքզինքին։

Գոնէ այս պատռածը սիրահարին համբոյրներէն չպիտի աղարտէր։

Նախա՜նձ, սոսկալի՜ բան։ Սիրե՛լ և գիտնալ որ պաշտած էակդ վրայդ կը խնդայ, երբ դու հոն չես և ուրիշի մը վզէն կախուած՝ քու անունդ հեգնութեամբ կը կրկնէ...։ Ա.յն կնոջ դեղեցկութիւններն յիշե՛լ և մոռանա՛լ թէ ուրիշ մը զանոնք կը դպուէ և կը հիանայ անոնց վրայ։

Ժապօթօ առաու մը կնոջն քաւ։

—Օդը դեղեցիկ է։ Ա.յսօր լաւ ձուկ կ'որսացուի։ Կ'ուզե՞ս հետս ծով գալ...

Կինը կը վարանէր։ Անշուշտ ժամադիր եղած էր միւսին, Բաօլօի, այս էր անունը։

Ժապօթօ այս վարանման պատճառն հասկցաւ։ Իրեն այնպէս երեւցաւ որ երկաթեայ ճիրաններ կուրծքը կը յօշոտէին։ Փոյթ չէ՛. ժպտեցաւ, վասն զի կ'ուզէր ժըպտիլ, վասն զի որոշումն ըրած էր։

—Ո՛հ, առանձին չենք երթար, յարեց անկեղծ դիմօք և պայծառ ժպտով։

Ինքն ալ առելութենէն ու ցաւէն վատ ու մտանիչ կ'ըլլար։

Եւ ակռաներուն կրճտիւնը չի լսուելու համար բարձրը ձայնիւ յարեց։

—Բաօլօ ալ հետերնիս պիտի ըլլայ։

Ա.յս մարդուն կրած սոսկալի ցաւերը չի հասկնալու համար հարկ է որ մարդ երբեք պարտեալ սիրոյ անձկութիւնները քաշած չ'ըլլայ, պէտք է որ երբեք կնոջ մը երեսը նայած չ'ըլլայ ըսելով թէ՝ ո՛րքան կը սիրէի զինքն և ուրիշ ձայն մը պատասխանած չ'ըլլայ երեն թէ՝ այժմ նա ուրիշ մը կը սիրե։ —պէտք է որ երբեք զգացած չ'ըլլայ այն ներքին ճնշումն, որ սրտին կոզերուդէմ սեղմուելուն կը նմանի, նման այն թռչնոյն որ կը չանայ զինքը խեղդող վանդակներուն մէջէն անցնիլ, վերջապես պէտք է երբեք սիրած չ'ըլլալ։

Եւ սակայն ի՞նչ չէր տար ներելու համար։

Վերջին վայրկենին վարանեցաւ։

Երթ Մաննէլլիթա բառ մը միայն ըսէր։ Ժապօթօ չէր ուզեր որ նա իւր ոտքն իյնայ, ո՛հ, ո՛չ։ Բայց զայրոյթ մը, անանկ աւա՛չ մը, որ ամբողջ կեանք մը կը գնէ։

Նա Մօնթէ-Քրիսթօյի աշակերտն էր։ Տեսած էր որ աերը ձեռք կարկառեր էր յանցաւորին։ Բաց յաստակ ո՛րքան կը սիրէր։

Գիտէ՞ք ի՛նչ տեսաւ։

Բաօլօ եկեր էր հասկնալու պատրուակաւ թէ այն օրն ի՛նչ պիտի ընէին։

Ժապօթօ, ըստ երեւութին անտարբեր, դնաց դէպի այն խորշն ուր կապուած էր Մաննէլլիթա և խնամքով քննեց նաւը։

Ճեռով յամրաքայլ տուն վերադարձաւ։

Չէր աճապարեր։ Իւր կամքէն հզօր ընդդիմութիւն մը զինքը կ'արգելուր։ Կ'ըսէր ինքնիրեն թէ այս երկու

էակները, —կինն ու բարեկամը,— դիտնալով որ ինք քանի՛մը քայլ միայն հեռուն է —կինքը պիտի յարդէին— ո՛չ, պիտի վախնային։ Եւ կուզէր ժամանակ թողուլ նոցա կեղծաւորութեան։

Ծանր ծանր եկաւ։ Երբ տանն առջեւ հասաւ, ծռեցաւ և պահուըտեցաւ։

Ապա պատին մէկ ճեղքէն ներս նայեցաւ։

Եւ տեսաւ... Մաննէլիթան Բաօլոյի թեւերուն մէջ։

Ան տունն ժժդոյն և մարմարի պէս հանդարտ ու դալուկ՝ դուռը բացաւ։

Գալը լսեր էին։ Մաննէլիթա կանգնած կեցած էր ու կը ժպտէր։ Բաօլօ պատուհանին քովն էր։

—Է՛, ըսաւ ժապօքօ, երթա՞նք։

—Պատրաստ եմ։

—Հապա գո՞ւ, Բաօլօ, ուռկանը պատրաստեցի՞ր։

Բաօլօ, որ յոյր, լայն ուսերով և անբան դէմքով երիտասարդ մ՚էր և Եէյքսբիրի ըսածին պէս չըթմանցը ներսիդիէն կը խնդար, արագութեամբ պատասխանեց։

—Գերանն ամուր է, երկաթեայ կարթերը սեղմրնեին են։ Յատակի չուանը հին ցանցերով գոցուած է։ Ամէն բան լաւ է։

—Օ՛ն ուրեմն, մեկնի՛նք,..

Ժապօքօ առջեւէն քալեց։ Ետին խակ չէր դառնար, դիտնալով որ Մաննէլիթայի և Բաօլոյի ձեռքերը միացած էին։

Իւր գրեթէ մեքենայական հաստատուն քայլովին կը քալէր, առանց անցեալը փոյթ ընելու։

Ծովին իւր առջեւ կը տարածուէր և աչքերն անոր

մէջ ընկղմելով՝ նայուածքը կը կորսուէր անոր անհունութեան մէջ, որ իւր ցաւէն նուաղ խոր կը թուէր իրեն։

Մարդ երբ տառապի և ծովը դիտէ, ցաւը կը թեթեւնայ դոգցես։

Առաջաստանատն հասան։ Յառաջակողմը կարմիր տառերով անուն մը գրուած էր. «Մաննէլիթա»։

Ժապօքօ կարդաց զայն։ Իրեն այնպէս թուեցաւ թէ այս տառերն հրեղէն էին։

Կատաղութեան շարժում մ՚ըրաւ։ Յանկարծ ետին դարձաւ։ Ա՛հ, եթէ այս միջոցին ձեռք ձեռքի տեսնէր զանոնք՝ կ՚ըսպաննէր։

Բայց նոքա վարպետութեամբ զատուեր էին։ Ո՛վ դիտէ թէ բառերու կռիւ մը —սիրահարական կռիւ մը— զանոնք պահ մ՚իրարմէ չէր հեռացուցած։

Ուստի ժապօքօ իւր պաշարիւնութիւնը ձեռք առաւ։

Առաջաստանաը խորշի մը մէջ կապուած էր, որուվրայ կը բարձրանար ցից ապառաժ մը։ Անկից նաւ մխտնելը դիւրին չէր։ Սխալ քայլ մը կրնար մահաբեր ըլլալ։

Ժապօքօ ձեռքը տուաւ Մաննէլիթայի որ, թեթեւ և դէմքը սիրով վառվռուն, նաւուն կամուրջը ցատկեց։

Ա՛հ, ո՛րքան գեղանի էր։ Թերեւս իւր աչքերը երբեք այնքան փայլուն չէին եղած... երբեք իւր չըթներն այնքան չէին նմանած այն փայլուն բուստերուն, զորս Սիկիլիացի ձկնորսք ծովուն խորերէն կը քաշեն։

Հապա ձե՛ռքը։ Ժապօքօ երբ անոր դպաւ, ամբողջ մարմնոյն վրայ ցնցում մ՚ղաց։

Բաօլօ ամենէն վերջը մնաւ սիրահարի, տիրոջ ան-

վուխթուխեամբ.

Ժապօքօ աչերը կիսովին փակեց։

Ցետոյ քակեց այն չղթային, որ նաւը բռնած էր. ակնթռի հարուածով մը նաւակը ծովեզրէն հեռու քշեց և լայն առագաստ մը պարզեց հովուն։

Եւ Մաճկիլիթա առագաստաւորն ալեաց վրայ սահեցաւ։

Հովը ցամաքէն կուգար և նաւն յառաջ կը մղէր։

Մաննէլլիթա ծիծաղկոտ էր։ Մազերն հովուն շունչէն կը քակուէին և օդին մէջ կը թռչտէին։

Բաօլօ, սիրուած ըլլալուն հպարտանալով, իւր կարծրը ու ոյժով դնդերները ցոյց կուտար արեւուն մէջ։

Ժապօքօ յառնին կեցած՝ հորիզոնը կը դիտէր. Աչքը ղինքը չէր խաբեր։ Դիտեր որ այս հանդարտութիւնը խափուսիկ էր և մրրիկը մօտ էր։

Բայց Բաօլօ և Մաննէլլիթա ամենեւին չէին մտածեր զայս։

Կը հիանային լուսաշող արեւուն, փայլուն ալեաց և կինեռիէ աւելի պչրող ծովուն հազար դեղեցկութեանց վրայ։

Նաւակն, բոլոր առագաստները բացած, այնքան շուտ կը փախչէր որ, ծովեզրը տարտամ կիսաստուերի մը մէջ կ'անհետեւութեանար։ Օդը ծանր ու հեղձուձիկ եղեր էր։ Տաք դալարշնիներ կը վազէին ջրոց վրայէն և տեսակ մը չոգիով կը շրջապատէին զմարդ։

Ցանկարծ հեռուէն խուլ որոտում մը լսուեցաւ։

Մաննէլլիթա սարսռաց, և իւր դեղեցիկ ու մեծ աչերը յերկինս բարձրացնելով՝

—Ժապօքօ, դոչեց, մրրիկը տես։

Ժապօքօ, որ այս պահուս ուրկանը կը նետէր։ Աբհամարհանօք ուսերը ցնցեց։

—Բան մը չէ, ըսաւ։ Շուտով պիտի անցնի...

Ժապօքօ փոկէացւոց հինօրեայ քաղքին (Մարսելիոյ) լաւագոյն նաւորդաց մին էր։

Ո՛չ ջուրէն կը վախնար ո՛չ հովէն, և ամէն ոք գիտեր թէ ոչ ոք կարող էր երեն պէս մաքառիլ մրրկայոյզ հովուն դէմ։ Անդրան հանդարտ էր որ Մաննէլլիթա լռեց։

Միայն թէ Բաօլօի նայեցաւ. սիրահարն ալ չէր կըրնար ամուսինէն պակաս քաջութիւն ցոյց տալ։

Ապահովիչ կերպիւ մը ժպտեցաւ։

Եւ սակայն սեւ վարագոյր մը անհետաստալի արագութեամբ հորիզոնը բարձրացեր և պարզուած առուէ մը պէս՝ երկինքց վրայ տարածուեր էր։

Կայծակի որոտումներն եւս քան զեւս արագ ու ըսպառնալի կը յաջորդէին միմեանց։

Ժապօքօ կարծես բան մը չէր տեսներ, բան մը չէր լսեր։ Անդրան կ'երդէր այն երգը, զոր առենով Մաննէլլիթայի պատուհաններուն տակ կ'երթար երգել, երբ նա զինքը մտիկ կ'ընէր թամարենեաց տրցակի մը ետին պահուըտած։

Իւր ձայնն յստակ էր և բնաւ չէր դողդողար։

Ցանկարծ դեղնորակ և դալուկ լոյս մը ցոլացաւ։

Անդերը պատռեր էին և նոցա բոցավառ ալիքը կ'ելեւէջէին։

Եւ այն առեն մրրկին ու ծովուն կատաղի և վայրագ կռիւն սկսաւ։

Մաննէլլեթա անձկութեան աղաղակ մ՚արձակեց և ծունդի վրայ ինկաւ։

Իսկ ծագօքօ բաց դլխով և մազերը կատաղի հովուն տուած, թեւերը ծալած անշարժ կեցեր էր։

Բաօլօ կը վախնար չէ թէ ինքզինքին համար, վասն զի քալ նաւաստի մ՚էր, այլ Մաննէլլեթայի համար...

Մէկ մ՚ալ ծագօքօյի այս անշարժութիւնն ի՞նչ կը նշանակէր։ Ի՞նչ ըսել է որ նաւաստի մը ծովուն չդիմադրէ։ Եւ սակայն, ծովուն վրայ, երկնից և ջուրին մէջտեղ, դաստակեսական անանկ յարդանք մը կայ որ, Բաօլօ չէր համարձակեր տակաւին ծագօքօյի հետ խօսիլ և հրաման խնդրել...

Թերեւս Մաննէլլեթայի ամուսնոյն տարօրինակ կերպիւ յառեալ աչքերը անմեկնելի սոսկում մը կ՚պղպէին իրեն։

Սակայն հովիւ առագաստները մի առ մի կը պատռէր ու կը տանէր։

Նախ թմակաղապի առագաստը գնաց, յետոյ միջնաձողի առագաստը։

Հովու յորձանք մը բարձրացաւ ու առաջնորդի պաշտօն կատարող ցցուած գերանը տարաւ։

—Վարպե՛տ, գոչեց Բաօլօ, կորսուած ենք։

—Ծագօքօ՛, աղաղակեց Մաննէլլեթա որ խաչ կը հաներ և աղօթքներ կը մրմնջէր, վրկէ՛ զմեզ, վրկէ՛ զմեզ։

Ծագօքօ լռիկ խնդաց։

Յետոյ ծռեցաւ և սոսկալի տապար մ՚առած կանգնեցաւ։

Առագաստանաւուն ամենէն ամուր կողմերը կը կռնչէին։ Ջուրերը կը ցնցէին զայն խաղալիկի մը պէս։

զոր չան ձագ մը բերնին մէջ կը խաղցնէ։ Ալիք վեր կը ցատկէին և որպէս մը վրայ յարձակող գազանի մը նման կ՚ոռնային։ Ծովային ակիններ կարծես կը խածնէին իր դիւրաբեկ պատեանն։ Մի քանի վայրկեան եւս, և ահա նաւը պիտի խորտակուէր, պիտի խորասուզուէր։

—Նաւակը չատ ծանր է, քսաւ ծագօքօ։

Տապարն օդին մէջ դարձաւ և աւազ կոյմին առտրոան խնամով՝ ճեղքեց զայն։

Ո՛չ Բաօլօ և ո՛չ Մաննէլլեթա ձայն չէ հանեցին։ Ա՛լ բան մը չէին հասկնար, միայն ապահով էին որ կորսուած էին և թէ ծագօքօ թերեւս կրնար փրկել զիրենք։

Տապարը նորէն վեր ելաւ ու վերսաին ինկաւ. կոյմին վէրքն երթալով կը մեծնար. վերջապէս կոյմն սկսաւ ծռիլ և տեսակ մը յուսահատ ձայն հանելով՝ ծովին ինկաւ։

Ծագօքօ ոտքի ելաւ և միշտ իր համր ժպտուին կը խնդար։

Արդեօք երաւցնէ փրկուա՞ծ էին։ Կարելի է ասանկով հովին առագաստանաւուն այնքան չէր վնասեր. բայց ալիք աւելի կատաղութեամբ կը ցնցէին զայն։ Խենթ չան մը պէս ինքզիր վրայ կը դառնար։

Ծագօքօ յառաջակոյմին քով գնացի և տապարի երկու հարուածով՝ սոսրոտէն կտրեց զայն։ Նա ալ ինկաւ.

Եւ հովին աւելի կատաղութեամբ կ՚ոռնար։

—Օգնութի՛ւն, հասի՛ք, կը գոչէր Մաննէլլեթա յապուշ կրթած, ուր ըլլալը մոռնալով և կոչելով գերմարդկային ոյժ մը, որ պինքը չէր լսեր։

Եւ սոսկման գերագոյն աստիճանին հասնելով՝ ոտ-

քի ելաւ, Բաօլոյի քով վազեց և անոր թեւուց մէջ նետուեցաւ գոչելով.

—Կը վախնամ. փրկէ՛ զիս, փրկէ՛ զիս։

Ժագօբօ չի շարժեցաւ. Միայն թէ պրկուած չբթանցը վրայէն ժպիտն աներեւութացեր էր։ Դէմքը արժգոյն և դիակնային դեղնութիւն մը առաց։

Բաօլօ, Մաննէլլիթայի անխոհեմութենէն սոսկալով, կը ջանար զայն իրմէ հեռացնել։ Բայց նա գոռալով և հեծկլտալով թեւօքը կը սեղմէր զայն։

Ա.յն առեն Ժագօբօ տապարը վեր առաւ և երկաթին փայտին զարնելով հանած ձայնը լսուեցաւ։

Ի՞նչ կ՛ընէր, ա՛լ կայմ չկար կարելու։

Սակայն կը զարնէր, միշտ կը զարնէր... և նաւուն եղերքներուն, կողերուն, կուշտերուն կը զարնէր... կը զարնէր, և փայտի կտորներ կը թռչտէին.

Դիտէ՞ք այն անմիտն, այն թշուառն ի՞նչ կ՛ընէր։

Տապարի հարուածներով առագաստանաւուն պատեհանը կը ճեղքէր։

Ա.ակէց աւելի սոսկալի, աւելի չիմարական ու վայրագ բան կա՞ր, վասն զի վերջապէս այդ առագաստանաւն, որքան ալ որ դիւրաբեկ էր, իրենց վերջին ապաստանարանն, գերագոյն ապաւէնը։ Վերջին յոյսն էր...

Եւ զայն կը խորտակէր, կը ճեղքէր. կը կոտրէր...

Բաօլօ բուռն ճիգ մ՚ընելով Մաննէլլիթան իրմէ հեռուն նետեց և Ժագօբօյի վրայ ցատկեց.

—Դու խե՛նթ ես, գոչեց։

Միւսը հետն դարձաւ, Բաօլօն չի մտածեցնելու համար տապարը շարժեց, յետոյ սուր երկաթը վերջին

անգամ մ՚ալ մտաւ առագաստանաւուն կուշտերուն մէջ։ Կարծես նաւը ցաւէն կ՚աղաղակէր և թէ այս պատառման սոսկալի տանջանքը կ՚զգար...

Եւ վերջապէս ալիք մը մտաւ բաց նաւուն մէջ...

Բաօլօ Ժագօբօյի վրայ յարձակեցաւ կատաղութենէն և սոսկումէն խենթեցած...

Բայց Ժագօբօ իր երկաթի դաստակներովն անոր կոկորդէն բռնեց, նաւուն խորը գլորեց և ծունկն անոր կուրծքին դնելով՝

—Մաննէլլիթա՛, գոչեց։ Երջանիկ եղի՛ր. սիրահարիդ հետ պիտի մեռնիս, անիծեա՛լ չնացող...։

Մաննէլլիթա լռեց։ Եւ զգալով որ ջուրն իր շուրջը կը բարձրանար, Ժագօբօյի վրայ յառեց իր ապշած աչերն, որոց գնատակները ջղաձգօրէն կը շարժէին...

Ամուսինը տեսաւ և յանկարծ ամէն բան հասկցաւ.

Եւ ջուրը կը բարձրանար, կը բարձրանար։ Երեքն ալ մինչեւ գիտտերնին ջուր մէջ էին։

Ժագօբօ եղունգները թողուց և այն առեն տեսաւ որ Բաօլոն խեղդեր էր։

Մաննէլլիթա չնորհ կ՚աղաղակէր։

Բայց յանկարծ ծովն իր լռավանդակ ծանրութեամբըն առագաստանաւուն վրայ ծանրանալով, սուզեց զայն...

Գերագոյն աղաղակ մը լսուեցաւ, որ յանկարծ ընդհատեցաւ.

Ա.պա ուրիշ բան չի մնաց բայց եթէ յորձանք մը, որ լայնցաւ, լայնցաւ և վերջապէս մարեցաւ։

. . . . . .

Սակայն երեքէն մին չպիտի մեռնէր։ Ա.յն ալ Ժագօբօն էր։

Ի՛նչպէս, ի՛նչ հրաշքով այս ահռելի եղերերգութեան երէք դերասաններէն միայն ժապօռօ ծովեզր նետուեր էր նաւազած, արիւնոտ, բայց կենդանի։ Մրդեօք ընկղմելու պահուն՝ հնազանդելով անձնապահպանութեան բնազդման, որ մարդուս կամքէն հզօր է, առագաստանաւուն մէկ տախտակին փարեր և ծովը դէպ ի ցամաք քշո՛ր էր զայն։

Ինքն ալ չէր գիտեր։

Բաց յատակ ներկայէն ու անցեալէն ամենևին տեղեկութիւն չունէր։

Երբ ժապօռօ սթափեցաւ, մնչեդին աչօք չուրջը նայեցաւ, յետոյ սոսկալի կերպիւ խնդաց։ Թշնաառը խենթ էր։

Ցաւը, բարկութիւնը, վրէժխնդրութեան յուսահատութիւնն խակ, որով աչխարհի վրայ ամենէն աւելի սիրած էակին սպանները էր, իւր խելքը խանգարեր էին։

Ճշմարտութիւնը ո՛չ ուրուք մտքէն կ՚անցնէր։

Մրրիկին այնքան յանկարծական և այնքան բուռն եղած էր որ, այն օրը ծովն եղնող նաւակներէն շատը նաւահանգիստ չէին վերադարձած։ Ի՞նչպէս կրնային կասկածիլ թէ ոճիր մը գործուած է, քանի որ փոթորիկին այնքան անմեղներու մահուան պատճառ եղած էր,

Ժապօռօի խելագարութիւնը հանդարտ էր, ուստի ղինքն անհանգիստ չըրին։ Կը ցաւէին իւր վրայ, վասն զի կորուսած էր ինչ որ մարդուս երջանկութիւնն է. կինն ու բարեկամը։

Ձկնորսն առաւօտուն կ՚երթար ծովեզերքը կը նըս-

տէր կապոյտ ծովուն դէմ, զոր երկար ատեն կը դիտէր, աչերն յուսահատութեամբ կը սուզէր այն խոր անդունդին մէջ և կարծես բան մը կը փնտռէր հոն։

Օր մը առագաստանաւակ մը ալիքներէն մղուելով՝ եկաւ չըլեցաւ ժապօռօի կեցած տեղէն մի քանի դըրկաչափ հեռուն։ Այս առագաստանաւակին մէջ երկու նաւաստի և կին մը կային։

Մինչդեռ ամէն կողմէ կը վազէին նաւակները ծովէն իջեցնելու համար, ժապօռօ արդէն չուրը նետուեր էր։

Հակառակ կատաղի ալեաց, որ գինքը նաւու բեկորի մը նման կը ցնցէին, երէք անգամ ընկղմեցաւ...

Եւ ամէն անգամուն վերստին չուրին երեսն ելաւ՝ նաւաբեկեալոց մին ի միասին բերելով։

Երէքն ալ ազատեց։

Ապա երբ նուաղեալ կինն ալ վրայ պառկեցուցին, ծունկի եկաւ, ծռեցաւ և անոր վրայ յառնց իւր աչերն, որոց բիբերը կը մեծնային։

Շուրջն եղողները լսեցին որ ցաւագին ձայնիւ կը մրմնջէր։

—Ո՛չ, ո՛չ։ Նա չէ։

Եւ ուսերը կբելով հեռացաւ, առանց մտիկ ընելու այն կեցցէներն, որով իւր դիւցազնութիւնը կ՚ողջունէին։

Իւր դիւցազնութի՛ւնը... Ա՛հա այս էր նորա խելագարութիւնը։ Կ՚ուզէր Մաննէլիթան փրկել, առանց հաշուելու թէ այն ազատէն ի վեր ո՛րքան ժամանակ անցած էր։

Իւր նպատակն կատարակ չըրոց թափանցկութեան ներքեւ այն մեռեալ կինն, իւր սպանուած կինը կ՚որոնէր։

Ա.յն օրէն վերջը ժապօթօ միշտ ծովեզերը թափառե-ցաւ և ամենափոքր աղաղակ մը լսելուն պատրաստ էր ջուրը նետուելու։ Եւ չեղաւ ամիս մը, և ոչ խակ թե-րեւս շաբաթ մը, որ քանի մը ղոհեր չազատեր ալեաց ձեռքէն։

Ա.յժմ ամէն ոք գրեթէ մնապաշտական յարգանք մը կը տածէին երեն նկատմամբ։

Ժապօթօ ազատարարը կը մեծարէին, կը սիրէին, և վտանգի մէջ եղողը զինքը կը կոչէր։ Տարօրինակ բան, կարծես վտանգին ո՛ւր ըլլալը կը դուշակէր, հոտը կ՚առ-նէր, ինչպէս շուն մը երէին ո՛ւր ըլլալը կը հասկնար։ Եւ երբ նաւակ մը, դբօսանաւ մը, առագաստանաւ մը վտանգի մէջ ըլլար, ժապօթօ բնաւ չի յուսացուած տե-ղէ մը դուրս կ՚ելլէր յանկարծ, կարծես ամենաւրհ-ուելթեան ձերքով օժտեալ էր։

Ա.յժմ կ՚ըսէին թէ նա ծովուն հետ դաշնադրու-թիւն մ՚ըրած էր և թէ վտանգի դէմ այս կատարի կռիւներուն մէջ բնաւ չվիրաւ յաղթուէր։

Երբ դիպուածաւ կին մ՚ազատեր մահուընէ, անոր քով ծունգի կուգար, անպագաբար կը դիտէր ջայն, յետոյ դլուխը ցնցելով կը հեռանար։ Խե՛ղճ ժապօթօ։

Ուղեղին խանգարումն եւս քան գեւս կ՚աճէր։ Երբ ծովուն դիմաց կայնէր, երեն այնպէս կը թուէր որ այն կանաչ անդունդներուն մէջ կը տեսներ զՄաննէլլեթա, որ թեւերն երեն կ՚երկնցնէր — և երբեմն այս երեւոյ-թը չատոնց խեղդուած մարմնոյ մը կապոյտ դոյնն առ-նելով սոսկալի կ՚ըլլար...

Ուզեց այս դիւահարութենէն ազատիլ, ինչ որ կ՚ա-պացուցանէ թէ խելքը տակաւ առ տակաւ դլուխը կուգար։

Սկսաւ խմել։ Գինովութեան հետեւանքը սա տարօ-րինակ երեւոյթն եղաւ որ՝ ժապօթօ յիշեց։ Իւր խմ-ցականութիւնը ալքօօլի ազդեցութեամբ արթնցաւ։ Եւ վանելու համար այն տեսիլը, որ այժմ աւելի եւս ցաւագին էր երեն, ժապօթօ խմեց, դարձեալ խմեց, միշտ խմեց։

Ցերեկը, արեւուն ծագելէն մինչեւ մարը մտնելը, մեքենաբար իւր պտոյտը կ՚ընէր նաւահանգստին շուր-ջը, և միշտ պատրաստ էր ինքզինքը նուիրելու։

Երեկոյին կ՚երթար Մարսիլիոյ զազիր գինետանց մի-ոյն մէջ կը փակուէր։ Հոն անկիւն մը կը պահպանէր և այն առեն ալքօօլական երազին կռիւը կ՚սկսէր ընդդէմ իրականութեան։ Կ՚ուզէր այլ եւս չի խորհիլ, չյիշել։ Եւ օղիի ծուխերուն մէջէն Մաննէլլեթայի տխուր դէմքն իւր առջեւ կը կանգնէր...։ Ո՜հ, ո՞վ կրնայ հաշուել թէ խիշճն ու սէրը ո՛րքան տառապանքներ կը քաշեն սի-րելոյ մը մահուընէն յետոյ։ Ա.յո՛, սէրը, վասն զի այ-ժըմ — ինչպէս առեն — կը պաշտէր այն կինը, որ զինքը խաբեր էր։

Եւ իւր ամենէն սոսկալի տանջանքը սա էր որ, կը մտածէր թէ թերեւս երկու մեղաւորք — վատ բարե-կամն ու չնացող կինը — իրարու թեւոց մէջ սեղմուած մեռեր էին...

Անկլիացի նաւաստին ահա այս մարդը, այս վշտա-բեկ յանցաւորն իւր թմրութենէն հաներ էր յանկարծ գոչելով.

— Ելի՛ր, յանո՛ւն Մաննէլլեթայի...

Նաւաստին Մօնթէ-Քրիսթօ էր։ Եւ ժապօթօ անոր դէմ ծնրադրեր էր ըսելով.

—Տէ՛ր, ի՞նչ կը հրամայէք ինձ։

Մօնթէ-Քրիսթօ երկու ձեռքը ժապօքցի ճակտին վրայ դրաւ և նորա գլուխը մեղմիւ դէպ ի ետ հրելով՝ իւր յստակ ու խոր նայուածքը նաւաստւոյն աչաց մէջ սուզեց։

—Ժապօքօ՛, ըսաւ կոմսը, սոսկալի կերպիւ տառապեր եմ։

Նաւաստին հառաչեց։ Սրտակեղեք պատասխան մ՛էր այս։

—Ուրեմն, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ ծանրաբար, դու, զոր երջանիկ ընել ուզած էի, դու որ ուրախութեամբ թաթալաններու գիւղը կը վազէիր նշանածիդ քովՙ այսօր յուսահատ... և առանձին կը դանեմ զքեզ։

Ժապօքօ գլուխը ցնցեց։ Խոշոր արցունքներ կը հոսէին իւր վախտ այտերուն վրայ։

—Սպաննեցի՛ր զայն, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ ցած ձայնիւ Ժապօքօի ականջին։

Մարդը սարսռաց։

—Ո՞վ ըսաւ ձեզ։

—Ջ՛ըսի քեզ թէ ես հոգիներու խորը կը կարդամ։

—Գիտեմ, տէ՛ր, ըսաւ Ժապօքօ ճակատը խոնարհելով։ Սպաննեցի զայն... ճշմարիտ է այս։

—Եւ կը զղջա՞ս։

—Չ՛Ը, ի՛նչ գիտնամ. խեղճեցայ, այսօր խենդ չեմ։ Եւ երբեմն ինքնիրեն կը մտածեմ թէ արդեօք ինձ համար լաւագոյն չէ՞ր այն կէս մահուան մէջ ձգել քան թէ ապրիլ այն յուսահատութեան անդունդին մէջ, ուր ընկղմած եմ այսօր... Եւ սակայն, դոչէց Ժապօքօ յուսահատութեամբ, չեմ համարձակիր ինքզինքս սպանանել։ Ցիշատակներս ամէն կերպարանք առնելով՝ դիս կը շրջապատեն և կը ճնշեն. կը տառապիմ, կ՛աղաղակեմ, կուլամ, ակռայներս կը կրճտեցնեմ... և սակայն կապրիմ, կապրիմ. ո՛վ վատութիւն... դիս ինքզինքէս ո՛վ պիտի փրկէ։

—Ե՛ս, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ։

—Դո՛ւք, ո՛հ, այո՛, ճշմարիտ է. դուք ամենազօր էք։ Եթէ ուզէք՝ կրնաք խլել սրտէս այն ցաւը, որու ճիրաններն ու աքցանները կ՛զգամ...։ Գթացէ՛ք, պարո՛ն կո՛մս, գթացէ՛ք ինձ...

Մօնթէ-Քրիսթոյի դէմքը տոգորեալ էր այն վեհանձն պայծառութեամբ, որ վէնքն այնքան գեղեցիկ ու մեծ կը ցուցնէր։

—Ժապօքօ՛, ըսաւ գգուանքի մը նման անուշ ձայնով մը, չէ՞ս հասկնար որ քեզ փրկելու համար հոս եկայ...

—Ա՜յո՛, կ՛զգամ...։ Ո՛հ, ո՛րքան բարի էք...

—Ժապօքօ, երբ մարդս կրից մղմամբ յանցանք մը գործէ —և դու ալ յանցանք մը գործեցիր— վասն զի ոչ ոք իրաւունք ունի մարդկային բնութիւնը դատելու, խղճի խայթ ալ ապացոյց են ասոր— իւր յանցանքը քաւելու մէկ միջոց միայն կը ճնայ իրեն...։

—Ի՞նչ է այդ միջոցն. ո՛հ, ըսէ՛ք, շուտ ըսէ՛ք։ Տառապինա՛կ բան. ձեր հոս գալէն ի վեր, ձեր ձայնը լսելէս ի վեր, ինձ այնպէս կը թուի թէ տեսողութիւնս մթնցնող արբունալի մեգը կը փարատի...։ Աւելի հանդիստ շունչ կ՛առնեմ...։ և ուղեղիս մէջ այնպիսի զգայութիւն մը կայ, որու նմանը կ՛զգայի առեղով երբ երիտասարդ էի, երբ ծովուն վրայ առաւօտեան առա-

ջին չողերը կը տեսնէի։ Ի՞նչ պէտք է ընեմ...

—Գործած չարեացդ չափ պէտք է բարիք գործես.

—Աւա՛ղ, մրմնջեց Ժապօքօ դողալով. միթէ կըրնա՞մ կեանք տալ, ես որ մարդասպան եղայ...

—Թերեւս...

—Ո՛հ, մի՛ ըսէք...։ Չէ՞ք վախնար որ նորէն կը խնդթեցնէք զիս։..։ Չեզ մոխիկ կ'ընեմ, դիտեմ որ երբէք չէք կրնար խաբել զիս... և սակայն ձեր խօսքերու իմաստը չեմ կրնար հասկնալ...

—Ժապօքօ, կ'ըսեմ թէ կեանքն ու մահը երկու քոյր են և այնքան անբաժանելի կերպիւ կապուած են իրարու որ, նոցա չղթայն չի կրնար խորտակուիլ...։ Ժապօքօ, քիչ մ'առաջ դերեզ փորձեցի։ Ա,յս անուանարկ տեղը մտնելուս, հոս նստելուս, այն թշուառականներուն ականջին ոսկի հնչեցնելուս պատճառն այն էր որ, կ'ուզէի հասկնալ թէ թշուառութիւնը հոգիդ ապականած է արդեօք...

—Ո՛հ, ըսաւ Ժապօքօ դերազդոյն արհամարհանաց չարժուամ մ'ընելով, ես պատուաւոր մարդ եմ։

—Դիտեմ... այսօր դերեզ կը դանեմ այնպէս, ինչպէս որ թողեր էի տասը տարի առաջ...։ Ժապօքօ, կ'ուզե՞ս հետս գալ։

Ժապօքօ քայլ մը եւս քաշուեցաւ։

—Մարսիլիայէն հեռանա՛լ։ Եթէ դիտնայիր. իմ միակ ուրախութիւնս —որ յոյժ ցաւագին է— հորիզոնին վրայ այն կապոյտ կէտը դիտել է ուր... մեռա՛ նա...

—Ժապօքօ՛, քեզ առնելու եկայ։ Ծանր "ու վտանգաւոր բանի մը պիտի ձեռնարկեմ, որու մէջ մահուան

վտանգ կայ...։ Թու վրայդ յոյս դրի...։ Սխալեցայ...։

—Ժապօքօ բոլոր վարանումներն անհետացաւ։ Մօնթէ-Քրիսթօյի ձեռքին տակ խոնարհեցաւ.

—Ներեցէ՛ք ինձ, ըսաւ, ես ձերն եմ...

—Լա՛ւ, բարե՛կամ...։ Չէի սխալած...

—Ե՞րբ պիտի մեկնինք։

—Ծագ այդուն...

—Ժամագրավայրն ո՞ւր է։

—Զբօսանաւս... որ նաւահանգստին մէջ խարսխած է...

—Պիտի գամ։

—Խօսքդ կ'ընդունիմ և դիտեմ որ չպիտի մերժես։ Հիմայ, Ժապօքօ՛, դիս լաւ մոխիկ ըրէ՛. քիչ մ'առաջ ըսի քեզ թէ մահը կենաց աղբիւրն է...։ Կանգնէ՛, մարդ եղիր... և յուսա՛...։ Ի ծագ այդուն, Ժապօքօ...

Եւ Մօնթէ-Քրիսթօ ձիրանի գինեասունէն դուրս ելաւ ապշած Ժողովրդ Ժապօքօ, որ կը ջանար այս տարօրինակ խօսքերուն ծածուկ իմաստն հասկնալ։

Վայրկեան մը ետքը Մամուկի Ջառիվերին սահուն աստիճաններէն վար կ'իջնէր...

Ժապօքօ մտախոհ էր, և իւր աչաց մէջ յուսոյ նշոյլ մը կար...

Ժ.Ա.

Միլիոնատիրոջ մտահաղութիւն

Մխ Քլարին երկկոյեան ժամը տասնին Մարսիլիոյ ճամբուն վրայ թողուցինք, ուր մայր Քարամանի և Ժառայի մը հետ քառաձին կ'ընթանար։

Շիտակին ըսելով խնամածուհին, որ շատ բանէ չէր վախնար, ինչպէս որ քանիցս ապացուցած էր, մանաւանդ Փուբլուն այնպէս առնական կերպիւ ընդունած ատեն, շատ չէր սիրեր այն կենդանին, զոր Պ. որ Պիւֆֆօն —թեւնոցաւոր մարդը— մարդուս աղնուագոյն յաղթանակը կը կոչէ։

Ա.յս աղնուագոյն յաղթանակը սոսկալի ցաւեր կը պատճառէր նորա մարմնոյն այնպիսի մէկ կողմն, որու անունն ըսած պատշաճի տալու համար հարկ է բնապաշտ մտաւնագիր մ՚ըլլալ։

Բայց այն ցաւերն առ ոչինչ կը դրէր։

Միայն թէ բնութեամբ յոյժ հետաքրքիր ըլլալով շատ բան կուտար որպէս զի միս Քլարի փոքր ինչ բացատրէ երեն այս լուսնի լուսով լիմնարական էներնթացութեան նպատակը, որ կը յիշեցնէր Լէօնօռայի առասպելական երգը, զոր հարկ էր սակայն սապէս բարեփոխել։

կենդանիք արագ կ՚երթան։

Եւ մայր Քարաման, որ չէր մոռնար նաեւ թէ նորատի աղջկան հայրը՝ լորտ Էլֆիս զայն երեն վատահած էր։ կը խրճահարէր այսպէս անոր բոլոր մոռահաճութեանց հնազանդելուն. առանց դիտաւորութեան իսկ հարցնելու։ Իրաւ է որ բան ամենայնի վատահ էր անոր վրայ։ Բայց վերջապէս պատասխանատուութիւնը պատասխանատուութիւն է։

Ա.ինպէս որ հզօր ճիգ մ՚ընելով՝ իւր ձին միս Էլֆիսի ձիուն քով կը բռնէր և կցկտուր ընչարգելութեամբ մը, որ Փուբլուն հիացնող այն ծանր ու պարարտ կուրծքը կը ցնցէր, տալեզի նման խօսքի կտորուանքներ կ՚արտասանէր։

—Մի՛ս... Մարսիլիա երթալ։ Հօ՛ր, հօր... այս ժամանակ... ինչո՞ւ համար... կը հասկնաս... Հ՛օր... ձեր հայրը... ես խնամածուհի եմ... ։ Հօ՛ր, հօ՛ր... և ես ... հօ՛ր, պարտքերը... ունիմ։։

Հօ՛ր, հօ՛ր. կենդանին կ՚ընթանար։ Միս Քլարի միայն սա պատասխանը կուտար.

—Քիչ մը վերջը... յառաջ... մի վախնաք...

—Յառաջ. ահ՛ր Աստուած, բարի Քարաման ուղածն ալ այս էր։

Եւ վերջապէս հարկ էր այս պատասխանով գոհ ըլլալ. վասն զի —հօ՛ր, հօ՛ր, շունչը կ՚ակռեր կտրիլ։ Ա.յս բանը ղինքը կը զուարճացնէր։ Միշտ ասանկ վիպական արկածներ երազած էր։ Աղեքսանդր Տիւմայի գործերը շարունակ կարդալու արդիւնքն է այս. Ա.յս լուսնի լոյսն, այս կատարի քառարչան։ Ա՛հ, եթէ ասիկանն հայր Քարաման տակաւին ողջ եղած ըլլար հիացեալ պիտի ձնար այս արագընթաց էրեւոյթին առջեւ... Իրաւ է որ այս երեւոյթը քիչ մը դիերուկ արուարձաններէն և վերջապէս կանգ առեր էին փողոցի սքանչելի մէկ տան առջեւ։

—Վայ, բան մայր Քարաման երբ կրցաւ փոքր ինչ շունչ առնել, Մօրթիմերը և Ընկերութեան տունը կ՚երթանք. Սեղանատուրի մը տունը, այս ժամուս. բայց անտուկը գոց է։

Միս Էլֆիս, որ կարծես այս դիտողութիւնը չէ լսած։ ձօնը կոչից։

Իւր ծառային —զոր Անկլիացի ըլլալով— ի հարկ ձօն կը կոչուէր։

Ա.յն տունը, որու առջեւ կանգ առեր էին, հա

դարտ ու խիստ նրնուցիով տեսակ մ՝ ապարանք էր, ինչպես որ կը վայելէ Բրիտանական դրամատան մը։

—Ձօ՛ն, ըսաւ նորատի աղջիկը, դռնեքը բանալ տուէք։

Ձօն, որ իրեն տրուած հրամանէն, այսինքն կրաւորական հնազանդութենէ զատ բան չէր ճանչնար, գնաց դուռը զարկաւ տիրաբար, պժգին և հապշտապ հարուածներով։

—Բայց ներսը կը պարե՛ն, գոչեց մայր Քարաման։

Սրդաբեր առաջին յարկի բարձր պատուհաններէն, հատ օթոցներով երբակի զրահաւորեալ վեղկերուն ետեւէն երաժշտութեան խաղերը կը լսուէին, որոց մէջ քառապարի մը չափերը կը նշմարուէին։

Սակայն պատասխանը Ձօնի կոչումը լսելով վազեր և դուռը բացեր էր։

Մխ Քլարի ձին քշեց ու մտաւ ցաւ։

—Ըսէ՛ք անոր տիրոջ որ կ՝ուզեմ անմիջապէս խօսիլ ի հետ։ Իւ

բառին My god (Աստուած իմ), բացագանչեց պատկառ էր։ Ի պաշտօնեայն, այդ ի՞նչ է... դրասենեակները ետ վազը ժամը տասնին։

Նոյ ահագին դուռը գոցելու պէս ըրաւ։

Բայց Ձօն, տիրուհւոյն մէկ նշանով, անմիջապէս տան մէջ նետուեր էր, մարմնոյն կէսը ներս և կէսը դուրս, և պատրաստ էր ճղմուելու քան թէ թոյլ տալ որ էլֆիաններու ժառանգին քթին, դուռը փակելու իրաւունքն ընէն։

— My boy (տղայս), ըսաւ մխ Քլարի, լսեցի՞ք։ Կ՝ապրիմ, գացէք, և առանց վայրկեան մը կորսնցնելու

ազաչեցէ՛ք ձեր տիրոջ որ վար իջնէ...

Միւս իւր տիրոջ հրամանն առած էր։

—Պարահանդէսի համա՞ր եկած էք։

—Ա՛, պարահանդէ՞ս կայ։

—Մօրթիմըը և Ընկ։ տունն իւր աղջիկը կ՝ամուսնացընէ...։ Ուրեմն՝ եթէ Միլէտին պարահանդէսի համար եկած է...

—Ո՛չ։

—Ըսել է գործի՞ համար է։

—կատարելապէս...

—Ուրեմն ցաւօք կը յայտնեմ թէ մնալ չ՝ըլլար։ Պյք։ Մօրթիմըը և Ընկ։ պատուիրեցին ինձ որ թոյլ չտամ ներս մնալ որո՛ւ որ ըլլայ։ Հրաւիրագիր մ՝ունի՞ք

—Վերջապէս կը մերժէ՞ք հնազանդիլ ինձ։

—Ցաւօք կ՝ըսեմ թէ կը մերժեմ...

—Ուրեմն ես կը մտնեմ...

Եւ Ձօն, իւր տիրուհւոյն հրամանաւ, բռնադատեալ վրայ բացուած դռնակը կռնակի վրայ բացաւ։ Եւ մխ Էլֆիս, ձին քշելով, գաւիթը մտաւ։

Հօ՛ր, հօ՛ր, մայր Քարաման ալ այս չարժման հետեւեր էր։

Աչքերէս որ ծաղկապաճոյճ և սքանչելի մետաքսեայ օթոցներով զարդարուն գաւթին մէջ երենց տեսարժան սպասող ծառայից միջեւ երկու հետեւալ ձիեր կային պժմ, որք իրենց սմբակովին քարերուն կը զարնէին։

Միանգամայն սոսկալի բացագանչութիւններ լսուեցան։

Պյք։ Մօրթիմըը և Ընկ։ Մարսելլեոյ ամենէն հարուստ

սեղանաւորներն էին, և իրենց աղջկան —Մօրթիմըրի կամ Ընկերութեան աղջիկը, զայն չենք ուզեր քննել,— հարսանեաց առթիւ հրաւիրած էին Բրիտանական բարձր գաղթականութիւնը, որ այս հրաւէրն ընդունած էր յօժարութեամբ։

Ինչպէս որ, իրեր դեռնայարկին մէջ այս տարօրինակ տեսարանը տեղի կունենար, առաջին յարկին մէջ կը պարէին ու կը ցատկէին։

Չէ թէ միայն դռնապանը կը մռլտար, չէ թէ միայն ծառայները սոսկալի աղմուկներ կ'արձակէին։

Այլ և մին էլֆիսի ձին սկսաւ այնպէս մը խխնչել որ կարծես թէ փողը կը զարնուէր։

Անկասկած միշտ արշաւանքներէ երկիւղ ունեցած է։ Թօլսէքի մէկ վախի միջոցին, որ 1848ին անուանի էր, տեղի ունեցաւ այս պատերազմական փողանշանը։

Մօրթիմըր ապշութեամբ նայեցաւ «և Ընկերութեան» «և Ընկերութիւնն» ալ Մօրթիմըրի կնոջ նայեցաւ։ Մօրթիմըրի կինն ալ առաջին դրադրին նայեցաւ։ Ի՞նչ էր այս...։ Անշուշտ լուղական պատրանք մ'էր...

Բայց ա՛ռ քեզի ուրիշ բան մ'ալ։ Մինչդեռ դերկընդխառն ամբոխն ղոյդ ղոյդ կը դառնային վախի նուազիլուն չըշչըջմամբ —վախը, որ սիրոյ արտաքին դործոց նախաբարը կոչուած է— ահա՛ յանկարծ դահլիճներէն մէկուն օթոցները վեր ելան և ի՞նչ տեսանեն...

Ձիու մը գլուխը...։ Այո՛, տեսարք և տիկնայք, ձիու մը գլուխն, իր նուրբ բերնով, արծաթեայ դանդաղանաւանդով, բարի... բայց զարմացեալ աչօք։

Եւ արդարև ձի մը, նոյն իսկ երէկ Զլատկոյ ցեղէն սերած ըլլալը, իրաւունք ունէր առաջին յարկի

դահլճի մը դրան առջեւ դանուելուն զարմանալու։

— Ի՞նչպէս եկեր էր հոն։

Տէ՛ր Աստուած, շատ պարզ է այս, ինչպէս որ կ'ըսէր ատենով Բալէ-Րուայեալի մէկ դերասանը։

Դաւթի ծառայները, մին Քլարիի և մայր Քարամանի ձիաւոր գալստենէն ապշած, դռնապանին կըզտամբանքներէն խրախուսեալ, —վասն զի դռնապանը լուրջ մարդ մ'էր, որ թևթեւակի չէր խօսեր— այս արշաւանքին դիմադրել ուզած էին։

Բահակաձեւ մատերով ձեռքեր, խոշոր և կոչկոռոտ ծառայի ձեռքեր Քլարիի ձիուն դանդաղեցնել դրպեր էին՝ զայն ետ դառնալու ստիպելու ակնհարեւ դիտաւորութեամբ։

Մին Քլարի էլֆիսի նախահարց մին, վերին Սիովտոյ մէջ ապրած ցեղի մը հրամանատարութիւն ըրած ատեն, ձիուն մէկ ոտքմանրն տասնեւհինգ ոտք լայնութիւն ունեցող անդունդէ մը ցատկեր էր։ Իր պապը գինքն հալածող աւազակներէն աւելի շուտ վազելու յաջողեր էր։ Իր հայրը, լօրտ էլֆիս, տէրպեան ձիու մը յաղթեր էր։

Ազնիւ արիւնը չկրնար ստել։

Մին Քլարի խարազանի հարուածով մը ձագկեր էր գինքը կեցնելու յաւակնող անամօթները, գինքը, որու հայրը լորտերու խորհրդարանը կը բաղմեր և հօրեղբայրը անձամբ կառուեր էր Թիբբօօ-Սահիպի դէմ...։ Եւ հօ՛ր, հօ՛ր, ձին վայելչապէս փոքր՝ բայց չղուտ և հաստատուն ձեռօք մղուելով՝ գորգերով ծածկուած սանդուխն ի վեր ելաւ թաւշեայ ամպհովանոց մը տակէն։

Հօ՛ր, հօ՛ր. և մայր Քարամանն, որ իւր պարտակատնութենէն ուրիշ բան չէր ճանչնար, անոր հետեւէր էր...

Ա՛յնպէս որ մեռած քահանայ վարագոյրներուն մէջտեղէն, չահերու լուսոյն նախ մէկ, և ապա երկու ձիու գլուխ երեւացին...

Եւ Միս Էլֆիս գլխարկին հանելով շնորհալի կերպիւ մ՛բսաւ.

—Կը հաճի՞ք Պ. Մօրթիմերը կանչել։

Մօրթիմերը դէր, մեծփոր, ծանրաշունչ անձ մ՛էր։ Նա այն լուրջ մարդոցմէ էր, որոց համար կեանքը կատակ մը չէ, և իւր երիտասարդութիւնն անցուցած էր Լոնտրայի մէկնաբաղաքին մէկ ծակին մէջ վանդակի մը ետեւն և կապի լուսով այնքան թուանշաններ գրած էր, որքան մազ չկայ ձեր գլխուն վրայ։ —Ա՛յո՛, պարո՛ն, կը խնդրեմ որ հաւատաք։

Մարդ մը, որու ստորագրութիւնը ոսկւոյ արժէք ունէր, որ Անկլիոյ Դրամատան մէջ անսահման վարկ ունէր, որ Թրիանեարլ փողոցին մինչեւ Լօմպար փողոցն և մինչեւ Զիբսայտ արդի ժամանակաց առաջին հաշուապէտն համարուած էր...

Մարդ մը որ քաղաքապետ լորտ եղած էր և Մէնշիրն-Հաուզի մեծ շուկային մէջ համեղ ընթրիքներ ըրած էր։

Եւ այս մարդը, որ աղջիկը կ՛ամուսնացներ —այս մարդը, որ մեծ մարդ մ՛էր, երկու ձիերու պարահանգէսի սրահը մտնելը կը տեսնէր...

Խոստովանեցէ՛ք թէ կեանքի մէջ անանկ պարագաներ կան, զորս ամենէն դժուժ վիպասանաց անմիտ երեւակայութիւնն իսկ չկրնար հնարել։

Միայն թէ դիտելու արժանի է որ Պ. Մօրթիմերը, թէեւ Անկլիացի էր, սակայն սոսկալի կերպիւ կը վախնար ձիերէն։

Ա՛յնպէս որ, թէեւ անունը լսեց, սակայն ապշած եւս կը քաշուէր երկու կենդանեաց առջեւէն, որք այս տարօրինակ կացութեան համակերպած կը թուէին։

Միս Էլֆիսի ձին տախտակամածը այնպէս մը կը դափրեր որ կարծես թէ Րօթէն-Րօուի վայելուչ ծառուղւոյն աւազն եղած ըլլար. և ո՛վ ամէն, պատմութիւնը կ՛ըսէ թէ մայր Քարամանի ձին ալ պարկեշտ և պարզ քաղաքավարութեան ամենէն տարրական կանոնները կը մոռնար ետեւի կողմէն։

Օրիորդները վախցող հաւերու նման փոքրիկ աղաղակներ կ՛արձակէին. և պարոնք իրենց բռնուած չապիկներուն պատուար մը կը կանգնէին անոնց։ Ա՛յն ատեն տակաւին լանջապահ (plastron) չէին գործածեր։ Նեղ ծալքերու նորաձեւութեան առեւն էր։

—Պարո՛ն Մօրթիմերը, կրկնեց միս Բլարիի ձայնը։

Դէր մարդը ստիպուեցաւ քայլ մը յառաջ դալ։ Բայց յաստի Անկլիոյ աչքերն իւր վրայ էին և, ինչպէս կ՛ըսէր Նէլսըն, կը յուսար որ իւր պարտքը պիտի կատարէր։

Պարտքը կատարեց, և աչքը լայսերու ակնախտիղ ցոլացումէն պղտորած, թէ և արդէն յոյժ կարճատես էր, վհատութեամբ և փորը տնկած յառաջացաւ։

—Շիտակը, ըսաւ բարձրաձայն, այս եղածն անտանելի բան է։

—Ա՛հ, վերջապէ՛ս, Պ. Մօրթիմերը, ըսաւ ամենահան-

դարտ ձայնիւ մին էլֆիս, որու ձին բնաւ չի շարժելով՝ մայր Բարամանի ձին ալ հանդարտ կը կենար։

—Բայց՛ո՞վ է որ կը համարձակի... սկսաւ ըսել սեղանաւորը։

Բայց յանկարծ գլուխը վեր առնելով՝ իւր ակնոցին ետեւէն ճանչցաւ... զո՞վ։

Մխա էլֆիս, Լօրաերու խորհրդարանի մէկ անդամին աղջիկը, որ իւր վրայ ահագին գումարներու վարկ մ՚ունէր...

Անկլիացին միշտ Անկլիացի է։ Սեղանաւոր մը միշտ սեղանաւոր է։

Լօրան մ՚աղջիկը, մէկ միլիոն Անկլիական ոսկւոյ ժառանգո՞րդը... այս բանը լանդիրը բոլորովին կը փոխէր։

Եւ մտնալով թէ երկու ձիերը կային հոն, և թէ ամէն մարդ անձկանօք կ՚սպասէր տեսնելու համար թէ Մօրթիմըը ո՛րպիսի քաջասրտութեամբ յարդել պիտի տար իւր տունը, որ նախատանօք բռնաբարուեր էր, սեղանաւորը չնորհալի կերպիւ խոնարհեցաւ ու ըսաւ։

—Ձեր Մեծութիւնն ինձ հետ խօսիլ կը փափագի։

—Անմիջապէս, եթէ կը բարեհաճիք, և այնպիսի գործերու համար, որք չեն կրնար յապաղիլ...

—Պատրաստ եմ ձեր հրամանին։

Ամենէն ծիծաղելին սա է որ, Մօրթիմըը բոլորովին իւր սեղանաւորի դերին զբաղած ըլլալով՝ կացութիւնը կը մտնար. ուստի մխա Փլարէի ըսաւ։

—Եթէ կը բարեհաճիք մինչեւ գրասենեակս հետեւիլ ինձ...

Աղդ՝ Թերեւս դժուարին էր ձիով անցնիլ այս բնակարաններէն։

Մխա էլֆիս ժպտելով ըսաւ անոր.

—Կը հաճի՞ք ձեռքերնիդ լինձ տալ որ իջնեմ...

—Անշո՛ւշտ, ամենայն սիրով...

Մխա Փլարէի թեթեւսակի տախտակամածին վրայ ցատկեց։ Մայր Բարաման ալ ցատկեց, բայց ծանրութեամբ։

Նա ալ խիստ զուարթ էր. այս դէպքերն յոյժ կը զուարճացնէին զինքը։

—Բայց յաստի, ըսաւ մխա Փլարէ, երախտապարտ պիտի ըլլամ ձեզ, եթէ բարեհաճիք կոչել զինծ, որպէս զի այս ձիերը բակը տանի...

Մօրթիմըը իրական կացութիւնը յիշելով՝ ինչ ընելիքը չէր գիտեր։ Վերջապէս «և Ընկերութիւնը», որ իրեն չափ կը յարգէր յաճախորդներն և զոր գացեր կրչեր էին գահլիճներու խորէն, ուր կատաղի-բայց լուռիկ —վիճ կը խաղար, օգնութեան հասաւ և Փլարէի ապահովցնելով երկու ձիոց նկատմամբ— որոց սանուտիէ մ՚իսկ չպիտի հրամցնէին չրջող ծառայները— սեղանաւորին ետեւէն գնաց։

Սա ամօռ մը ներկայացնելով իւր անակնկալ այցելուհւոյն՝ գրասեղանին առջեւ նստաւ։

—Կը կրկնեմ թէ, մի՛ս, ըսաւ, ձեր հրամանին պատրաստ եմ...

—Նախ կաղաչեմ որ բարեհաճիք նստիլ քիչ մը տարօրինակ կերպիւ ներկայանալուս։

—Ո՛հ, այնքան հարուստ աղջի՛կ մը... միթէ schoking (անվայել) բան մը կա՞ր։

Բարձրահասակ չէրսաւ զայն։ Բայց անանկ կերպիւ մը խոնարհեցաւ որ միեւնոյն բանն ըսել էր։

—Հաւատացէք սակայն որ, յարեց միս Քլարի, բացառիկ պարագայներ հարկադրեցին զիս այսպէս վարուելու...

—Ադ որ չեմ տարակուսիր. բայց այդ խօսքը գոցեցէք, մի՛ս... Ինձմէ ի՞նչ կը խնդրէք:

—Շատ բան...

—Կարծեմ թէ նախ ստակ... Դումարն ըսէք... և անմիջապէս...

—Կրնա՞ք անմիջապէս տանն հաղար ոսկի տալ ինձ:

Գիտենք որ տանն հաղար ոսկին երկու հարիւր յիսուն հաղար ֆրանք կ'ընէ:

—Այդ բան մը չէ, բսաւ Մօրթիմըը: Վաղ առաւօտ...

—Էէ՞, ի՞նչ ըսիք. ամենևին. այդ տակին անմիջապէս պէտք է ինձ...

—Բայց, օրիո՛րդ, անմիջապէ՞ս... անտուկը գոց է...

—Կը բանաք...

—Տանս օրէնքները...

—Կը բարեփոխէք... Չիս մտիկ ըրէ՛ք, պարոն Մօրթիմըը, եթէ մերժէք այս խնդիրս կատարել, կ'երդնում որ վաղը գործերս Պ. Պրատվուտի կը յանձնեմ:

Պրատվո՛ւտ, Մօրթիմըրի հակառակորդը, նորա առեւլո՛ն:

Աւանկ յաճախորդ մը կորանցնե՛լ: Էլֆիաներու — Քրեկպըրնֆուլենեռու նախկին Լօրտերու անունն առնե՛լ Մօրթիմըը տան տումարներէն: Կարելի՞ էր այս:

Անշուշտ ինձ պէս դուք ալ գիտէք թէ տունը մը օրինաւոր հղած չըլլար, եթէ տանկ երեկոյեան ժամը

տանն և մէկին կարելի ըլլայ դալ երկու հարիւր յիսուն հաղար ֆրանք ուղել, այն ալ երբ դուք ձեր աղջիկը կ'ամուսնացնէք... Աստնկ բաներն հակառակ են ամէն կանոնաւոր տօմարակալութեան:

Եւ սակայն Մօրթիմըը, դրպանէն տետրակ մը հանելով, զանգակը զարկաւ և եկող ծառային ըսաւ.

—Այս տոմսակը Պ. Էտուարտո՛ տար:

Պ. Էտուարտս փեսային էր: Ո՛հ, միս Էլֆիս ինչպէս աղէկ ժամանակին եկեր էր:

—Ձեր հրամանը պիտի կատարուի, օրիորդ. այն դումարը հինգ վայրկեանէն ձեր տրամադրութեան տակ պիտի ըլլայ:

—Շատ լաւ: Այնման մարդ մ'էք:

—Եւ հիմայ դեռ ի՞նչ կ'ուզէք...

—Ո՛հ, շատ քիչ բան, բսաւ նորատի աղջիկը ժպտելով: Մնացեալը չնչին բան մ'է: Վաղն առաւօտ Ալճէրի պիտի մեկնիմ...

—Գեղեցի՛կ երկիր, մրմնջեց Մօրթիմըը և ընկ: Բայց ճառանցիք դաղթաչէն չեն...

Մայր Քարաման կ'սկսէր աչերը մեծ մեծ բանալ: Ի՛նչպէս, Ալճէրի կերթայի՛ն: Ա՛. բայց... քիչ մը չափազանց էր այս:

—Վաղն առաւօտ ըսի, յարեց միս Քլարէ, բայց պէտք է աւելի ճիշդ խօսիլ: Ի ծագ այգուն կ'ուզէի ըսել...

Խնամածուհին վեր ցատկեց. կացութիւնը կը գըժուարանար:

Մօրթիմըը վայրկեան մը խորհեցաւ:

—Ապահո՞վ էք որ, օրիորդ, վաղն առաւօտ դէպի

Ալճէրի ճամբայ ելնող նաւ մը կայ. ես նաւահանգստի երթեւեկութեանց լաւ տեղեակ եմ, և ինձի կուգայ թէ...

—Վաղն առաւօտ մեկնող նաւ չկայ, ըսաւ միս Քլարի...

—Ուրեմն, հարցուց սեղանաւորը, որ կ'սկսէր այլ եւս բան մը չհասկնալ։

—Ուրեմն ես ալ ճիշդ ասոր համար եկայ ձեզ գտայ...

—Ձի՞ս։

—Այո՛ւշտ. դուք Մարսիլիոյ բոլոր նաւատերից հետ յարաբերութեան մէջ էք... ուստի կրնաք դիս նեղութենէ ազատել։

—Ձեմ հասկնար թէ...

—Ցէ՛ր Աստուած, ըսաւ միս Քլարի ժպտելով. ես ասոր մէջ անհասկանալի բան չեմ տեսներ։ Վաղն առաւօտ Ալճէրի պիտի երթամ. մեկնելու պատրաստ նաւ չկայ։ Ինձ նաւ մը պէտք է, ահա այսչափ։

—Ի՛նչպէս, ուզածնիդ...

—Նաւ մ'է, այո՛։ Նաւապետով, նաւուղիղով, նաւաստիներով, կանոնաւորապէս բանելու համար բոլոր հարկ եղած բաներով...։ Կ'ուզեմ որ այդ նաւը հինգ վեց ժամէն Մարսիլիոյ նաւահանգստին մէջ իմ տրբամադրութեանս տակ ըլլայ։ Ահա՛ ուզածս այս է։ Հիմայ, սիրելի սեղանաւորս, եթէ խորհելու պէտք ունիք, հինգ վայրկեան կը չնորհեմ ձեզ...

Աչս անգամ Մօրթիմերը բոլորովին շուարեցաւ։ Նա՛ մը, նաւապե՞տ մը, նաւաստինե՞ր։ Ո՞չ ապաքէն երդախառն կատակերգութեան մէկ դերասանին պէս տեղն էր ըսելու թէ՝ Վերյս բնաւորե՛ք։

Արդարեւ այս բաները իւր քով չկային։

—Ահա՛ երեք վայրկեանն անցաւ, ըսաւ միս Էլիֆս։ Իրաւ է որ Մօրթիմերը գործի մէջ ճշդապահ մարդ մ'էր, այո՛ եղած ատեն այո՛ կ'ըսէր և ոչ՝ եղած ատեն ոչ։ Եւ այս մասին «և Ընկերութիւնն» ալ իրմէ վար չէր մնար։

Բայց վերջապէս քիչ մը խելք պէտք է։ Նաւ, նաւապետ, նաւատէր... երեկոյեան ժամը տասնեմեկին, երբ դրասենեակները գոց են, երբ միս Մօրթիմերը տիկին ըլլալու վրայ է...

—Հինգ վայրկեան եղաւ, ըսաւ միս Քլարի ոտքի ելնելով։

Մայր Քարամանն, որ ուրախ էր այս հինգ վայրկեանին անցնելուն, սա յոյժ ինքնասիրական՝ պատճառաւ որ կը դուշակեր թէ միս Քլարի այն ալանդակ մտահաճութենէն բոլորովին ետ պիտի կենար, —ոչ նուազ փութով ոտք ելաւ և ձեռքն հաստատամտութեամբ դրան կոճակին վրայ դրաւ։

Իսկ նորատի աղջիկը ամենայն արժանապատուութեամբ և հանդարտութեամբ.

—Անօգուտ է ձեր դանձապետն անհանգիստ ընել, ըսաւ. ինձ պէտք եղածն ուրիշ տեղ կը գտնեմ։

—Բայց, օրիո՛րդ, հետեց Մօրթիմերը, որ իւր աչաց առջեւ հրեղէն տառերով նշանակուած կը տեսներ պրատվուտի անունը, ձեր ուզածն անկարելի է...

—Պարոն Մօրթիմերը, պատասխանեց միս Քլարի, ամէից երկու հարիւր տարի [առաջ նախահարցս մին Սկովտիոյ մէջ ցոյց տալով իւր հարիւրապետներէն միոյն Բէրթ քաղաքը, որ ամրացած էր և [հնդանօթիՅ

մեկ չէր ըներ, ըսաւ. Պէտք է որ երկու ժամէն ե-պիսկոպոսական պալատին մէջ նախաճաշեմ. Հարիւրա-պետն անկարելի է չ'ըսաւ, այլ պատասխանեց. Ձեր Մեծութիւնը ի՞նչ կ'ուզէ ուտել...: Նա ապաննուեցաւ, բայց նախահայրս ըսած տեղը նախաճաշեց: Եկէ՛ք, մայր Ռաֆիկան:

—Ո՛չի, ըսաւ խնամակալուհին, որ արդէն սանդու-ղին դլուխն էր և այս ձախորդ կացութենէն ազատած ըլլալ կը կարծէր:

—Մխա էլֆի՛ս, գոչեց Մօրթիմըր յուսահատութեամբ:

—Ի՞նչ կայ, ըսաւ նորատի աղջիկն անխութօրէն և-տին դառնալով:

—Ձեմ ըսեր թէ —անշուշտ— չեմ դիտեր թէ... սակայն... Թերեւս...

—Նաւ, նաւուղիղ, նաւապետ, նաւաստիները...

—Է՛հ, այո՛, ըսաւ Մօրթիմըր յուսահատութեամբ կիսալով ամրոցին վրայ:

—Եւ վաղն առաւու, արշալոյսին...

—Կը կարծեմ որ կարելի է:

—Եւ անձնուէր նաւապետ մը... ու անանկ նաւա-պետ մը, որ նաւը ծախէ...

—Կարծեմ թէ կրնայ ըլլալ...

—Ուրեմն մոքերնիդ բացատրեցէ՛ք. և մոռածեցէ՛ք որ կորսնցնելու ժամանակ չունիմ, վասն զի կ'ուզեմ որ այս բաները ըլլան...

Մայր Քարամէն, որ արդէն սանդուղին խաղխամը բռնած էր, այս խօսքերը լսեց ու չէր կրնար ականջ-ներուն հաւատալ: Ի՛նչպէս: Այս Մօրթիմըրն ալ սոյն անմտութեան ձեռնտու՞ պիտի ըլլար:

Բոլոր այն ոստիկանական ծերունի արիւնը, որ իր եռեղբիւր ամուսնոյն —առանց վիրաւորիչ սինեարկու-թեան կ'ըսենք— երակաց մէջ հոսած էր, գլուխը ցաւակեց:

Եւ սեղանաւորին դրասենեակը մտնելով՝

—Աս ի՞նչ է, գոչեց, այս կառաւը դեռ չմեցաւ: Առաւն կանուխ Ալճէրի երթալ. բայց ես պատասխա-նատու եմ լօրտ Էլֆիսի և բացարձակապէս կ'ընդդի-մանամ...

Մխա Քլարի ծիծաղելով մայր Քարամանի գլուխը բռնեց և ախորժիւ համբուրեց:

—Մայրի՛կ, ըսաւ անուշութեամբ, ձեզի միայն սա կ'ըսեմ թէ՝ կը փափաքիմ:

Մայր Քարաման վսեմ խօսք մ'ըսաւ.

—Ո՛հ, այն ուրիշ:

Մտածեցէք անգամ մը: Ինքը զաւակ չունէր: Եւ մխա Քլարի ո՛րքան սիրուն, ո՛րքան հրապուրիչ էր:

Ո՛հ, քանի որ Քլարի գինքը կը համբուրէր չ'կ'ը-սէր թէ այս բանը հաճոյք պիտի պատճառէր իրեն:

Մօրթիմըրի դարձաւ և ըսաւ.

—Ուրեմն... լմնցնենք... և չո՛ւտ:

Նոյն վայրկենին անձ մը կը ներկայանար դրասենե-կին դրան առջեւ:

Նիհար, երկար, ոսկրուտ, կարմիր կիսամօրուքնե-րով. փեսայն էր այս:

—Ահա՛ ուղած գումարնիդ, ըսաւ ծրար մը թղթե-թաղրամ դնելով Մօրթիմըրի առջեւ:

—Առնք Ալճէրիի մէջ կ'անցնի՞ն, հարցուց մխա Քլա-րի:

—Անոր ու փեսայ վեր ցատկե՛ցին։ Անկլիոյ դրամատան դրամատոմներ։ Բայց նոյն իսկ բեւեռային մեռուխեանց խորը կրօնէլատիացի մը ստակ կը համբէ անոնց։

—Պարո՛ն, ըսաւ Մօրթիմըը, ամենն այս չէ։ Վարթօն պարահանդէ՞սն է։

—Yes sir (այո՛, պարո՛ն։)

—Ըսէք որ անմիջապէս հոս գայ...

—Կը պարէ։

—Թող պարը դադրեցնէ։

Մօրթիմըը հրամայական ձեւով մ՚առեր է։ Տիգապար մ՚առնելի համ պակաս ի՛նչ նշանակութիւն ունէր միս էլֆիսի նման յաճախորդի մը բազդատմամբ։

Բայց յատակ փեսայն հասկցաւ որ պէտք էր հընազանդիլ։ Եւ Անկլիական քաղաքավարութեան յատկանիշ հզօր ոգնայարի և ծոծրակի ցամաք շարժմամբ մը բարեւելով՝ դուրս ելաւ։

—Այդ Վարթօնն ո՞վ է, հարցուց միս էլֆիս։

—Ո՛հ, չեմ ծածկեր ձենէ թէ չափազանց բազդասիրող մարդ մ՚է, և անկից ուրիշ մեկը չեմ ճանչնար որ կարող ըլլայ կէս գիշերուան պարահանդէսը թողուլ և արշալուսուն ճամբայ ելնել։ Միայն թէ ձեզի սուղ պիտի նստի...

Միս էլֆիս անբացատրելի հպարտութեամբ մը ժպտեցաւ։

—Պ. Մօրթիմըը զիս այդ Պ. Վարթօնը վճարելու չափ հարո՞ստ կը կարծէ։

—Ո՛հ, ըսաւ ահզանաւորը խոնարհելով։ Դուք ձեր աստակովին հազար Վարթօն կրնաք դնել...

—Եւ կը հաւատաք որ իրեն տրուած հրամանը պիտի կատարէ՞...

—Իւր խղճին սահմանը քսակին պարունակութիւնն է... և քսակն ալ լայն է...

—Ինձ պէտք եղած մարդն ալ այդ է։ Ա՛, բան մ՚ալ ըսեմ, պարոն Մօրթիմըը։ Չատոնց իվեր ընտանեացս վստահութիւնը կը վայելէք... կ՚ուզեմ բացարձակ իխանութիւն տալ ձեզ որ հարստութիւնս ուզածնուզպէս գործածեցէք նէթ...

—Եթէ՞։

—Ալճէբիյէն չվերադառնամ...

—Օրհո՛ղդ, գոչեց Մօրթիմըը, որ թէեւ ազնաւուր և Անկլիացի էր, բայց յուզած էր, ըսել է անանկ վոանդներու պիտի ենթարկուիք որ...

—Այդպիսի բան մը չ՚ըսի։ Բայց կը սիրեմ որ ամէն բան կանոնաւոր ըլլայ։ Գործը գործ է, այնպէս չէ՞։

Ան աստեն Մօրթիմըրի ականջին ծռելով՝ ցած ձայնիւ զանազան պատուէրներ տուաւ։

Սեղանաւորն ամենայն հանդարտութեամբ տեղապահին վրայ կը ծանօթագրէր իրեն տրուած տեղեկութիւնները։

—Ահա՛ Պ. Վարթօն, ըսաւ փեսայն որ կը վերադառնար։

Ան աստեն ոսկեգոյն կոճակներով կապոյտ պզեստ մը հագած մարդ մը ներս մտաւ, զոր անկարելի էր դեսպանատան կցորդ մը համարել։ Վրայն ամենեւին կրակոտ բան մը չկար։ Ոտագին գլխով հսկայ մը, որուն ցուրտը տնկուած, կարմիր մազերը ցցուած էին և ծնօտին տակի մօրուքը հրեղէն ասորակէտ մը կը նմանէր։

Բայց լուր ոչխարին աղջիկը նման լայն ձեռքերն ըստ պատուէրի կաշկանդուած էին սպիտակ ձեռնոցներու մէջ. սպիտակ փողպատ մը իւր վզին թուխ քսաներն ե-բեւան կը հանէին և կը ծռէր նաւու նման խոշոր փայլուն կօշիկները հագած ոտքերուն վրայ, որք կրնային ընկերութեան հիմ ըլլալ.

—Ո՜հ, պարո՛նն է, բսաւ միս Էլֆիս հետաքրքրութեամբ դիտելով զայն։ Բայց պարոնն Անկլիացի չէ։

—Անկլիացի՛, բսաւ միւսը շարունելով։

Ցետոյ անշուշտ հիւրընկալութեան օրէնքներն յիշելով՝

—Ամերիկացի, Պալթիմօրցի, բսաւ, և պատրաստ եմ ձեզի ծառայելու։

—Այժմ կը մնայ ձեզ, օրիո՛րդ, բսաւ Մօրթիմըը, վարձել նաւապետին հասկցնել թէ ի՛նչ կը խնդրէք իրմէ։

—Ամենայն յօժարութեամբ։ Նստի՛ք ուրեմն, նաւապետ։

—Ե՛ս, երբե՛ք, բսաւ Եանքին։ Միշտ ոտքի վրայ կը կենամ, այս է իմ սովորութիւս։

- Ախ՝ պէս թող ըլլայ։ Մարսիլիոյ նաւահանգստին մէջ նաւ մ՛ունի՛ք։

—Նա՛ւ մը. հրաշակերտ մը, հրաշալիք մը ըսի՛ք։ Կոկորդիլոսը բոլոր ծովուց վրայ ծանօթ է, վասն զի իւր կարողութիւնը լաւ ցոյց տուած է...

—Այդ նաւը ձե՞րն է։

—Հոգւով մարմնով։

—Ո՞րչափ ատակի եղած է ձեզ, նաւապետ։

—Ո՞րչափ ատակի։ Էէ՛. զարմանալի հարցո՛ւմ... ըսաւ նաւապետը սեղանաւորին նայելով, որ գլխի նշանով մը պատուիրեց որ հանդարտ կենայ։

—Նաւապե՛տ, բսաւ միս Էլֆիս ոտք ելլելով, ես հարուստ եմ, շատ հարուստ։ Գործ մը կ՛առաջարկեմ ձեզ և կ՛ուզեմ որ մեր ընելիք սակարկութենէն գոհ ըլլաք... Ուստի հարցումս փոխեմ... Կոկորդիլոսը քանի՞ կ՛ուզէք ծախել ինձ...

—Բայց կոկորդիլոսը ծախու չէ։ Կոկորդիլոսէն պատուիրուած... մեռնելը լաւագոյն է։

Եւ նաւապետը բռնցքի հարուածներ կուտար գլխուն, վասն զի յոյժ դրդռեալ վիճակի մը մէջ կը գտնուէր, որու պատճառը խմած օղւոյն քանակութիւնն էր։

—Հարիւր հազար ֆրանք, բսաւ միս Էլֆիս։

Նաւապետը կը շարունակէր գլխուն զարնել։

—Հարիւր քսանեւհինգ հազար։

Հարուածներն սկսան աւելի շուտ, բայց աւելի թեթեւ իջնել։

—Հարիւր յիսուն հազար։

Այս անգամ թեւերը վար ինկան։ Կոկորդիլոսի նաւապետը բացաւ բերանը, որու մեծութիւնը կրնար մրցիլ այն կենդանւոյն բերնին մեծութեան հետ, որու անունը կը կրեր իւր նաւն։

—Աղէկ գո՛րծ, բսաւ Մօրթիմըը գլուխը ցնցելով։

—Եւ դուք ալ ձեր սիրելի կոկորդիլոսէն չպիտի զատուիք, յարեց միս Ֆլարի խնդալով։ Վասն զի նաւն իմն ըլլալուն պէս, ձեզ նաւապետ պիտի անուանեմ...

—By God (տէ՛ր Աստուած). ուռ՛ւմ և կայծակ...

բայց ուրեմն կ'ընդունիմ...

—Սակարկութիւնը չմնցաւ։ Պ. Մօրթիմըր որոշեալ դումարը կը վճարէ ձեզ...

—Երբ ունեցած հաշիւնիս կարգադրենք, ըսաւ խոհեմ սեղանաւորը։

—Անշո՛ւշտ, գոչեց Վարթօն։ Գործը գործ է, Ուրեմն երեսուն հազար կլորիկ տօլար։

—Կլորի՛կ, ըսաւ միս Էլֆիս միշտ ժպտուն։

—Ուրեմն եղա՛ւ... Ձեռքերնիդ տուէ՛ք որ սեղմեմ։

Նորատի աղջիկը տոկաց։ Անշուշտ գիտէր թէ նաւարկութեան սովորութիւնն էր այս։ Բայց Վարթօնի ձե՛ռքը... Սակայն ամէն բան աչք առնելով իւր նուրբ ու վաւաշուկ ձեռքն անոր երկնցուց։

Վարթօն այս շարժումը տեսաւ, բայց ձեռք չէր տեսներ։ Ան՝ ձեռք չէր։ Ինքը սովորաբար հուժկու թաթերով ծովահէններու հետ գործ ունենալուն՝ խոշոր ձեռքեր սեղմելու վարժուած էր։ Ան տակնուվրայ ըմբռնելով և կարծես վախնալով որ այն աննշմարելի բանը չի գտնէր, կամաց մը իւր կոշտ ձեռքը դրաւ երկնցած մանրանկար ձեռքին վրայ։

Քաղաքավար փիղ մը այսպէս կրնայ բռնել շերեփ մը թաթիկը։

—Եւ հիմայ, ըսաւ միս Քլարի ոտք ելլելով, դացէ՛ք մեքենայն տաքցուցեք...

—Հէ՛, ի՛նչպէս, տաքցնե՞մ. հապա պարահանդէ՞սը...

—Ա՛հ, բուն պայմանն այս է... բայց յաստի հիմայ որ իրարու ձեռք սեղմեցինք, կարծեմ թէ դուք իմ նաւապետս էք...

—Արդարեւ իրաւունք ունիք. բայց, միս, սա սառնայ Մօրթիմըրն անանկ սքանչելի պրասնոի մը ունի որ մարդուս կոկորդը կը գգուէ։

—Ես կ'աղաչեմ և այն ըմպելիքէն քանի մը սրուակ կը ղրկէ ձեզ նաւուն մէջ. ուրեմն որոշուեցաւ... Ա՛րեւը ժամը քանիի՞ն կը ծագի...

—Եօթը տասներկուք անցած։

—Լա՛ւ ուրեմն. եօթը տասնեւչորս անցած խարխոխը պիտի վերցնէք։

—Որոշուեցա՛ւ։ Ա՛հ, կրո՛ղ, ահա՛ ծիծաղելի գործ մը. բայց այս տեսակ բաները իմ գործիս կուգան... կրնաք ապահով ըլլալ որ, մի՛ս, լաւ նաւապետ մը... և քալ նաւաստիներ ունիք. նաւուն մէջ ութ հոգի են... ամենէն պզտիկը ես եմ. Միայն թէ —և սկսաւ խնդալ— Տիկին Վարթօնը կայ, որ ամէնս կը տապալէ.

Վարթօն աշխարհի լաւագոյն կերպարանքն ունէր։ Նա տիպն էր այն անվեհեր նաւաստւոյն, որ բանի մ'առջեւ չ'ընկրկիր, որ ծովակ շահիլը կը սիրէ, բայց անդամ մը խօսք տալէ վերջը՝ Ամերիկեան չան մը պէս հաւատարիմ է։

Եւ բաց յաստի կը զուարճանար հնազանդելով այս սիրուն աղջկան, որ մարդ արտասնման ակռաները ցոյց տալով կը խնդար և որ այնքան փոքր ձեռքեր ունէր։ Միայն մէկ բանի մը կը ցաւէր. եթէ այդ աղջիկը գոնէ Ամերիկացի եղած ըլլար...

—Ո՞ւր պիտի երթանք, հարցուց։

—Ալճէրի... միայն թէ կէտ մ'ալ կայ, զոր պէտք է կարդադրել...

—Խօսեցէ՛ք, նաւապե՛տ, բսաւ Վարթօն զինուորական կերպիւ բարեւելով։

—Նաւահանգստին մէջ նշմարեցի՛ք այն գրօսանաւը, որու կարմիր դրօշին վրայ ոսկի լեռ մը նկարուած է...

Վարթօն աչքը քթթելով՝ քթիը վեր առաւ։

—Կեցէ՛ք, բսաւ չրթունքը արհամարհական կերպով մը երկնցնելով, առանց մ՛ընկուզի փեճեկ, որ կը յաւանէի ջուրին վրայ երթալ... և որ Ադիլոն կը կոչուի։

—Ճի՛շդ այն։

—Տղու խաղալիկ մը, յարեց Վարթօն։ Եթէ ազայ մ՛առնեինայի, ծախու կ՛առնէի զայն, որպէս զի կոնքի մը մէջ խաղայ...

—Ուրեմն կը կարծէք թէ չնորհքով նաւ մը չէ՞...

—Շնորհքով նա՛ւ. բայց փոքրիկ առագաստանաւով մը ջուրին տակ կը սուզեմ զայն։ Ա՜հ, դուք կոկորդիլոսը չէք ճանչնար։ Ի՜նչ կուրծք, ի՜նչ անդամներ...

—Աւելի՛ աղեկ... արդ, նաւապետ, Ադիլոնը—ձեր յիշած խաղալիկը—ճիշդ ձեզի հետ ճամբայ պիտի ելլէ։ Միայն թէ, թէեւ գիտեմ որ Ալճէրի կ՛երթայ, սակայն ո՛ր նաւահանգիստն երթալը ճշդիւ չեմ գիտեր Ալճէ՞ր պիտի երթայ թէ Պոն։ Ուսոի նախ պէտք է ըլլայ հասկնաք...

—Այդ դիւրին է, վասն զի նաւահանգստի դրասենեկին հետ աղէկ եմ, և նաւերուն ո՛ւր երթալն ալ արձանագրուած է հոն։

—Շատ լաւ։ Հիմայ ամէնն այս չէ. Ադիլոն որ նաւահանգիստը երթայ, պէտք է որ դուք իրմէ առաջ հոն հասնելու խօսք տաք...։ Կարելի՞ է այս։

—Կարելի՛ է մի, դոչեց Վարթօն, որ կարծեմ թէ Անդրովկէանեան Մարսիլիացի մ՛էր, բայց Կոկորդիլոսն իւր մեքենայով—իւր կլոռոցաւոր մեքենայով, օրիորդ—Սիւրուէի հովուն դէմ կրնայ մարտնչիլ։ Ան նաւակն անցնի՛լ, մրմնջեց՝ գոգցես այս հարցումն իսկ իւր սերտը խօցելով։

—Լա՛ւ, ուրեմն կրնամ ձեր վրայ վստահիլ։ Սակայն կ՛իմացնեմ ձեզ թէ թերեւս իրաւունք չունիք ձեր փոքրիկ հակառակորդն այդքան արհամարհելու...

—Բայց անոր կողերուն զարնելով կը ճաթեցնեմ և չեմ թողուր որ մեզ առաջ հասնի, գոչեց Վարթօն, որու դերեվաճառ ծովահէնի հինաւուրց ոգին կը զարթնուր։

—Այդ բանը կ՛արգիլեմ ձեզ. բայց չուշանանք...։ Բաւական լսեցիք... ժամը հօթին ճամբայ ելլելու ենք...

—Ժամը հօթի՛ն. և նայինք թէ ինձմէ գոհ պիտի ըլլաք...

Գանի մը վայրկեան վերջը սիրուն Անկլուհին հրաժեշտ կուտար Մօրթիմըրի և ձի կը հեծնէր, մինչդեռ մայր Գարաման կ՛ըսէր անոր.

—Ո՛հ, մի՛ւս, եթէ լօրա Էլֆին իմանայ...

—Օն ա՛նդր, բսաւ նորատի աղջիկը խնդալով, կը յուսայ որ ալ այս անգամ պարոն եղբայրս հարստութիւնս կը ժառանգէ։

ԺԵ.

Մաւտար

Մէրսէտէս և Հայտէ բազմոցի մը վրայ քով քովի նստած էին ազնիւ ճաշակաւ զարդարուն սենեկի մը մէջ, զոր քաղցր լոյս մը տարածող մեղրամոմէ ճրագներ կը լուսաւորէին։

Նոցա առիջ տակ, դորգին վրայ Իսբէրանս՝ կիսավին ընկողմանած, մորը ծնգացը կռթնցուցեր էր իր թուխ գլուխը, որու նուրբ և գանգուր մազերուն վրայ դրեր էր նորատի կինն իր ձեռքը։

Երկու կանայք իրենց մայրական սիրոյն վրայ երկրորդին խօսակցելէ յետոյ՝ կը լռէին։

Մի քանի վայրկեան վերջը երկուքն ալ առանց զաւկի պիտի մնային։

Անշուշտ Հայտէի հոգին աւելի զօրաւոր ըլլալու էր։ Նա քաշած չէր այն սոսկալի անձկութիւնները, որք Մէրսէտէսի հոգին ընկճած էին։ Գոնէ նա իր ամենասիրելի որդին կը յանձնէր այն մարդուն, զոր կը յարգէր իրրեւ հայր, իրր ամուսին, այն մարդուն, որու վրայ հեզրանացած էր իր ամբողջ հաւատքը։

Մինչդեռ Մէրսէտէս. ի՛նչ գիտեր նա։ Ալպեր, իր վերջին յոյսը, ապագային մէջ իրեն համար կարելի եղած միակ ուրախութիւնը, այն ամենասիրելի որդին անշուշտ այս ժամուս Փապիէներու եպարպանին տակ մնռած էր։

Եւ սակայն Թերեւս այս երկու կանանց ամենէն քաջասիրտ Հայտէ չէր։

Յորչափ կը մնտենար այն ժամը, յորում զինուբերան պիտի կորզէին իրմէ, կսկծագին ցաւ մը կ'ուռեցնէր իր սիրտը, որու բարախիւնները —ժամացոյցին անողոք ձայնին համընթաց— այնքան բուռն էին որ, խօսքերը կ'ընդհատէին չրթանցը վրայ։

Մայր մը միայն կրնայ հասկնալ զայս։ Ի՜հ, ի՜նչ փոյթն էր իրեն որ Ալպեր ազատ Մօրսէրֆ կենդանի ելլար կամ մեռած։ Ի՞նչ փոյթն էր իրեն թէ Մոնթէ-Քրիսթոյի պարտականութիւնն էր մինչեւ անապատին խորը երթալ բնաւել զայն։ Մինչեւ իսկ ի՜նչ փոյթ էր իրեն թէ Մոնթէ-Քրիսթօ կ'ուզէր զինուբերան քաջերուն քաջը, դիւցազն մը ընել։

Նա միայն սա դիտէր թէ որդի մը ունէր և զայն իրմէ պիտի առնէին։

Եւ Մէրսէտէս, որ այս ցաւը կը հասկնար, քանիցս ուզեց գոչել։

—Ամէն բանէ կը հրաժարիմ, պիտի պաղատիմ Մոնթէ-Քրիսթոյի որ որդիս թողու, դուք ձեր գաւակը պահեցէ՛ք։

Ապա խեղճ մայրը սոսկալի տեսիլ մը մէջ կը տեսնէր իր որդւոյն տարտամ ձեւը, որ կը տառապէր, կը չարչարուէր, բայց տակաւին կենդանի էր, և այն տեղն ա՛լ չէր կրնար խօսիլ։

Այս երկու մայրական ինքնասիրութիւնք —որ կնոջ ճշմարիտ մեծութիւնն է— անդադար պերճաբար կը քաշէին և կը մղէին ելեկտրական երկու թելերու պէս, որոց մէջէն միեւնոյն հոսանքը կանցնի— սիրոյ, անձնուիրութեան, գորովանաց հոսանք։

Իսբէրանս կ'երազէր։

Ա.յս երիտասարդ եղող տղուն ուղեղին մէջ տակաւին անմեկնելի գաղափարներ կը ծագէին։ Ա.յո՛, իւր մայրը կը սիրէր, և այս բաժանումը վէրքի մը պէս ցաւառիթ էր իրեն։ Բայց միւս կողմէն հայրը կը տեսնէր մեծութեան, գերմարդկային զօրութեան պատկով մը, և անյաղթելի ձգտում մը ղինքը կը քաշէր դէպի այն մարդը որ այնքան մեծ էր իւր բարութեան մէջ և այնքան վեհանձն՝ իւր առերեսումի անպարութեանց մէջ։

Ժամը վեց զարկաւ։ Մայր ու տղայ սարսռացին։

Մօնթէ-Քրիսթօ ներս մտեր էր։

Ա.յս մարմարեայ դէմքը թերեւս երբէք այնքան պայծառ և միանգամայն այնքան հանդիսաւոր արտայայտութիւն մը չէր ղգեցած։ Ա.յն լայն ու սպիտակ ճակտին վրայ պարտականութեան գծած տողերը կը կարդացուէին։ Մօնթէ-Քրիսթօ իւր ճակատագրին կը հնազանդէր, և կը խոնարհէր իւր կամքէն հզօր կամքի մ՚առջեւ, որ նպատակը ցոյց կուտար իրեն։

Էսբէրանս աչխուժիւ ոտք ելեր և վազեր էր հօրը բազկացը մէջ նետուելու։

Մօնթէ-Քրիսթօ անոր ճակատն համբուրեց։

—Պատրա՛ստ ես, որդեա՛կ իմ, հարցուց անոր։

—Ա.յո՛, ըսաւ Էսբէրանս պատանեկան յանդգնութեան ընորհալի շարժմամբ մը գլուխը վեր առնելով. ու՛ր՝որ երթաս, հա՛յր, որդիդ ալ քեզ պիտի հետեւի։

Հայտե ալ, արցունքները ծածկելով՝ ոտքի ելեր էր

Մօնթէ-Քրիսթօ երկու ձեռքն անոր երկնցուց. Հայտե անոր քով վազեց։

—Ո՛չ, երկուքդ ալ կը մեկնիք, երկո՛ւքդ ալ, մրմնջեց։

—Մէթէ վախ մ՚ունի՞ս, Հայտե, ըսաւ կոմսը ժպտելով։ Դիտե՞ս որ, սիրելի՛ կին, կարծեցնել կուտաս ինձ թէ հաւատքդ կը տկարանայ։ Ի՞նչ բանէ կ՚երկնչիս։ Ա.յդքան հեռո՞ն կերթանք. քանի մը ժամէն Ա.ճէրիական ցամաքը պիտի ելլենք։ Եւ գիտես որ արդիւնքները զիս չեն կասեցներ...

—Դոնէ, ըսաւ Հայտե, եթէ գիտնայի թէ ե՛րբ պիտի վերադառնաք...

—Քիչ առնէն կիմանաս։ Սուրհանդակներս ամէն օր տեղի ունեցած անցքերուն վրայ տեղեկութիւն պիտի բերեն քեզ, և գիտես որ երբ միանգամ վերադարձիս ճիշդ օրը որոշեմ, չկայ մարդկային զօրութիւն մը որ կարենայ զիս խօսքէս դարձնել։

Մէրօֆէսի դարձաւ.

—Տիկին տը Մօրսերֆ, ըսաւ, կը տեսնէք թէ ինչեր կը զոհեմ պարտուցս համար։ Մայր մը մխիթարելու համար ուրիշ մայր մը կը վշտացնեմ։ Հայտես սիրեցէ՛ք, և տխրութեան աւուրց մէջ՝ բարեկամուհիէ մ՚աւելի, քոյր մ՚եղիք իրեն համար...

—Ո՛չ, կ՚երդնում, ըսաւ Մէրսէտէս։ Ցետոյ, ականջ չարժմամբ մը, Հայտէն թեւերուն մէջ սեղմեց։

—Պարոն տը Մօնթէ-Քրիսթօ, ըսաւ, գիտէք որ ես ալ զուր տեղը խօսք չեմ տար։ Լա՛ւ ուրեմն, տիկին կոմսուհին թող միակ բառով մը, մէկ նշանով մը ձեր մեկնելուն ընդդիմանայ... և այն ատեն կ՚երդնում թէ ամենէն առաջ ես պիտի գոչեմ ձեզ. Իւր որդին պղտացող վշտակիր մայրը թո՛ղ մեռնի, բայց դոնէ Հայ-

ատէ թո՛ղ երջանիկ ըլլայ։

—Կը լսե՛ս, Հայտէ, ըսաւ Մօնթէ-Ֆրիսթօ՝ իր խոր և անուշ նայուածքը Թէբէտէլէնկի Ալիսի աղջկան վրայ յառելով։ Ինծի՛, ի՞նչ կը հրամայես։

Տաք և խանդավառ լոյս մը տարածուեցաւ Հայտէի հիանալի դէմքին վրայ։

Եւ զէնթբերանս առ ինքն քաշելով՝ հօրը բազկացը մէջ հրեց ու ըսաւ.

—Ե՛րթ, որդեա՛կ իմ, և հօրդ արժանի եղի՛ր...

—Ո՛հ, հազար անգամ օրհնեալ ըլլաք, գոչեց Մէրսէտէս։ Ո՛հ, հիմայ... գիտեմ, կ՛ըսեմ թէ որդիս պիտի տեսնեմ...

Կոմսը շուտ մը արշաւանաց վերջին հրամանները տուաւ։

Իր ամենէն ընտիր զէնքերն ընտրած էր, այն զէնքերը, որք երբեք իր ձեռքը չէին վրիպեցուցած։

Եւ ճիշդ այն ժամուն որ արեգակը դեղագիծաղ պայծառութեամբ մը հորիզոնին խորերէն կը ծագէր, նաւակ մը նաւահանգիստէն կը դուրս էր և Մօնթէ-Ֆրիսթօն ու Լաբէբրանսը դէպ ի Ալկիսն կը տանէր։

Ծովեզերքին վրայ Հայտէ և Մէրսէտէս իրենց թաշկինակները պարզած՝ գացողները կը բարեւէին։

Երբ Մօնթէ-Ֆրիսթօ ոտքը դրօսանաւուն կամուրջին վրայ դրաւ, իր դէմ գաւազանօ, որ նաւաստիի հագուստներով իրեն կ՛սպասէր՝ քաւութեան յուսով երիտասարդացած ու պայծառացած։

—Մարդիկդ ժողուեցի՞ր, հարցուց կոմսը։

—Այո՛, տէ՛ր։

—Քանի՞ հոգի են։

—Տասն, որոց ամենքն ալ Ափրիկէ ճամբորդած են։

—Քաջ ու պատուաւո՞ր են։

—Կը համարձակիմ ըսել թէ անձիս պէս պատասխանատու եմ անոնց համար...

—Լա՛ւ։ Ա՛հ, Քուքու, ըսաւ Մօնթէ-Ֆրիսթօ գլուխը տեսնելով՝ որ գինաբարուի կեցած էր։ Ձկդապահ ես եղեր։

—Ո՛հ, խօսք տուեր էի։ Բաց յաւտի, քանի որ խնդիրը հարիւրապետիս վրայ է։

Մօնթէ-Ֆրիսթօ, իր սովորութեան համեմատ, դբնաց արագ նայուածք մը ձգեց գրօսանաւուն կարգադրութեանց վրայ։

Ադկիսն չինուածքը մ՛էր։ Կոմսն այն նախկին առագաստաւոր գրօսանաւուն անունը միայն պահած էր։

Մօնթէ-Ֆրիսթօ, որ շարունակ գիտութեան յառաջդիմութեանց հետամուտ էր և զանոնք կը գնահատէր ու գործես կը դուշակէր, ի վաղուց զգացած էր թէ պտուտանիւը (hélice) մեծ ապագայ ունէր։ Եւ Պետութիւնը Հավրի մէջ իր առաջին պտուտանուաւոր նաւը չինել չտուած, կոմսը Ամերիկայէն գներ էր իր հիանալի գրօսանաւն, որ այնքան թեթեւ և այնքան շնորհալի էր որ, արդարեւ ամէն առեւտուրնէ աւելի արժանի էր այն ծովային արագաթռիչ թռչնոյն անունը կրելու։

Ահա՛ վարթօնի արհամարհանօք ընկուզի փեճիկ կոչածն այս էր։

Ծանրագանդաղ կոկորդիլոսն իր ահագին բահանիւներովն (roue à aubes) նաւահանգստին բերանը կը տա-

տանէր արդէն։ Վարթօն ապահով էր յաղթելուն, մանաւանդ անանկ մրցողի մը որ կարծես մրցման կարելիութիւնն իսկ չէր հասկնար։ ուստի կամուրջին վրայ կ'երթեւեկէր ձեռքերը չփելով և միս էլֆիսի խոստացած առատ պարգեւը մտածելով։

Ժամը եօթը զարկաւ։

Մօնթէ-Քրիսթօ նաւուն բարձրաւանդակին վրայ կանգուն կեցած, ձեռօք բարեւելովային կինները, զորս իր եւին կը թողուր, քովն ունենալով զէնբերանս, որ համբոյր մը կը զրկէր իր մօրը, մեկնելու նշանը տուաւ։

Ադկիսն, պատուանդանն հնազանդելով, թեթեւակի ինքն իր վրայ դարձաւ, առաջակողմը ջուրին մէջ խրեցաւ, յետոյ չակուելով՝ նետի մ'արագութեամբ մեկնեցաւ։

—Կեցցէ՛, գոչեցին նաւաստիք՝ ծրանսական ցամաքին հրաժեշտ տալով։

Մօնթէ-Քրիսթօ իր տեղը կեցաւ մինչեւ որ ցամաքն աներեւոյթ եղաւ։ Ո՛վ գիտէ ի՛նչ մտածումներ իր սիրտը կը ճնշէին։ Ո՛վ գիտէ թէ, պարտականութեան ձայնին հնազանդած առեն, ցաւագին վիշտ մը չէր զգար առ անծանօթն երթալու համար բաժնուելով այն կնոջմէն, որ իր ապագան ու երջանկութիւնն էր։

Յետոյ ծովեզերեայ գիծը ջնջուեցաւ, մեզին մէջ կորսուեցաւ։

—Եկո՛ւր, էսբէրանս, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ իր որդւոյն։ Պէտք է որ հիմայ սովրեցնեմ քեզ ճանչնալ այն վտանգները, որոց պիտի ենթարկուիս։

Երկուքն ալ իջան Մօնթէ-Քրիսթօյի խցիկը, որ կապրութեան և հանգստութեան հրաշալիք մ'էր։ Գըրքեր, աչխարհացոյցներ, գիտութեան ամէն տեսակ օժանդակներ պատրաստ էին հոն խորհուրդ հարցնելու համար։

—Քովս նստէ՛, էսբէրանս, ըսաւ կոմսը, և յիշէ՛ որ աշխատութիւնը միայն արժանի կ'ընէ զմեզ մարդ կոչուելու։

Ժամ մ'անցած էր այս սիրուն խօսակցութեամբ, յորում Մօնթէ-Քրիսթօ և ոչ իսկ անգամ մը էսբէրանսի ուշը չէր տազակացուցած, երբ յանկարծ գբօսանաւուն կամուրջին վրայ մեծ աղմուկ մը եղաւ։

Մօնթէ-Քրիսթօ աչխուժիւ կանգնեցաւ։ Սովորաբար ինքը նաւը գտնուած առեն, նաւաստիք առնախիտ կարգապահութիւն մը կը պահէին։

Բարկութեամբ խցիկին դուռը բացաւ և խստիւ պատժելու պատրաստ էր,

Եւ այն վայրկենին կամուրջէն դահլիճն իջնող փոքրիկ սանդուղքն ի վար կոյտ մը դլտորեցաւ հայհոյանօք և կցկտուր խօսքերով։

Ապա յանկարծ այդ կոյտը կանգնեցաւ։

Եւ քուքու՝ տարօրինակ կերպիւ այլանդակ մարդու մը կոկորդէն բռնած՝ կոմսին առջեւ կայնեցաւ։

Ան մարդը բարձրահասակ էր և անանկ ցնցուխներ հագած էր, զոր Պաղաններու ամենէն անանկացեալն իսկ չպիտի ուզէր հագնիլ։ Դէմքը ոսկրուտ, սոսկալի կերպիւ նիհար և ցից յանձորակներով. մարմինը սեւուրակ, ձեռքերը բարակ ու երկայն. սրունքները մերկ, ոտքերը ճաթռտած բապուճներ հագած. ահա այն մարդը, զոր հուժկուն քուքու աղուոր մը կը ցնցէր։

—Ի՞նչ կայ, հարցուց Մօնթէ-Քրիսթօ։ Չէ՞ք գիտեր որ, պարոն Քուրքու, իմ նաւուս մէջ այդ տեսակ կըռևնեն արդիլեալ են։

—Այնո՛ւամայ, հրամանատար, անշուշտ... Ես ալ չպիտի համարձակէի... երբեք.., Սակայն անդամ մը սա մարդուն նայեցէ՛ք...։ կախազանէն վար առնուողի մը չի՞ նմանիր։

Մօնթէ-Քրիսթօ ուշի ուշով դիտեց այն մարդը, զոր այժմ Քուրքու թողած էր։

Աչերը խոնարհեր էր, երկու ձեռքերը ծալած՝ կուրծքին վրայ կը սեղմէր պուրնուզի մը ծալքերը, որ կարծես թէ դանակով դիտմամբ պատռտուած էր։

—Ա՛յս մարդն ուսկի՞ց գտար, հարցուց Քուրքուի.

—Ունջէն... չեմ գիտեր այն տեղի անունն ի՞նչ է... կրակի անենկին մօտ, ուր ինքզինքը խորովել տալու վրայ էր, երբու թէ արդէն բաւական չոր եղած չըլլար։

Անոր մ՛անցաւ կոմսին ճակտին վրայէն։

Ա՛յս անծանօթին դիրքին մէջ, հակառակ իր ակներու չքաւորութեան և չուառութեան, տեսակ մը մեծութիւն կար, որ գինքը կը զարմացնէր։

—Դու ո՞վ ես, հարցուց անոր, և հոս ի՞նչ գործ ունիս։

Մարդը, կարծես լսած չըլլալով, անշարժ մնաց։

Ա՛յն ատեն Մօնթէ-Քրիսթօ իր հարցումը կրկնեց ամենամեքուր արտաբերչութեամբ։

Ա՛յս անգամ մարդը թեթեւակի ցնցուեցաւ, բայց ինքզինքը շուտով զսպեց, սակայն այս շարժումը Մօնթէ-Քրիսթօյի աչքէն չվրիպեցաւ։

—Աղքատ մ՛եմ, ըսաւ մարդը։

—Ձբօսանաւն ի՞նչպէս մնար։

Արաբը անվոյթ շարժմամբ մը պատասխանեց։ Իր նայուածքը, որու մէջէն քիչ մ՛առաջ փայլակ մ՛անցեր էր, այժմ աղօտ և անգոյն էր։

Մօնթէ-Քրիսթօ իր բովանդակ կորովամտութիւնը ամփոփելով՝ աչքն անկէ չէր զատեր։ Ա՛յս անտարբեր դէրքին տակ Արաբացւոյն իսկ կեղծաւորութիւնը կը գուշակէր։ Ա՛յս մարդն ո՞վ կրնար ըլլալ։

Պէ՞տք էր հաւատալ թէ, ինչպէս որ երեւոյթները ցոյց կուտային, իր դէմը գտնուողը գրեթէ անբան թշուառին մէկն էր որ, իր երկիրը վերադառնալու համար ատակ չունենալով, դիշերուան օգնութեամբ ձբօսանաւը մտեր էր, յուսալով որ չի բռնուիր՝ մինչեւ որ նաւն Ափրիկեան ցամաքն հասնի։

Ա՛յո՛, այս ենթադրութիւնը կրնար հաւանական ըլլալ։ Սակայն Մօնթէ-Քրիսթօ անով չբաւականացաւ։

Անյախճի նշանները, որք երէմն ուրիշին աչաց անընշմարելի էին, կը ժխտէին զայն։

—Ուրեմն, ըսաւ յանկարծ Արաբին, որ նորէն թեւերը կուրծքին վրայ ծալած էր, Ֆռանսա՞ էիր։ Ի՞նչպէս եկեր էիր հոն...

—Քու ապգիդ մէկ նաւովն...

—Ո՞րքան ատենէ ի վեր...

—Վա՛յ օրերն ու վայրկեաններդ համրուին...

—Ինչո՞ւ ինձի չդիմեցիր։ Կը կարծե՞ս որ քեզ նաւս առնել պիտի մերժէի։

Արաբացին հպարտութեան անբացատրելի շարժմամբ մը գլուխը վեր առաւ։

—Խնդրե՛մ, բաւ պարզապէս։

—Սակայն ի՞նչ պիտի ըսէիր, եթէ նաւակ մը ծոպէ իջնցնելով, քեզ թողէի...

—Աստուած մեծ է...

Քուքու բառերը կը սեղմէր. արաբերէնը բաւականան հասկնալով՝ այն խորհրդաւոր մարդուն պատասխանները կը կռահէր։ Նա ունէր այն հոտառութիւնը, որով մարդ թշնամին կը գուշակէ։ Եւ երբ Մօնթէ-Քրիսթօ սպառնացեր էր այն մարդը լքանել, զուարթ քիչ մնացեր էր որ այն խօսքերը բուն իմաստովին առնելով՝ անծանօթը նաւուն եզերքէն վար նետէր...

Մինչեւ իսկ քայլ մը յառաջացաւ։ Բայց կռնակը նըշան մ՚ընելով կեցուց զայն։

—Ա՛յլ դու, բաւ Աբաբէն, պէտք չէր դու ինքդ առնէիր ինչ որ մենք պիտի տայինք քեզ։ Ի՞նչ որ է. ես հիւրընկալութեան պարտքերը դիտեմ։ Հոս իմ տանս մէջ ես, և ցորչափ այս գրօսանաւն իմն է, դու քու տանդ պէս ապահովութեան մէջ պիտի ըլլաս։ Գնա՛։

Եւ Քուքուին դառնալով՝

—Ա՛յս մարդն իմ հիւրս է, ըսաւ. քեզի համար ալ նոյնպէս թող ըլլայ...

Աբաբացին ձեռքը ճակտին տանելով խոնարհեցաւ դէմքին և ոչ մէկ չիզը չէր շարժած։ Դէպի սանդուղքը գնաց։

—Խօսք մ՚ալ ըսեմ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ։ Անունդ ի՞նչ է։

—Անունս Մալտաք է։

—Բայց կ՚ըսես թէ ազգաւոս, և անունդ հարուստ կը նշանակէ։

—Նա զոր Աստուած կը պաշտպանէ՝ հարուստ է, ըսաւ Աբաբը կոկորդային ձայնիւ։

—Ա՛, մոռցեց Քուքու, քեզ աչքէս չպիտի հեռացընեմ։ Դուն ազէկ մէկը չես երեւնար ինձ։

Մօնթէ-Քրիսթօ էսբէրանսի հետ իւր խցիկը մտաւ։

ԺԴ.

Միս էլֆիսի գաղտնիքը

Միս Էլֆիսէն ուրիշ որ և է անձի համար պզտիկ դրժած մը չէր առաւօտեան ժամը վեցին հեռաւոր ճամբորդութեան մը պատրաստ գտնուիլ, երբ որոշումը կէս գիշերուն տրուած էր։

Բայց քաջ աղջիկ մ՚էր նա, որ շարունակ զարդ արած ըլլալով՝ նաց զրաղեալ թեթեւսոլիկ օրիորդաց ճղճիմութիւնները չունէր։

Իշխանուհւոյ մը մարմնոյն մէջ դիւցազնուհւոյ մը հոգին կրող այս անուշ և անբիծ դիմօք, զուտ ոսկւոյ գոյն խարտեաշ մազերով, մանկական ձեռքերով պերուն արարածն աննման քաջասրտութիւն մ՚ունէր։

Նա այն աղնիւ ցեղէն էր, զոր Վօլթը Սքօթ մարմնաւորած է իւր հիանալի Ջիանա Վէընօնի անձին վրայ։

Միսիւալատի ամարանոցը վերադառնալուն պէս, առանց վայրկեան մ՚իսկ հանգչելու, իւր պատրաստութիւններն աւարտեր էր։

Եւ մայր Բարամանի հոգին բերանը կուգար։ Քիչ մ'ալ քթին տակէն կը մռլտար։

Միթէ խելացնա՞ծ էր այսպէս յանկարծակի կապիկներուն երկերն երթալ, երբ Մարսիլիոյ դիղձիկ կլիմայէն տակ այնքան հանդիստ էին։

Ըստ իւր կարծեաց այս կապիկ բառը կը պատշաճէր Ալճէրիի մէջ բնակող թէ՛ կենդանեաց և թէ՛ մարդոց։

Արաբ ըլլալով միայն այն ցնցադեստ մարդիկը տեսած էր, որք երբեմն Քանընպուկերի վրայ կը պտտկէին իրենց սեւ ու երկար մարմինն մաշած պուրնուզներուն մէջ պլլած։

Բայց երկու պատճառաւ անկարելի էր դիտողութիւն մ'ընել։

Առաջինը սա է որ, միս Քլարի այնքան կ'աճապարէր որ վայրկեան մը միջոց չկար խօսակցելու։ Երկրորդ ալ սա էր որ, եթէ դիպուածաւ քիչ մը բարձրաձայն մռլտալու սկսէր, նորատի աղջիկն այնքան անուշ կերպով մ'երեսը կը նայէր որ Ասիկանի այրին սիրտ ուժգին բաբախելով՝ կ'ամիսպուէր լռել։

Տաներկուքի չափ ահագին մնաուկներ, դրքեր աչխարհացոյցներ, ամէն դոյնէ չրջազգեստներ, ընտիր բնվոլվիններ և երկու երեք աղնիւ հրացաններ, բոլոր աստնք կարծես դիւթուելու կը դիզուէին։

Ժամը չորսին միս Քլարի ձօնը կոչնց, որու հրամայուած էր չպառկիլ, և որ թէ և եղածներէն բնաւ տեղեկութիւն չունէր, բայց եթէ Անկլիոյ դրամատան ամբողջ գանձերն իսկ տային իրեն՝ չպիտի ժառէր ամենափոքր նախադքը հարցուփորձ մ'ընել։

Տիպար ծառայ մ'էր նա որ միշտ թարմ ածխլուած

էր, իւր կամենախառն յուրմի դոյն սպասազդեստին մէջ պաղ և չեփ չիտակ կեցած՝ կարծես միշտ առիթ մը դուրս կ'ելլէր։ Ձօն ամէն կոչման պատրաստ էր և ամենէն այլանդակ հրամանն իսկ կրնար կատարել առանց վարանելու։

Արդէն տեսանք որ տիրուհին նշան մ'ընելով՝ նա ամենայն անտարբերութեամբ ձիերը Մօրթիմըրի ապարանքը մտցուցեր էր։ Քանի որ միս Էլֆիս կը հրամայէր, ըսել է թէ պէտք էր որ այնպէս ըլլար։

Արդ նորատի աղջիկը զանգակը զարնելով՝ ձօն անտարբեր կերպով մ'եկաւ և կարծես արշալուսէն առաջ ընդքը կոչելնին յոյժ բնական կը թուէր իրեն։

—Ձօն, ըսաւ միս Քլարի, ճամբու կառքը թո՛ղ լծեն։

—Այո՛, Միլէտի՛։

—Բոլոր այս կահերը կառքը կը տանիս...

—Այո՛, Միլէտի՛։

—Ծետոյ Մարսիլիա պիտի երթանք։

—Այո՛, Միլէտի՛։

—Կառապանը կառքը հոս պիտի վերադարձնէ. իսկ դուք ինձի հետ պիտի գաք...

—Այո՛, Մելէտի՛։

—Աղէկ միտքս եկաւ. եթէ պատրաստութիւն մ'ունիք ընելու, տասը վայրկեան միջոց կուտամ ձեզ։ Ալճէրի պիտի երթանք։

—Այո՛, Մելէտի՛։

Եթէ ըսէին իրեն թէ մեկ քառորդէն դէպի լուսին պիտի ուղեւորէին, իւր յաւիտենական Այո՛, Մելէտի պատասխանը պիտի տար։ Ուստի յօնքերն իսկ չպատուեց. եռին դարձաւ և դուրս ելաւ։

Քանի մը վայրկեան վերջը ձիոց դափրը կը լսուէր։

—Լսել է, ըսաւ մայր Քարաման գերագոյն ճիգ մ'ալ ընելով, այս խենթութիւնը ճշմարիտ է։ Ծանապարհատից Եւրոպային կը մեկնինք, ինչպէս որ առնով Լ.ծնարային Ուինսաօր կ'երթայինք։ Գիտէ՞ք որ, մի՛ս, յանցաւոր եմ այսպէս ձեր մոռահաճութեանց համակերպելուս։ Զախազանց ներողամիտ եմ... վասն զի վերջապէս...

Տեսնելով որ նորատի աղջիկը յանկարծ ծանր կերպարանք մ'առնելով՝ իւր խօսքը չէր ընդմիջեր, ակռաս յուսալ որ իւր ճարտարաբանութիւնը պղտեցութիւն կ'ընէր և եռանդեամբ շարունակեց։

—Վասն զի վերջապէս եթէ դիպուածաս աղէտ մը պատահի ձեզ... նախ ապահով եղիք թէ ձեզ շատ, թերեւս չափազանց կը սիրեմ... և վշտէս կը մեռնիմ ... և յետոյ մոռածեցէ՛ք թէ ինձ համար ի՛նչ մեծ պատասխանատուութիւն է այս ձեր ընտանեաց քով։ ի՛նչ խայթ խղճիս համար։ Օ՛ն, միս Քլարի, կ'աղաչեմ, խորհեցէ՛ք. տակաւին ժամանակ կայ։ Եւ այս մասին յաւիտեան երախտապետ պիտի ըլլամ ձեզ։ Կեցի՛ք, դոնէ երկու օր... քանի և չորս ժամ սպասեցէք... և եթէ անկից վերջը դարձեալ մեկնիլ ուզէք, կը խոստանամ որ ամենեւին դիտողութիւն չընեմ։

Բարեսիրտ Քարամանի շունչը կտրեր էր. այս խօսքերը շատ շատ և առանց շունչ առնելու ըսեր էր, զոր ցոյց կու վանալով որ միս Քլարիի ամենափոքր մէկ խօսքն իւր խրատաբանութիւնը չընդհատէ։

Իւր ճառը —թէ և շատ տրամաբանական չէր, վասն զի նորատի աղջկան աղէտ մը պատահած առնն եթէ պիտի մեռնէր, հաւանական չէր որ անկից վերջը խղճի խայթեր զգար և իւր պատասխանատուութիւնը յոյժ կը թեթեւնար —այսու հանդերձ յոյժ ճշմարիտ և սրտաշարժ էր։

Միս Էլֆիս երկու ձեռքն անոր երկնցուց։

—Ո՛չ, ո՛չ, փաղաքչանք չուզեր, օրիո՛րդ։ Նախ պատասխան տուէ՛ք և համարձակեցէք ըսել թէ անիրաւ եմ...

—Դու միշտ իրաւունք ունիս, Սիրելի մայրի՛կ, և սակայն...

—Եւ սակայն դուք ձեր գլխուն վէշածը պիտի ընէք։ Հապա թէ որ ես մերժե՛մ ձեզ հետեւիլ...

—Ձիս պիտի վշտացնես՝ ահա՛ այնչափ։ Օ՛ն. հիմայ ալ դու զիս մոխիկ ըրէ։ Ես երիտասարդ և անձիս տէրըն եմ. մեծ հարստութիւն մ'ունիմ և կենացս առաջին ուրախութիւնը քեզ պարտական եմ որ բարիք ընել սովրեցուցիր ինձ։ Զմոռնամ ըսելու որ մեր բոլոր ազգականները Մօրթիմերի յանձնարարեցի...

—Բարի՛ սիրտ, մրմնջեց մայր Քարաման, որ կ'սկսէր վատանալ։

—Անոնց բան մը չպիտի պակսի։ Ա՛յս լմնցաւ...։ Հիմայ ուրիշ բան կայ։ Քալ եմ, առողջ եմ, հարուստ եմ...։ Եւ սակայն երկրի վրայ ի՞նչ բանի օգտակար եմ, կենաց մէջ ի՞նչ չահ ունիմ։

Խոր վհատութեան չարժում մ'ըրաւ.

—Ո՞վ զիս կը սիրէ, մրմնջեց այնքան ցած ձայնիւ որ, խօսքերն հազիւ լսելի էին։

—Ո՛հ, օրիո՛րդ, մրմնջեց մայր Քարաման, որու սուր ականջը լսեր էր։

Մինչ Քլարի մեղմիւ անոր քով նստաւ եւ մէկ թեւն անոր վիզը նետեցուց՝

—Ի՞նչու չարութիւն կ'ընես։ Գիտես որ ես քեզի համար չեմ ըսեր։ Դու զիս կը սիրես... Թերեւս արժանիքէս աւելի կը սիրես։ Ես ասոր չեմ տարակուսիր։ Բայց վերջապէս... զգացածս ես ալ չեմ հասկնար... Ինձ այնպէս կը թուի թէ սիրոյ արժանի եմ... եւ թէ կեանքս մէջ չեմ գիտեր ինչ բան կը պակսի, զոր չեմ կրնար բացատրել...

—Եւ այդ «չեմ գիտեր ինչը» ընտրելու համար... Ալճէրի՞ կ'երթաք։

—Վերջապէս մի՛ խնդար, բարեսի՛րտ Քարաման։ Ներողամիտ եղի՛ր։ Ա՛յո՛, Ալճէրի կ'երթամ օգնելու համար մեկուն... այնպիսի գործի մը մէջ, որ բարի եւ արդարացի կը թուի ինձ...

Քարաման իւր անկեղծ աչերը վեր առաւ եւ Քլարիի վրայ յառեց։

Բայց Քլարի դողդոջ չփոթելով՝ աչերը խոնարհեց։

—Կարծես թէ ըսածս չես հասկնար... Խնդիրը մէյ-մէկ էակի վրայ է, այն կնոջ վրայ, որ իւր որդին կ'ողբայ... Ո՛րքան ալ որ տխար եմ, կ'ուզեմ իմ աջակցութիւնս նուիրել այս աղաւոութեան, փրկութեան գործին։ Մտածէ՛ թէ ինչ ուրախութիւն պիտի զգամ այն օրը որ այս մայրը կարենայ գրկել իւր որդին եւ ես ալ կարենամ ինքնիրենս ըսել. Ա՛յս ուրախութեան պատճառը քիչ մ'ալ ես եմ։

Խնամակալուհին լուռ ու մտախոհ կը կենար։ Ա՛յլ եւս Քլարիի երեսը չէր նայեր, եւ Քլարի բարկանալով այս լռութեան, որ սակայն ո՛չ դովեստ կը նշանակէր եւ ո՛չ պարսաւանք, դոչեց։

—Զարմանալի՛ բան, կարծես ըսածներս չես լսեր։ կարելի է տակաւին Ֆրանսերէնն լաւ չեմ կրնար խօսիլ։ կ'ըսեմ թէ բան մը չեմ ըներ, ոչ ուժգ օգտակար եմ... թէ ընդհակառակն անանկ մարդիկ կը տեսնեմ, որք բովանդակ կեանքերնին, ամբողջ ոյժերնին ճակատագրին դէմ մարտնչելու, բարիները չարերուն դէմ պաշտպանելու կը գործածեն... լա՛ւ, ես ալ կը փափագիմ անոնց նմանիլ, ահա՛ այսչափ։ Հիմայ ըսէ՛ք թէ յոյժ անիրա՞ւ եմ...

—Այդ «անանկ մարդիկը», ըսաւ պարզապէս մայր Քարաման, պ. տը Մօնթէ-Քրիսթօն է։

Նորատի Անկլուհին սարսռաց։ Ինքը չէր համարձակած այս անունն արտասանել։

Սակայն անկեղծ բնաւորութիւն մ'ունենալով՝ պատասխանեց։

—Ա՛յո՛, իմ օրինակս պ. տը Մօնթէ-Քրիսթօն է։

—Եւ մինչեւ Ափրիկէի անապատներն խորը պատրա՞ստ էք այդ օրինակին հետեւելու։

—Ա՛յո՛։ բարի գործի մը համար ո՛ւր որ երթայ՝ ես ալ պիտի երթամ։

Եւ միս Էլֆիսի դէմքը խանդավառ էր։

Մայր Քարաման զարմանալի կերպիւ ժպտեցաւ, յետոյ Քլարիի նայելով՝

—Կը տեսնեմ որ ըսելիք մը չունիմ, ըսաւ, մնանալու որ ձեզ վիրաւորեցի։

—Ձի՞ս։

—Անշուշտ, քանի որ... երբ մայր Ոատիկան չէք վարուիր հետս այլ եւս։

—Բայց կը սխալիք։

—Ամենեւին . . . Ապացոյցն ալ սա է որ դուք իսկ չէք նշմարեր թէ միս պլեւս չէք դուդեր։

Միս Քլարի ապշած ձեռաց։ Արդարեւ այս բանը չէր նշմարած։

Եւ, զարմանալի բա՛ն, դէմքը բարի խնամածուէն ուսին վրայ ծածկելով՝ սկսաւ արտասուել։ Ինչո՞ւ համար կուլար։

Նորատի աղջկանց հոգին խորհրդաւոր անդունդ մ՚է, զոր ամենէն փորձ հոգեբանք չեն կրնար հասկընալ։

Մայր Քարաման զայն առ ինքն քաշեց և չրթունքը մայրաբար և ջերմեռանդութեամբ նորա ճակտին դրաւ։

—Զաւա՛կս, ըսաւ ցած ձայնիւ, սիրելի՛ աղջիկս, զգուշացի՛ր . . . զգուշացի՛ր։

Ցետոյ, կարծես միտքն անանկ բան մը գալով՝ որու վրայ աւելի երկար ատեն կանգ առնելն անպատշաճ էր։

—Լա՛ւ ուրեմն, ըսաւ ոտք ելնելով. ձօն ի՛նչ կ՚ընէ, կառքը . . .

—Ա՛հ, սիրելի՛ մայրիկ, մրմնջեց միս Քլարի, որ այս գաղտնաբար տրուած հաւանութիւնն հասկցեր էր։

Եւ կարծես թէ ձօն —Որատիոսի յիշած անայլայլ մարդը— այս վայրկենին կ՚սպասէր երեւան ելնելու համար, վասն զի դուռը բացաւ ու ըսաւ։

—կառքը Մէլէտիին կ՚սպասէ . . .

—Օ՛ն, գոչեց մայր Քարաման թեթեւ ձայնով մը։ Եւ լաւ գիտցէ՛ք որ, օրիորդ, յարեց մատովը Քլարիի ապառնալով, լաւ գիտցէք որ ես հոն եմ, հոն պիտի ըլլամ և ձեր վրայ պիտի հսկեմ . . .

—Շնորհակալ եմ, մայր Ոստիկա՛ն . . .

Ապա հնազանդելով այնպիսի մղման մը, զոր չէր կրնար զսպել, մայր Քարամանի երկու այտերն համբուրեց ու ըսաւ.

—Ա՛հ, եթէ գիտնայի՛ր . . . չատ կը սիրեմ զքե՛զ . . .

կառերը բեռցուած, կառապանն իւր նստարանին վրայ և ձիերը մեկնելու պատրաստ էին։ Ձօն ամենայն յարգանօք գերապոյն հրամանին կ՚սպասէր.

—Go ahead! (յառա՛ջ) գոչեց մայր Քարաման։

Եւ կառքն, Անկլիական հուժկու ձիոց արշաւով, դէպ ի Մարսիլիա սլացաւ։

Ճամբան երկար ատեն լռեցին։ Միս Քլարի կը մտածէր . . . ի՞նչ բանի . . . կամ որո՞ւ վրայ։

Մայր Քարաման ալ կը խորհէր և ինքնիրեն կ՚ըսէր.

—Այսօր քանի տարեկան չեմ, բայց ժամանակաւ եղայ և դիտեմ թէ նորատի աղջկան մը մտքէն ի՛նչ բաներ կրնան անցնիլ։

Ցետոյ ցած ձայնիւ, այնքան ցած որ «իւր պզտիկ մտան» իսկ չէր կրնար խմանալ զայն ժպտեցնող տարօրինակ գաղափարը.

—Շիտակը, մրմնջեց, եթէ երեսուն տարու պզտիկ ըլլայի, ես ալ Մօնթէ-Քրիսթօյի խենթի պէս պիտի սիրահարէի։

Արդեօք իրաւունք միս Քլարի-Էլֆիսի գաղտնիքը գտա՞ծ էր։

ԺԴ.

Ամերիկեան գրաւ մը.

Պալթիմորցի ժապ վ.արթօն այն մարդոցմէ չէր, որք ճերմակ կ'բանին ու սեւ կը հաւատան։ Կոկորդիլոսի նաւապետին բերանն ալ սրտին պէս էր։

Եւ միս էլֆիս անմիջապէս համոզուեցաւ անոր, երբ արեւուն ծագելէն կէս ժամ առաջ նաւահանգիստը գալով՝ տեսաւ որ հսկայներու գունդ մը երկն կ'սպասէր։

Ո՛հ, ա՛յ, ամենուն վ.արթօն չէր սասած։

Ինքը որ հինգ տարի և աւելի մնաց երկայնութիւն ունէր, թզուկ մը կը թուէր իր ութ նաւաստեաց մէջտեղ, որք ճշմարիտ հսկայներ էին և որք ամբողջ տիեզերքս մէջ շատ բան տեսած կ'երեւէին։ Ի՛նչ ուսեր, ի՛նչ թիկունք։

Սակայն գեղեցիկ սեռն յարգելու մասին Հոդսով Ամերիկացի էին։

Երբ Քլարի երեւաց —այսինքն նաւապետը, քանի որ նաւն անորն էր— ութ նաւաստիք զօրահանդէսի գացող Բրուսիացի զինուորի մը պէս մաքուր ու փայլուն՝ զինքը դիմաւորեցին վայելուչ քայլերով, իրը վարժ զօրագունդ մը, որ գահակալ մը կը դիմաւորէ։

Ցեռոյ Վ.արթօն, մոմազօծ գլխարկն ի ձեռին, քաղաքավարութեամբ կառքին մօտեցաւ։

—Միլէսին կը տեսնէ որ ճշդապահ ենք։

—Կը յուսայի։ Կը խնդրեմ որ բարեհաճիք կահերս նաւը փոխադրել տալ։ Բայց մանաւանդ, յարեց ան-

հանգիստ նայուածք մը նետելով ութ նաւաստեաց ահագին բազուկներուն վրայ, կարելի եղածին չափ քիչ բան կոտրի։

—Հանգիստ եղիք։ Բայց նախ և առաջ, Միլէսի, հրաման կուտա՞ք որ նաւաստիներս ներկայացնեմ ձեզ։

—Ամենայն սիրով։

—Օ՛ն . . . ի կա՛րգ։ Թիւ մէկ, Սէն, ճագարին մեկը (ներեցէ՛ք), որ հինգ տարի աշխատած է Քալիֆորնիոյ հանքերուն մէջ։ . Մխիճնաւեր էր, բայց երիտասարդութիւններ ըրաւ . . .

Սէն ողջունեց։ կարծես շատ չէր ցաւեր իր միխոնէին վրայ, զոր չատոնց կ'երած, խմած ու մարսած էր։

—Պօ՛պ, ծովահէններու վերջինը։ Ողջունեցէ՛ք, Պօպ։ Թրիք, սեւ մարդ վաճառականի, որ վաճառականութենէ քաշուած է . . . Բէթէր . . . ա՛հ, մարքսաւոր մը սպանած ըլլալուն համար կախուած է։ Կը հաւինաք որ, Մէլէսի, ըրածն անվայել բան էր . . .

—Շարունակեցէ՛ք, ըսաւ միս էլֆիս ժպտելով։

—Բաւսի, Թաւսի և Սէսաի երիք եղբարք, երիք իրլանտացիք, զորս գեռնահանձորի անմարսողութիւն մը երկնց երկրէն արտաքսած է։ Մօք, նախկին մարդակերը մը, որ սչխարի պիճթիւնները մարդկային կողերէ լաւագոյն համարած է —որու վրայ չենք կրնար մեզ պատրել զինքը— և վերջապէս Բազուել, որ մէկ առաւան մէջ քաղաք մը կանգնած և մէկ գիշերուան մէջ կորուսած է զայն խաղու մէջ . . . Ամենքն ալ քաջ տըղաք են, որոց վրայ կրնաք յոյս դնել, կը բաւէ որ լաւ վարձք մ'ընդունին, և որք մէկ սանթիմի ճնաս չեն հասցներ ճանճի մը . . . Հիմա՛յ, տղա՛քս, կեցցէ՛

մ՛ըսէք նաւապետուհոյն համար։

Ջուարթագին աղաղակաց պայթիւն մը լսուեցաւ։ Ա՜յս տարօրինակ անձինք —որոց անցեալը կ՛երեւի թէ քիչ մը արկածախառն էր— ամենեւին ահռելի տեսք չունէին։ Բաղդախնդիրներ էին նոքա, որք ժամանակին տիկին Բաղդին հետ լինած ելած և այժմ այս աշխարհի պատրանքներէն զերծ էին։

Եթէ նաւապետն ալ նաւաստեաց համեմատ դատուելու ըլլար, Վարթօնի խղճին վրայ բաւական բեռներ դանուելու էին։ Միա Բլարի մոռատանջութեան չարժուամ մ՛ըրաւ, և մինչդեռ նաւաստիք ամենատղիղ ձօնի առաջնորդութեամբ ուսերնուն վրայ կը բեռնային ահագին անուռկները, որք կարծես փետուրի մը պէս թեթեւ կ՛երեւնային, ինքն հարցուց։

—Իսկ դուք, նաւապե՛տ, տակաւին ձեր արկածները չ՛ըսիք ինձ... բայց յաստէ, ըսիք թէ Տիկ. Վարթօն ալ կայ...

Վարթօնի դէմքը պայծառացաւ։

—Մելէտի պիս յանչափս կուրախացնէ, ըսաւ, յիշեցնելով այն կինը, զոր կը համարձակիմ ամուսնոց մարդարիտն անուանել։ Իրեն հետ ամուսնացած աստենս այրի էր։

—Ա՜հ...

—Ա՛յո՛, ըսաւ Վարթօն անփութօրէն, իւր ամուսինը ես կերայ...

Եւ հառաչ մ՛արձակելով յարեց։

—Շատ բարի մարդ էր...

Ջայս ըսելով բուռնը ներկայացուց միս Բլարիէ, ճիշդ ինչպէս որ պիտի ընէր մինչեւ դարու աղնուական մը։

Բլարի առ այժմ աւելի չպնդեց։ Քանի որ մոռահաճութեանց երկիրը կը նետուէր, Վարթօն և իւր մարդիկը նորա ծրագիրը չէին աւրեր։

Բարեբաղդաբար մայր Բարաման շատ մոռպրակ կերպիւ ուշ դրած էր այս խօսակցութեանց։ Ա՛յս ութ հսկայները զինքն ահաբեկեր էին, չէ թէ ինքզինքին համար վախնալուն, այլ անուռկներուն և խաւաքարտէ տուփերուն համար, որք ձօնի սպիտակ ձեռքերէն այս յելուզակներուն ահագին թաթերուն մէջ կ՛անցնէին։

Բայց շիտակը վիվիէն փողոցի նորաւաճառուհիք աւելի փափկութեամբ չպիտի կարենային դործածել այն թանկագին ծրարները։ Ամենեւին բաղխում մը, ընդհարում մը տեղի չունեցաւ։ Բոլոր ասոնք մէկուն ուսէն միւսին բազկաց մէջ կ՛անցնէին լռիկ։ Կարծես թէ հարմնցուի փուճները կը տանէին։

Միա Բլարի իւր կառավարին մնաեռնալով՝ հրամաններ տուաւ անոր. ծառայից հետ Ա՛յկալատի ամարանոցը պիտի ճնար և պատրաստ պիտի ըլլար իրեն գալիք հրամանները դործադրելու։

Ցետոյ Վարթօն նորատի աղջիկը տարաւ դէպի այն սանդուղը, որու ստորոտը կը տատանէր իրեն սպասող մակոյկը։ Խելացի վրայ ոսկեդոյն դրօշ մը կը ծածանէր օդին մէջ։ Բլարի նշմարեց զայս։

—Կոկորդիլոսի դրօշն այս է, հարցուց։

—Ո՛չ, Մելէտի, ըսաւ Վարթօն չնորհալի կերպիւ։ Բայց որովհետեւ մեր նաւապետուհին ոսկւոյ նման խարտեաշ է, համարձակեցայ...

Արդարեւ այս Վարթօնը Բալայկիի ցեղէն աղնուա-

կան մ՛էր, որնոր, ինչպէս գիտեմք, իւր վերարկուն պարզեց Եղիսաբեթի թագուհւոյն ոտից տակ։

Մայր Քարահանի սիրան ելեր էր։

—Խե՛ղճ Ֆրանսա, բոաւ ցած ձայնիւ և առ միս Քլարի հակելով։

—Միսոին պիտի տեսնեմք զայն նորէն, պատասխանեց նորատի աղջիկն անոր ձեռքը սեղմելով։

Եւ Վարթօն նշան մ՛ընելով՝ ուր նաւատեղք սկսան ոյժգին թիավարել։

Վարթօն յոտին կեցած՝ հպարտութեամբ ցոյց տուաւ կոկորդիլոսի սեւ պատեանը։

—Աղուոր կտոր է՛, այնպէս չէ՞։

Իրաւ է որ կոկորդիլոսը գեղեցիկ տեսք ունէր, այն ինն հակայից անհրաժեշտ հարկ եղած խեցին էր զոգցնս։ Փորը լայն, ոշնափայտներն ամուր, վիշապաձկան նման բան մ՛էր։

Անիւնները նորա կողերուն կապուած երկու ահագին կենդանեաց կը նմանէին։

—Արդարեւ ընթացքի այս արագութիւնը բաւական էր և դժուարին էր անով գոհ չըլլալ։

Բայց յաստի ուր նաւատեղք, նախկին գերեվարուած Պօպէն սկսեալ մինչեւ նախկին կախեալն Բէթէր, առաջին կարդի ծովագայլեր էին անշուշտ։ Նշանաւոր ապահովութեամբ մը կը թիավարէին և հիանալի դիւրութեամբ մը կը սրացնէին մակոյկը, որ կահերէն ծանրացած էր։

Երբ կոկորդիլոսի քոշին հասան, կայմի մը նմանող բան մը սանդուղին գլուխը կանգնեցաւ. երկար, չոր, նիհար, ահագին բան մը...

—Տիկին Վարթօ՛ն, բոաւ նաւապետը փոքր ինչ ակնածախառն ձայնիւ։

Աստուա՛ծ իմ, գիտեմ որ աղէկ բան չէ ուրիշին վերայ գէշ խօսիլ և թէ ամենքս ալ չենք կրնար Աստղիկներ կամ Ադոնիսներ ըլլալ։ Բայց չհասակը Տիկին Վարթօն տգեղ ըլլալու արտօնութիւնը չարաչար կը զրծածէր։

Աւրուած դանակի մը բերնին նման խորտուբորտ դէմքը աղիւսագոյն էր։ Ածուխէ աւելի սեւ, բայց անփայլ մազերը ճակտին ու քունքերուն վրայ կատարեալ կիսա բոլորակի մը ձեւով փակած և յետոյ գանգին վերայ ժողուուած էին տեսակ մը գնդակի ձեւով, որ անշուշտ մէջէն բռնուած էր զարդարանաց վերարերեալ առարկայով մը։ —Հասա չըլթունքներով ահագին բերնին մէջ երկար և դեղին ակռաներ կը տեսնուէին, երբ ուրուականի մը նման խնդար։ Երկայն ու սուր քիթը սա զարմանալի բանն ունէր որ, ծայրը ծակ մը բացուած էր,— ուսկից կարծես ժամանակաւ բան մ՛անցուած ըլլար։ Ոսկիէ խոշոր օղեր կախուած էին իր ահագին ականջներէն, որք խաբուելու աստիճան կը նմանէին գիւղացի սափրիչի մը ժանդոտ կոնքին։

Հագուստներն ալ այս սատանայական երեւոյթը կ՛ամբողջացնէին։

Առանց ծալքի տեսակ մը խորտ, մեկնոց կամ բաճկոնակ հագած էր, որ մինչեւ երիքը կ՛իջնէր և ոսկեղէն աղբով մը մէջքէն կախուած էր։ Ցոյժ բաց օձիքէն

կ՚երեւէր կոկորդը, որ երկաթէ խնձորի մը նման ցըցուած էր։

Եւ սակայն անկարելի է բացատրել թէ նաւապետին ինչ հիացական —գոգցես պաշտօնական հչնմամբ կ՚արտասանէր սա բառերը. Տիկին Վարթօն։

Փութանք ըսել թէ այս տարօրինակ արարածը —որ նոյնպէս տարօրինակ անպատեհութեամբ մը Մինոնի կը կոչուէր —աշխարհի լաւագոյն անձն էր— ի բաց առեալ իւր անցեալը, զոր պիտի խմանանք։

Երբ Մխ Փլարի և մայր Բարաման ոտքերնին կախուրջին վրայ դրին —երկրորդը հարկ եղած էր բազուկներէն բռնելով նեղ ելնարանին գլուխն հանել— Մինոնի փութաց իւր ամենէն սիրուն ժպիտն ուղղել անոնց և բերան ձայնով մը —որ ախորժելի կերպիւ կը յիշեցնէր ագռաւու կռնչիւնը— հրաւիրեց զանոնք որ իրենց բնակարանն երթան։

Փլարի ամէն բանէ պատրաստ ըլլալով՝ կը ժպտէր անոր երեսին։ Բայց Ոսաիկանին այրին այնքան համբերատար չէր։ Ա.յս մարդաբանական առարկայից հաւաքածոյն —հանդերձ կանամբ— անախորժ էր իրեն։

—Շաբաթ, կ՚ըսէր լինքներեն։ Չ՚ըսես որ հիմակուց կապիկներու երկիրն ենք։

Սակայն երբ վերթխաբերն Մինոնի ճանապարհորդուհեաց յատկացեալ սենեկին դուռը բացաւ, Փլարի և խնամածուհին չկրցին զարմանքնին բռնել։

Ո՛վ կը յուսար կոկորդիլոս ի մէջ գտնել թաւամ ու դաշնակաւոր գոյներով մետաքսեայ կերպասներով վայելչապես օծոցաւորեալ ներքնադահլիճ մը, ազանչելի ճաշակաւ չինուած հնդկեղեգ կարասիներ ... և

խել մը անուշ հոտեր, արդուզարդի հարկաւոր հազարումէկ առարկաներ, բարակ փետուրներու նման կակուղ գորգեր, ազնիւ գոյներով յախճապակիներ։ Հըրաշալիք մ՚էր այս...

—Տիրուհին Թող ներողամիտ ըլլայ խեղճ Մինոնի, բսաւ վայրենուհին, ժամանակն այնչափ կարճ էր որ, ասկից աւելին չկրցի ընել։

—Ի՛նչպէս, բոլոր ասոնք այս գիշե՞ր յարդարեցիք...

—Նաւապետը կէս գիշերուն եկաւ... և Մինոնի մեծ նեղութիւն կրեց Մարսիլիոյ մէջ հարկ եղածները գտնելու...

Գիտենք թէ արեւելեան առասպելներու մէջ յաւերժահարսի մը հրամանաւ ոգիները մէկ գիշերուան մէջ պալատ մը կը կանգնեն։ Ա.յս դէպքն ալ նոյնքան դիւթական չէ՞ր միթէ։

Վարթօն, Ամերիկայի պատիւը պահպանելու նախանձախնդիր ըլլալով, անմիջապէս կոկորդիլոս վերադարձեր էր։ Ի՞նչ պիտի ըսեւ։ Հաճելի եղած էր իրեն այն նորատի աղջիկը, որ ձիով պարահանդէսի մը մէջ կը մնար հարիւր յիսուն հազար ֆրանքի նաւ մը դնելու և չորս ժամ վերջը Ափրիկէ ուղեւորելու համար։ Ա.յս բանն իւր երեւակայութիւնը կը յիշեցնէր իրեն։

Եւ ինքներեն ըսեր էր. կեցի՛ր, նաւապետուհի՛, մե՛ռ ըլլալն հասկցնեմ քեզի։

Արդարեւ Մարսիլիա չատոնց ի վեր ասանկ տօնի պատահած չէր, եթէ սակայն տօն բառը կրնայ գործածուիլ ցոյց տալու համար նօսյալ փողոցի առաջնակարգ խանութպաններուն ընդոստ զարթնումն, երբ

վարթօն, իր ուժ հսկայից գլուխն անցած, ժամը մեկէն մինչեւ երկուք խանութները կոխեր, և գտածն հաւներ ու առներ էր։ Ճաշակի խնդիրն ամբողջապէս թողուած էր Մէնի, նախկին միլիոնատիրոջ, որ «երեսատարդութիւնները» ըրած էր։

Գործը շուտ մը կատարուեր էր։ Ժամը երեքին ամէնքն ալ կոկորդիլոս վերապարձեր էին։

Ա.յս ծովու և ցամաքի նախկին աւազակը, Մինոնիի օգնութեամբ, որ ամէն մարդկային բանի տեղեակ էր, կանանց նման ճարպիկութեամբ այնքան լաւ կարեր, կարեր, կամեր, դրեր, շահէր, յարդարեր էին որ, երբէք գեղանի կին մը —իր սիրահարին իրեն համար ամենէն հմայաւաւոր կահագործին ձեռօք յարդարել տուած ապարանքէն իջած աստն —այնքան կատարեալ և հրապուրիչ բնակարան մը չէ գտած։

Հապա այս հսկայ-կինն ի՞նչ անձնական սպասուհի էր։ Ձեռաց այնպիսի վարկութեամբ, որ իւր թեւերուն ծայրէն կախուած սեւուկ և ճերմակաւոր առարկայներն չէր յուսացուեր, անանկ խնամքներ մատոյց Քլարին, զոր Բարկինի սպասուհի մը լաւ եւս չպիտի կարենար կատարել։

Հապա մայր Քարամա՛ն։ Տեսնելո՛ք այն վոքրիկ սենեակը, որ Քլարին սենեկին ճիշդ քովն իրեն յատկացեալ էր... Ի՛նչպէս ամէն բան մտածեր էին. անկողնին հաստատուն ըլլալուն ուշադրութիւն ըրեր էին։

Ա.րդարեւ վարթօն մեկ նայուածքով ամէն բան հասկցող մարդ էր։

Եւ այն սենեկին մէջն ալ կը գտնուէր ինչ որ հարկ էր իրեն, մինչ իսկ... արդարեւ ատանք հրաշկից նման

էին։ Փոքրիկ պատուանդանի մը վրայ կար... ի՞նչ... փոքր արուակ մը poilebap, կամ լաւ եւս ընտիր չանքաճեա, քովն ալ լեցուն չաքարաման մը։

Կոկորդիլոսի նաւապետն ի՞նչէն հասկցեր էր որ մայր Քարաման ամէն իրիկուն չպատուհած գաւաթ մը poilebap կը խմէր... ինչ որ ոստիկանական վարժի սովորութիւն մ'էր։

Իրաւունք չունի՞նք ըսելու թէ վարթօն մեկ նայուածքով ամէն բան կը հասկնար։

Մինչդեռ Քլարի և իր խնամածուհին կը տեղաւորուէին, նաւաստիք անուղեները մի առ մի կը բերէին այնքան զգուշութեամբ որ կարծես թէ բերածնին տղու մ'օրօրոցն էր։

Եւ բոլոր այս բաներն այնքան լաւ, այնքան կանոնաւոր և այնքան անվանդ կ'ըլլային որ մայր Քարաման, թէեւ կ'ուզէր իր արժանապատուութիւնը պահել, յանկարծ բերկրալիր այլայլութիւն մը զգաց և ձեռքը Մինոնիի երկնցնելով՝

—Շիտակը, ըսաւ անոր, դուք աննման կին մ'էք։

Մինոնի չուարած մնաց։ Եթէ աղխսի մը կարմրիլն կարելի ըլլար՝ պիտի կարմրէր։

Վարանելով երկնցուց իւր երկար թաթերը, զոր մայր Քարաման ֆրանսարար, ոստիկանարար թոթուեց, մինչդեռ Քլարի իր քաղցրահնչիւն ձայնիւ կ'ըսէր։

—Տիկի՛ն, չեմ գիտեր թէ ի՛նչպէս չնորհակալութիւնս յայտնեմ ձեզ...

Վայրի կինն այս երախտագիտութիւնէն բոլորովին չուարած կ'երեւնար։

Դուռը զարնուեցաւ։ Վարթօնն էր։

—Նաւապետուհին կը հաճի՞ մեկնելու նշանը տալ։

—Ադիմոն զբօսանաւը մեկնեցա՞։

—Ահա՛ ճամբայ կ'ելլէ։

—Լա՛ւ, եթէ դարձեալ կը հաւատաք թէ գայն անցնելնուս ապահով էք...

—Ապահո՛վ, ամենաապահո՛վ։

Եւ արդարեւ Վարթօն բաւական հրաշք գործած ըլլալով՝ իւր խօսքին կրնար հաւատացուիլ։

—Ուրեմն թողէ՛ք որ նա քանի մը վայրկեան առաջ անցնի... մանաւանդ անոր եռեւէն երթալնիս յայտնի չ'ըլլայ...

—Մի՛ վախնաք... նա Պօն կ'երթայ... ես նախ գըլխաս դէպ ի Ալճեր կը դարձնեմ, և յետոյ ճամբայս կը փոխեմ։ Բայց անշուշտ տիկնայք կը փափագին թերթեւ ճաշ մ'ընել։

—Արդարեւ, ըսաւ միս Քլարի։

—Ես անկեղծ եմ, յարեց մայր Քարաման, անօթութենէս կը մեռնիմ...

—Լա՛ւ ուրեմն. եթէ նաւապետուհին կը բարեհաճի սեղանատունը մնալ...

—Սեղանատո՛ւն մը, ըսաւ նորատի աղջիկը խնդալով. ըսել է կառարեալ բնակարան մ'է այս։ Նաւապե՛տ, դուք անմահ մարդ մ'էք, և Մօրթխըրըի Ջորհակալ պիտի ըլլամ որ ձեզ ծանօթացուց ինձ...

—Ո՛հ, դեռ տեսածնիդ բան մը չէ, յարեց Վարթօն փութքը ինչ մնապարծութեամբ։ Այսու հանդերձ բոլոր այս բաներուն մէջ ես շատ քիչ մասն ունիմ։ Սանդք ընողը Տիկին Վարթօնն է։ Ո՛հ, կրնամ ըսել թէ նա կոկորդիլոսի հրեշտակն է։

—Որքան երախտապէտ ըլլամ Տիկին Վարթօնի քիչ է, ըսաւ միս Քլարի։ Իւր փոյթն ու ճաշակը ամէն գովեստէ գեր ի վեր են։

—Ո՛հ, նաւապետուհի՛. գիտնայիք թէ ի՛նչ սիրտ ունի։

Եւ անմեղադրելի եռանդով —վասն զի ամուսնական էր— Վարթօնը գլխէն բռնեց— և այս բանն ընելու համար պարտաւորեցաւ քիչ մը երկննալ— և նորա ճակտէն համբուրեց...

—Թողէ՛ք, Վարթօ՛ն, ըսաւ աղիւս-կինը ջղագրգռով, այս տիկնայք անշուշտ անօթի են։

Վարթօն շաքար ուտող տղու մը պէս լզոըբուտայ. յետոյ դուռը բանալով մէկ կողմ կեցաւ՝ երկու կանանց ճամբայ տալու համար։

Կամուրջին տակ ուրիշ անակնկալ յան մը կար։ Նոր տիպի պէս մաքուր սեղանատուն մը, ուր գտնուող սեղանը ծածկուած էր ոչ միայն ձիւնասպիտակ սփռոցով մը, այլ և —չհաւատալիք բան էր— թարմ ու նոր բաժիններով ծաղիկներով։

—Ի՛նչպէս, նաւապետ... գոչեց միս Քլարի, տարուոյ այս եղանակին մէջ ծաղիկնե՛ր...

—Տիկին Վարթօն գուտ զանոնք, հոժարեցաւ նաւապետը։ Բայց կ'աղաչեմ, նստի՛ք։

Քլարի և Մայր Քարաման նայուածք մը փոխանակեցին, իրարու միտք հասկցեր էին։

—Կը նեղէ՛ք, ըսաւ Քլարի, բայց բան մը պակաս է։

—Բա՛ն մը, տէ՛ր ողորմեա... ի՛նչպէս... տիկին Վարթօն...

Եւ նաւապետին յանքերը ցաւագին զարմանաց կըծկմամբ իրարու կը միանային։

—Ո՛հ, ինքզինքնուդ ուրիշը մի՛ մեղադրէք, նաւապե՛տ, վասն զի ապահով եմ որ միակ յանցաւորը դուք էք...

—Կ՛աղաչեմ, բացատրեցէ՛ք. կ՛ուզեմ յանցանքս ժամ առաջ դարմանել...

—Մի՛ մոռնաք որ նաւուն մէջ ամէն իշխանութիւն ունիմ, և ոչ ոք իրաւունք ունի ինձ անհնազանդ գըտնուելու...

—Այնո՛ւհետեւ։ Բայց կախում թէ որ...

—Տկն. Վարթօն, յարեց Քլարի, կը բարեհաճի՞ք երկու սպաս ալ դնել։

Վարթօնի նայեցաւ, որ ան ալ իրեն կը նայէր։

—Այնո՛ւհետեւ, յարեց նորաստի աղջիկը, մինչ հետերնիս նախաճաշելու պատիւը չ՚ունիք մեզ։ Ո՛հ, առարկութիւն չ՚ուզեր... ասանկ կ՛ուզեմ... կը լսէ՞ք ... այսպէս կ՛ուզեմ...

—Է՛հ, անշուշտ, դուշոց դէր խնամածուհին. և այդքան քաշուիլ չ՚ուզեր։ Օն, եղնդ իմ, (այս չնորհալի անունամբ կը զարդարէր հէգ հակայն) դարանն ո՞ւր է... իմ ձեռքս կուգայ։

Ո՛հ, կրցածնուն չափ դիմադրեցին —պէտք է խոստովանիլ զայս։ Բայց հարկ եղաւ հնազանդիլ. միայն թէ Վարթօն նշանացի կեցնելով զնայը Քարաման, որ անպատճառ կ՛ուզէր գոնել թէ պնակներն ու սպասները ո՛ւր կը դնէին, զանգակը զարկաւ։

Եւ Բէթէը, կախազանէն վախստականը (որ մաքաւոր մը միայն սպաննած էր) երեւաց հարսի պէս ըստակ խոհարարի համազգեստով։

Վարթօնի հրամանաւ երկու սպասաւորք —Քատրի և Թատրի Իրլանտացիք— եկան սպասն ամբողջացուցին. յետոյ անկլիական սրճարանի երկու սպասաւորաց պէս՝ սեղանակցաց եռին կայնեցան։ Կերակուրներն ընտիր, գինիներն ազնիւ էին։ Մայր Քարաման, որ խոհարարութենէ հասկնալ կը յաւակնէր, խել մը գովեստներ ըրաւ, զորս Բէթէը յարգանօք և գտակ ի ձեռին ընդունեցաւ։

Աղանդերի սկիզբը միս Քլարի հարցուց։

—Զբօսանաւն աչքէ չի կորսնցնենք...

—Հանգիստ եղիք, գոչեց Վարթօն, որ լեզուն հընչեցնելով գաւաթ մը շրթի կը խաղեր։

Պնդելն անպատեհ էր։ Բաց յասակ կոկորդիլոսի աղեաց մէջ բանող մարքենային դժոխային աղմուկին նայելով՝ յայտնի էր թէ ցնորական արագութեամբ մը կ՚երթային։

Տիկին Վարթօն ներուժն խնդրելով դուրս ելեր էր։ Իրեն համար անկարելի էր այսքան երկար ատեն նըստած մնալ։

—Ա՛հ, անուշ և աննման արարած, ըսաւ Վարթօն կաթոգին աչօք եռեւէն նայելով։

—Կ՛երեւի թէ իրարու վրայ շատ սէր ունիք...

—Ա՛հ, նաւապետուհի՛, քանի տարի կայ որ օր մը չենք զատուած իրարմէ... իրաւ է որ մեր մէջն անանկ յիշատակներ կան որ չեն մոռցուիր...

—Բայց եթէ լաւ կը յիշեմ, ըսաւ Քլարի փոքը ինչ վարանմամբ, ըսիք թէ Տիկին Վարթօն այրի էր...

—Ա՛յո՛, այո՛... Սիուս Հնդիկի մը այրին։

—Ինչքա՜ն ալ այն ցեղէ՞ն է։

—Ա՜յո՛, նաւապետուհի։ Բայց այսօր քրիստոնեայ է... և կ'երդնում թէ չերմ բողոքական է։

—Բայց... ամուսի՞նը...։

—Ա՜հ, խեղճ Թու-Սամ-Պա... նա ալ Սիուս-մ'էր։

—Ներեցէ՛ք։ Կ'երեւի թէ ես լաւ չեմ հասկցած... Բայց ամուսինն ի՞նչպէս... մեռա՞ւ։

—Ըսի ձեզ թէ, նաւապետուհի, կերայ ըսին։

—Ա՜հ, ներեցէ՛ք... ըսել է ճիշդ լսեր եմ...

—Ա՜յո՛, բաւ վարթօն մեղմաձայնութեամբ. երկուքդ ալ կերանք ըսին, կինը... որ բնականաբար այս միջադէպով այրի մնաց...

Բոլոր այս բաները ո՛րքան ալ որ բնական կ'երեւէին աղնիւ վարթօնի, մայր Քարաման աչերը մեծ մեծ կը բանար։ Նա չափազանց բծախնդիր չէր. բայց վերջապէս ամուսնի մ'ուտել՝ անոր այրին հետ ամուսնալու համար... այս բանը դոնէ քիչ մը բացատրութեան կարօտ էր։

Ուստի անկեղծօրէն բացատրութիւն ուզեց։

Ո՛հ, վարթօն քաշուող մարդ չէր։

Ուստի կը պատրաստուէր պատմել այս պատմութիւնը, որ կ'երեւնար թէ հետաքրքրաշարժ պիտի ըլլար, երբ մին փլարի համարձակեցաւ ըսել անոր.

—Սիրելի՛ նաւապետս, շատոնց է որ Ադկինն աչքէն չէ՛ք անցուցած. կը բարեհաճի՞ք վայրկեան մը վեր ելլել և նայիլ թէ հեռաւորութիւննիս չէ՞ շատցած։

—Ո՛հ, բաւ վարթօն. ձեզ հաճոյք պատճառելու համար ելլեմ. բայց կոկորդիլոսի վրայ ապահով եմ։

Սակայն հլու և հնազանդ ոտք ելաւ և աներեւութացաւ։

—Տարօրինա՛կ մարդիկ, բաւ Քարաման փլարիի ականջին։

—Ի՞նչ ընեմք, մայր Ոսաիկան, ընտրելու պատեհութիւն չունէինք, Բայց կարծեմ թէ աւելի գեշ մարդոց ձեռք կրնայինք իյնալ...

—Շաքա՛ր, մարդակերէ մ'աւելի գեշ ի՛նչ կըլլայ...

Եւ մայր Ոսաիկան քիչ մը կը սարսռար։ Հաւանականաբար սովորած չէր լլլալէն էր։

Փլարի ի՛նչ պատասխանելը չէր գիտեր։ Ինքներեն կ'ըսէր թէ եթէ պայմանագիրը կնքելէ առաջ այս մանրամասնութիւնը գիտցած ըլլար, դիտաւորութիւնը կըրնար շատ փոխուիլ։ Բայց հիմայ եղած լմնցած էր։

վարթօն քիչ մը կուշանար։ Տասը վայրկեանէն եկաւ.

—Ա՜հ, նաւապետուհի՛, պարտաւոր եմ ներումն խնդրել ձենէ... երեւակայեցէք որ սա աւանակ չուռուցիչը —երբորդ Իրլանտացին՝ Սատոն է— կոկորդիլոսին հարկ եղած ուտելիքը չէ տուեր, այսինքն մեքենային ածուխը քիչ դրեր է, այնպէս որ...

—Ադկինն մեզ անցեր է...

—Ո՛հ, հազիւ մի քանի հարիւր գրկաչափ. բայց աղէկ մը կշտամբեցի զիրենք...։ Մարդ ամէն բան իւր ձեռքովն ընելու է։

—Վերջապէս կրնա՞մ միտ ձեր խոստման վստահիլ։

—Խոստմա՞նս, ո՛հ, նաւապետուհի... կը նախապէ՛ս զիս... երբ վարթօն այո՛ ըսէ՝ այո՛ է... կեցէ՛ք, կուզէ՞ք ինձ հետ գրաւ մը դնել։

—Գրաւ մը։

—Գրաւս սա է որ երբ մենք Պօն հասնինք, վերոյիշեալ նաւակն այնքան անցած պիտի ըլլանք որ, տակա-

ւին Թուամբերէն չպիտի երեւնայ իսկ։

—Գրաւականն ի՞նչ է...

—Ձեր կողմէն ինչ որ կ՚ուզէք, նաւապետուհի... Տկն. Վարդօնի համար զարդ մը...

—Հապա ձե՞ր կողմէն...

—Եթէ բաւած չըլլայ, նաւապետուհի, ես, մարդիկս ու կինս ձենէ չպիտի զատուինք, մինչեւ որ ձեր հետեւած ճամբորդին չհանենք և գինքը չ՚անցնինք...

—Շատ լա՛ւ, նաւապետ։ Եւ կորանցնելուս կրկնակի երջանիկ պիտի ըլլամ... վասն զի հաճոյք պիտի ունենամ վոչքր նաւեր մը տալու Տկն. Վարթօնի և թէ ճամբորդութեանս նպատակին կիսովին հասած պիտի ըլլամ։

Ա.յն վայրկենին նաւաստեաց մին սեղանատան դրան առջեւ երեւաց և նշան մ՚ըրաւ Վարթօնի, որ անդամ մ՚եւս ներումն խնդրելով՝ կամուրջն ելաւ։

Նորէն բացակայ գտնուեցաւ, նորէն հարկ եղաւ ըսպասել. վերադարձաւ, բայց դոյզն ինչ յուզուած։

—Կ՚երթամ, կ՚երթամ, ըսաւ. կոկորդիլոսի մինչեւ կոկորդը լեցուն է։ Ա.յսու հանդերձ սա սատանայ վոքրիկ Ադկիոնն ալ լաւ կ՚երթայ, և եթէ կոկորդիլոսն ալ ղէկ չճանչնայի... Բայց վերջապէս այս անգամ չի պրծիր։ Մարիկ ըրե՛ք, կը լսե՞ք, կոկորդիլոսին ուտե՛լիք կուտան ու կուտան։

Ա.րդարեւ նաւուն պատեհանը կաթսային որոտումէն կը թնդար և անհնեներուն վրայ կարծես տեսակ մը չերջչերջական մռնչգնուիթիւն եկած էր։

—Կամուրջին վրայ ելլենք, ըսաւ միս Փլարէ։

—Ա՛հ, վայրկեան մ՚ալ կեցէք. Ա.մուսնութեանս պատմութիւնը պիտի պատմէի...

—Ա.յո՛, ձեր հարսանեաց ճաշին պատմութիւնը, ըսաւ մայր Փարաման, որու հետաքրքրութիւնը եւս քան զեւս կը շարժէր։

Փլարէ յանկարծ մոռացաւ որ եթէ, ինչպէս որ հաւանական կ՚երեւէր, կոկորդիլոսն Ադկիոնի առջեւէն անցնէր, իրեն համար չերեւնալը լաւագոյն էր։

Ուստի հրաւիրեց զՎարթօն որ իր պատմութեան սկսի, աղաչելով հանդերձ որ իր նաւապետական պարտականութիւնները չմոռնայ, բայց նա իր յաւիտենական Հանդիսաւ եղիքովին սկսաւ ըսել։

—Նախ պէտք է խոստովանիմ ձեզ թէ, նաւապետուհի՛, ես մինչ հարուստ եղած չեմ... Ըսել չեմ ուզեր թէ այսօր հարուստ եմ։ Բայց ամենուն պէս քիչ շատ բան ունիմ։ Սակայն այն առեն, ասկից 20-25 տարի առաջ... այսինքն 1825 ի միջոցներուն; բոլորովին պզտիկ էի...

«Ամերիկայի մէջ կեանքը շուտ կ՚անցնի և արդէն շատ արհեստներ փորձեր էի... կուպր, փայտ, կաւ, կօշիկներ ծախած էի... փղոսկրի գործ ըրեր էի... ի՞նչ գիտնամ, կրնամ ըսել թէ առեւտուրի ամէն ճիւղէն կը հասկնամ...

«Եղբայրացութիւնը սա եղած էր որ առակ մը չունէի... բայց դիմացկուն, աշխատասէր... և մանաւանդ կը խոստովանիմ թէ քիչ մ՚ալ ամէն բանի պատրաստ էի։

«Գիտէք որ պէտք չէ յոյժ բծախնդիր ըլլալ... նոր աշխարհի մեծութեանց մէջ իրաւանց առաջինը հրապանն է... և այլոց վրայ գինք քաշելուս պատճառն այն է որ, ապահով ենք թէ նոքա պատրաստ են նախ մեր վրայ քաշելու։ Ա.յս պարզ դիւրութիւն մ՚է։ Ե-

թէ սխալած ըլլաս՝ վերջէն կը հասկնաս, և այն ատեն փոքը խղճի խայթ մը կ'ունենաս . . .

«Բաց յաստի սրտիս խորէն կրնամ երդնուլ որ առանց հարկադրեալ և բռնադատեալ ըլլալու՝ երբեք բռնաբարութիւն մ'ըրած չեմ . . ։ Իմ բնութիւնս անոյշ է, ոչխարի պէս հեզ եմ . . . բայց հետս խմնալու չգար, վասն զի այն ատեն կը խածնեմ . . . և ծնօտս ալ ուժով է . . .

Քաղցրաբարոյ վարժօն զայս ըսելով կը խնդար և Տիկին Բնութեան գործարանէն ելած կղակները ցոյց կուտար, որոց սպիտակ և սուր ակռայները քարերն իսկ կրնային փշրել։

Միս Բլարի աչերը կկապտակ՝ հազիւ մութ կ'ընէր զայն։ Նաւուն տատանումէն օրօրուելով՝ այնպիսի մը տախտակամածի մէջ կ'ինայր, որ զինքը շատ հետաքրքրական կը տանէին։

Վարժօն իրեն եղած առերեսումէն ուշագրութենէն յոյժ գոհ ըլլալով՝ անուշութեամբ կը շարունակէր։

—Ես մարդկէ սպաննած եմ, դիս ալ տասներկու անգամի չափ սպաննեցին։ Կարելի է անոնք ալ ինձի պէս աղատեցան։ Վերջապէս գործին մէջ վոխարինութիւն կար . . . Արդ 1825ի նոյեմբերին բոլորովին նեղութեան մէջ էի . . . գրպանս մէկ չէնը չունէի, հրաշապարակն աղտոտած էի, վարիս չէը մնացած . և սակայն այս անելքէն դուրս ելլելու էր։

«Ընկերներէս մին, որ պատմութեան դիւրութեամբ համար Տիք պիտի կոչեմ, առաջարկեց ինձ որ իրեն և վեցի չափ ընկերներու հետ ճամբայ ելլեմ։

«—Թօմ, ըսաւ ինձ (ամբողջ անունս Թօմաս Վարժօն է), Թօմ, ալ կորսնցնելու բանդ չմնաց . . .

«—Ամենեւին . . .

«—Ուստի հիմայ չահելու նայէ, —և այս բանիս համար չեմ կարծեր որ կայիք վտանգի դնելու վարանիս։

«Անկեղծութեամբ խոստովանեցայ թէ ըսածը ճշմարիտ էր։ Բաց յաստի կայի մը ինչ կ'արժէ, երբ մէջը դնելու բան մը չունենաս, և երկու օրէ ի վեր բան մը կերած չըլլալուս, կայիս ալ կ'սկսէր քանիս նման պարպուիլ։

«Այն ատեն այն բարի Տիքը իւր յատակագիծը յայտնեց ինձ։ Այդ յատակագիծը շատ պարզ էր, այսինքն Քալիֆօրնիա երթալ։ Ա'հ, միս, այն ատեն տակաւին Եւրոպայի մէջ ոչ ոք լսած էր այս երկրին անունը, զոր այսօր ամէն ոք կը սիրէ։ Այսօր, այսինքն 1848 ին, չկայ լրագիր մը, որու մէջ գաղթականաց հրաշալիքներ ու ուսկւոյ լեռներ խոստացող ահագին յայտարարութիւններ չգանուին . . . մինչ իսկ Բարիզու մէջ ոսկւոյ ձոյլերուն համար վիճակահանութիւն մը կազմակերպուած է . . ։ By God! (տէր Աստուած) . չեմ ըսեր թէ Քալիֆօրնիոյ մէջ ոսկի չկայ . մինչ իսկ ինձ սաակ կը վճարուն որ ասոր հակառակն ըսեմ . . . բայց անոնք որ հոն կ'երթան բաղդերնին փորձելու, աղէկ կ'ընեն թէ հոգինին մարմիննուն գամել տան . . .

«Քալիֆօրնիա երթալ . ինչո՞ւ չէ ։ Տիք կը հաւատար թէ հոն ափերով ելեւուն ոսկի թողուելու համար ծռելը բաւական էր։

«Մտածեցէք թէ այս գաղափարներն ինչ ազդեցութիւն կ'ունենան, երբ առ մէկ չունեցող մարդու մ'ականջն իյնան . . .

«—Պատրաստ եմ, ըսի անոր։

«—Բայց դիտե՞ս ինչ վտանգներու ենթակայ պիտի ըլլաս...

«—Պա՛հ, ես ամէն տեսակ վտանգի պատրաստած և միշտ ապրած եմ։

«—Այո՛, բայց չեմ ուզեր զքեզ խաբել. դէմերնիս քաջ մարդիկ պիտի ելլեն —որք Բահիլթա, Սիու, Սեւ-աան և այլ Հնդիկք կը կոչուին, որք մարդս գերի չեն բռներ...

«—Հէ՞. ըսել է վհատանձն են։

«—Ո՛չ, բայց փոխանակ բանտի՝ ճաչի պարաններ ունին։ Եւ եթէ անոնց ձիրաններուն մէջ կ'ինանք, մեր մահն դանդաղ համադաւիներ չինելով՝ կ'ուտեն։

«Եթէ ուրիշ պարագայի մը մէջ ըլլար, թերևս քիչ մը մտածէի անձս այսպիսի վտանգի մը ենթարկելու։ Այն առիւծներն Հնդկաց անդթութեան վրայ սոսկալի բաներ կը պատմուէին, և չիտակը մարդ ո՛րքան ալ որ քաջասիրտ ըլլայ՝ երբեմն քիչ մը վախ կուգայ վրայն... բայց անօթութենէ մեռնիլ կամ ուտուիլ, մեծ տարբերութիւն մը չկար աոնց մէջ։ Ուստի երկրորդ վտանգը ընտրեցի։

«Երկու օր ետքը ճամբայ ելանք։

«Ցոտից ցդլուխ զինեալ էինք։ Այս քառասունն և ութ ժամու միջոցին ինքզինքս գտեր էի և կարելի եղածին չափ քաջութիւն կ'զգայի վրայս։ Եւ վայ այն առաջին Հնդիկին որ ակռայիս տակ... ներեցէ՛ք, ձեռքիս տակ պիտի ևյնար ըսել կուզեմ։

«Ճամբորդութեան վրայ չպիտի խօսիմ։ Կրնաք մտկաբերել թէ ան մը բաղդատինդիրներու ճամբորդութիւնն ինչ կրնայ ըլլալ անանկ բոլորովին անծանօթ երկիրներու մէջէն, ուր անդադար իրենց կեանքը պաշտպանելու զբաղած, ամէն առեն աչալուրջ գըտնուելու հարկադրուած, մէկ խօսքով ամէն քայլերնուն մահուան հետ դէմ առ դէմ էին։

«Սակայն պէտք է ըսեմ թէ բաղդերնիս բաւական յաջող էր, և երբ հասանք Սան-Ֆրանչիսքոյի շրջակայքները —որ տակաւին այն առեն ամէնեւ անակնկալներու կոյտ մ'էր,— մեր ընկերներէն երեքը միայն կորուսած էինք, որոյ մէն օձէ մը խայթուելը և միւս երկուքը ժայռուտ Լեռանց մէկ գահավէժն ինկած էին։

«Վերջապէս Սաքրամէնթոյի ափունքն հասանք...

«Ա՛հ, մի՛ս, դուէց վարիօն՝ որու աչերը կը փայլատակէին, այն առեն մեր կուրծքերը սեղմող զգացումն հասկնալու համար պէտք է մեզի պէս զգացած ըլլալ այն ահռելի տենդը, որ մարդուս ամբողջ մարմինը կը ցնցէ, գիշերն աչաց առջեւէն շլացուցիչ տեսիլներ կ'անցնէ, որ կը դողացնէ զքեզ՝ երբ կոպիճի մը, աւազի հատիկի մը պատահիս, որ չունչդ կը կտրէ՝ երբ ժայռի մը խորը հանքային երակի մը նմանող ջուր մը կարծես գտած ըլլալ։

«Անկից ի վեր ոսկւոյ հանքերուն մէջ մեքենայաբով կ'աշխատին... իսկ մենք մեր թեւերէն, բրիչներէ, քարուրագիներէ, փայտի կտորներէ ուրիշ բան չունէինք։ Ինչ որ գտնէինք ան կուտէինք։ Երբ կը զարնէինք, կը խորովէինք... կամ եթէ տեսլապաշական գործ ունենայինք, հում կ'ուտէինք...

«Այս բանն է որ մարդուս ստամոքսը կը զօրացնէ։

«Աստաղուեամբ կ'աշխատէինք։ Բայց չիտակն ըսե-

լով մեծ բան չէինք դառնար։ Անդադար որ տան և հինգ օր ետքը մենք չորսը յայտարարեցինք թէ շատ գեղ տեղ մ՚ընտրած էինք և թէ կուզէինք բլիմը փոխել — ոսկեհատ կամ այնպէս կարծուած երկիրներն այսպէս կը կոչուին։ Մենք երեքը— որոց գլուխն ես էի —ընդհակառակն յայտարարեցինք թէ ձեռնարկուած աշխատութիւնք արդէն քիչ շատ արդիւնաւոր եղած ըլլալով, այդ արդիւնքն ո՛րքան ալ որ փոքր ըլլար, կ՚ապացուցանէր թէ տեղն աղէկ էր և թէ հետեւաբար հարկ էր յարատեւել։

«Ուրիշ տեղ երթալով անպատճառ հարկ պիտի ըլլար առաջին աշխատութիւնը նորէն սկսիլ, որ շատ աւելի տաժանելի է, և թերեւս բնաւ բան մ՚ալ չգըտնուէր...

«Բաւական վիճելէ յետոյ՝ հերձուածողք երկնց կարծեաց մէջ յամառեցան։ Գործիքները և ընկերութեան վերաբերեալ ամէն ինչ բաժնեցինք։ Եւ ամէն ոք իւր գործին գնաց։

«Ուստի մենք երեք հոգի մնացինք։ բայց առանց անապարժութեան կ՚ըսեմ թէ ամենէն դիմացկուններն ու ամենէն յարատեւողներն էինք։ Բայց յաստի վստահութիւն ունէինք։

«Խրճիթ մը չինած էինք որ վայելուչ չէր, բայց յոյժ պատշաճ էր։ Այդ խրճիթը սքանչելի եղեւնի մը կըռթընած էր, ուսկից ամբողջ հովիտը կ՚երեւնար, և մաքուր չուրի մ՚եղերքէն արահետ մը կար, ուսկից քանի մը վայրկեանէն մեր գործատեղին կ՚երթուէր։ Ջրոյ, այս մեծաւորութիւնը յոյժ թանկագին էր, վասն զի ժայռուտ կողմերը մաքրելու համար ամենէն աւելի չուր կը գործածուի։

«Գործն աղէկ կ՚երթար և իրարու հետ լաւ կը կենցաղավարէինք։

«Բայց աւա՛ղ, աշխարհի վրայ կատարեալ երջանկութիւն չ՚կայ, ինչպէս որ պիտի տեսնէք։

«Օր մը Տիք, որ ինձմէ զատուած չէր, յանկարծ ղուարթագին աղաղակներով մեզ կոչեց։

«Իւր քով վազեցինք։ Արդարեւ կենացս ամենէն գեղեցիկ վայրկեաններէն մին եղաւ այս։ Տեսայ, այո՛, աչօքս տեսայ ոսկւոյ հանածոյ մը, որ մաքրուելէ յետոյ հազար ռօլար կրնար արժել։ Ո՛չ, ասոնք այնպիսի զգացումներ են, զորս ոչ ոք կրնայ հասկնալ։ Խենթի նման պարեցինք։

«Եւ արդարեւ ճշմարիտ խենթութիւն մ՚եկած էր վրայիս, յուսոյ և ընչաքաղցութեան խենթութիւն, որ կրնար կատաղութեան փոխուիլ։

«Իրաւ է թէ մենք ալ սուրը չէինք, և խղճերնուս վրայ բաւական բեռներ կային։ Սակայն երբեք եղած չէր կիրք մը որ այնքան վառեր մեր սիրտն ու միտքը, որքան այս դորշագոյն, տգեղ, անհարթ մետաղէ կտորըն, որու ոսկի ըլլալը գիտէինք։

«Մեր երջորդ ընկերոջ անունն Օշպըրն էր. Անկլիացի մ՚էր նա։

«Որովհետեւ մուրթը կը կոխէր, մեր խրճիթը վերադարձանք և հոն առատ ճաշ մ՚ըրինք այն սոսկալի ախորժակաւ, զոր կ՚արծարծեն թէ՛ ուրախութիւնը և թէ՛ բովագործի ծանր աշխատութիւնը։

«Արդարեւ շատ լաւ բարեկամներ էինք, և պէտք է խոստովանիմ թէ մէջերնիս բնաւ գեղ խորհուրդ մը

չկար։ Նոյն աւուր յաջողութիւնը նոր վստահութիւն մը տուեր էր մեզ և որոշեր էինք գործունէութիւննիս կրկնապատկել։ ապա, խոշոր գումար մը հաւաքելէ ետքը, ինչ որ դիւրին կը թուէր այժմ որ բաղդը միանգամ նպաստաւոր եղած էր մեզ, հղրայրաբար պիտի բաժնէինք և իւրաքանչիւր ոք ուզած տեղը պիտի երթար իւր հարստութիւնն ըստ հաճոյս վայելելու։

«Երկար առեն խօսակցեցանք, և չատոնց մութերը էր երբ քուներնիս եկաւ։ Եւ սակայն դլուխնիս շատ ծանր էր, վասն զի այնքան ճիր և գարօղի խմեր էինք որ, եթէ այնքան հուժկու եղած չըլլայինք՝ կը մեռնէինք։

«Մեզ անկողնոյ տեղ ծառայող փսխաթներուն վրայ նետուեցանք։

«Այն երկրին մէջ մարդ ամէն օր վայրենի կենդանեաց յարձակման վտանգին մէջ է, գլխաւորաբար արջերու, մեկ մ'ալ առելի եւս սոսկալի կենդանիներու, այսինքն այն Հնդկաց ջոկերուն, որք հովիտները կ'ընթանային սպիտակամորթներն որսալու, որք տակաւին երկրին տիրելու չափ հզօր չէին։

«Աւսր համար գիշերները չէինք հանուեր և մենք իւրաքանչիւրին ձեռքին տակ զէնքեր կային։

«Քունէ առելի ծանր տեսակ մը թմրութեան մէջ էինակած էի։ Ալքօօլը ուղեղիս մէջ կը դառնար, և սոսկալի երազ մը դանդիս տակ կը պարեր...

«Յանկարծ աղաղակ մը... ոչ, բիրտ, տարօրինակ, կատաղի խորդիւն մը հնչեց ականջիս։ կարծես մարդկային ձայն մը չէր այս։ Բնազդական չարժմամբ մը, առջեւս տակաւին կիսափակ, ելայ նստայ...

«Ցեսածս հազիւ կրցի տեսնել։ Օշպերն ոտքի վրայ էր, բերանը բաց, աչերը խելագարի աչաց նման երենց ակնակապիճէն դուրս ինկած... տեղ մը բանի մը կը նայէր, զոր ես չէի տեսներ։ Կ'ուզէր պոռալ, բայց չէր կրնար։ Այս հերակլեան ոյժով մարդուն բոլոր անդամները կը դողային և կարծես յիմարական երկիւղ մը զինքը կը ջլատեր...

«—Ի՞նչ կայ, գոչեցի։

«Զպատասխանեց, բայց թեւն երկնցուց խրճիթին մէկ կողմը, դրան քով ձգուած անկիւն մը, ուր կը նետէինք մեր պարէնի պարկերը...

«Կանթեղին լուսով, որու դեղին բոցը կը դեղեուէր, տեսայ...

«Ցից մնկուած ծառի ճիւղի նման բան մը, որու ծայրը եռանկիւն բան մը կար... և կ'երերար...

«Օշպերնի պէս ես ալ դողացի... այո՛, կը խոստովանիմ։ Արդեօք գինովութիւնն էր որ դիս վատ կ'ընէր։ Կ'ուզէի հեծել, փսխաթիս վրայ իյնալ, բրդէ վերմակիս մէջ պլլուիլ, գլուխս ծածկել...

«Ֆրօրայ կոչուած սոսկալի զանգակատուր օձն էր։

«Հապա Ցի՛ք։ ի սկզբան զինքը չէի տեսած...

«Նա ալ Օշպերնի խորդիւնը լսեր էր։ Նա ալ արթընցեր ու կանգներ էր... և ոտքի վրայ կեցած էր կռնակը պատին կռթնցուցած, թեւերը տարածած, որպէս թէ ուզեր միջնորմի ծառի ճիւղերուն մէջ անհետանալ...

«Այս բոլոր ծանեներս, մի՛ս, քիչ մը երկար են, եթէ հաշուելու ըլլանք որ այս տեսարանն իւր վախճանովը մեկտեղ, զոր պիտի պատմեմ, կէս վայրկեան տեւած չէր։

«Ճանկարծ Տիք, կարծես զսպանակէ մը մղուելով, դէպի դուռը յարձակեցաւ եւ ոտքի հարուածով մը խորտակեց զայն...

«Փրկուած էր, դուրս պիտի ցատկէր։ Բայց Օշպերն ալ, դուռը բաց տեսնելով, միանգամայն հոն վազեց...

«Դուռը նեղ էր, միասին չէին կրնար դուրս ելլել։ Տիք Օշպերնի կոկորդէն բռնեց զայն ետ մղելու համար։ Օշպերն իւր երկաթի թեւերովը անոր պլլուեցաւ։ Եւ կատաղի ու եղբայրասպան կռիւ մ'սկսաւ... վանդիս իւրաքանչիւրը կ'ուզէր միսը իր խրճիթին մէջ նետել...

«Եւ սոսկալի աղաղակ մը լսուեցաւ։ Ա՜հ, ի՜նչ աղաղակ... Տիք, տեսնելով որ Օշպերնի գրկերէն ազատուելիք չունի, դանակը մէջքէն քաշեր եւ մէկ հարուածով մինչեւ կոթը նորա կուրծքը մխեր էր զայն։

«Բայց այս յաղթութիւնը կարճ տեւեց, վանդիս օձը, թերեւս այս ազմուկէն, կատաղութեան եւ ցաւոց այս սպաղակներէն գրգռուելով, նետի մը նման ուղիղ նետուեր եւ իր գարշելի ու տափակ գլուխը ուսմէն մը պէս փակեր էր Տիքի երեսին։

«Զգացածս ես ալ չեմ գիտեր։ Վախ էր· ո՛չ, դիս սառեցնող ահռելի սոսկումը բացատրելու համար նոր բառեր պէտք են... Տեղս չէի շարժած, շարժում մը չէի ըրած։

«Օշպերն առանց չզաճգութեան մը կռնակի վրայ ինկեր էր մեռած...

«Տիք, զոր սոսկալի կենդանին կը շրջապատէր, թեւերն օդին մէջ կը շարժէր... յետոյ երբ այն գարշելի օղակներն իր վզին ու կուրծքին կը սեղմուէին, կը տեսնէի որ խեղճ ընկերոջն դէմքը կ'ուռեր, կ'այտնուր...։ Լեզուն խոշորնալով բերնէն դուրս կ'ինար... Նա ալ ինկաւ, ամբողջ մարմինը չզաճգօրէն ցնցուեցաւ... յետոյ այլ եւս ո՛չինչ... միայն դիակ մը, որու կուրծքին փակած էր օձը պլորուած գօտիի մը պէս...»

Վարթօն պահ մը լուեց։ Դեղները էր։ Բրտինքի խոշոր կաթիլներ ճակտին վրայ կը գլորէին։

Միս Քլարի դէմքը ձեռքերուն մէջ ծածկեր էր։ Իսկ մայր Քարաման գաւաթ գաւաթի վրայ կը խմէր առանց գիտնալու եւ այլայլութենէն ցնորած...

Վասն զի Կոկորդիլոսի նաւապետը սոսկալի եւ դժբնդակ ոճով մը կը խօսէր։

Կարծես տակաւին այն ահռելի տեսարանը կը տեսնէր, կարծես անդամ մը եւս կ'զգար այն անձկութիւնները ու սոսկումները։

Լեցուն գաւաթ մը բոմ խմեց· յետոյ·

—Ներեցէ՛ք, մի՛ս, ըսաւ, ձեզ կ'ահաբեկեմ· բայց կը հաւատամ ձեզ թէ այս պատմածներս ճշմարիտ են... այացս առջեւ տեղի ունեցան... եւ ես քայլ մը չէի առներ փախչելու համար... իսկ ընկերներս փրկելու գալով, Աստուած գիտէ որ ես վատ չեմ, բայց վերջապէս... միտքս անգամ չեկաւ։

—Բայց դո՛ւք, դո՛ւք, նաւապե՛տ... ըսաւ Քլարի ահաբեկ ձայնիւ...

—Ա՜հ, ե՛ս, ըսաւ Վարթօն որ բոմէն այժ առեր էր եւ այժով կը հազար՝ իր պաղարիւնութիւնը ստանալու համար, ես բաղդատօր ծնած եմ, ինչպէս որ պիտի տեսնէք։

«Ուրեմն իմ վիճակս ալ որոշուած կ'երեւէր։ Եթէ զանգակատուր օձը կէս չրջան մ'ընէր դէպի աջ՝ բանս լմնցած էր... Չեմ գիտեր թէ զասոնք կը խորհէի՞... արդէն կիսովին մեռած էի։

«Չիս ձանձրացնող միակ բանն սպասելն էր։ Մարդ ծովէն բռնուած ատեն այնպէս կ'ըլլայ... դիս ինչ որ ուզէին կրնային ընել...

«Եւ ահա՛ կենդանին, որ անշուշտ առելի եւս բռպասել չուզելս կը դուշակէր, որկորը զասեց խեղճ Տիքի մարմինէն, և գլուխը շարժեց այնպէս մը որ կարծես թէ շուրջը կը նայէր տեսնելու համար որ ուրիշ տեղ մ'ալ թշնամի մը չկա՞ր...

«Ծեռայ վիրը դետին դրաւ և ծանր ծանր դէպ ի իմ կողմս սկսաւ սողոսկիլ...

«Անոր մօտենալը կը տեսնէի։ Մերթ ընդ մերթ կանգ կ'առնէր, գլուխը կը վերցնէր և կարծես երեսս նայելով՝ կ'ուզէր ըսել.

«—Կեցի՛ր, մարդո՛ւկս, երկար չտեւեր։

«Բայց ի՛նչպէս, չափազանց երկար կը տեւէր... բաց յասոնէ, անշուշտ գիս զբօսնեցնելու համար՝ կը նըւագէր. իւր զանկագատուր դժոխային պոչէն ձայներ կ'ելլէին. այս բանը գիս կը պակուցանէր, և ինչ որ տարօրինակ է, կը զուարճացնէր։

«Միշտ ծանր ծանր և համաչափ կը յառաջանար նըմանն այն որկրամոլին, որ չի փութար ձեռք դնել այն պատառին վրայ, որու համեղ ըլլալը գիտէ։

«Բայց ահա տակից հասկցայ թէ նախախնամութիւնը, որ գործին մէջ շահ չունէր, վրաս կը հսկէր —հոգուն վրայ կեցած էր հրացանս, երկհարուածեան հը-

րացանս, որ կ'երդնուի թէ լաւ լեցուած էր...

«Ահա՛ այն ազնիւ օձը, թերեւս չլանալով փողին վայլէն, զոր ես ձեռքս չփած էի, սկսաւ կատաղութեամբ խածնել զայն...

«Ես ալ... յանկարծ արթնցայ... վտանգն անմիջապէս զգացի... ձեռքս, որ վար կախուած էր, հրացանին բլթակէն հազիւ երկու մատ հեռու էր... Մատերս երկնցուցի... և քաշեցի...

«Եւ հրացանին մէջ եղածն ամբողջ օձին գլխուն մէջ տեղաւորուեցաւ։

«Ո՛չ, չեմ կրնար բացատրել թէ ի՛նչ զգացի երբ այն գարշելի կենդանին գետնի վրայ անշարժ փուռած տեսայ գլուխը դնդակէն կտրուած... և հոգուն վրայ արիւնի բիծեր թողլով... երբ հասկցայ թէ —վտանգի հազիւ քանի մը վայրկեանէն կրցի միտքս ամփոփել— երբ հասկցայ թէ փրկուած, ողջ և վտանգէ զերծ էի...

«Ուրախութենէս տեղս դամուեր էի... և կը յուսա՞ք որ ինքնիրենս կըսէի թէ անկարելի էր այս, թէ նորէն պիտի ելլէր և թունաւոր կարթերն իմ վրաս պիտի ուղղէր...

«Եւ տասը վայրկեանէ առելի չհամարձակեցայ շարժում մ'ընել...

«Այս միջոցին արեւու առաջին ճառագայթ մը կըսկսէր խրճիթին պատուհանէն ներս թափանցել... Հըրաշք մ'էր այս... մէկ րոպէի մէջ բոլոր վախերս, բանդագուշանքներս փառատեցան, ինքզինքս ժողուեցի... անմիջապէս ոտք ելայ... և երկու ընկերներուս քով վազեցի...

»Ո՛հ, մեռած էին... Տիքի դէմքը սոսկալի էր. խոկ

Օշակըրն կարծես կը քնանար... խե՛ղճ տղայ...

«Աչերս արտասուօք լեցուեցան, թէ և ճշմարիտ է որ ղեկայուն չեմ...»

Ա.յս միջոցին միս Քլարի, որ անշուշտ Վարթօնի ողջ առողջ ազատիլն իմանալով գոհ եղած էր, և իրենց կացութիւնը կը յիշէր, ըսաւ.

—Սիրելի նաւապետս, այդ արկածն յոյժ չահեկան է... բայց...

—Բայց ի՞նչ, հարցուց Ամերիկացին զարմացական կերպիւ, նման պատմիչի մը, որ յուսացած ազդեցութիւնը չէ ըրած...

—Շատ կը փափագէի իմանալ...

—Շարունակութի՞ւնը...

—Ո՛չ... վերջէն... առ այժմ կուզէի գիտնալ թէ Կոկորդիլոս ձեր ակնկալութեան համապատասխանա՞ծ է և թէ Աղկիոնն անցա՞նք արդեօք...

—Ո՛հ, մոռցեր էի, ըսաւ Վարթօն միամտօրէն։ Բայց Կոկորդիլոսը լաւ ճանչնալուս...

—Ուրեմն երթ կ'ուզէք միասին վեր երթանք... օդ առնելու պէտք ունիմ։

—Ի՛նչպէս, չէ՞ք ուզեր որ շարունակեմ...

—Վերջէն կը շարունակէք... երեկոյեան ճաշին, վասն զի կը յուսամ որ պիտի բարեհաճիք մեր ընթրիքին մասնակցիլ...

—Տիկին նաւապետուհին շատ բարի է։ Չեմ ուզեր ձանձրացնել զինքը։

...—Բայց չպիտի՞ պատմէք ինձ թէ Տիկին Վարթօն ինչպէ՞ս...

—Տիկին Վարթօն եղաւ։ Իրաւունք ունիք... ձեր հրամանին պատրաստ եմ։

Վարթօն բնաւ առարկութիւն մը չէր ըներ երբ օձին հետ ունեցած սոսկալի տեսարանը կը պատմէր։ Մէկ ականջովը մեքենային ձայնը մտիկ կ'ընէր և կը տեսնէր որ աղէկ կը բանի։

Ուստի ամենայն վստահութեամբ բացաւ այն փոքրիկ դուռն, ուսկից կամուրջին սանդուղը կ'ելլնուէր, և մէկ կողմ կայնեցաւ միս Քլարիի և խնամածուհւոյն ճամբայ տալու համար...

Օդը սքանչելի էր։ Ակնապարար կապոյտ երկինք մը ընդարձակ վրանի մը նման կը տարածուէր Միջերկրականի վրայ, որու ալիքները մետաքսեայ ծալքերու նման յուշիկ կը գլորէին։

Գարնան հիանալի օր մ'էր իւր անուշ ու վճիտ գոյներով, որք զմարդ ծուլութեան կը հրաւիրեն։ Նաբօլեի երկինքը վերուցէք և լաժաժարօնէ չմնար։ Անտառուկիոյ երկնից կապուտակ խորութիւնը վերուցէք և անդորրութեան բերկրութեանց մէջ արբչիւ ընկղմած ժիբաւիօ չմնար։

Միս Քլարի և մայր Քարաման կամուրջին վրայ էին։

Հովը նպաստաւոր էր, և պարզուած առագաստներն ալ մեքենային զօրութեան կ'օգնէին։

Աջդարեւ Կոկորդիլոսը աւելի կը նմանէր այն հրեշային Պղեսիոսորներէն մէկուն, զորս երկրաբանք կը վերակազմեն երկրի աշխարհ մէջ գտնուած բեկորներու համեմատ։

Սակայն միս Քլարի իւր ծովային դիտակաւ հորիզոնը կը քննէր։

—Բայց, ըսաւ յանկարծ, բնաւ նաւ մը չեմ տեսներ։

—Աջդարեւ չկայ... ըսաւ Վարթօն քիչ մը շփոթած։

—Բայց... Ադկիոնն ո՞ւր է, Ադկիոնն ո՞ւր է։

—Հա՛, այո՛, Ադկիոնն ո՞ւր է։

Ցեւտոյ հպարտութեամբ յարեց.

—Ցայտնի է որ չէ կրցած մրցիլ և մինչ շատ ետ մնացած է...

—Ըսածնուդ ապահո՞վ էք, հարցուց միս Քլարի պաղութեամբ։

—Ո՛հ, կատարեալապէս... ես կոկորդիլոսը կը ճանչնամ...

—Սակայն... աւելի ևս ապահով ըլլալու համար... թէ որ մէկուն հարցնէիք...

Վարթօն առաջուան չափ վստահ չէր երեւնար։ Սակայն իրեն համար անկարելի էր երկբայիլ իսկ թէ կոկորդիլոսը շուտով չէր կրնար յաղթել այն ընկուզի փեճիկին, ինչպէս որ կը կոչէր արհամարհանօք Մօնթէ-Քըբիսթօյի պրօսանաւը։

Եւ սակայն —եղելութիւն մը կար մէջ տեղ։

Ո՛չ առջեւնէն և ո՛չ ետեւնէն Ադկիոն չկար... Ադկիոն անհետացած եղեր էր։

—Բէթէ՛ր, գոչեց որոտագին ձայնիւ։

Վաղեմի կախեալն առապաստակալի մը բարձունքէն վար կիջաւ։

—Նաւապե՛տ։

—Կը յուսամ որ հրամաններդ կատարուեցան։

—Անշո՛ւշտ, նաւապե՛տ։

—Ցեւսա՞ք, ըսաւ Վարթօն յաղթական և միս Քլարին դառնալով։

—Բայց այդ հրամանները ի՞նչ էին։

—Բէթէ՛ր, հրամաններուս ի՞նչ ըլլալը տիկնան-

ապետուհուդն ըսէ՛։

—Ո՛հ, շատ պարզ էին, նաւապետ։ Կոկորդիլոսէ կաթսայները ճերմկնալու չափ տաքցնել, հարկ եղածին չափ ածուխ վառել...։ Մէկ խօսքով կարելի եղածին չափ շուտ երթալ։

—Ա՛յդպէս ըրի՞ք...

—Նաւապե՛տ, կոկորդիլոսն իւր ամենէն արագ գացած ատենէն երեք մղոն աւելի շուտ գնաց։

Վարթօն սիրտիանաց հառաչ մ՚արձակեց։ Արդարեւ վայրկեան մը տարակուսեր էր։

—Ուրեմն, ըսաւ ծանրութեամբ, չատոնց անցանք այն տեսակ մը սայլը որ մեր առջեւէն կ՚երթար...

—Ի՞նչպէս սայլ, ըսաւ Բէթէր անհանգստութեամբ քերուըտելով։

—Բայց սա պրօսանաւը, սա մակոյկը... Ադկիոնը։

—Ո՛հ, նաւապետ, ըսաւ Բէթէր մեկին կերպիւ, կատա՞կ կ՚ընէք։

—Ի՛նչպէս կատակ։ Մէթէ կատակ ընող մարդու մը կը նմանի՞մ...

—Ուրեմն նաւապետս ինձմէ աղէկ գիտէ որ կոկորդիլոս սովորաբար 12 մղոն կ՚երթայ...

—Կարծեմ թէ այդ ալ մեծ բանէ...

—Ա՛րդ, ուղեչափի տետրակը կեցած է և կրնայ ապացուցանել թէ տասնեւհինգէն մինչեւ տասնեւվեց մղոն գացինք...

—Լաւ ուրեմն, ետքը՝ բայց խօսէ՛... ապա թէ ոչ քեզ վերստին կը հանեմ այն կախաղանն, ուսկից բերնաւ իջնելու չէիր։

—Լա՛ւ ուրեմն, նաւապետ, վերոյիշեալ պրօսանաւը

22-23 մղոն կ'երթար։

—Բոան երե՛ք, դոչեց վարթօն չանթահար։

Ամրագրեւ իւր դէմքին անանկ խոր ու ծիծաղելի ապշութիւն մը կը յայտնէր որ միս Քլարի, իւր բովանդակ դժկամակութեան հակառակ չկրցաւ խնդալը բռնել, որու բարձրաձայն ընկերացաւ նաեւ մայր Քարամանն, որ գոհ էր տեսնելով որ այս միմիայն «սոսկալի» բաններ պատմող մարդուն հպարտութիւնը քիչ մը կը կոտրէր։

Բայց վարթօնի խելքը չէր հաներ։

Հայհոյելով, պոռչտելով, հրմշտկելով ցատկեց նաւաստաց մէջէն...

Ուղեչափի տետրակին վազեց, անկից ցատկեց մեքենային քով... հարցափորձեց, պոռաց, ոռնաց։

Եզրակացութիւն. Անկիոն —վիպերգին բաածին պէս— ատուերի մը նման փախեր էր, բայց առանց «պիտի վերադառնամ» ըսելու։

Երբ վարթօն այս ցաւալի ատուգութիւնն իմացաւ, երբ հասկցաւ որ ամէն ոք, աճուկն ալ մէկտեղ, իրենց պարտքը կատարեր էին, թէ ո՛չ յանդիմանելու մարդ կար ո՛չ ալ պատժելու, բայց թէ միակ յանցաւորը կոկորդիլոսն էր, որ իւր Մովսէս Թագաւորի պատիւէն ինկեր էր, նաւապետը դլուխը ձեռացը մէջ առաւ և խոր վհատութեան մէջ ինկաւ։

Ուրանալն անկարելի էր։ Խոստացեր և խօսքը չէր բռնած։

Եւ կամուրջին մէկ անկիւնը, կպրազօծ պարաններու կոյտի մ'ետեւն կծկտած՝ անշարժ ու ամօթապարտ կը կոյտի մ'ետեւն կծկտած՝ անշարժ ու ամօթապարտ կը նայէր և չէր համարձակեր գլուխը վեր առնուլ, վախնալով որ միս Քլարիի հեգնող աչաց կը պատահի։

Ամէն կը վախնար անկէ, ինչպէս առեւով զանգակաւոր օձէն։

Սակայն մայր Քարամանն կ'ըսէր.

—Կը տեսնէք որ, միս, Մօնթէ-Քրիսթօյի հետեւիլ ուղեւն յիմարութիւն է։ Գիտէք որ այն մարդուն հետ մրցիլն անհնար է։ Արագութիւնը միշտ իւր սիրելի բանն եղած է։ Ոչ ոք կրնայ անոր հասնիլ..., եւ եթէ խօսքիս կը հաւատաք, հիմայ որ վոքըրիկ սիրուն ճամբորդութիւն մ'ըրինք, ամենէն աղեկն է հանդարտօրէն Մարսիլիա վերադառնալ... և հոն Մէրսէտէսի քով լուրերու սպասել, որք քիչ առնէն կը հասնին...

Միս Քլարի այժմ վոքը ինչ դեղնած էր։

Ամէնն հոլիւդնին վրայ յառած կը կենար, և դոգցես աներեւութացեալ նաւուն հետքը կը բնտռէր։

Մայր Քարամանն յամառութեամբ իւր մայրական խրատները կը կրկնէր անոր իւր դգուիչ և հասատ ձայնովը։

Յանկարծ միս Քլարի գլուխը վեր առաւ։

—Լսեցէ՛ք, ըսաւ, երբե՛ք։

Խնամածուհին, որ քիչ մը երկար պարբերութեան մ'սկսած էր, յանկարծ լռեց։

Նորատի աղջկան աչաց մէջ երբեք այսքան կամեցողութիւն և հաստատամտութիւն չէր տեսած։

—Ի՛նչպէս, դոչեց, պիտի չարունակէ՞ք։

—Անշուշտ, ըսաւ միս Քլարի։ Ի՛նչ, դիս տղայ կը կարծես որ առաջին անյաջողութեամբ վհատիմ... սխալեցայ... այս մարդուն վստահեցայ...։ Դաս մ'է այս, և անշուշտ տակաւին ուրիշ դասեր ալ պիտի առնեմ։ Բայց խաղը թողո՛ւլ, յաղթուած ըլլալս խոստովանի՛լ, հրաժարի՛լ այն դիտաւորութիւններէս, որք ամբողջ

կեանքս են, ամենեւին: Չիս այդքան տկար կարծելու համար պէտք է շատ քիչ ճանչնալ զիս:

Եւ խանդավառ դիմօք յարեց.

—Բայց չե՞ս տեսներ որ, սիրելի մայրիկ, երեկուընէ ի վեր սկսայ հնչել ու ապրիլ: Ա՜յս դատարկ, կրաւորական, առանց յուզմանց և առանց շահու կեանքէն ձանձրացած էի...: Ա՜յսօր ինձ այնպէս կը թրուի թէ նոր աշխարհ մը թեւակոխեցի... արեւը աւելի գեղեցիկ, օդն աւելի մաքուր կ'երեւի ինձ: Երբեք մտքէս չանցած գազափարներ գլուխս ու սիրտս կը լեցնեն: Եւ կուզես որ բոլոր այս բաներէն հրաժարիմ... և վաղը վերստին մնեմ այն ծանր ու հեղձուցիչ մթնոլորտին մէջ, որմէ ազատեցայ:.. Ո՛չ, ո՛չ: մինչեւ ծայրը պիտի երթամ...

Մայր Քարաման ի՞նչ կրնար պատասխանել:

Ամենէն աղեկն էր հառաչել ու լռել:

Եւ ինքն ալ անմռունչ այնպէս երաս՝ Սբրիպի դիմաւորին նման:

—Բայց վերջապէս ի՞նչ պիտի ընէք:

—Ճամբայս պիտի շարունակեմ մինչեւ Պոնի նաւահանգիստը...

—Եւ հո՛ն: Անշուշտ չէք կարծեր որ Մօնթէ-Քրիսթօ իւր ժամանակը կորսնցնէ...: Իւր բնութեան մէջ չկայ անանկ բան. հոն հասնելէն երկու ժամ ետքը անպատճառ պիտի ուղեւորի...: Անշուշտ չէք յաւակներ այն կարաւանին եռուէն վազել աւազներուն մէջէն... առիւծուց, յովազներու, բորենեաց մէջէն:

—Չիս մոխիկ ըրէ, մայրի՛կ, ըսաւ միս Էլֆիս, որու ձայնը յանկարծ մեղմացեր էր, երթէ վտանգէն կը վախ-

նաս, կրնաս ըսել ինձ... և...

—Հետս Ֆրանսա կը վերադառնաս:

—Բնաւ: Բայց քեզ աղատ կը թողում և կրնաս առանձին վերադառնալ:

—Զա՛ր զաւակ, գոչեց մայր Քարաման: Չէ՞ք դիտեր որ մինչեւ դժոխք կուգամ ձեզի հետ... Ա՜յդ խօսքը մի՛ ընէք. նախ ես ձեր խնամաժուհին եմ... իրաւ է որ ձեզ խնամած չունիմ և դուք ձեր գլուխն փչածը կ'ընէք... բայց վերջապէս պարտականութիւններ ունիմ... զորս մինչեւ ծայրը պիտի կատարեմ... և երբ... հոն... դէմ առ դէմ գտնուինք... վազրերու հետ...

Ա՜յժմ կը հեծկլտար.

—Լա՛ւ, մնանք մին չպիտի կարենան ուտել՝ առանց միւսն ալ ուտելու...

Միս Քլարի զայն առ ինքն քաշեց և համբուրեց: Միշտ նոցա վէճերն այսպէս կ'աւարտէին.

—Օ՛հ, մի՛ լար. վագրերը կնամեծար պիտի ըլլան և առիւծները պիտի խոնարհին մեր առջեւ, հանդարտ եղիր: Ուրեմն որոշուեցաւ, հետս պիտի ճոսա... և ուր որ երթամ...

—Օ՛հ, մինչեւ աշխարհի ծայրը... և աւելի եւս հեռուն, ըսաւ Ոսոիկանին այրին.

—Ուրեմն թո՛ղ որ ուզածս ընեմ:

Կոչեց Տիք նաւաստին, որ ամենուն տրուած յարգանաց և փութոյ պատուէրին համեմատ՝ շատ մը վազեց եկաւ:

—Բարեկա՛մս, ըսաւ միս Քլարի, խնդրեցէք վարձն նաւապետէն որ պայ հետս խօսի:

Տիք եռմն դարձաւ և սկսաւ նաւապետը բնաւել, և ամէն կողմ բնաւելէ ետքը՝ վերջապէս գտաւ զայն դատարկ տակառի մը մէջ, որու մէջ մտեր էր պահուըտելու և այլ եւս արեւու լոյսը չտեսնելու համար։

Ամէնքն ալ պատուէ ընկած էին։ Ինքը, Գասպարինոսը, մինչեւ իսկ Տկն. Վարթօն, որ չպիտի ուզէր խօսքը չըպահող մարդու մ՚անունը կրել։

Կ՚ուզէր ինքզինքը սպաննել, կտաւին ընել, և Տիկին Վարթօնն իւր Բէթէր բարեկամին կը կտակէր... ա՛լ ամէն բան լմնցած էր։

Տիք չանաց համոզել զայն, Մօքն ու Բատոլին իրեն օգնութեան կոչեց։ Ջո՛ւր ճիպ։ Վարթօն իւր տակառէն ելնել չէր ուզեր և ոչինչ այնքան ծիծաղելի էր, որքան Վարթօնի գլուխն ու երկայն մօրուքը, որ ծակէն դուրս կ՚ելլէին և ժխտական շարժմամբ մը կը պատասխանէին իրեն ուղղեալ մխիթարական խօսքերուն։

Տիք յանկարծ գոչեց։

—Նաւապետուհին եկաւ։

Վարթօն տակառին խորն ընկղմեցաւ։ Ալիւր մաղերուն ծիրանագոյն ծայրէն ուրիշ բան չէր տեսնուեր։

Մխ Բլարի արդարեւ կը յառաջանար իւր թիկնապահին՝ մայր Բարամանի և ուրիշ ամենազօր օգնականի մը հետ, այն էր Թու-Սամ-Պա Սիուին այրին, որ այսօր Տիկին Վարթօն էր։

Ազնիւ Ամերիկացւոյն յուսահատութիւնը գուշակած էր։

—Նաւապետ Վարթօ՛ն, կոչեց։

Պատասխան չկայ։

—Բարեկա՛մս, ըսաւ ազիւս-կնոջ ոյժուռ ձայնը։

Բայց երբ մայր Բարաման որոշում մ՚ընէր, կ՚ուզէր որ որոշածը չուտ և լաւ կատարուի։ Արդ, քանի որ ամէն պարագայի մէջ Ալճէրի պիտի երթայուէր, քանի որ միս Բլարի նաւապետին հետ խօսելու պէտք ունէր, բարբարելու չէր գար։

Ուստի տակառին մտեռնալով արժանապատիւ Ամերիկացւոյն գանգուր մազերէն բռնեց և քիչ մը չափազանց ուժով քաշելով՝

—Ի՛, մարդո՛ւկս, գոչեց, այդքան նազանք չուզեր..., Ջեզի հետ խօսիլ կ՚ուզեն։

Մաղերու բարուդ բարշում մը յոյժ համոզիչ է։ Մեր վարժապետները —մանաւանդ միաբանականք— լաւ գիտեն թէ այս գործօղութիւնն ինչ ազդեցութիւն կ՚ընէ խեղ տղոց վրայ։

Վարթօն ցաւագին Ա՛յ մը գոչեց և գլուխը տակառէն դուրս եկաւ։

Եթէ այս տեսարանը քսան տարի առելի ետքը տեղի ունենար, խօսող գլխաւորը մարդուս միտքը պիտի գար անմիջապէս։

Վարթօն միս Բլարին տեսաւ, և Ամերիկեան կընամածարութիւնն անմիջապէս յաղթող ելլելով՝ թոթովեց՝

—Միշտ ձեր հրամանին պատրաստ եմ...

—Կ՚ուզէ՞ք զիս մահիկ ընել...

—Կ՚ուզեմ և կը պարտիմ։

—Պարոն Վարթօն, գիտէք որ ծանր յանդիմանութիւններ ունիմ ձեզ ընելու։

Վարթօն նորէն ընկղմիլ ուզեց, բայց մայր Բարամանն կը հսկէր։

—Ցանցաւոր եմ, շատ յանցաւո՛ր, ըսաւ Վարթօն։

Կարելի է կուրծքին պիտի դարնէր, բայց իւր բաղկաց տրամադրութեան տակ գտնուած միջոցն անբաւական էր այս Մեղա՛յի չարժման։

—Կը յուսամ թէ ձեր յանցանքը դարմանելու համար ամէն բան ընելու պատրաստ է՛ք։

—Ա՛հ, այդ մասին, կ՛երդնում թէ... պատրաստ եմ։

—Ուրիշ քիչ բան պիտի խնդրեմ ձենէ։

—Այդ բաւական չէ. ես կախուելու արժանի եմ...

—Բարեկա՛մս, ըսաւ մայրաքար Թու-Սամ-Պաի այրին, իւր անցեալ ու ապագայ կացութիւնն յիշեցնելու համար նոր ամուսնոյն, երբեք այդ բաներուն վրայ խօսելու չէ։

Մխա Քլարի ընդմիջեց զայն.

—Քիչ բան ըսի, խնդրելիքս սա է որ քիչ մը յիշէ՛ք։

—Ա՜ւաղ, հեծեց Վարթօն, չափազանց կը յիշեմ, քանի որ կը յիշեմ թէ ինքզինքիս պէս պատասխանատու եղայ կոկորդիլոսին համար...

—Ուրիշ բան չէ՛ք յիշեր...

—Ուրի՞շ բան...

Վարթօնի գլուխը ապրին անդին կ՛երթար և կարծես այս երթեւեկի չարժմամբ կը յուսար մոռնալ եղած մեկ բանն յիշել։

—Քանիցս համարձակեցայ, յարեց մխա Քլարի ժըպտելով, կոկորդիլոսի արագընթացութեան վրայ երկբայիլ...

—Ա՜ւաղ։ Մատնի՛չը։

—Եւ գուք գրաւ մը առաջարկեցիք ինձ...

—Կարելի է։

—Գրաւ կը դնեմ որ, ըսիք, Պօն հասած առեններս այն նաւակն այնքան անցած պիտի ըլլանք որ... թումբերէն չպիտի երեւնայ իսկ...

—Իրաւ է որ բնաւ չպիտի երեւնայ, մրմնջեց Քաբանան։

Վարթօն յանգիմանական նայուածք մ՛ուղղեց անոր։ «Վա՛յ պարտուելոց» խօսքը չարաչար կը գործածէր։

—Եթէ յիշողութիւնիդ տեղն է, չարունակեց մխա Քլարի, այս գրաւին գրաւականն էր իմ կողմէս ձկին. Վարթօնի տրուելիք գոհարեղէն մը...

—Ո՛հ, ի՛նչպէս յայտնի է որ գրաւն ինք դրած է, մրմնջեց վաղեմի Սիու կինը։

Վարթօն ճիչ մ՛արձակեց և կխտովին դուրս նետուեցաւ.

—Իմ կողմէս ալ... կը յիշե՛մ մի. անչո՛ւշտ։ Ահա բառ առ բառ ըսած խօսքերս։ Ես, կինս և մարդիկս ձենէ չպիտի բաժնուինք, մինչեւ որ չհանենք այն ճանապարհորդաց, որոց եռեւէն կ՛երթաք...

—Ձի՛շդ այդ է։ Լա՛ւ... կարծեմ թէ...

—Գրաւս կորուսի։ Կրո՛ղ, հարիւրապատիկ կորուսի։

—Ուրե՞մն։

—Ուրեմն... եթէ կը խոստանաք ներել ինձ...

—Բայց արդէն ներեցի։ Պարոն Վարթօն։

—Բայց այո՛, մարդուկս, յարեց մխա Քարաման։ Օ՛հ, տակաւին ե՛լ և եկուր չենք կնարհիր խօսէ...

—Խօսքերնիդ պիտի պահէ՞ք, պարոն Վարթօն, հարցուց մխա Էլֆիա։

—Ո՛հ, այդ մասին, ըսաւ կերուղին այրին, ես պատասխանատու եմ իրեն համար։

—Եւ իրաւունք ունիս, տիկին Վարթօն, դուն նաւապետը որ այս անգամ կատարելապէս դուրս եկաւ տակառէն, ինչպէս սատանայները դուրս կ'ելլեն այն տուփէն, որուն գպանակը տղայ մը մղած է...

Եւ տակառն առնով կուպը պարունակած էր. և մածուցիկ կուպրն այնքան լաւ ծեփեր էր աղեխ Ամերիկացւոյն հագուստները որ, յոտից ցգլուխ սեւ ծուէններով ծածկուած դուրս եկաւ...

Ծնօտին տակի կարմիր մօրուքով, դուրս ցցուած խոշոր աչերովն այնքան ծիծաղելի էր որ, միս Քլարի երկրորդ անգամ ըլլալով սկսաւ խնդալ։

Ուրեմն գինեվաճառ եղած էր, և Վարթօն, որ յոյժ խորամանկ էր, այս վայրկեանն ընտրեց կատարեալ ազնուականի մը նման յարգական ձեւերով անոր առջեւ խոնարհելու համար և ըսաւ.

—Նաւապետուհի, պատուոյս վրայ կը խոստանամ ձեզ, կարելի է որ քիչ մը խենթ երեւնամ ձեզ... բայց ի՞նչ ընեմ. Աստուծոյ պէս հաւատք ունեի կոկորդիոսի վրայ. բայց երբ ես բան մը կը խոստանամ և ինդիրը միմիայն ինձմէ կախուած ունենայ, այն ատեն կրնաք ապահով ըլլալ՝ իբրու թէ երկուց աշխարհաց նուաճք այդ գործը վաւերացուցած ըլլային... Ո՛չ ես, ո՛չ կինս և ո՛չ մարդիկս ձեզնէ չպիտի գաղտնենք, մինչեւ որ դուք չըսէք թէ այլ եւս մեզի պէտք չունիք...

Եւ այս երդման աւելի հանդիսական երեւելի մը տալու համար, Վարթօն վեհափառ շարժմամբ մը հա-

նեց այն մշանջենական ծամիկը (chique), որ լինտերուն մէկ անկիւնը կծկուած էր (ինչ որ, միջանկեալ կերպիս կ'ըսենք, թոյլ կուտար իրեն որ կանանց առջեւ չծխէ), և գայն կամարջին վրայ նետելով՝ ոտքովը ճզմեց։

Աւանդական ձեւ մ'էր այս։ Նա իւր ծամիկին վրայ կ'երդնուր, ինչպէս նախնիք Սթիւքսի վրայ կ'երդնուին։ Ամէն ժամանակ իւր սովորութիւններն ունի։

—Բայց, առաքինեց Քլարի, այս խոստումն ալ ընել նիզ անհամեմատութիւն չէ՞։

—Ո՛հ, այս անգամ՛մ...

—Ներեցէ՛ք, բայց ապահո՞վ էք որ ձեր յիշած անձինք ձեզ պիտի հետեւին։

Այս անգամ Վարթօն մեծ մեծ չխօսեցաւ։ Իւր խօսքին չհաւատացուելուն իրաւունք կուտար։ Իրաւ է որ նուաստութիւն մ'էր այս, բայց արժանի է անոր։ Սա անիծեալ կոկորդիոսէն վրէժը պիտի լուծէր։

Այժմ հարկ էր վերստին բարձրանալ յայս միս էլֆիսի։

Վարթօն, իւր կպրային ցնցաղդեցութեան արժանապատուութեամբ շտկուեցաւ.

—Տիկին Վարթօն, ըսաւ ծանր ձայնիւ, լսեցէ՛ք. կրնա՞մ ապահով ըլլալ թէ ուր որ երթամ՝ ինձ պիտի հետեւիք։

—Ո՛, Թօ՛մ, հեծեց հսկայական շիւեօնով հսկայ կինը, կը տարակուսի՞ս։

Աչերը լեցան և չկրնալով ինքզինքը բռնել՝ Վարթօնի թեւուց մէջ նետուեցաւ դոչելով,

—Ամէ՛ն տեղ, ամէ՛ն տեղ։

Ցետոյ, չկրնալով դիմանալ, արագ արագ խել մը

կոկորդային խօսքեր արտասանեց անանկ ղպայնութեամբ մը, որու պիտի նախանձէր Օրդ. Բաշէլ։

Կ'երեւի թէ այս հաչխնեներուն մէջ նաւապետին համար շատ ողբալի խօսքեր կային, վասն զի դոգցես ինքզինքն չկմկացնելու համար և աչերն համեստօրէն խոնարհելով մրմնջեց.

—Սխուերէն է։

—Ես երբէք Տէն. վարթօնէն չեմ տարակուսած, ըսաւ Քլարէ։ Բայց ձեր մարդոց վրայ ալ նոյնքան վըստահ էք։

Աւով վարթօնի ամենէն գպայուն լարին դպաւ։

Ջեռօքը նշան մ'ըրաւ որ ըսել կ'ուզէր. կեցի՛ք, հիմայ կը տեսնէք։

Եւ կուրծքէն արծաթէ սուլիչ մը հանելով, երեք անգամ սուր և տարօրինակ կերպիւ սուլեց։

Ան այն ատեն կոկորդիւոք ինն նաւաստիք դոգցես հրմայիք երեւան ելան կամ լաւ եւս է ըսել վազելին ուրենց նաւապետին քովը շարուեցան։

Ան այս արագութիւնն իսկ արդէն բաւական յաջողութիւն մ'էր։

—Ա՛րք կոկորդիւոք, ըսաւ վարթօն բարձրաձայն. ձեր նաւապետն ձեզ աշշաւանքի մը համար պինուորագրեց։ Մէջերնուդ մէկն առարկութիւն մ'ունի՞ ընելու։

Մրմունջ մը լսուեցաւ և նախկին կախեալն, որ իրմէ աւելնաբանը կ'երեւէր, սա տիպական խօսքն ըսաւ.

—Օ՛ն, նաւապե՛տ, խենթ բաներ մ'ըսէք։

—Մաքերնիդ բացատրեցէ՛ք, ըսաւ վարթօն խըստիւ։ Եւ մի մոռնաք որ նաւապետուհոյն առջեւ կը խօսի՛ք։

—Նաւապե՛տ, լաւ գիտէք որ երբէք ձենէ չենք զատուիր... Եթէ կ'ուզէք գժոխք գացէք, մենք ալ կուգանք։ Անանկ չէ՞, ընկե՛րք։

—Այո՛, այո՛, գոչեցին կոկորդիւոսի նաւաստիք միաբերան։

Բաւական գեղեցիկ վոխարինութիւն մ'էր այս վարթօնի համար, որ փոքր մնաց հպարտութեամբ չըտկուեցաւ։

—Տեսա՞ք, նաւապետուհի՛, ըսաւ պարզապէս։

—Այո՛, բայց խօսք հասկնանք։ Ձեր նաւաստիք ծովու վրայ ըլլայ թէ ցամաքի վրայ պիտի հետեւի՞ն ձեզ։

—Ամենուրեք, ադոր մի՛ տարակուսիք։ Հիմայ կը սիրայ գիտնալ թէ ո՛ւր պիտի երթանք...

—Կեցի՛ք որ ըսեմ։ Երբէք Ափրիկէի ներքոյ ճամբորդա՞ծ էք։

—Հարաւային կողմն, այո՛։ Բաթաւիոնեներուն երկիրը... Անգամ մ'ալ Ջանզիպար ելանք։

—Այդ տեղերուն համար չեմ ըսեր։ Մենք հասանակամանաբար Սահարայի անապատին մէջ պիտի ճամբորդենք...

—Պահ, ըսաւ կոկորդիւոսի նաւապետն արհամարհանօք։ Հո՛ն կամ այլո՛ւր։

—Ըսել է կը խոստանաք գիս չթողուլ մինչեւ որ ի գլուխ չհանեմ այն գործը, որու նուիրած եմ ինքզինքս... կեցի՛ք, ընդմիջեց Քլարէ, որ կը տեսնէր թէ վարթօն արքայութեան բոլոր աւերքերը — քրիստոնեայ, պուտտայական, և այլք — վկայ պիտի կոչէր իւր երդման։ Նախ պէտք է ըսեմ ձեզ թէ ի՛նչ կ'ուզեմ և

լինչու համար ճամբայ ելայ։

Նորատուկ Անկլուհուդն էր այն, այս խօսքերն ըսած առնեն, հանդիսական, գրեթէ պատկառելի հնչիւն մը առացեր էր։

Արդարեւ այս տեսարանը գեղեցիկ նկար մը կրնար ըլլալ։

Մինչեւ կրակայանի պայծառ երկինքը ներքեւ հրեւակայեցէք տեսակ մը ծովային պոհաժանի, որ Թոքախտաւորի նման խորհրդաւոր ծուխ կ'արձակէր... Նորա կամուրջին վրայ, կայրազօծ պարաններու, տակառներու, անտուկներու միջեւ, գեղնորակ գոյնով մեծ առու ադամանդու պարզուած թեւերուն տակ թարմ ու գեղանի աղջիկ մը —զոր կը շրջապատէն առաջին կարգի աւազակը, զոր կարելի ըլլայ ժողուել երկուց աշխարհաց թիւրանններէն.— այդ աղջիկը ոտքի վրայ կանգնած, նուրբ ձեռքը վեր վերցուցած էր ինչպէս հրամայութեան, մինչդեռ այս տարօրինակ անձանց պարտ դլուխը յարդանօք կը խոնարհէր և միւսներն ալ գոհակ ի ձեռին մոխիկ կ'ընեէին ու կը հեռանային։

Միս Էլֆիսի աջ կողմը կայմ մը... ո՛չ, Տիկին Վարթօն։

Ձախ կողմը դունդ մը... ո՛չ, Տիկին Քարաման։

Եւ ամենուն վրայէն ձօնի սպիտակ, ածիլեալ և անյայտ դէմքը, որ օդ կ'առնուր և երբէ կայսրութիւնն մ'իսկ տրուելու ըլլար իրեն, չպիտի ընէր անանկ նշան մը, որմէ կարելի ըլլար գուշակել թէ շուրջն եղածները կը հասկնար։

Կարծես բեմի մը վրայ կը ներկայացուէր մին այն ծովային առասպելներու, յորս ծովու դիցուհի մը յանկարծ կուգայ իւր կամքը գործադրել տալու։

Միս Էլֆիս կը չարունակէր.

—Ափրիկէի ցամաքն ելած վայրկեանուս սկսեալ չենէ իւրաքանչիւրն թոշակ մը պիտի ընդունի, զոր նոյն ինքն պ. Վարթօն պիտի սահմանէ։ Բայց այն օրէն սկսեալ իմ քայածներս դուք ալ պիտի քալէք... Լաւ դիտցէ՛ք թէ ես կին եմ, բայց կամքս հզօր է և կարելի է ձեր քաջութիւնը ծանր փորձերու ենթարկեմ։ Ինչ որ ալ պատահի, ինչ որ ալ քալէք, երդում ըրէ՛ք որ հետեւիք ինձ մինչեւ որ ես ետ քաշուիմ։

Եւ այնքան գեղանի էր, այնքան խոր և յանկուցիչ խանդ մը կը ճառագայթէր դէմքին վրայ որ ամէնքը յափշտակուեցան և ձեռքերնին երկնցուցին։

—Այո՛, այո՛, վստահ եղի՛ք մեր վրայ։

—Եւ մի՛ մոռնաք որ, դուչեց Վարթօն, պարտաւոր ենք վերահաստատել կոկորդիլոսի պատիւը, որ չկրցաւ ճղճեմ Ադկիսեի յաղթել... Նաւապետուհի, յարեց նորատի աղջկան դառնալով, մենք ձերն ենք։ Ձեր հրամաններըը տուէք և կը գործադրենք...

—Շնորհակալ եմ, ըսաւ Միս Էլֆիս։ Խօսքերնիդ կ'ընդունիմ և գիտեմ որ ամէնքդ ալ հաւատարիմ պիտի ձեաք...

—Այո՛, այո՛։

Տիկին Վարթօն միս Քլարիի մօտեցաւ։

—Այժմ ըսէք ինձ թէ, ըսաւ իւր վախտ կոկորդիլոսի կարկաչները կամ կռիւները —ինչպէս որ կ'ուզէք— մեղմացնելով, ըսէք ինձ թէ պ. Վարթօնի ներեցիք...

—Ո՛, ամենայն սիրով, ըսաւ միս Էլֆիս ձեռքը Ամերիկացւոյն երկնցնելով։

Վարթօն նետուեցաւ այն վարդագոյն թաթիկին վրայ, և անշուշտ չափազանց անձնուէր ախղմամբ մը պիտի ճմլէր զայն, եթէ նախկին Շիկամորթի կինը չի բռներ զինքը։

Բայց այնքան երջանիկ, այնքան մխիթարուած էր որ...

Անոնք որ հրաշից չէն հաւատար կամ գիտմամբ և կա՛մ այնպիսի թերհաւատութեամբ մը, զոր երբեմն ամենայն իրաւամբ խարդախով կը պատժէին, թող բարեհաճին հետեւեալ տողերը կարդալ...

Վասն զի վերջապէս քանի որ մի միայն գիտութեան կը հաւատանք, քանի որ փորձառութեամբ հարիւր անգամ ճշդուած եղելութեանց միայն հաւատք կ'ընծայեմք, չենք կրնար հաւատալ որ ևօթն ոսկ և ութ մատ բարձրութեամբ մարդ մը, զոր բնութիւնն առատ ու կարմիր մազերով օժտած է, կարենայ մէկ հարուածով մազերն ու գանգին մաշկը քաշել հանել, ի՛նչ ատոհման ալ որ եռանդ եկած ըլլայ իր վրայ յանկարծ։

Եւ սակայն եթէ չանթէն իսկ չախչախէ զմեզ, չենք կրնար, իբր հաւատարիմ պատմագիր, ճշմարտութիւնը չ'արձանագրել։

Ա՛յո՛, Վարթօն ներողութիւն գտնելուն այնքան գոհ էր որ ձեռքովը բռնեց այն անել և հրագոյն մացառն որ կաղնիի մը արմատին նման իւր արմատներով իւր գանգին կցուած կ'երեւնար և մազերը գլխէն երկար մեթր վեր նետեց...

Մերկ թողլով գանգային տուփը, որ տարօրինակ, կարկատուն և նորոգուած էր նման հին մաճակի մը,

որու վրայ հնակարկատն ընդ երկար աշխատած է...

Մինչդեռ բոլոր նաւասպեսք սոսկալի ծիծաղ մը կ'արձակէին յօդս, Միս Քլարի և մայր Քարաման զարմացման աղաղակ մ'արձակեցին։

Անօգուտ է ըսել որ ձօն և ոչ իսկ քթթած էր։ Եթէ Վարթօն գլխովը ձեռնածութիւնները իսկ ընելու ըլլար, ձօն ամենաթեթեւ կերպով իսկ չպիտի ժպտէր, քանի որ իւր պաշտօնին մէջ անանկ բան չկար։

Տկն. Վարթօն ամենայն պարզութեամբ բաւ առնոյն։

—Նաւապետուհւոյն չըսի՞ր որ գանգաքերծուած (scalpé) եմ։

Ա՛յս բարեսիրտ կինը միւսներուն զարմանքին կը զարմանար։

Ասկից պարզ բան կա՞ր միթէ։ Ո՞վ իւր կենաց մէջ գէթ անգամ մը գանգաքերծուած չէր։

Սակայն Բէթէր նաւապետին կեղծաւոր օդոն մէջէն բռներ էր և կ'օգնէր անոր որ նախկին վիճակին մէջ դնէ վերստին։

«Գանգաքերծուած» բառը կ'երեւի թէ չկրցաւ համրղել զմիս էլֆիս որ աչխարհի ամենէն բնական բանն եղած ըլլայ այս։

Բաց յաստի Վարթօն կաս կարմիր կտրեր էր, իբրու թէ, առանց ուշադրութիւն ընելու, յոյժ անհրաժեշտ մէկ հագուստն հանած ըլլար։

—Ներողամի՛տ եղիք, նաւապետուհի՛, բաւ, բայց այնքան ուրախ եմ որ...

—Ո՛հ, արդէն ներեցի։ Եւ հիմայ ըսէք ինձ թէ —քաւ լեցի որ կոկորդիոսի արժանեաց վրայ տարակու-

սիմ— բայց լքէօրէն ըսէք թէ ո՞րչափ ժամանակէն Պօնի նաւահանգիստը պիտի մտնենք...

—Պատասխանէ՛, Բէթէր, ըսաւ վարժօն։

—Նաւապե՛տ, տասը ժամ չանցած ցամաքը պիտի տեսնենք,..

—Կը լսէ՞ք, միս։

—Տասներկու ժամ կուտամ ձեզ, բայց և ո՛չ իսկ վայրկեան մ՚աւելի, լաւ խորհեցէ՛ք։

—Աւելի լաւ է որ կոկորդիլեան այրեմ քան թէ ըսած ժամուս չհասնիմ...

—Ձեռքերնուդ եկածն ըրէ՛ք, նաւապետ։ Ես իմ զարդասենեակս կ՚իջնեմ... բայց կը յուսամ որ, Պ. վարժօն, ձեր արկածին չարունակութիւնը պէտք պատմէք ինձ... գէթաւորապէս կ՚ուզեմ հասկնալ թէ ի՛նչպէս...

Եւ առանց ուրիշ բան ըսելու մնաներն իւր առաջուան խաղաղաշունչ մնաղերուն կը տանէր։

—Ամէն բան պիտի ըսեմ ձեզ... և կ՚երդնում որ չպիտի ձանձրանաք։

Յայտնի էր որ վարժօն երդումը ընելը շատ կը սիրէր։

Վայրկեան մը եռքը միս էլֆիս, որ մտախոհութեան մէջ ինկած էր, իւր աչքերէն մէջ մայր Քարամանի հետ կը խօսակցէր։

—Ա՜յս տեսակ անձնական ընկերակցութենէն յառաջ գալիք արկածները փոքր ինչ երկիւղ չե՞ն ազդեր ձեզ, կը հարցնէր խնամածուհին։

—Ո՛չ, և անդամ մը եւս կը կրկնեմ քեզ թէ՝ ինձ այնպէս կը թուի որ կրկնակի կ՚ապրիմ...

—Բայց... հարցում մ՚ալ ընեմ։ Ես ղձեղ չատ աւելի կրակոտ տեսած եմ, և կը խոստովանիմ թէ սաստիկ վախցայ որ պիտի բարկանաք, երբ տեսաք որ Ադկիոն ձեզ անցեր էր...

Միս Էլֆիս կարմրեցաւ, ցետոյ մայր Ոսկիկանի ականջն ի վար։

—Ամէն բան պիտի խոստովանիմ քեզ, ըսաւ... Զգարմացայ... ընդհակառակն շատ պիտի վշտանայի, եթէ այս մարդիկ դիւրաւ կարենային անցնիլ...

—Մօնթէ-Քրիսթօ՛ն, մրմնջեց մայր Քարաման։ Ա՜հ, սիրելի՛ աղջիկս, զգուշացէ՛ք։

ԺԵ.

Խորամեալ, գանգաթերթ, կերուած... եւ ամուսնացած.

Ազդարարութիւնը կը պահանջէ խոստովանիլ որ կոկորդիլոս այն օրը մեծամեծ ճիգեր ըրաւ։

Նորա բոլոր անդամները կը ցնցուէին կամաւոր կամ անկամ կորզմանց և անխուսափելի բախմանց ներքեւ։

Միս Քլարի, որ նախորդ գիշերը չէր պառկած, վերջապէս քնոյ անձնատուր եղաւ։

Բայց մայր Քարաման —որ նոյնքան չգային չէր լսելով՝ արգարեւ աւելի դիմացկուն էր— անքունութեան կըրցեր էր դիմանալ։

Նորատի աղջկան անկոչնոյն քով թիկնաթոռի մը վրայ տարածուած՝ կը խորհէր։

Ըսել է ալ տարակոյս չկա՛ր։ Ալճէբրի կ՚երթա՛ր։ պիտի պարտաւորէր ուղտի մը կռնակին հեծած անապատին մէջ վաղե՛լ։ Պ՚րը։ Այս բանն ամենաւին մտքէն չէր անցած երբ հիւծեալ և կիսամեռ Անկլիացի աղջկան մը քով խնամածուհիան պաշտօնն ընդունելով՝ նեղութիւն անցնելու հաւանութիւն տուած էր։ Տխե՛ք անդամ մը սա տկար բնութիւններն ի՛նչպէս մէկէն ի մէկ կը զարթնուն։

Բարի խնամածուհին չէր քնանար, կը մրափէր։

Եւ այս կէս թմրութեան մէջ տարտամ ձեւ մը կը տեսնէր, որ խաբուելու չափ կը նմանէր զուաւի մը, մանաւանդ Բուքու զուաւին։

Կ՚աղաչենք որ ընթերցողը յանդուգն կերպիւ չդատէ զմայր Բարաման։

Լաւ դիտէր որ յիսունը քիչ կամ չատ անցուկ էր, և այս տեսակ «աւանակութիւններ» մտքէն իսկ չէին անցներ։

Բայց ամէն աստն փափագած էր որդի մ՚ունենալ, ասոր նման զուարթ, անփոյթ, ծաղրարան լակոտ մը։ Բուքու հաճելի էր երեն։ Կ՚ուզէր որ հիւանդ, վիրաւոր ըլլար, որպէս զի կարենար խնամել զայն, գիշերներով անքուն հսկել անոր անկողնոյն քով և յանդիմանել զայն, եթէ դիպուածաւ յանդգնէր բժշկին պատուէրներուն դէմ դնել...

Այո՛, անոր համար էր որ անոր վրայ կը խորհէր։ Գէր կինը վիպական էր, և իւր կէս քունին մէջ կը տեսնէր զԲուքու հարիւրի չափ պետուէններու հետ կռուի բռնուած, որոց խերը կ՚անիծէր և ապա, վառօք ու պատուանշաններով ծածկուած, կուգար զբերկել իւր «մայրիկը», որ թեւերը կը բանար անոր։

Այս երազը հուսկ յետոյ այնքան տաղտկացուցիչ եղաւ որ, Բարաման ցնցուեցաւ և բունի արթնցաւ։ այս տեսակ դաղափարներն իւր տարիքին կը վայլէի՞ն։

Որովհետեւ միս Բլարի —որ իւր անփոյթ դիրքին մէջ այնքան սիրուն էր— տակաւին կը քնանար, խնամածուհին, որ քիչ մ՚ալ դաստիարակուհի էր, ըսկսաւ Ալճէբրիի վերաբերեալ դրքերը բանալ։ Եւ նախ և առաջ ի՞նչ տեսնէ։ Տեսաւ որ եթէ Կոկորդիլոսը թեւեր ունենար իսկ, ինչ որ բնաւ չէր պատշաճեր իւր կացմերուն, տակաւին գոնէ քսանեչորս ժամ նաւուն մէջ պիտի մնայէին։

Հապա վարթօ՛ն որ տասը ժամ ըսեր էր։

Արդարեւ այս Ամերիկացին մեծաբանին մէկն էր։

Վերջապէս միս Բլարի արթնցաւ։ Բարաման այս տեղեկութիւնն անոր հաղորդելով, երկուքն ալ որոշեցին այն մարդը պատժել անյողդողդ կերպիւ իրենց սենեակէն դուրս չելլելով։

Երբ Տիկին վարթօն կամաց մ՚եկաւ դուռը զարկաւ խմաց տալու համար որ երեկոյեան ճաշը հրամցուած էր, պատասխանեցին անոր թէ քիչ մը տկար են և կ՚աղաչեն որ թեթեւ ընթրիք մը բերել տայ իրենց խցիկին մէջ։

վարթօն չերեւցաւ։ Գիշերն անցաւ։ Առաւօտ եղաւ։ Տասը ժամը քիչ մը անցած էր։ Եւ սակայն տակաւին ցամաքը չէր երեւնար։

Մխայն իրիկուան դէմ, ժամը հինգի մէջտեղին, ձօն, իրեն տրուած հրամանին համեմատ, եկաւ ըսաւ։

—Մխէեա՛, բան մը կը տեսնուի։

Ա.յս բանը Ալճէրիոն էր ։

Միս Փլարի իւր հաւատարիմ Քարամանին հետ կամուրջին վրայ եկաւ ։

Հորիզոնին խորը աւելի մութ կապոյտ գիծ մը կը նշմարուէր ։

Ա.ւտառաց երկիրն էր սա ։ Բայց ախո՜ն . Մօնթէ-Փրիմթօզի պրօսանաւն ի՞նչ եղած էր ։ Պարապ բան էր անոր սեւ պարպմանակը տեսնելու աշխատիլ ։

Բայց միս Փլարիի փիլիսոփայութեան պաշարն առատ էր ։

Ուստի կատարելապէս անուշ դէմքով մը խօսք ուղղեց Վ.արթօնի , որ —իւր առջի աւուր մեծաբանութեանց համար վոքր ինչ ամօթահարած —խօսակցութեան մտնելու մեծ փափագ չէր յայտներ ։

—Տեսնուածը Ալճէրի՞ն է, հարցուց նորատի աղջիկը ։

—Ա.յո՛ . . . այո՛ , նաւապետուհի ։

—Եւ նաւահանգիստն հասնելու համար ո՞րքան ժամանակ պէտք է . . .

—Ա.ւտուածո՜յ իմ, շատ շատ . . .

Եթէ համարձակէր՝ քառորդ մը պիտի ըսէր . բայց չհամարձակեցաւ ։

—Ըսել է թէ , շարունակեց միս էլֆիս , տակաւին 2-3 ժամ ժամանակ ունինք . . .

—Ո՛հ , ի՛նչ կ՚ըսէք . . .

—Մի՛ մտնդէք , ապա թէ ոչ պիտի կարծեմ թէ գիշերն ալ նաւը պիտի անցնենք . . .

Ա.մերիկացին գլուխը ծռեց ։

—Բայց հոդ չէ , շարունակեց միս Փլարի ։ Ա՛լ այս խօսքը չ՚ընենք ։ Եւ ընդհակառակն այս ժամերուն եր-

կայնութիւնը չ՚զգալու համար՝ յոյս ձեր վրայ դրած եմ . . .

—Կ՚ուզէ՞ք որ կոկորդիլոսի կաթսայները պայթեցնեմ ։

—Ա.մենեւին ։ Մի մոռնաք որ կոկորդիլոս իմն է և դուք ձեր կեանքովը պատասխանատու էք անոր համար ։ Միայն թէ , օրովհետեւ կը դուշակեմ որ երբ միանգամ ցամաք ելլենք խօսակցելու ժամանակ չպիտի գտնենք , կ՚ազաչեմ որ հիմայ պատմէք ինձ ձեր արկածին վախճանը . . .

—Ի՞նչպէս , կը հաւանի՞ք . . .

—Կը պահանջեմ՝ որ , նաւապե՛տ , դուք և Տիկին Վ.արթօն մեզի հետ ընթրելու գաք , և հոն մեր արշաւանաց յաջողութեան համար գինի խմելով՝ պիտի պատմէք ինձ թէ ի՛նչպէս ամուսնացաք . . .

Շիտակը միս էլֆիս շատ անուշ բնաւորութիւն ունէր ։

Քառորդ մը վերջը , երբ կոկորդիլոս կը մօտենար Ալճէրիական ցամաքին որ —հակառակ նորա ճգանց և խոստմանց— կարծես իւր առջեւէն խոյս կուտար Վիրջիլիոսի յաւերժահարսին պէս , Վարթօն իւր զուարթութիւնը վերստին գտնելով , հետեւեալ կերպիւ կը շարունակէր ընդհատեալ պատմութիւնը ։

«Պատմութիւննիս ձեզ այն տեղը որ , ըսաւ , անցնելով երկու խեղճ բարեկամաց դիակներուն վրայէն , որք դրան առջեւ խոչնդոտ մը կը ձեւացնէին , դուրս պիտի նետուէի . . .

«Դուռը կռնակի վրայ բաց էր ։ Ուստի այս բանը դիւրին կ՚երեւնար ։

«Բայց այն վայրկեանին որ դլուխս դուրս հանեցի... բաւ՜ղ, տեսակ մը սոյլ լսեցի և նետ մ՚ևկաւ դրան չրջանակին մխուեցաւ ճիշդ դլխուս բարձրութեամբ...

«Բնականաբար ընկրկեցայ։ Խեղճ Ծիբի վրայ ինկայ։

«Ի՞նչ ընելու էր հիմայ։ Ա՛յն նետն ո՞ւսկից կուդար... Ինձի՞ ուղղուած էր... կամ թէ արդեօք դիպուածա՞ւ այսքան մօտէս անցեր էր...

«Փոխանակ դլուխս յառաջացնելու, խոհեմութեամբ ձեռքս ծակէն դուրս հանեցի... Բաւ՜ղ. ուրիշ նետ մ՚անցաւ ճիշդ մատերուս մէջտեղէն, զորս բարեբաղդաբար բացեր էի... այս անգամ ալ չվիրաւորուեցայ։

«Բայց այսու հանդերձ կացութիւնս յոյժ վտանգաւոր էր։

«Յայտնի էր որ դիս մօտէն կը լրտեսէին, և փորձառութիւնս կը հասկցնէր ինձ թէ այս նետերն, որոց ծայրը կարմրորակ դոյն մ՚ունէր, թունաւորեալ էին։

«Խոստովանեցէք թէ այս կացութիւնը շատ ախորժելի չէր։

«Եթէ խրճիթին մէջ կենայի, անշուշտ պիտի բռնէին դիս ինչպէս նապաստակ մ՚իւր որջին մէջ։

«Եթէ դուրս ելլէի, ձի մը սպաննելու հարկ եղած քանակութեամբ թոյն պիտի ընդունէի մարմնոյս մէկ կողմը։

«Կը խոստովանիմ թէ շատ անորոշ վիճակի մէջ էի, երբ միտքս բան մը եկաւ։

«Խրճիթը բաւական հաստատուն չինուած էր և տանիքը կը ձեւանար իրարու մէջ անցած հնդկեղեգի ցօղուններէ, որք բաւական ամուր էին։ բայց յայտնի դարմանալի մտահաճութեամբ մը, խրճիթին ճակատէն

և միւս երկք կողմերուն եղերքի տախտակները ձեղուներէն առելի բարձր ձգելով՝ տեսակ մը քիւ չինած էինք, որով մատուկի նման բան մը կը ձեւանար։

«Ա՛յս բանը յիշեցի և ինքնիրենս ըսի որ եթէ կարենամ հոն ելլել՝ կը պահպանիմ, և թերեւս հնդիկները —վասն զի թշնամեացս ո՛վ ըլլալուն վրայ բնաւ տարակոյս չունէի— իրենց ճամբայն ալիսի չարունակեն եթէ ոչ առանց զիս բնաւելու, գէթ առանց տեսնելու։

«Ա՛յս բանը մտածելուս պէս՝ փութացի դուռը գոցել։ Նիպերն ամուր կերպիւ գնելէ յետոյ, նախ դիղեցի ինչ որ կրնար նոցա արշաւանաց արդելք ըլլալ։ Ասանկով դլխաւոր նպատակս էր հնդիկները խրճիթին մէջ բերել՝ կը յուսայի որ անոնք սենեկին մէջ եղածները կողոպտելու զբաղած ատեննին՝ փախչելու միջոց մը կը գտնէի։

«Ա՛հ, այն ատեն ո՛րքան կը ցաւէի օձը մեռցնելուս։

«Եթէ հնդիկները դուռս կոտրելով այս անակնկալ ասպնջականին հետ դէմ առ դէմ պտնուէին, հաւանականաբար երկար ատեն պիտի աղատէի իրենցմէ։ Ա՛յս բանն ալ մեծ հաճոյք պիտի պատճառէր ինձ, վասն զի այն ատենները տակաւին քաղաքակրթութեան հասած չէին, և մեր սովորութեանց բոլորովին անհամաձայն բարքեր ունէին, ինչպէս որ հիմայ պիտի տեսնէք։

«Դուռը փակելէս յետոյ, բացի այն տեսակ մը լուսամուտը, զոր թողած էինք տանիքին վրայ, և հրացանս ուսէս կախելով, ատրճանակներս ու դանակս մէջքս անցընելով, դաստակներուս դիմովը վեր ելայ։

«Ամբողջ պաղաբիւնութիւնս գտեր էի։

«Մէկ վայրկեանի մէջ տանիքին վրայ էի։ Եւ արդարեւ ծածկուելու համար այս տեղը շատ յարմար էր։

«Լուսամուտը դոցելով՝ փորի վրայ պառկեցայ և չանացի ձողերուն միջտեղէն նայելով թշնամիս տեսնել...

«Ոտքէս մինչեւ գլուխս սարսուռ։

«Թշնամին ամենայոռի տեսակէն Հնդիկներու ամբողջ ջոկ մ՚էր։

«Անոնք առաջին անգամ էինք գրեթէ բարեկամական յարաբերութեանց մտնել Սիուներուն, Շիբբեվայներուն, Սաքերուն, Աղուէսներուն և ուրիշ շատերուն հետ. իրարու հետ ընծայներ կը փոխանակէինք և ընդհանրապէս մենք շահաւոր կ՚ելլէինք։

«Բայց առանք ամենէն գարշելի ցեղէն էին... Արիքարաներէն։

«Արիքարաները, որք բիրտ էակներ էին և սոսկալի առելութիւն մը կը տածէին սպիտակամարմիններուն նկատմամբ, ծանօթ էին իրենց վայրենութեամբն, և չէի կրնար սխալիլ, գլխազարդերնուն վրայ անկուած կապոյտ փետուրները նոցա ցեղին որոշիչ նշանն էին, իբրեւ առեալ մէջքերնուն կախուած բազմաթիւ մազերը։

«Այցելուները սոսկալի կերպիւ մարմնանկուած, աղեղներով, նետերով, մեծ մասն ալ հրացէններով զինեալ, բնաւ ապահովիչ չէին։

«Ցիսուն հոգիէ աւելի էին. բայց յաստէ անոնց ետին քիչ հեռու ուրիշ գունդ մը կար, որ ուշա գըբաւեց...

Վարձն այստեղ պարտաւորեցաւ վայրկեան մը լռել։

Ակլայլութենէն կը խեզդուէր։ Ո՛վ սէր, սէր։

—Աւա՜ղ նաւապետուհի, ըսաւ հառաչելով, Արիքարաները երկու դժբաղդ Սիու բռնած էին. մին Թու-Սամ-Պան էր. միւսն ալ, անշուշտ դուշակեցիք, Մարդածագիկն էր, որ այն առեն Թու-Սամ-Պաի կինն էր...

«Ձեմ ուզեր նկարագրել թէ յանկարծ ինչ տպաւորութիւն մը ղգացի։

«Իրաւ է որ այս գերիները ազատելու յիմարական յաւակնութիւնը չէի կրնար ունենալ... և սակայն երբ մտածեցի թէ Արիքարաները սովորութիւն ունէին իրենց գերիները չարչրելու, կենդանւոյն այրելու... մանաւանդ ամենէն համեղ կտորներն ուտելու... այն առեն նոր զօրութիւն մը ղգացի վրայս... Ո՛չ, չպիտի թողուի որ սանսկ ոճիր մը գործուի։

«Իսկ նա՛, Մարդածագիկն, հեղ և համբերատար ըլլն, ամենաւաբար կը քալէր և սեգ նայուածքներ կը նետէր իր առջին... արդարեւ ինձ այնպէս կը թուէր թէ նա, առանց զիս տեսնելու, զիս կը բնտռէր...

«Պէտք է ըսեմ նաեւ թէ Թու-Սամ-Պա ինծի չափ քաջասիրտ չէր երեւնար... որու պատճառն ալ սա է որ, գերուհիք ընդհանրապէս իբր գերի կը գործածուէին... մինչդեռ պատերազմիկներ... արդէն ըսի ձեզ թէ ինչ վիճակ վերապահուած էր իրենց։

«Ուստի հաստատապէս որոշեցի պաշտպանել և փրկել այն կինը, որու անունը չէի գիտեր տակաւին։ Ինչ չանթի հարուած։ Ան սեգ հասակն, այն վեհաշուք դէրքը, ամէն ինչ զիս յափշտակեր էր, այո՛, գուշակեր էի թէ նա իմ կենացս հրեշտակը պիտի ըլլար...

Մարգած ազիկն որ Մխենի Վարթօն եղած էր, ի զուր կը ջանար քաղցրաբարբառ Վարթօնի բանաստեղծական խանդը չափաւորել, չէր կրնար յաջողիլ։

Մայր Գարաման այս հսկայական հրեշտակին նայելով՝ բթին տակէն կը խնդար։

Բայց մին Փլարի աւելի ծանր կը կենար և իւր լըրջամիտները կը պահէր։ Ուստի ամենահանդարտ ձայնիւ բան նաւապետին։

—Կը հասկնամ բսածնիդ, նաւապե՛տ։ Շարունակեցէ՛ք...

Վարթօն պահ մը մտախոհ մնացեր էր։ Յետոյ։

—Ա՛յժմ Աբիւքարանները իրենց հսկողութիւնները կը շրջապատէին և իրենց ազատական շարժումներովը խեղդ անիծելու հաստատ դիտաւորութիւնները կը յայտնէին...

«Ես անվրդով կեցայ և գործին ելքին կ'ապասէի։

«Միայն թէ, աչքս ու ականջս անկած, մնաց հրացանիս բլթակին վրայ՝ պատրաստ կը կենայի։ Որոշեր էի եթէ ոչ յաղթել, գոնէ կեանքս սուղ ծախել։

«Սակայն վայրենիները —վասն զի զաւռնք կրնանք վայրենի կոչել՝ առանց վանալու որ կը սխալինք— վայրենիները իրենց շուրջը կը դառնային և կը վարանէին նեղս մտնել։ Ոմանք արդէն զլուխնին դէպի տանելքը վերցուցեր էին, յետոյ կոկորդային ձայնով մը դիտողութիւններ կ'ընէին իրարու, զոր չէի կրնար հասկընալ, վասն զի Աբիւքարաներու լեզուին բոլորովին անտեղեակ էի։

«Վերջապէս դրան առջեւ խմբուեր էին, և ամենէն համարձակները սկսան կացինի հարուածներ իջեցնել դրան։

«Մեր խեղճ իրթիթը շատ հաստատուն հիմանց վրայ չհնուած չէր, և բաղխիւնները այնքան զօրով կը խախտէին զայն որ, կը վախնայի թէ մի՛ դուցէ փլի և ես ալ վերատակներուն տակ ճնամ։

«Բաց յոտսի դէմս դալիքն այս երկիւղներս կըրնար արդարացնել։

«Ճանկարծ սոսկալի աղաղակներ լսեցի։ —կենացս մէջ երբեք անանկ ազմուկ լսած չեմ... չիտակն ըսելով վայրի կենդանեաց մռնչիւններու, բուէ զարերու նման բան մ'էր այն, տեսակ մը խառն աղաղակ, որու մէջ կը դոնուէին ամէն վայրագ և սրտակեղեք խաղեր։

«Աբիւքարանները օրմանէրպէն ներս մտնելով՝ դէմ առ դէմ գտնուեր էին երկու դիակի հետ, մնաւանդ —վերջէն խմացայ— իրենց սոսկումը բարձրագոյն աստիճանի հասցնողը օձին գլխատեալ մարմինն եղած էր...

«Այս կենդանիները —Հնդիկներուն համար կ'ըսեմ— զանգակաւոր օձին նկատմամբ տեսակ մը սնապաշտական յարգանք կը տածեն։ Անոնց կախարդներն այս սոսկալի կենդանեաց միջոցաւ կախարդութիւններ կ'ընեն։ Այս բանն անհասկանալի է. բայց ատանկ է... Ինչպէս որ երկու մարդկային դիակի և օձի մը գլխատեալ մարմնոյն մէկ տեղի մէջ գտնուիլն արդէն առասպելի մը նիւթ կը մատակարարէր իրենց...

«—Երկու ճերմակներն օձը սպաննած ըլլալով, մեծն Մանիթու զանոնք մեռցուցեր էր։

«Ըսել է մեծն Մանիթու այն տեղէն անցեր էր։

«Ուրեմն սոսկալի տեղ մ'էր այն, ուր իջած էր

Ամենաարարձրելոյն ցասումն։

Վարթօն տեսնելով որ միս Քլարի կը խնդայ՝ խօսքն ընդմիջեց և լուրջ ձայնով մ՚ըսաւ.

—Ա՛յսու հանդերձ մենք ալ անոնցմէ վար չենք մնար, մեր կրօնքին՝մէջ ալ սոսկ առասպելներ չկա՞ն։

Ա՛յս սկեպտիկեան խորհրդածութիւնը թեթեւ ցրտութիւն մը յառաջ բերաւ։ Սակայն մայր Քարաման աչքը քթթեց և փոքր ինչ հաստատական նայուածք մ՚արձակեց դէպի նաւապետը, որ ըսածը չատ պարզ բան մը համարելով՝ չայլայլեցաւ ու յարեց.

—Պէտք է խոստովանիմ որ, պահ մը կարծեցի թէ այս մտացածին մեկնութիւնը դիս պիտի փրկէ. —այն ատեղը անիծեալ էր, չանթահարեալ էր.— ուստի ուրիշ բան չէր ճար ընել, բայց եթէ առնել քալել։

«Եւ կ՚երդնում՝ որ եթէ յարդանօք եւս քաշուելնին տեսնէի, շատ ուրախ պիտի ըլլայի...

«Բայց բնա՛ւ...

«Նորէն սկսան կռնչել, մռնչել, իրարու խորհուրդ հարցնել...

«Ա՛յս միջոցին Թու-Սամբա կարծես եւս քան զնւս կը վհատէր։ Մինչդեռ ընդհակառակն Մարդածաղիկն երթալով կը դեղեցկանար...։ Ո՛չ, չէք կրնար հասկընալ։ Հիմայ քիչ մը պառուած է. բայց այն տեսն ի՛նչ դեղեցիկ կին էր։

—Շարունակեցէ՛ք, նաւապե՛տ, շարունակեցէ՛ք, ըսաւ միս Էլֆիս մեղմիւ։

—Յանկարծ Արիքարանեըէն մին, որուն գլխուն վրայ երկու կարգ կանաչ փետուրներ կային և դէմքը սոսկալի կերպիւ մարմանդկարուած էր, զամենքը լռեցուց և սուղ կերպիւ —բանակի մը հրամայող զօրապետի մը պէս— հրամաններ տուաւ...

«Ի՞նչ էր տուած հրամանը. ոսկւոյ ձոյլս կռւտայի զայն գիտնալու համար։

«Վասն զի մռոցայ ձեզ ըսելու որ ձոյլս ալ հետս առեր էի...

«Իմ գաղափարս այն է որ մարդ, ամենէն ծանրակչիռ պարագայից մէջ իսկ, իւր չահերը մռնալու չէ։

«Բայց մի՛ վախնաք, զայն անոնց չէի տար. մանաւանդ որ այս բանն ընելու համար հարկ էր երեւան ելլել, և այս բանին գաղափարն իսկ դիս կը սոսկացնէր։

«Ուստի նոցա չարժմանց և ոչ մին աչքէ կը կորսընցընէի, և որոշած էի անպատճառ հարկ եղած ատեն միայն երեւան ելլել...

«Զոր մացառներ առած վերադարձան, յետոյ տեսայ որ խրճիթը մռան։ Երբ դուրս ելան՝ ձեռքերնին պարապ էր։

«Գիտե՛ք այս ապուշ գլուխներն ի՞նչ դժոխային գաղափար յղացեր էին։

«Ա՛յս տեղը զանգակաւոր օձի մ՚սպանութեամբը պղծուեր էր. հարկ էր քաւութեան արարողութիւն մը կատարել։ Եւ հաւանականաբար գիտնալով այն հինակտարել։ Եւ հաւանականաբար գիտնալով այն հինաւուրց առածը որ կ՚ըսէ թէ՝ «կրակը ամէն բան կը մաքրէ» —Մանիթուի ցասումն ամոքելու համար խրճիթը կրակի տալէ ուրիշ անմիջական միջոց չէին գտած...

«Զարմանալի է որ ի սկզբան չի հասկցայ։ Երբ այսպէս հեռուէն մտածես, այնպէս կը թուի թէ մարդ ապուշ ըլլալու է որ նոցա ընելիքը չհասկնայ։ Եւ սակայն ճշմարտութիւնը սա է որ հարիւրաւոր այլեւայլ բաներ

երեւակայեցի, և բուն ճշմարտութիւնը երբեք միտքս չեկաւ...

«Եւ տանիքին վրայ հրացանս պատրաստ կ'սպասէի։

«Երկար ատեն չսպասեցի...

«Ընդհուպ տաթօրինակ հոտ մը քիթս խտղտեցուց։ Ա.յս հոտն իմ երկրիս կասկառայի վրայ եփած ոչխարի կոլիկները կը յիշեցնէր ինձ։ Եւ որովհետեւ չատոնց էր որ բան չէի կերած, հետեւաբար այդ հոտը բոլորովին անախորժ չեկաւ։

«Բայց ի՛նչ եղայ երբ գործին էութիւնն հասկցայ. տակաւին գլխէս վար տաք տաք չերը կ'իջնէին։

«Ճանկարծ ամէն կողմնէ ահւ, յարձանապատոյտ և կծու ծուխ մը դիս շրջապատեց...

«Աչքերս, ռնգունքս, կոկորդս լեցուեցան...

«Ուզեցի ելլել, աղաղակել. անկարելի էր. յարձակումն այնքան անակնկալ եղած էր որ, գրեթէ կը խեղդուէի։ Ապա բոցերն սկսան հնդկկղեցայ տանիքին ճեղքերէն դուրս ելլել և հետզհետէ մեծնալ... կռինչներ, ճաքճատումներ լսեցի...

«Հիմայ կասկառային վրայ ես էի...

«Քանի մը վայրկեանի մէջ բոցերը շրջապատեցին դիս։

«Ա.յս անգամ ուզեցի ոտք ելլել, օգնութիւն կոչել, և Աբիքաբանները, մարդակերները, ամէն բան մոռնալով, միայն անմիջական վտանգը յիշեցի։

«Միայն թէ այս յուսահատական և դիւցազնական որոշումն ըրած ատենս երկու դէպք տեղի ունեցան։

«Հրացանիս փողը բոցերէն տաքնալով՝ պայթեցաւ...

«Կուշտիս վրայ ուժով հարուածէ մը բաղխիւն զգացի, յետոյ ոտքս, ըրը յատակ ընտեր էի տանիքին վրայ կանգնելու համար, պարապը կոխեցի, գլոտրեցայ և ինկայ...

«Ո՛ւր ինկայ. զայդ ճշդիւ չեմ կրնար ըսել.

«Բայց կերեւի թէ վառարանին ճիշդ մէջտեղն ինկեր եմ...

«Աբիքաբանները և սկզբան քիթերնին բերաննին ծամածռելով և գալարումներ ընելով՝ հոս քաշուեր էին։

«Կը կարծէին թէ սատանայն բոցերէն դուրս կ'ելլէր... թէեւ ելլելն ու իյնալը շատ տարբեր բաներ են։

«Շէնք շնորհք խորովուելու վրայ էի, երբ գլխաւորը, որ միաներուն չափ ոխմար չէր —ինչ որ բանչ չէ թէ խելացի էր— յանկարծ նշմարեց որ ևկողն սպիտակամորթ մ'էր...

«Նորէն սկսաւ կռնչել...,

«Չիս կրակէն քաշեցին ո՛րը գլխէս, ո՛րը մազերէս ... որք այն ատեն շատ խիտ էին...

«Եւ մինչդեռ խեղճ խրճիթը կ'այրեր —այրելով և փուչի ընելով թշուառ ընկերացս դիակներն, —Աբիքաբանները վերստին խմբուեցան և դիս առնելով՝ դժոխայրին արշաւանօք սկսան վազել.

«Ես այս բաներէն տեղեկութիւն չունիմ... վասն զի բան մը չի տեսայ... բան մը չդգացի։

«Միայն սա կը յիշեմ որ ուղեղս, չափազանց օդի խըղճ մարդու մը ուղեղին պէս, կը դառնար... այն տոկալի արշաւանքը կ'դժայի... բայց կը կարծէի թէ աղբէն մեռած եմ և սատանայն կը տանի դիս...

«Թէեւ թերեւս ինձ համար աւելի աղէկ էր՝ եթէ այնպէս եղած ըլլար,

—Ո՛հ, Թօ՛մ, ընդմիջեց Մարգածաղիկն, որ Մինոի վարթօն ալ կը կոչուէր։

—Ձշմարիտ է, անիրաւ եմ, յարեց նաւապետն ա-նուշութեամբ։ Վասն զի կենացս երջանկութիւնն այն օրէն կ՛սկսի...

—Ներեցէ՛ք, բաւ միս Քլարի, արդեօք տակաւին Պօն չհասա՞նք։

Վարթօն անկեղծ խօսք մ՛ըրաւ։

—Մի՛ վախնաք. տակաւին առ նուազն երկու ժամու ճամբայ ունինք։

Քլարի ժպտեցաւ, մինչդեռ վարթօն, իր ակամայ անկեղծութիւնը քիչ մը ուշ նշմարելով, շրթունքը կը խածնէր։

—Շարունակեցէ՛ք, յարեց դարձեալ նորատի աղջիկը։

Վարթօն, յիշելով թերեւս ճարպիկ Շէհէրազատը, որ պատմութիւններ պատմելով իր տանջանաց ժամն կ՛ուշացնէր, փութաց հնազանդիլ։

—Խոր թմրութեան մը մէջ ինկած էի, բաւ...

«Երբ ինքզինքիս եկայ, խոր գիշեր էր...

«Ուժով կապուած՝ գետինը տարածուած էի և չէի կրնար ոտքերս կամ ձեռքերս շարժել։

«Սոսկալի ծուխ մը հանելով վառող ռետինի ճիւղերու լուսով կը տեսնէի Ափրիքարանները, որք լրջօրէն նստեր էին բոլորակի —գլխաւորները մէջտեղերնին— և լաւ աւուրչէք մը չհասող դործաւորներու նման հանդարտօրէն կը ծխէին։

«Ինձմէ քանի մը քայլ հեռուն Թու-Սամ-Պաճողի մը կապուած էր։

«Իսկ Մարգածաղիկն, առանց կապուած ըլլալու, անոր քով գետինը պառկած էր։

«Ամէն բանէ առաջ անօթութիւն զգացի։ Ինչալէս վեր ո՛րքան ժամանակ անցեր էր։ Չէի գիտեր։ Սակայն երբ գաղափարներս կրցի ամփոփել, ինքնիրենս ըսի որ արեւուն ծագելէն քիչ մը վերջը վրաս յարձակեր էին, և թէ, քանի որ այժմ գիշեր էր, ըսել է առնուազն տասներկու ժամէ ի վեր թշնամեացս ձեռքն էի։

«Այսու հանդերձ ինձ այնպէս թուեցաւ թէ գիս ուզելնին չատ փոյթ չէին ըներ։

«Ծանրութեամբ կը խօսակցէին։ Անոնցմէ մին, տեսակ մը ահագին կմախք, ոտքի ելեր էր և իր նիհար բազուկները յերկինս կը բարձրացնէր, գոգցես ուզելով աստղաց պաղատիլ։

«Բոլոր այս բաներուն կը խառնուէին անանկ բացագանչութիւններ և ղօշանչիւններ, որք ինձ համար երբայեցերէն էին։

«Օ՛ն, ըսի ինքնիրենս, բան մը վտանգի չի դնողը բան մ՛ալ չունենար։

«Եւ ստամբաս յօշոտող սոսկալի անօթութենէն մըղեալ, Անկլիերէն լեզուաւ գոչեցի,

«—Ինձ նայեցէ՛ք, ընկերք, գիս անօթի մեռցնե՞լ կ՛ուզէք...

«Կը խոստովանիմ որ ըրածս անխոհեմութիւն էր։ Բայց գտնուած վիճակէս աւելի յուսի բան մը կրնար ըլլալ։ Բայց աւա՜ղ, կրնայ ըլլալ եղեր։

«Գլխաւորներէն երկուքը ձայնս լսելով ոտք ելան, և ձեռքերնին կուրծքերնուն վրայ ծալած առ իս մօտենալով՝ ի սկզբան ուշի ուշով գիս դիտեցին։

«Ձեռդ անոնցմէ մին, ծնօտը գարշելի կերպիւ շարժելով, իբրու թէ Անկլիներէնն իրենց անիծեալ լեզուէն աւելի դժուար բլլալը արտասանել, բսաւ ինձ.

«—Դեղնամ մարդ, ի՛նչ կ՚ուզես։

«—Ի՞նչ պիտի ուզեմ, ուտելիք կուզեմ։ Ինչո՞ւ դիս կապեր էք. ես ձեզի ի՞նչ գէշութիւն ըրի։

«—Դու մեր ցեղին թշնամին ես...

«—Ե՛ս։ Ա՜հ, Տէր ողորմա՛. կ՚երդնում որ կը սխալիք։

«—Նուիրական օձը դու սպաննեցիր...

«—Նուիրական օձը՛։ Հապա ի՛նչ ընէի... Թողուի որ ա՞ն դիս սպաննէ։

«Իրաւ է որ տրամաբանութիւնս անժխտելի էր։ Բայց այն մարդիկը փիլիսոփայ չէին։ Եւ երբ անկեղծօրէն ու մանկին կերպիւ այս խաստովանութիւնն ըրի, կատաղութեան աղաղակներ օդը թնդացուցին։

«—Սպաննեցիր, դուշց գլխաւորներէն մին՝ կուռվը դէմքիս դնելով։ Սպաննեցիր...

«—Ներեցէ՛ք, բայց ես ալ ձեզի պէս մարդ եմ. ես ալ ձեր նըմանն եմ...

«—Դեղին մարդն ու կարմիր մարդը մի եւ նոյն արմատէ ծնած չեն...

«—Ա՜յդ խնդիր մ՚է տակաւին. Նիւ-Եօրքի մէջ հըմուտ մարդիկ կան, որ ատոր վրայ կը վիճին...

«Կը տեսնէք որ վերստին համարձակութիւնս կ՚ըսկսէի ձեռք առնուլ։ Ինքնիրենս կ՚ըսէի որ այս վայրենիները կենդանեաց պէս են, և թէ զանոնք նուաճելու համար բաւ է անոնցմէ չվախնալ։

«Սակայն երկու գլխաւորները իրենց մարդոցը մօտեցեր էին և նորէն ամէնքը մէկ բերան կը խօսին։ Ա՜յս վիճաբանութիւնը ամենեւին մտերմական չէր երեւնար իմ մասիս, և շատ անգամ հատաղիներէն ոմանք խումբէն զատուեցան և առ իս գալու վրայ չարժեցին իրենց բերը, որ poisonալ կը կոչուի։

«Բայց չէին զարներ, և չէի գիտեր թէ ատոր պատճառը ի՞նչ մանաւոր չնորհ մ՚էր։

«Գլխաւորներէն մին սկսաւ խօսիլ։ Միւսներն ուշադրութեամբ մտիկ կ՚ընէին։

«Դիտե՞ք թշուառականն ի՛նչ կը բացատրէր անոնց։

«Իր վայրի և այլաբանական լեզուաւ կը պնդէր թէ պատերազմու ճամբուն մէջ քաջութեամբ յառաջացած ըլլալով՝ բացառիկ վարձատրութեան մը իրաւունք ուներ։

«Շատերը այս բանիս կը դիմադրէին։ Կ՚երեւի որ ուրիշ գլխաւոր մ՚ալ ո՛չ նուազ իրաւունք ունէր ազգային վարձատրութեան մը. գլխաւորապար երկք օր առաջ Սիուներու խումբի մը վրայ հնկեր, տասկալի կերպիւ յաղթեր էին, և այս յաղթութեան նշանակ էին այն թարմ մազերը, զորս յիշեցի, և այն երկու գերիները, որոց մին էր Մարգածաղիկն։

«Ա՛նքան այժգին կը վիճէին որ, մարդ հնդկինքը վերհաժողովի մը մէջ կը կարծէր։ Փիչ ծնաց որ զերար պիտի ուտէին, հնչ որ կրնաք հասկնալ թէ յոյժ անախորժ չպիտի բլլար հնձ...

«Բայց բաղդս չբանեցաւ։ Նոքա չէ թէ միայն ամենքըն ալ կենդանի ծնացին, այլ և համաձայնեցան, և վեճի առարկայ եղող կէտը պարզուեցաւ...

«Մարդ գիտե՞ք այդ կէտն ի՛նչ էր. տակաւին վրայս դող կուգայ։

«Մազե՛րս էին. գլխուս մո՛րմոն էր։

«Կերեւի թէ շատ յարգի կտոր մ՚էր այս և Աբիքարանեանս մնապարծութիւնը կը գրգռէր։

«Եւ մազերս ու գանգիս մորթը —կարծես աճուրդի մը մէջ էինք— թողուեցան այն անիծեալ գլխաւորին, որ ուրախութենէն կը պարէր...

«Եւ ես չէի հասկնար։ Ա՛հ, իրաւ է որ մարմինս վէրքերով և պրուաժքներով ծածկուած էր, սոսկալի հնոցի մը մէջ ինկեր էի, սրբած հին խրճիթի մը պէս փլփլած վիճակի մէջ էի... բայց եթէ դիտնայի թէ խնդիրն ի՛նչ բանի վրայ է, կ՚երդնում՝ որ ինքզինքս շան մը պէս ապաննել կուտայի...

«Բայց ի՞նչ կրնաս ընել՝ երբ լեզու մը չես հասկնար։ Ինքնիրենս կ՚ըսէի որ գիս պիտի լսէին, թերեւս իսկ տանջէին... Բայց այս ահռելի բանը ո՛րքան հեռու էր մտքէս...

«Նորէն սկսան հանդարտութեամբ ծխել, նման այն օրէնսդիրներուն, որ հասարակաց բարւոյն օգտակար վճիռ մ՚արձակած են։ Կարծես գիս չէին խորհեր։ Նոցա վառած կրակին լուսոյն երեսնց ստուերագիծերը կը տեսնէի...

«Եւ խե՛ղճ անմեղս, տեսակ մը քնէածութեան և թմրութեան անձնատուր կ՚ըլլայի։ Ո՛հ, ի՛նչ չէի տար, որպէս զի կարենամ հանգչիլ, քնանալ։

«Սակայն դիշերն երթալով կը մթնար...

«Ցանկացած լինէ այնպէս եկաւ որ քովս բան մը կը սողար. ըսի ձեղ որ ամրապէս կապուած էի և ամենափոքր շարժում մ՚իսկ ընելն անկարելի էր լինէ համար։

«Սակայն զանգակաւոր օձին գարշելի յիշատակն այնքան տոգորուած էր մտքիս մէջ որ, ետ քաշուելու համար գալարուեցայ։ Բայց ձեռք մը գպաւ դէմքիս։ Նայեցայ...

«Ո՛չ, օձ մը չէր. ո՛չ, թունաւոր կենդանի մը չէր։

«Մարգածաղիկն էր։

«Ի՛նչպէս կրցեր էր մինչեւ իմ քովս սողալ առանց մարդակերներուն ուշը գրաւելու, որք քանի մը քայլ անդին մոահոհ և անշարժ կը կենային. տակաւին ցայսօր խելքս չհասնիր այս բանին։

«Կրակարանին հեռաւոր լուսովը ճանչցայ զայն։ Աչացս մէջ կը նայէր և իւր չրթանց վրայ անո՛ւշ, անո՛ւշ ժպիտ մը կը թրթռար։

«Ամէն մարդու պէս ես ալ տղայութեանս առեն յաւերժահարսներու պատմութիւններով օրօրուած էի։ Անմիջապէս այն խորհրդաւոր պաշտպանուհիներէն մին կարծեցի...

«Նշան ըրաւ որ չշարժիմ։ Ցետոյ ձեռքն երկնցուց ինձ, որու մատանց մէջ տեսայ փոքրիկ կեռասի մը նմանող կարմիր պտուղ մը։ Զայն իւր չրթանց վրայ դրաւ և արտայայտիչ նշանով մը հասկցուց որ այն պտուղն ուտելու էի։

«Երկրապունդն իսկ կուլ կուտայէ դեղհատի մը պէս, եթէ Մարգածաղիկն հրամցներ զայն ինձ։

«Զմարանեցայ, բնթանս բացի, և նորա սիրեցեալ ձեռքն այն գնուիկն ակռաներուս մէջ դրաւ։ Ցետոյ ըսի, մարդ չմնաց. աւելի եւս չուտով անհրեւութացաւ։

«Հինգ վայրկեան վերջը կ'ղդայի որ ուղեղս կը դառնայ, թանձր ամպ մը աչերս կը ծածկէր։ Շիտակին բանալով ես ալ խորունկ մը քնացայ.

«Ա՜հ, գիտեմ որ բժիշկները կան, որք եթերն ու քլորոֆորմը կը գովեն, և կ'ըսեն թէ այս դեղագործական նիւթերով հիւանդն կ'անզգայացնեն...

«Լա՜ւ, հիմայ նայեցէ՛ք, նաւապետուհի... երբ աչերս բացի. առանց բան մը տեսնելու, առանց բան մը լսելու, առանց բան մը զգալու... դանդաղերծուած էի։

«Այո՛, դանդաղերծուած. այն չարաճճին, որ մանչերս խնդրեր էր իւր հայրենակիցներէն, իւր աշխուժականութեան արտօնագիրն առեր էր, այն է գանգիս մորթին հանդերձ իւր մասերովը։

«Ի սկզբան այս բանը չնշմարեցի։ Շուրջս մութը կը պատէր, տարօրինակ զովութիւն մը գանգս կը սառեցնէր։ Բնազդաբար ձեռքս գլխուս տարի և ծառի տերեւներէ, մամուռներէ, բաղեղի կապերէ չինուած ահագին պատան մը գտայ։

«Ցիշողութիւնս ամլիսի չէր։ Եւ կարծեցի թէ դէպ խուս վրայ վէրք մ'առեր էի, որ գիտասիրտ թշնամիներս խնամեր էին։ Եւ ի խորոց սրտի չնորհակալ եղայ թշուառականներուն։

«Մարմինս կ'այրեր, տենդի մէջ էի։ Գլուխս ծանր էր... և մանաւանդ շարունակ կ'զգայի այն սառնային ազդեցութիւնն, որ գրեթէ կսկծիչ էր։

«Ո՞ւր էի։ Բան մը չէի տեսներ։

«Անշուշտ տեղս փոխեր էին։ Քնացած առենս երկ՛ նային կամարը կը տեսնէի գլխուս վրայ, և առտեղ

նորա մութ կապուտին վրայ կը փայլէին։

«Հիմայ ամէն բան մութ էր... ամէն կողմ։

«Այն առեն միայն նչմարեցի որ կապերս քակուած էին. նորէն բաղուկներս երկնցուցի և քարէ պատի մը զարնուեցայ։

«Ի՞նչ ընէի. անշարժ կենայի թէ կոչէի. բայց ասանկով նորէն թշնամեացս ուշը պիտի հրաւիրէի, որք անշուշտ դիս ծակ մը նետեր էին՝ ինէ ազատելս համար...

«Երբ սրունքներս ալ կ'երկնցնէի բանտս քննելու նպատակաւ, յանկարծ ձայն մը... մրմունջ մը... փըսըրտուք մը լսեցի, որու արտասանած բառերն հազիւ կ'իմանայի, և որք չփոթի նշանակութիւն մը միայն ունէին ի սկզբան ինձ համար...

«Կը խօսէին. բայց Արիւբարաեր՞ն էր թէ Սիուերէն։

«Ամենեւին. Անկլիերէն էր, թէ և ոչ շատ մաքուր, այլ խեղ մը միավանկ բառեր, որք դէչ աղեկ դիւրաւ կը բռնէին։

Եւ անոնց նշանակութիւնն էր.

«—Հանդարտ—հիւանդ—վտանգ...

«Ցանկարծ... չեմ կրնար ըսել թէ ի՛նչ զգացի... երբ ճանչցայ որ Մարգածաղկի ձայնն էր։

«Այո՛, իմ պահապան հրեշտակս, իմ յաւերժահարսս վրայս հսկեր էր։

«Բայց ի՞նչ հրաշքով, ի՞նչ սքանչելիօք առանձին էր ինձ հետ ծակի մը մէջ, ուր բան մը չէր տեսնուեր։

«Վերջէն իմացայ որ Մարգածաղիկը մութին մէջ կը տեսնէր կատուներու նման, այնպէս որ դէմքիս վրայ կը կարդար գիս յուզող զգացումները...

«Եւ զարմանքս հասկնալով՝ ըսաւ ինձ.

«—Թու-Սամ-Պա մեռաւ... եփուեցաւ... չկերուեցաւ... վրայ հասան... Արիքարանները փախան...

«Ինականաբար կիսովին միայն կը հասկնայի։ Սակայն ինձ այնպէս կը թուէր որ Թու-Սամ-Պա Մարգածաղիկի ամուսինն ըլլալու էր։ Եւ, ի՛նչ մեղքս պահեմ, հոգիս անհուն ուրախութեամբ մը լեցաւ... Ազա՜տ էր նա...

«—Լուսիէնն բաւ։

«Սողոսկելու նման ձայն մը լսեցի. յետոյ ոչինչ։ Ամէն բան լուռ ու անշարժ էր, և գլուխս միշտ կը մնէր։

«Եւ ուրիշ ցաւ մ'ալ իմ ցաւս ու անհանգստութիւնս կը կրկնապատկէր...

«Սառամբսի խխիները, սոսկալի ճղլուճներ կը սկսէին դիս։

«Ո՛րքան ժամանակէ ի վեր հոն ըլլալս չէի դիտեր։ Բայց յայտնի էր որ վերջին ծայր չաոռնց մարսած ըլլալու էի։

«Բանի մը վայրկեան վերջը վերջին լուսոյ ճառագայթ մը փայլեցաւ. տեսայ որ դիզուած մացառները կը բացուէին, և արշալուսին վարդագոյն նշոյլներովը Մարգածաղիկ անուշ դէմքը նշմարեցի...

«Սա միակ բառն ըսաւ ինձ։

«—Ելլ։

«Եւ երբ դէշ աղէկ բանտես պատերուն կռթնելով հնազանդեցայ ըրեն, յանկարծ զգացի որ ուսերէս բեռ նեցին և տղու մը նման թեթեւութեամբ վերուցին դիս, զոր 128 լիտր կը կշռէի...

«Ի՛նչ կին։ Ի՛նչ այծ։ Ի՛նչ հրեշտակ։

«Մութէն դուրս ելած առենս՝ աչերս քթթեցի։ Հիմայ առաւօտ էր։ Անտառին մէջ բաց տեղ մը կը գըտնէինք՝ քանի մը քայլ հեռու այն տեղէն, ուր առջի իրիկունն Արիքարանները, բոլորակի նստած, խաղաղութեան... կամ պատերազմի ծխախողը քաշելով, այնքան այժգին վիճեր էին իմ մասիս...

«Մարգածաղիկն գալարեաց անկողին մը յարդաբեր էր ինձ և մեղմիւ կ'ատիպէր որ անոր վրայ տարածուիմ. ցեղոյ երկու թեւը կուրծքին վրայ ծալլեց և դէմս կեցաւ...

«Մարդ ո՛րքան ալ անձնասիրութիւն չունենայ... կ'ախորժի որ ուրիշ մը գինքը դիտէ։ Ուստի թողուցէ որ դիտէ։

«Ցանկարծ սա բառը բերնէս փախաւ՝ գոգցես ակամայ։

«—Անօթի եմ, ըսի։

«Մարգածաղիկն թեւերը բացաւ, յետոյ գլխուն տարաւ։ Շատ անձկութեան և մտածման մէջ կ'երեւնար։ Անշուշտ ախորժակս յագեցնելու միջոց մը կը բընտրէր։ Բայց հոն, այն մացառներուն մէջ. պիճիկ մը գտնելու հաւանականութիւն չկար...

«Եւ սակայն։

Վարթօն երբ իւր պատմութեան այս տեղն հասաւ, թեթեւ մը հազաց։ Ցայտնի էր որ ամենէն դժուարին կէտը մնացեր էր պատմելու։ Բայց եթէ պատմութիւնն ընդհատէր, ժամանակ թողած պիտի ըլլար մխ փլաթին նշմարելու որ կոկորդիլոսն յուսահատեցուցիչ կերպիւ յամրընթաց էր։

Մայր Քարաման շատ դժուարութիւն կը կրէր իւր

լըջութիւնը պահելու։ Ամէն անգամ որ Ամերիկացին կը խօսէր այն հրեշտակին, այն հաւերժահարսին վրայ որ առենով Մարգածաղիկ կոչուած էր և այսօր Մինիի վարթօն անուն կը կրէր, այն սոսկալի արարածին կը նայէր, որու կը տրուէին այս անուշ և բանաստեղծական մակդիրները, և հազիւ կրնար խնդալը բռնել։

Աչդ այս վայրկենին Թու-Սամ-Պաի այրին թերեւս մոռացելով որ իւր անձնուիրութեան վերջին ապացոյցները պատմուած առնն կրնայ ըլլալ որ կարմրի, խոհեմութեամբ հեռացեր էր։

Անդամ որ մայր Ռաոիկան, այլեւս չդիմանալով, անկեղծօրէն հարցուց.

—Ցկո՛ն. վարթօն այն առնէն է վեր շատ փոխուած է։

Վարթօն դլխուն հաստատական նշան մ՚ըրաւ։

—Ո՛հ, այո՛, այո՛, ըսաւ եռանդուամբ։ Շատ գեղեցկացած է...

Մայր Ռաոման քիչ մնաց պիտի պայթէր։ Կարմրեցաւ, փոքրիկ ճիչեր արձակեց, ոյք կ՚ապացուցանէին թէ քաղաքավարութեան դէմ չգործելու համար կնոջ մը ղօրութենէն վեր ճիգեր կ՚ընէր, և վերջապէս մէկ ոտտամբ ոտք ելաւ, դէպ ի սենեակը վազեց և քիչ մնաց դուռը պիտի կոտրէր։ Եւ դրան ետեւէն ծիծաղներ, հառաչներ, ճիչեր լսուեցան...

—Ձեր սիրելին խնամածուհին ի՞նչ եղաւ, հարցուց վարթօն հոգածութեամբ։

—Ո՛հ, գրեթէ ոչինչ... ըսաւ Ջլարի, որու քաղաքավարութիւնը սոսկալի փորձի մ՚ենթարկուած էր, երբեմն... ընթրիքէ ետքը... այսպէս հազ կուգայ վրան...

Վարթօն անկեղծօրէն ցաւեցաւ անոր վրայ. յետոյ.

Այսու հանդերձ, միս, ըսաւ, առանձին ըլլալուս դոհ եմ... ձեր հոգւոյն նման ընտիր հոգի մը միայն կրնայ հասկնալ Մինիի մեծութիւնն և այն աննման վեհանձնութիւնը, զոր ցոյց տուաւ ինձ նկատմամբ...

—Իրա՛ւ. շարունակեցէ՛ք... հետաքրքրութեամբ մտիկ կ՚ընեմ...

—Ըսի ձեզ որ անօթութենէս կը մեռնէի... և թէ Մարգածաղիկն կ՚ապաչէի որ ուտելու բան մը դանէ ինձ...

«Աղեխու արարածը կը վարանէր. բայց վերջապէս դիտաց վրայս, հաստատամտութեամբ անտառին մէջ մտաւ և քանի մը վայրկեան վերջը վերադարձաւ՝ իւր ձեռքին ունենալով ծառի տերեւի մը մէջ պլլուած քանի մը կտոր լաւ խորոված և ախորժելի տեսքով միս։

«Վայրկեան մը դիտեց այս յանպատրաստից չինուած խորտիկը, յետոյ հառաչելով զայն ինձ երկնցուց։

«Շնորհակալութիւնս յայտնեցի նշանացի և կտոր մը առի։

«Բայց բերանս տանելու միջոցիս.

«—Դուք ալ կերէ՛ք, ըսի։

«—Ո՛չ, ըսաւ կարմրելով, անօթի չեմ։

«—Կ՚ապաչեմ... ապա թէ ոչ ես ալ չեմ ուտեր։

«Այն առեն հաւանեցաւ ուտել։ Ես ալ կերայ, կը խոստովանիմ թէ ուրիշ կտոր մ՚ալ առի։ Քիչ մը անհամ էր, բայց երբ մարդ շատ անօթի է...

Միայն թէ կը մոռանայէի որ պիֆթէքն ի՛նչ կենդանւոյ միս էր։

«Իրեն հարցուցի. այն առեն մեղմիւ թեթեւակի

դողդողուն ձայնով մը որ վինքն աւելի կը դեղեցկացնէր, ըսաւ.

«—Թու-Սամ-Պա... ամուսինս։ Ա՛յսչափ ծնացեր է։

«Իւր ամուսինը կերե՛ր էի...

«Իւր ամուսինը, զոր Արիքարաններն, իմ գանդիս մորթն հանելէ և մարմինս, իրր սպիտակամորթի միս, մէկ կողմ նետելէ յետոյ, խղճի մտօք խորովեր էին։ Բայց ընթրիքի միջոցին վայրենեաց ուրիշ չոկ մը անոնց վրայ յարձակեր էր։

«Մարգածաղիկն այն խառնաշփոթութեան միջոցին վայրկեան մ'իսկ չէր վատնած։ Ինքը որ շարունակ հսկեր էր վրայս այնպիսի համակրութեամբ մը, որու պատճառը չկրնար հասկնալ մարդ, դիս ուսերուն վրայ առեր, ծակին մէջ պահեր, վերջս դարմաներ ու փրկեր էր... Արդէն իւր տուած քնարեր պատուհին շրնորհիւ գանգաքերծութեան սոսկալի ցաւը չէի զգացած... Փորձառութեան արդիւնք հզոր ճարպիկութեամբ մը գանգս առողջարար խոտերով պատեր... և վերջապէ՛ս վերջապէս աւելի լաւ համարեր էր Թու-Սամ-Պան ինձ զոհել, քան թէ թողուլ որ անօթութենէս մեռնիմ։

«Ճշմարիտ զոհողութիւն մ'էր այս, վերջէն խոստովանեցաւ ինձ թէ ամուսինը շատ սիրած էր...

—Նաւապե՛տ, ըսաւ Բէթէր դուռը բանալով, Պօնի նաւահանգիստը կը մնանենք։

Միս Քլարի անմիջապէս ոտք ելաւ. արդարեւ նաւապետին տարօրինակութիւնը կ'սկսեր քիչ մը չափն անցնել։

Եւ սակայն վարժօն կ'ըսեր.

—Չէ՞ք կարծեր որ, միս, իրր պատուաւոր մարդ պարտաւոր էի Մարգածաղկին հետ ամուսնանալ։

—Անշուշտ... աղէկ ըրեր էք...

—Ո՛հ, քրիստոնէութիւնն ընդունեց... և անոր համար Մինոնի կը կոչուի։

—Կ'աղաչեմ, նաւապետ. հիմայ նաւէն ելլելու վրնարերեալ գործերուն նայեցէք, և մի՛ մոռնաք որ մեկնելու համար պէտք է հրամանիս պատրաստ ըլլաք...

—Կրնաք վստահիլ ինձ։

Միս Քլարի իւր սենեակը մտաւ փոքր ինչ մտախոհ։

Որքան ալ որ անվեհեր էր, կը մտածէր թէ արդեօք այս մարդակեր ընտանեաց հետ անապատին խորն երթալը չափազանց յանդգնութիւն չէ՞ր։

Բայց հիմայ պէտք է ոչ Աղկիոն վերագառնանք և պատմենք թէ Մօնթէ-Քրիսթօ և իւր որդին ինչպէս ցամաք ելեր էին։

ԺԶ.

Մալտարի հրաժեշտն.

Աղկիոն ալիքները կը ճեղքէր այն ցնորական արագութեամբ, որ Մօնթէ-Քրիսթոյի սիրած բաներէն մէկն էր, ոչ ոք կրնար անոր հետեւիլ, ոչ ոք հետեւած էր անոր։

Ցամաքն երեւցածին պէս՝ Մօնթէ-Քրիսթօ որդւոյն հետ կամուրջին վրայ ելեր էր։

Էսբէրանս կարծես նոր կեանքի մը մէջ կը թեւա-

կոխեր։ Աբիւնն իւր երակներուն մէջ աւելի արագ շրջան կ՚ընէր. երիտասարդութեան տակ պատանեկութիւնը կը ծաղկէր արդէն և բարձրացող հիւթը նորա աչաց մէջ շողշողուն լոյս մը կը վառէր։

Երբ լուսաշող հորիզոնին վրայ տեսաւ Ալճէրիի ցամաքն իւր ոսկեզոյն երանգներով, որոց վրայ Պօն, որ բլրոյ մը վրայ ստրածուած է, կը նմանէր սեւանկար պղնձեայ անօթի մը մէջ դրուած փունջ մը ձիւնաճաշակի, չկրցաւ հիացումը զսպել։

—Ո՜հ, հայր, հայր, ո՛րքան գեղեցիկ է։

Մօնթէ-Քրիսթօ ժպտելով առ նա հակեցաւ։

—Սիրելի զաւակս, ըսաւ անոր, հիմայ այս Ֆրանսական ցամաքին վրայ ոտք պիտի կոխես. յիշէ՛ որ իմ որդիս ես։ Ինչ որ ընես՝ բարութեամբ և բարոյ համար ըրէ՛։ Անչուշտ մեծամեծ վտանգներ կ՚սպասեն մեզ. քաջ պիտի ըլլաս, այնպէս չէ՞։

—Ո՜հ, հայր, ո՞չ ապաքէն դու քովս ես։

—Այդպէս մի՛ խօսիր. չ՚կրնար անանկ պարագայ մը պատահիլ որ զմեզ բաժնէ։ Ո՞վ գիտէ՝ անապատն անանկ գաղանիքներ ունի, զորս տակաւին ոչ ոք կրցած է հասկնալ, բնութիւնն անանկ զօրութիւններ ունի որոց դէմ ոչ ոք կրցած է մնաքառիլ...

—Բայց դո՜ւ, դո՜ւ...

—Ո՜հ, ե՛ս, ըսաւ կռնքը տխրութեամբ ժպտելով, ես ալ այլոց նման մարդ եմ... կարելի է որ այլք չվազանց վարժուած են պես պերմարդկային այժով մը օժտեալ կարծելու։ Այո՛, այժով եմ. այո՛, կամքս երանգուն և անողոք է։ Բայց բոլոր ատոնք ի՞նչ են անհունութեան դիմաց։ Մօնթէ-Քրիսթօ աշխարհներու

չարքին մէջ աննշմարելի կէտ մ՚է նման այն մունին, զոր մարդ ոտքովը կը ճզմէ... ուրեմն ինքզինքդ մի՛ պարտիր, որդեա՛կ իմ։ կրնայ ըլլալ որ ես ալ զարնուիմ, ես ալ չյնամ, ես ալ աներեւութանամ...

Իւր ժպտին աւելի հեգնական և աւելի վշտագին երեւոյթ մ՚առաւ։

—Կրնայ ըլլալ որ ես ալ չյաղթուիմ։ Ան ատեն, որդեակ իմ, պետք է պատրաստ ըլլաս չէ թէ միայն մնաքառելու, չէ թէ միայն ձեռնարկած գործս շարունակելու, այլ և բարի մարդու մը բովանդակ եռանդն ցգալու քու վրայդ։ Լաւ նայէ՛ երեսս, Իսբէրա՛նս, և ըսէ ինձ որ, եթէ ես քովդ չըլլամ, չպիտի վհատիս. եթէ չյնամ, դիս պիտի վերցնես. եթէ աներեւութանամ, դիս պիտի բնաւռնս. եթէ մեռնիմ, պիտի արտասուես վրայս։ Բայց կամքդ վայրկեան մ՚իսկ թող չկարանայ։ Եւ եթէ յուսահատութիւնն անձիդ տիրելու վրայ ըլլայ, մայրդ յիշէ՛։

—Մա՛յրս. ո՛րքան կը սիրեմ զայն։

—Եւ պարտաւոր ես սիրել, զաւա՛կս։ Մայրդ այն քաղցր և սուրբ արարածներէն է, որք ամէն պարտականութիւն և ամէն զոհողութիւն կը հասկնան։ Նա ինձ տուաւ քեզ իբր նուիրական աւանդ մը, զոր իրեն պիտի վերադարձնեմ։ Բայց եթէ բաղդը մատնէ դիս, մի՛ մոռնար երբեք որ քեզ անկ է այս պարտքը վճարել..., ցմահական դիւցազնութիւն մը թող չյատկացուի քեզ։ Ծանր գնութիւն չուզեր Իսբէրա՛նս, երդուիր ինձ որ, ինչ որ ալ պատահի, երբեք չպիտի մոռնաս թէ դու քու մօրդ կը պատկանիս...

—Ա՜յո՛, հայր, կ՚երդնում։ Բայց այդ դաղափար-

ները կը տխրեցնեն դիս, Ի՞նչ բանէ կ'երկնչիս։

—Ես ոչ բանէ մը։ Ո՛հ ես այն երազատեսներէն չեմ, որք վտանգը դէմերնին չեղած՝ կ'երեւակայեն։ Հանգիստ եղիր, տղայ, ես քովդ եմ.. կենդանի եմ... անձիս վտահ եմ... միայն ճամբայն ցոյց տալ կ'ուզէի քեզ...

Եւ Մօնթէ-Քրիսթօ անայլայլ դէմքով, յստակ աչօք և ամենայն հանդարտութեամբ նաւաստեաց խառնուեցաւ, վերջին հրամանները տալու համար։

Ո՛չ, ինչպէս որ ըսած էր, կոմսն այն մարդոցմէ չէր, որք անտեղի նախազգածութեանց կը հաւատան։ Եւ սակայն ծանր բեռ մը սիրտը կը ճզմէր։ Իրեն այնպէս կը թուէր որ անծանօթ, անշօշափելի սպառնալիք մը կախուած էր չնչած օդին մէջ։ Այս սպառնալիքն որո՞ւ ուղղեալ էր. ո՞վ գիտէր. և այս տպաւորութիւնն ալ բոլորովին չզսպին չէր։ Սակայն երկար տարիներէ ի վեր առաջին անգամն էր Մօնթէ-Քրիսթօ կ'զգար այն տարօրինակ այլայլութիւնը, որ մարդուս սիրտը տովորականէն աւելի ոյժով կը բաբախեցնէ ամենէն խոր հանդարտութեան և ամենէն կատարեալ ապահովութեան առեն։

Իւր շուրջը անձնաւէր ծառայներ կային միայն. Պէրթուչիօ, Ժապօրօ, նոյն իսկ Ռուբռու, որ արդէն տարօրինակ սէր մը ձգած էր իր վրայ։ Բոլոր նաւաստիք արդէն շատոնց ի վեր կը ծառայէին իւր հրամանին տակ։ Սոքա այնպիսի գինուորներ էին, որք պատրաստ էին իրենց հրամանատարին ամենախոր մէկ նշանին յառաջ քալել, և նախամեծար կը համարէին մեռնիլ, քանթէ թողուլ որ թշնամին մինչեւ անոր քով հասնի։

Բոլոր այս կուրծքերն իւր առջեւ պատնէշ մը պիտի կանգնէին։

Քաղաքն Հորիզոնին վրայ եւս քան զեւս կը ճերմկնար։ Այժմ Քասպահի սպիտակ չրջագիծը կը նշմարուէր. նման ահագին թռչնոյ մը, որ իւր մարմարեայ թեւերը կը տարածէ երկնից վրայ։ Պօ՛ն, վաղեմին Հիբբօն, ուր Ս. Օգոստինոս—վսեմ չղախտաւորն— եպիսկոպոս ընտրուեցաւ չորրորդ դարուն վերջերը։ Որքան յիշատակներ կը պաշարէին Մօնթէ-Քրիսթօյի հոգին, երբ նաւուն խելացը վրայ կանգնուն կեցած, իւր արծիւի աչերը կ'ուղղէր այս ժայռոտ ծոցին խորն, ուր առենով կարթագինեցւոց նաւակներն Աննիբալի աւարները բերած էին։

Ցանկարծ սարսռայ լսելով ժապօրօի ձայնը, որ այլայլութենէն դողդողալով կ'ըսէր.

—Տէ՛ր, եկէ՛ք, եկէ՛ք։

—Ի՞նչ կայ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ կիսովին ետին դառնալով, գոգցես թէ իւր նկատողութենէն չ'ուզելով զատուիլ։

—Տէ՛ր, ձեր խցիկին դուռը բաց է...

—Լա՛ւ, ըսել է մոռցեր եմ գոցելու....

—Ո՛չ... ո՛չ... տէ՛ր... ուրիշ բան կայ...

—Խօսէ՛ ուրեմն. կարծես թէ ցնորական երեւոյթ մը տեսեր ես...

—Ներեցէ՛ք, տէ՛ր, բայց... տեսածս այնքան չլացուց դիս որ, աչացս չեմ կրնար հաւատալ...

—Ի՞նչ տեսար։

—Ձեր խցիկին մէջ պղնձեայ երբեակ վահանքով կղպուած ահագին մնատուկ մը կայ...

—Գիտեմ։ Այն վականդնները ամենէն ճարպիկ դողերուն կրնան դիմադրել...

—Լա՛ւ, տէ՛ր... դուռը կիսաբաց տեսնելով՝ հրեցի... ներս մտայ... և տեսայ...

—Օ՛ն, ըսէ՛...

—Մնաու կը բայ... կախարիչը կռնկի վրայ տապալած տեսայ։

—Անկարելի է։

—Այսպէս է, տէ՛ր... և այնքան ճշմարիտ է որ, երբ գիտենը, գորգին վրայ խել մը ոսկի, ադամանդ տեսայ...

Մօնթէ-Բրիսթօ յանկերը պռատեր էր։ Ի՛նչ, իր քոմիք, այս մարդոց մէջ, որոց և ոչ մին ցայն վայր իր վատահութեանն անարժան չէր գտնուած, թշուառական մը կա՛ր։

—Եկո՛ւր, ըսաւ պարզապէս Էսբէրանսի։

Եւ ախորժութեամբ ու յամրաքայլ դէպ ի իր բնակարանը գնաց։

Ներս դուռը կռնկի վրայ բայ էր, և գորգին վրայ ցիր ու ցան կը տեսնուէին զմրուխտներ, կարկհաններ, որք ակնախտիղ լոյս մը կ՛արձակէին... ինչպէս նաեւ ոսկի դրամներ, որոց շեկ գոյնը գոհարեղինաց փայլուն գոյներուն մէջէն աչքի կը զարնէր...

Մօնթէ-Բրիսթօ դրան առջեւ կանգ առեր էր և ուշադրութեամբ քններ էր պղնձէ վականքները։ Սոքա դարբին Զէլլինիի մը ձեռքէն ելած ճշմարիտ հրաշակերտներ էին։

Կռմնը ոտք ելաւ՝ դէմքին վրայ առանց ամենափոքր այլայլութեան նշան մը տեսնուելու։

Յետոյ դէպի սնտուկը գնաց։ Սա հաստ կաչիէ չինուած տեսակ մ՛արկղ էր, որու վրայ ամենէն աւելի դանակն իսկ կը կտրէր։ Երկաթները կռածոյ պողպատէ էին, և վականքը միայն Մօնթէ-Բրիսթոյի ծանօթ զբաղանակի մը միջոցաւ կը բացուէր։

Եւ սակայն ծագօրօի ըսածն իրաւ էր։

Կախարիչը տապալած էր և գոհարեղինաց ու ոսկեներու կոյտ մը դիզուած էր գորգին վրայ։ Կարծես տենդոտ և պարապ ձեռքեր բարկութեամբ խառներ էին այս գանձերը և տեսակ մը կատաղութեամբ գետին նետեր էին։

—Կը տեսնէ՛ք, տէ՛ր, գողցեր ծագօրօ։ Գողերը մեծեր են հոս։ պէտք է զանոնք պատժել։

—Ինչէ՞ն հասկցար որ գող են, հարցուց Մօնթէ-Բրիսթօ, որ դիմիներ էր։

—Բայց... այս վականքներուն բացուիլն... այս ադամանդները...

—Եթէ գող մ՛ըլլար, զանոնք գորգին վրայ կը թողո՞ւր։

Եւ որովհետեւ Մանելիթայի ամուսինն յապաղ կըրթած կը կենար։

—Թո՛ղ զիս, բարեկա՛մս, ըսաւ Մօնթէ-Բրիսթօ անուշ ձայնիւ։ Միայն ըսէ՛ ինձ թէ այս անկարգութիւնը ոչ ոք չտեսա՞ւ։

—Ո՛չ ոք, տէ՛ր։ Ուղղակի եկայ ձեզ լսաց տալու։

—Լա՛ւ։ Հոգւոյդ վրայ երդում ըրէ որ, ծագօրօ, այս մասին ո՛չ ումեք բան մը չըսես...

—Սակայն, տէ՛ր, եթէ նաւուն մէջ գող մը կայ...

Մօնթէ-Բրիսթօ յանկերը պռատեց։ Ձեր ախորժեր

որ իւր հրամաններուն դէմ առարկութիւններ ընեն։

—Գնա՛, կ'ըսեմ քեզ։ Եւ վերջապէս կը պատուիրեմ որ այս գաղտնիքը պահես։ Կ'երդնո՞ւս...

—Ո՛հ, տէ՛ր, քանի որ դուք այնպէս կը կամիք...

Մօնթէ-Քրիսթօ Էսբէրանսի հետ առանձին մնաց։ Ծղայն անոր ըսաւ.

—Սակայն, հա՛յր, ստոյգ չէ՞ որ նաւուն մէջ անպատիւ մարդ մը կայ։

Կոմսն իւր մտապրաղութիւնները ցրելով՝ որդւոյն ձեռքը բռնեց և մեղմիւ դէպի դուռը տարաւ զայն։

—Ծո՛ւէ՛, ըսաւ. և պղնձէ կազմածները ուշադրութեամբ դիտէ՛։ Ցետոյ տեսածդ ըսէ՛ ինձ։

Էսբէրանս հնազանդեցաւ։ Քանի մը վայրկեան երկուքն ալ լուեցին։ Մօնթէ-Քրիսթօ, թեւերը կուրծքին վրայ ծալած, կ'սպասէր։

—Ի՞նչ տեսար, հարցուց վերջապէս։

—Բան մը չեմ տեսներ, ըսաւ Էսբէրանս։

Մօնթէ-Քրիսթօ սրտնեղութեան թեթեւ չարժում մ'ըրաւ։ Ապա ինքն ալ ծռելով.

—Էսբէրանս, ըսաւ, աչերդ տակաւին երիտասարդ են և տեսնել չեն գիտեր։ Հուսա՛, ճիշդ մատս դրած տեղս նայէ՛... բան մը չե՞ս տեսներ...

—Ա՛հ, այո՛, հա՛յր. ես զայդ տեսեր էի... բայց հապա՛ տեսանելի գիծ մ'է այդ... կարեւորութիւն չունի...

—Երբեք այդպէս մի՛ խօսիր, գոչեց Մօնթէ-Քրիսթօ ուժգին։ Ո՛հ, մանկական աւուրը վատահութիւն, երանաւէտ անխոհեմութիւն. ա՛րբան ցաւագին է բոլոր այս բաները իւրացնել... և սակայն հարկ է։

Որդեա՛կ իմ, կենաց մէջ ամենէն փոքր բաները պէտք է ուսումնասիրել, քննել, ճանչնալ։ Փորագրութեան մը մէջ ամենաւն տեսածն հատ ու լայն գիծերն են, իսկ աննշմարելի նուրբ գիծերն ոչ ոք կը տեսնէ, և սակայն բուն գործը ձեւացնողն այս հազիւ տեսանելի գիծերն են... Կ'ըսես թէ այս գիծը բան մը չէ. լաւ... Էսբէրանս, այս գիծը գաշոյնի մը սայրին արտիւնքն է...

—Դաշոյնի՛ մը. ո՛հ, հա՛յր, ի՞նչ կ'ըսէք։

—Մարդ մը —որու անունը պիտի ըսեմ քեզ ընդհուպ— հրաշալի ճարպիկութեամբ մը իւր դաշոյնին երկաթին այս դրան ճեղքին մէջ միսեր է, և մեկ հարուածով յաջողեր է ընել ինչ որ ամենէն վարպետ գործիքներն իսկ չպիտի կարենային ընել։

Մօնթէ-Քրիսթօ զայս ըսելով դուռը գոցեր էր. յետոյ առնելով դաշոյն մը, որու ճկուն երկաթը թուղթի նման բարակ էր, վականքին սոնդակը բացաւ։

—Տե՛ս, ըսաւ իւր որդւոյն. միայն թէ իմ դաշոյնս պղնձին վրայ հետք չթողուց...

—Իրաւ է, ըսաւ Էսբէրանս։ Բայց ըսել է այս անուշն ալ...

—Անշուշտ միեւնոյն կերպիւ բացուած է։

—Սակայն ապահով եմ որ այս անդամ ամենեւին նշան մը չկայ։

—Զգուշացի՛ր, Էսբէրանս, քննէ՛ և շատով մի՛ խօսիր։

Էսբէրանս հօրն հնազանդեցաւ։ Մօնթէ-Քրիսթօ որդւոյն կը նայէր։ Կը տեսնէր այն կրակոտ ու անկեղծ նայուածքը, որու ճառագայթներն այժմ ուշադիր քննութեան մը մէջ կը կեդրոնանային։ Կենաց գործնա-

կան դատախարակութիւնն էր որ կ'սկսէր։ Մօնթէ-Քրիսթօ կ'ուզէր որ Էսբէրանս կատարեալապէս զինեալ ըլլայ կռուելու համար։

Յանկարծ տղայն աղաղակ մ'արձակեց։

—Դիտե՛մ, հա՛յր, գիտեմ...

—Մի՛ շտապիր... Ճանճանելը պակասութիւն մ'է բայց գիւրաւ սխալելու յատակութիւնն անհամեմատ է։

—Դողն այս անտուկը դաշոյնի մը երկաթովը չէ բացերը։

—Դարձեալ սխալեցար։ Ինչո՞ւ համար այդ դող բառը կը գործածես։ Այս տեղէն բան մը դողցուած ըլլալուն ապացոյցն ունի՞ս...

—Իրաւունք ունիք, հա՛յր իմ։ Բայց մարդուն երակը կրնամ ըսել ձեզ։

Էսբէրանս, գլուխը վեր առաւ տեսակ մը պարծենկոտ գոհունակութեամբ։

—Եւ ապացուցանել թէ դուշակածս ճիշդ է։

—Մտիկ կ'ընեմ, Էսբէրանս, և պատրաստ եմ գլխիդ դովելու՝ երթէ չես սխալած...

—Մարդը անտուկը կախարիչէն զատող ճեղքին դիմած է թերեւս... բայց անշուշտ հասկցեր է որ չկրնար յաջողիլ...

—Ինչէ՞ն գիտես։

—Կեցի՛ք որ բացատրեմ, հա՛յր։ Ասոր ապացոյցը սա պողպատի ամենափոքր կտորն է, զոր փականքին ծակէն հանեցի...

Մօնթէ-Քրիսթօ ժպտեցաւ։

—Շարունակէ՛, բարեկամ։

—Դաշոյնը դրան վրայ հետք մը ձգեր է, բարեկամ Էսբէրանս· ասոր պատճառն այն է որ մարդը թէև դաշոյնն ամենայն զգուշութեամբ մխեր էր, բայց երբ սողնակին կռինչը լսեց, հասկնալով որ յայտնաբերուած էր, առանց ուշադրութիւն ընելու երկաթն ուժով մը քաշեց։

—Շատ լաւ։

—Իսկ հոս, անտուկին վրայ, դաշոյնը չկրնալով սողնակները բանալ, նոյն զգուշութեամբ դուրս քաշեր է որով ներս մխեր էր· այն ատեն ժամացոյցներուն մէջ գտնուած զսպանակին նման պողպատեայ զսպանակ մը գործածեր է...

—Բոլոր ապացոյցներդ ճիշդ են...

—Այն զսպանակով փականքին սողնակները պատեր և յետոյ բացեր է... չեմ կրնար ըսել թէ ինչպէս ըրեր է... բայց զսպանակները չարժելէ յետոյ՝ պողպատեայ թելն իրեն քաշեր է, ինչպէս որ դաշոյնը քաշեր էր, և ուշադրութիւն չէ ըրեր որ անոր մէկ կտորը կոտրելով՝ փականքին մէջ մնացեր էր։

Մօնթէ-Քրիսթօյի սիրան անպատում այլայլութեամբ մը կը բաբախէր։

Ըսած երեւութին միմեանց բնաւ վերաբերութիւն չունեցող պարագայներն ի մի ձուլելու այս ներքամտութիւնը, այս ճարպիկութիւնը, այս կորովամտութիւնն բարոյական ժառանգութիւնն էին նոյն բանտարկեալին որ, տասնեւչորս տարուան երկար ոգեւարքի մէջօրհն, ամէն բան կշռել ու լուծել սովրած էր։

Էսբէրանս, ժառանգաբար, արբայ Ֆարիայի, իճի դղեակին բանտարկեալոց աշակերտն էր։

Եւ երբ Մօնթէ-Քրիսթօ լուռ և մտախոհ կը կենար։

—Միսալե՞ր եմ, հա՛յր, հարցուց տղայն արտասանելեւ ամբ։

—Ո՛չ, ո՛չ, դոչեց Մոնթէ-Քրիսթօ զայն թեւերուն մէջ սեղմելով։ Արժանի ես որ այժմ ալ եւս քենէ բան մը չպահեմ... Խաբէբաներ, քեզի ըսի որ հոս մըտնողը դող մը չէ։ Հիմայ ես ալ զայս ապացուցանեմ... Մխէ ձեւքդ սա ադամանդներուն մէջ, որոց փայլն չթողուց որ ուշի ուշով քննես զանոնք։

—Հա՛յր, դաշոյնը... դոչեց տղան, որ հնազանդեր էր։

—Եւ այս դաշոյնին մագաղաթ մ՚անցած է... Սա արեամբ գրուած տառերը կը տեսնե՞ս, Խաբէբաներս։ կեցցէը որ նոցա նշանակութիւնն ըսեմ քեզ։ Մալուար առ Մօնթէ-Քրիսթօ։ Աստուծոյ հետ քալող ազգասէրը Աստուծոյ դէմ քալող իշխանէն աւելի հարուստ է։ Խուսանեցէն զգուշացի՛ր։»

—Խուսաններն ո՞վ են, հա՛յր։

—Կ՚ըսեմ։ Բայց ժամանակ չկորսընցնենք։ Եկո՛ւր։ Ամէն բան հասկցայ։

Անմիջապէս կանուրջին վրայ եկան։

—Ժագօքօ՛, կոչեց Մոնթէ-Քրիսթօ, նաւուն մէջ գտնուող Արաբը ե՞րբ ծովը նետուեցաւ։

—Ա՜հ։ Ո՛հ, ա՛խ՛ր... նա ներքնախուցին մէջն է ընդհակառակութեամբ քաւքուչի, որ վայրկեան մը չդադարեր զոհէն...

—Ապահո՞վ ես, Ժագօքօ՛։ Լա՛ւ ուրեմն. գնա՛ բեր գինքը։

Ժագօքօ անմիջապէս անհետացաւ։ Երբ վերադարձաւ, գոչեց։

—Տէ՛ր, զուարը խորունկ կը քնանայ։

—Հապա Արաբը։

—Անհետացեր է... Բայց կը գտնենք գինքն... Օ՛ն, ընկե՛րք, գործանատուն ամէն ծակը ծուկը բնոյտենք։

Ամենքն ալ պիտի վազէին. Մոնթէ-Քրիսթօ նշանացի կեցուց զանոնք։

—Անօգուտ է, ըսաւ, մարդը ծովը նետուեր է ցամաք ելլելու համար... Նայեցէ՛ք։

Եւ թեւն երկնցնելով՝ ծովեզրին վրայ սեւ կէտ մը ցոյց կուտար։

Մալուար կանգուն կեցած էր հոն և բռնցի կ՚սպասեր զործանատուն։

—Բարեկա՛մք, ըսաւ Մոնթէ-Քրիսթօ հզօր ձայնիւ, այս մարդը մեր թշնամին է, լա՛ւ մտածեցէ՛ք թէ անանկ հոգու մը վրայ ոտք պիտի կոխենք, որու մէն մի մազառն հակառակորդ մը, մէն մի հոգածերպը մարդասպան մը կը ծածկէ... Ջինուո՛րք բարեաց, ձեռնէ իւրաքանչիւրն պատրաստ թող ըլլայ իւր պարտքը կատարելու։

Խանդավառ կեցցէ մը պատասխանեց Մոնթէ-Քրիսթօյի, որ մտախոհ կը կենար և մազերը որդւոյն դանդուր մազերուն մէջ կը մղէր։

ԺԷ.

Սրբոց Ջրանը.

Արաբացւոց Խէնէկ-էլ-Մէլէ, աղի կերճ կոչած տեղն, որ պղեոտաբեր յիշատակ մը թողած է, ժայռի կոյտե-

րու մէջեւ ահագին խոռոչ մը, հսկայի մը կացինի հարուածէն է։

Մեծ սահարայի սկիզբը, Օրանի նահանգին հարաւային սահմանին վրայ, Պու-Ալէմի հովտին ծայրը Աղի լեռան հերձուածի ապառները կը բարձրանան աղի նիւթեր պարունակող դեւատակի մը եղերքը։ Մարը մնող արեւուն սաստիկ լուսոյն, որ ոսկւոյ նման չեկ գոյները կարձակէ խոր երկինքի վրայ, ուր մարդուս նայուածքն կարծես կը կորսուի իբր յանհունութեան, լեռան զառիվէրները կը վայլին այլանդակ գոյներով, որ ակնախտիղ կապոյտ թիթեղանց կամ նոցա վրայ գտնուած ապխտակ ծերպերուն վրայ կարմիր լուսոյ ցոլացման արդիւնքն է։

Կիրճին մէջ ձիաւոր մը ծանր ծանր կը յառաջանայ։

Գլուխը ծռած, անշարժ, ճակատը ապխտակ կնքուղին տակ կխոովին ծածկած՝ կը քալէ։

Կռնակէն կախուած է դամասկեան նկարներով զարդարուն երկար հրացան։

Հուժկու կենդանին, որու կուշտին վրայ վեց ճառագայթով աստղ մը դրոշմուած է, ոտքն հաստատապէս կը դնէ ճամբուն քարերուն վրայ։

Ցանկարծ մարդը կանգ կ'առնու։ Ձախ կողմն ահագին միակտուր քար մը կը բարձրանայ, կարմիր խաստքարէ տարօրինակ կոյտ մը։

Արեան ժայռն է սա։

Հոն սպանութիւնները գործուած են, կիրճէն անցնող ճամբորդներ խողխոզուած են, առևտրականներ յափշտակուած են. հոն երկար տարիներ Ջոկերը դարանակալ ըլլալով՝ իրենց թշնամւոյն անցնելուն սպասած են։

Ձիեր գիտուիւն, չիեր չնո՛րհ։ Եաթաղանները գարկած են, և Արեան ժայռին տորոտը չրջապատող տձեւ բլրակներուն տակ մարմիններ թաղուած են, առանց գլխու մարմիններ, վասն զի մարդասպանն գայն իբր յաղթութեան աղետալի նշան՝ ձիուն թամբէն կախեր ու տարեր է։

Հո՛ն փոթորկայոյզ գիշերներու միջոցին, երբ անապատի հովը կուգայ կիրճին մէջ յարձանապատոյտ փչելու, չար ոգիներն իրենց կատաղութեան ազազականերն և տոկալի ձիժաղները կ'արձակեն։ Գիշերային սատանայն իբր անեծքները կը տեղայ, մինչդեռ հնդկարմաւենիք և վարդաստրք տխրութեամբ կը տատանին՝ մելամաղձոտ և ողբագին ազազականեր արձակելով, որք ապառնացեալ զօզանջիւններուն կը պատասխանեն, մինչդեռ ագի դեւատակին խորը կարկաչող ջուրերուն մէջ ահարեկ ջրային թռչունները ողբագին կը ճչեն։

Մարդը կանգ առաւ։ Թերեւս հոն կատարուած կամ կատարուելիք վրէժխնդրութեան մը յիշատակը կար իրեն համար։

Կնքուղն եաի կը նետէ, վախ ու երկար թեւերը պտրնուգքն գուրս կ'ելլեն և ձեռքերն իրարու կը միանան, մինչդեռ նիհար դէմքը, որու ծայրը եբենոսի նման սեւ երկայրի մօրուք մը կայ, դէպի երկինք կը բարձրանայ. լայն ատպատաններուն վրայ կխովին կը կանգնի, և թուխ դէմքին վրայ կապուտակ չրթունքները չարժելով՝ կխաոնչիւն բառեր կը մրմնջեն.

Ապա մէկ ոտնամոր ձիէն վար կը ցատկէ։

Դէպի Արեան ժայռը կ'երթայ և հոն, գրեթէ մինչեւ գետին ծռելով՝ ուշադրութեամբ խոտաքարը կը քննէ։

Ցանկարծ ձեռքը քարին վրայ կը դնէ. հոն ալ, ինչպէս իւր ձիուն կուշտին վրայ, ինչպէս քիչ մ'առաջ յերկինս բարձրացող բազկին վրայ, վնց ճառագայթով աստղ մը կը գտնուի:

Կը խոնարհի, վայրկեան մ'այս պաշտամանդ երեքին մէջ կը կենայ, յետոյ վերստին ձին կը հեծնէ:

Բայց այժմ կ'աճապարէ: Կենդանին ծնգաց սեղմուճն զգացած է: Կիրճին մէջ կը սլանայ և ամրականերուն բաղխիւնէն քարերը կը կորչին և կը ցաւկոտտեն...

Ցանկարծ մարդն ու կենդանին, որոց վրայ կիրճին ժայռերն հովանի կ'ընեն, չողշողուն լուսոյ մը մէջ կը մնանեն...

Սահմանն անցեր են...: Սահարան է:

Զայս չտեսնողը բան մը տեսած չէ: Կարծես մոգայեն դիւթութեամբ մը աշխարհի երեսէն անտառ, լեռ, ընդարձակ քաղաք, ամէն ինչ յանկարծ աներեւութացած է: Ոչնչութեան —անհուն Ոչնչի մարմնաւորութիւնն է սա իւր սոսկալի և միանգամայն վսեմ ընդարձակութեամբ:

Ոչի՛նչ: Հասկցա՞ք այս բառը: Հորիզոնին վրայ միջոցի տարտամ խորութիւնը, վրայդ երկնից այնչափ բարձրութիւնը, ո՛չ աղմուկ կայ, ո՛չ արձագանք, ո՛չ շարժում. անշարժութիւնն իւր բարձրագոյն աստիճանին մէջ, բացարձակ լռութիւն... մահուրընէ աւելի է այս. վասն զի կարծես թէ հոն երբեք բան մը ապրած չէ... և այս վայրի ոչնչութեան վրայ հրակէզ լոյս մը անարգել և անաւուեր կը ճառագայթէ և իւր ասկեզէն պատանք մը կը տարածուի

Աբեւը —որու սկաւառակը կը մխրճէը— հրաշէկ փառան մը դրան վերի մասին կը նմանէր:

Մարդը կը յառաջանար՝ աչքը սկաւառակին այս վերջին ձեւին վրայ յառած:

Ի՞նչպէս կրնար դէմ առ դէմ այս հնոցին նայիլ:

Ջինքն ուշադրութեամբ դիտողն այս գերմարդկային կարողութեան պատճառը կը հասկնար:

Այս մարդուն դէմքը սպիներով ծածկուած էր:

Աչքն արտեւանունք չունէր և դրեթէ ակնակոպիճէն դուրս կ'ինար: Բիթին ծայրը կարած, լաւ ևս է ըսել կրծուած էր, իբրու թէ բերանն աւրուած դանակով մը սղոցած ըլլային զայն: Եւ պուրնուզին տակ, կուրծքին մէջ տեղ, հարազանի մը երախակալը կը տեսնուէր...

Չէ թէ գօտիին անցած կամ կապով մը կապուած:

Այլ իւր միան էր այն երկաթին պատեանը: Դանակն երկու կողերուն մէջ մտած էր, և մարդը մերթ ընդ մերթ կարծես մեքենաբար ձեռքը երախակալին կը տանէր և կը զարձնէր երկաթը, որ կը խածնէր:

Այս մարդը չարչարեալ մ'էր: Զգեստներուն ներքեւ չկար մարմնոյն մէկ մասը, որ վէրքի մը հետքը չկրեր, չկար անդամ մը, որ ճմլուած չըլլար:

Այս մարդը եռասաւաներու ցեղէն էր:

Սուր երկաթն իւր մարմինը յօշոտեր էր, տաք երկաթն այրեր էր զայն, կակոտաններու փուշերն իւր լզուն և ծնօտներն արիւներ էին: Ամէն տանջանք, ամէն չարչարանք քաշեր էր: Եւ այժմ կենաց մէջ կը յառաջանար ինչպէս յանապատին, նայուածքը երկինէ մէջ կորսուած, և իւր յարատեւ արբշռութեան, անընդհատ գրգռման մէջ կը տեսնէր ինչ որ ուրիշները չէին տեսներ:

Այս ցաւոց տակուն մարդը կրնար միջին դարու

տանջանաց գործիքները ծաղրել։

Չկար ջղաձգութիւն մը, դող մը, խիթ մը որ, ա՛րքան ալ սոսկալի ըլլար, կարենար այն զարմացնել կամ նորա դնդերները ցնցել։

Իւր եղբարք ղինքը Սուրբ կը կոչէին։ Նա Աստուծոյ կը խօսէր և Աստուած կը լսէր ղինքը։

Անապատը մնալով նա իւր պետութեան մէջ էր։ Շրթանցը վրայ տեսակ մը ժպիտ կը թրթռար։ Եւ իւր ցցուած բիւրեղուն մէջ —զոր կը չջնապատէր արևնագոյն ծիր մը— ուրախութեան փայլակ մը կար։

Ո՛ւր և ի՛նչպէս կ՛ընթանար այս տարաժութեան մէջ, ուր հողուն մէկ ծալքը չկրնար իրը ուղեցոյց ծառայել։ Երբեմն աւազն հողէն մղուելով՝ կը դիզուի և բլրակ մը կը ձեւացնէ։ յետոյ ուրիշ հով մ՛ալ կը փչէ և կոյտը կը ցրուի, կը տարաժուի, աւազին մէջ կը խեղդուի, ինչպէս ալիք մը ծովուն մէջ կը կորսուի։

Սակայն նա առանց վարանելու կը յառաջանար։ Արեւը բոլորովին մարը մտած էր, և տաք ու տակաւին լուսաւոր դիշերն նորա բարձր ու այլանդակ մարմինը կը լուսաւորէր։ Մէյա ղերկինս կը դիտէր...

Յանկարծ անգամ մ՛ևս կանգնեցաւ իւր ապագանդանին վրայ, կռնակէն կախուած հրացանը առ ինքն քաշեց և ձեռքը բլթակին դրած՝ կարծես բանի մը կամ մէկու մը կ՛սպասէր։

Արդեօք թշնամի՞ մը կար։

Բայց իւր հրացանին փողը դէպ ի երկինք ուղղուած էր։ Սուրբն այս կողմէն ի՞նչ թշնամի է վախ կրնար ունենալ։

Եւ արեւմտեան կողմի լռյսը մարեցաւ և մթնշաղի

ցոլքերուն մէջ լուսնի մահիկին երեւաց անուշ ու դալուկ։

Պայթիւն մը լսուեցաւ։ Սուրբն աստղը կ՛ողջունէր... Եւ բարձրաձայն արտասանեց սա խօսքերը։

—Որոշեալ պայմանաժամը պիտի հասնի անոնց համար, որք կը յուսան օր մը Աստուծոյ առջեւ ներկայանալ։

—Պայմանաժամն ե՞կաւ, բսաւ ձայն մը, որ չգիտցուիր ուսկի՛ց կուգար։

Սուրբը դարձեալ իւր նուիրական գրքին խօսքերն արտասանելով, շարունակեց։

—Երդուի՛ր թէ դու առաքեալ մ՛ես և ուղիղ ճամբան պիտի ուսուցանես։

—Կ՛երդնում ի նուիրական գիրս, կրկնեց ձայնն։

—Ցասնէ ինչ որ յայտնուեցաւ քեզ ի Գրոցն Աստուծոյ։ ոչ ոք կարող է անոր խօսքերը փոխել... անկից դուրս բնաւ ապաւէն չպիտի գտնես...

Այն մարդուն ձայնը, որ տակաւին չէր տեսնուեր, պատասխանեց։

—Թշնամիք այն օրը ձայն մը պիտի լսեն, որ պիտի գոչէ իրենց։ Աստուծոյ առելութիւնն ձեզի դէմ աւելի մեծ է քան թէ ձեր իսկ առելութիւնն ձեր անձին դէմ։

—Անոնց վախճանն ի՛նչ պիտի ըլլայ։

—Իմացուր իրենց թէ մօտ է այն օրը որ սրտերնին կոկորդնին ելնելով՝ ղերենք պիտի խեղդեն...

Այն առեն սուրբը դէպ յարեւելս դառնալով, ելնիք անգամ կոչման աղաղակ մ՛արձակեց...

Եւ երբ Հոգին գարձաւ իր մնար կանգնած տեսաւ բարձրահասակ և հուժկու մարդ մը, որու գալը չէր լսած, և որ ամբողջապէս ծածկուած էր պուրնուզի մը մէջ։

Դիշերը նոյնպէս կը մթնար։

—Դու ա՞յն ես զոր կ'սպասեմ։

—Ես նա եմ, զոր Աստուած կ'առաքէ...

—Սրբոց նշանն ունի՞ս։

—Տե՛ս...

—Բայց մթութիւնը տեսողութիւնս կը պղտորէ...

—Նայէ՛ կրակէ, կրկնեց նորեկը որ պուրնուզը բանալով, իր հիւծեալ կուրծքը մերկ ցոյց տուաւ։

Եւ այս կուրծքին վրայ, խորհրդաւոր դիմագիծ մը, այն նշանն —վեց ճառագայթով աստղը— երեւաց չղչղուն և լուսավառ...

Սուրբը ձիէն վար իջաւ և խոնարհեցաւ։

—Կանգնէ՛, մարդ դո՛ւ։ Հաւատացեալն Աստուծոյ առջեւ միայն կը ծնրադրէ։

—Դու ալ ո՞չ ապաքէն Աստուծոյ առաքեալն ես, ո՞չ ապաքէն կուգաս սուրով պատժել մեր ցեղին ամբարիշտ հարստահարիչները... Ո՞չ ապաքէն դու այն անձն ես, որ թշնամիները պիտի արտաքսես այն երկրէն, զոր Աստուած տուաւ մեզ և զոր նորա վատութեամբ առին մեռնէ...

—Ես այն եմ։ Եկ կանգնէ... Եղբարք գիտեն զայն, որ ես անապատին մէջ անանկ տեղ մը պիտի գըտնում, որ բնաւ մարդկային աչք մը չպիտի կարենայ տեսնել. բայց թէ հոն պիտի գամ այն ժամուն որ, տարտղին չորրորդ ամսուան լուսնի մահիկը արեւուն վերջին

նշոյլներուն մէջէն երեւնայ... Ուրեմն եղբարք դրկեցին զքեզ...

—Այո՛։

—Պատրաստ են Աստուծոյ առաքելոյն հնազանդելու։ Պատրաստ են իրենց կիներն ու ձիերը, արջառներն ու կեանքը զոհել։ Աստուծոյ թագաւորութիւնը վաստկելու համար պատրաստ են ամէն տառապանաց ամէն տանջանաց տակաւ։

—Գիտե՛ զիս, անդամներս երկաթով յօշոտեցի, հոգւոյ տկարութիւնը կրեցի, աչերս արտեւանունք չունին, կուրծքս յաւիտենական վէրքով մը կ'արիւնի... և եղբարք ալ ինձ պէս ամէն բանի պատրաստ են Աստուծոյ կամաց հնազանդելու համար...

—Ուրեմն ես, Մալաէր կ'ըսեմ ձեզ։ Եղբա՛րք, պիտի պիտի վազէ ինչպէս ջուրը կը ժայթքէ այն հորէն, զոր ջրաչափը բացած է ամուլ հողին վրայ, և այն արիւնը գետ պիտի ըլլայ և մեր թշնամիները կուլ պիտի տայ։

Պահ մը մտախոհ և լուռ մնաց, յետոյ յարեց։

—Խուանններն ո՞ր են։

—Ուարկլայի մէջ են և պատրաստ են Մեծաւորի տիտղոսը տալ քեզ...

—Աստուծոյ համար մարտնչող մարդը երկրաւոր տիտղոսներ չուզեր... Եւ հրամանիս համեմատ գերիները բռնեցի՞ն։

—Այո՛, տէ՛ր. Ուարկլայի Պալատին մէջ յիսունէն աւելի կան...

—Նոցա գլխուն մազերուն չդպա՞ն...

—Ո՛չ։ Յանուն Աստուծոյ արդիլած էիր։ Անոնց իրենայիցին, և սակայն հաւատացեալ ժողովուրդը կը քրթմնջէր։ Նոցա մահը կը պահանջէր... մանաւանդ Մէկուն մահը... այն է Ցրանսացի հարիւրապետ մը։

—Կը կարծէ՞ն որ սուրը պիտի խնայէ անոնց։ Մարդ մը սպաննելն ի՞նչ է. Բանի մը կաթիլ արիւն կը ցայտէ և փոքր ինչ աւազ նորա հետքն առ յաւէտ կը ծածկէ։ Ո՛վ դու, սուրբ եղբայր, դարձիր առ եղբայրս, և ըսէ անոնց թէ լուսինն իւր ամաւրեայ շրջանին քառասորդ մասը չլրացուցած, ես հո՛ն... իրենց մէջտեղ պիտի ըլլամ. և այն ատեն արիւնը պիտի հոսի կարմիր և գունդագունդ, և ոչինչ պիտի կարենայ դադրեցնել զայն... երթ...

Եւ Մալտար հրամայական ձեւովմը ցոյց կուտար հոլիզոնին այն կէտն, ուր պէտք էր երթալ։

—Ըսէ Աստուծոյ ընտրելոց թէ բացարձակ հնազանդութիւն մը պէտք է ինձ, թէ ամէն մարդ ձեռքիս մէջ պէտք է ըլլայ ինչպէս չունչէս երթացող տերեւ մը, ըսէ անոնց թէ ես յայտնելս Աստուծոյ հարցուցի և Աստուած պատասխանեց ինձ. Երթ։ Երթ ուրեմն և Աստուած հետդ ըլլայ...

Եւ սուրբը վերստին խոնարհելով իւր ձին հեծաւ և մէկ ոտտմամբ անապատին անհունութեան մէջ սլացաւ։

—Ո՛հ, այո՛, մրմնջեց Մալտար, Մահ ամենուն...։ Եւ նոցա արեանց աղբիւրն այն աղբիւրը պիտի ըլլայ, ուսկից պիտի ըմպեն հաւատացեալք Աստուծոյ։

Ուարկլա.

Ուարկլա, ովասիաներու թագուհին, անապատին անհունութեան մէջ կորսուած, ասկից երեսուն տարի առաջ իւր սուրբ քաղքի հալածութիւնը կը ծածկէր խորհրդաւոր քօղի մը տակ, որ տգիտութեան և հեռաւորութեան արդիւնք էր։

Ճամբորդ մը զայն հրնդէն ծովու մը մէջ կորսուած դալարեայ կղզեակ մ՚անուանած է, և մինչեւ 1862, այսինքն մինչեւ այն թուականն որ մեր յանդուգն սպայից մին, Փօլօնիէօ հրամանատարն, համարձակեցաւ յառաջանալ մինչեւ այն նահանգներն, որոց գրեթէ մոռցածին համբաւ մը կուտար առասպելն։ Ուրակլաս Ալճէրիի գաղթականաց երեւակայութեան մէջ տոգորուած էր իբր տեսակ մ՚ամրոց, զոր աւազներն ու խորշակը կը պաշտպանէին թշնամեաց դէմ։

Երբ հարաւային հովիտ մինչեւ Միջերկրականի եզերքը բերէր Ուրակլայի մէկ արձագանգն, կ՚ըսէ այն քարանց գինուորն, որու անունն յիշեցինք, ամէն ոք անձկութեամբ, գրեթէ ախորժիւ մտիկ կ՚ընէր։ Ո՛չ ապաքէն հեռաւոր և անծանօթ քաղաք մ՚էր նա։

Ա.ին սոսկալի պատմութեանց հետ նաեւ կարծես կը լսէին արմաւենեաց մրմունջն, զոր անապատի հովիտ մինչեւ երենց կը բերէր, Հեռուէն կը տեսնէին խորհրդաւոր քաղաքն իւր պարտէզներու և արմաւենեաց պուտիկն չրջապատեալ, դալարեօք և զովութեամբ

շողշողան, ովասիաներու թագուհւոյ ապարօշութեամբ զարդարուած։

Պարիսպներով չրջապատուած էր։ Եւ իւր մենութեան ապաւինելով՝ թագաւորութիւն կը կեղծէր։ Ի գահ բարձրացողները շուտ շուտ կը յաջորդէին միմեանց։ Նոցա վաղանցիք իշխանութիւնը եղբայրասպան կռուով մը կ՚սկսէր և մարդասպանութեամբ մը կ՚աւարտուէր։ Քիչ մը աղմուկ, քիչ մը արիւն և ի վերջոյ գերեզման. բոլոր իշխանութիւնք միմեանց կը նմանէին։ Նորա դալար պատմուճանին վրայ նետուած քանի մ՚արեան բիծերն ծիրանաւոր բեհկորներու պէս էին, որք լաւ կը վայլէին այս քաղքին։ Անկից վերադարձող յանդուգն կարաւանապետք, որք արման բեռցած բաղդաթիւ ուղտեր և անհամար արու և էգ խաւիշիկներու հօտեր կը բերէին հետերնին, այս քաղքին վրայ հրաշալիքներ կը պատմէին։

Անապատի այս ճանապարհորդք երկնց արեւակէզ դիմաքն, բրդէ ծնգապահներովն, աւազին դէղնած պուրնուզովը, կռնակնուն կախուած հրացանօքն անանկ տեսք մ՚ունէին որ, նոցա պատմութեանց մտացածին և միանգամայն հրապուրիչ երեւոյթ մը կուտար։ Երբեմն թաղէ թաղ արիւնահեղ պատերազմ մը կը պատմէին, երբեմն Մօզապիթներու կոտորածը, երբեմն Ուարկլայի և Ն՚կուասայի միջեւ ճակատամարտ մը, երբեմն ալ կը տանէին զմեզ արմաւենեաց անտառին մացառներուն հովանաւոր և օձապտոյտ արահետներուն մէջէն, որք արքունի պալատան դուռը կը տանին, գիրար հատանող ճամբաներու այն բաւիղին մէջ ցիր ու ցան ցոյց կուտային սպիտակ գմբեթներով քօպպաները,

որք նուիրական մարապուներու յիշատակին կանգնուած կրօնական չէնքեր են, և որոց վրայ տատրակներու ու հաւփալներու երամներ կը թառչին։ կամ թէ կը լսեցընէին գիշերուան երգերը պարտէզներուն մէջ, արդեսեան չրհորներէ ձեւացած վտակներուն եզերքը։

Մարդ կը լռէր և կ՚ուզէր մտիկ ընել տակաւին, երբ արդէն ճանապարհորդն այլեւս չէր խօսեր (*)։

Ա.յն օրն յորում սուրբը աւազի մենութեանց մէջ Մալտարի առջեւ կը խոնարհէր, գօրականք և ժողովուրդք խառնուած էին Ուարկլայի սպիտակ մէկ դրան առջեւ, որ ծեծուած հողէն (pisé) չինուած էր, որու գովի պատերն կիսովին փլած էին և որու եռեւէն կը տեսնուէին բարձր արմաւենիներ, որոց ծայրի փունջը նիզակի մը սայրին անցած գլխու մը կը նմանէր։

Ամենքը միաբերան կ՚աղաղակէին և կը գոչէին։

Կարծես տեսակ մը խռովութիւն կար. և արդարեւ չատ կը նմանէր անոր։

Ոսկրուտ դիմաք, փայլուն աչերով գարշելի էակ մը պատառատուն պուրնուզի մը մէջ պլլուած, որու ծակերէն կերեւար կրակէ այրածի նման սեւորակ մարմը, քարի կոյտի մը վրայ ելեր էր, և հոն, բազուկներն յերկինս ամբարձած, ղշաձգային շարժուձեւերով ու ձայնիւ կը գոչէր։

—Աստուած քաջասիրտները կը սիրէ։ Աստուած կ՚անարգէ զանոնք, որք կանանց պէս վատ և անսիրտ են։ Ինչո՞ւ կը յապաղիք նորա ցասումն և արդարացի վրէժն

(*) Տե՛ս 1863 տարւոյ Ապրիլի Երջանն։ Ճանապարհորդութիւնք ի Ժերիվիւէ յՈւարկլա, ի վ. Քօլօնիէօ հրատարակեալ։

յադեցնելու։ Ինքզինքիդ խնամատուն կը համարիք, դո՛ւք որ անմիտ էք։ Առ ոչինչ կը գրէք արդարութիւնն այնորիկ, որ ամենազօր է և որ թշնամւոց պատժուիլը կ՚ուզէ։ Քասպաճին մէջ ի՞նչ կ՚ընեն այն բանտարկեալք, որոց կը խնայէ ձեր տխմար գթութիւնն. հողուն տակ, գերեզնք չրջապատող մթութեան մէջ, ձեզ ջախջախելու, ձեր կանանց երեսը տեսնելու, ձեր զաւակները գերի տանելու միջոցը կը խորհին։ Աւե՛ք, որդի՛ք Աստուծոյ... վրէ՛ժ և մահ թշնամւոց։

Եւ երբ նա, թեւերը խաչաձեւ, յափշտակուած կը մնար և դաշոյնի հարուածներով յօշոտեալ կուրծքին և վզին վէրքերը ցոյց կուտար, կատաղի գոռումներ պատասխանեցին իրեն։

Կարծես վայրի գազաններ էին որ կը մռնչէին, բոբրենիներ էին որ կ՚ոռնային։

Տակաւ առ տակաւ արեան ծառաւը կը տիրէր բոլոր այս մարդոց, որոց բռունք կը բարձրանային եաթաղաններով զինեալ։ Մահ։ Մահ։ Այս բառը կը վաղէր, կը բարձրանար, եւս քան զեւս կատաղի զօրութիւն մը կ՚ստանար։

Այո՛, վէց ամիս աւելի էր որ թակարդներու կամ ճակատամարտներու և յարձակմանց մէջ բռնուած գերիներ քասպաճին մէջ կը պահուէին... Ինչո՞ւ... Իրը պատանդ... Բայց միթէ Ուարկլայի —Դվնոյ քաղաքին— բնակիչք կրնայի՞ն թշնամւոց հետ դաշնակցիլ... Ինչո՞ւ նոցա գլուխները չէին անկուած այն երկաթեայ նիզակներուն ծայրն, որոց սայրերը եղկիւրներու նման դուրս ելած էին պատին շաղախէն։ Ինչո՞ւ համար ադեաւներն արդէն նոցա աչքերը չէին վտրած և նոցա

միսը չէին յօշոտած։

Մարապուն իրաւունք ունէր։ Եւ երբ նոր պետ մը պիտի ընտրէին, պէտք չէ՞ր արդարութեան գործերը կատարելով գոհացնել զԱստուած, որ զոհ կը պահանջէր։

—Ի մահ։ Ի մահ. Ի քասպա՛ն... թշնամիներն սպանե՛նք...

Այժմ աղաղակն ընդհանուր, որոտագին, վայրագ և գարշելի էր։

Այն առեն մարապուն —զգալով որ վայրի գազաններն վերջապէս արթնցեր էին— սուր ճիչ մ՚արձակեց... և մէկ ոստմամբ ամբոխին մէջ ցատկեց։

Ամենքն անոր չուրջը կը խռնէին և ակնածալիր չերմեռանդութեամբ մը վառուած էին։

Կ՚ուզէին անոր հագուստներուն դպչիլ։ Եթէ մատերնին նորա մարմին դպեր, ամբողջ կեանքերնին երջանիկ պիտի ըլլար։ Նա եւս սուրը մ՚էր և կրնար սուրբերու յատուկ ապաթոչը կրել, եթէ խռնարհութեամբ մերժած չըլլար այս փառասիրութիւնը։

Տանեւութերորդ դարուն Մէսմերի մագնիսացեալ վրայ տեսնուած գրգռման նման գրգիռ մը այս ամբոխը կը վառէր։ Ոմանք յափշտակուած էին։ Կանայք ոմանք գետին կ՚իյնային և չղաձգօրէն սոսկալի աղաղակներ կ՚արձակէին։ Այլք նոցա մարմինն վրայ կը կոխոտէին, գիտնալով որ Աստուած տառապողները, չարչարուողները կը վարձատրէ։

Գարշելի բանդադուշանք մ՚էր այս։ Մարապուն իր վախ և ճկուն թեւերովն ամբոխը բանալով յառաջացեր էր և կը գոչէր. Աստուա՛ծ, Աստուա՛ծ, ի մահ...

Եւ իւր եռեւէն կը քաշէր այս մարդկային ամբոխն, որ մրրկին չնջոցին յուզեալ ծովու ալեաց նման գրգռուած էր։

Դռնէն անցեր էր և պատին եղերքէն կ'երթար, դիտնալով որ քասպահ հասնելու համար հարկ էր Ուարկլայի վրայ գտնուած բլուրն երթալ։ Ոչ ոք կը կեցնէր զինքը. և ամբողջ մարմինը կը սարսռար այն սպասնութեան գաղափարով, որով ուղեղը լի էր։

Երկնից չէկ երանգներուն տակ այս խլրտուն ամբոխն դժոխքէն վախած կը թուէր. անծանօթ ցեղի մը որոշիչ նշանն եղող կապոյտ սեւ Արաբէններ, երեսնոսի գոյն խառիչիկներ, վախ ազդաներով թշուառ Արաբներ, որոց մերթին տակ ոսկր ու դնդեր կայ միայն, Մօզապիթներ, որք շահու նպատակաւ Ուարկլա եկած էին, թէեւ ամէն մարդ կը յիշէր տակաւին նոցա կոտորածն, այժմ ամենքն ալ երենց աւելութիւնը մոռցած էին։

Եւ ցնորած ամբոխի մը ահռելի գալարմանց նման չղաձգութիւններ ու աղաղակներ կ'արձակէին։

Ամէն ինչ զէնք մը կը դառնար նոցա ձեռաց մէջ։

Ոմանք դանակներ ունէին, այլք հրացաններ. մեծ մասը փայտի կտորներ, որոց ծայրը կրակի մէջ կարծրացած էր, կամ թէ ահագին կակաոնեներու բեկորներ, որոց ծայրը դաշոյնի նման սուր է և որք երկաթեայ կարթերու նման մարդուս միսը կը պատռեն ու կ'բսպանեն։

Եւ ամենքն ալ կ'սպառնային, վայրագ կատաղութեամբ կը ցնծային...

Ո՛յք էին նոցա կատաղութեան մատնուած զոհերն։

Ա՛յս վայրկ չգիտէն առաջ բանան երթանք։

ԺԹ.

Ժօլիէր հարիւրապետը.

Թագաւորաց միջնաբերդն եղող քասպահին տակ, քան ուռք խորութեամբ հողուն ներքեւ սեւ, խոնաւ և խոտաքարի մէջ փորուած բանտեր կան։

Երկաթի դռներ նոցա մուտքը կը պաշտպանեն։ Հոն երթալու համար հարկ է անելանելի բաւիղներ ձեւացընող գետնափոր ճամբայներու մէջ մտնել։ Շատ անգամ մատնութիւնն ու սպասնութիւնն անկից ներս մրտած են, երբ այսօրուան իշխանը կուգար պատժել նախկուան իշխանը՝ երկար առեն գինքն իշխանութեան վառքէն զրկած ըլլալուն համար։

Ա՛յս բանտերը լի են։ Քիչ մը վերջը նոցա ամենքն ալ պիտի պատռինք։

Ա՛յժմ կանգ առնունք մէկ հատին առջեւ, ամենէն խոր, ամենէն սոսկալիին առջեւ։

Երիտասարդ մը հողուն վրայ տարածուած է. պատին դամուած չղթայներ իւր երիթներուն անցած են. այնքան դյժաբեկ է որ չկրնար շարժումի մ'ընել։

Պարապ ձգուած ջրհորի մը վրայ բացուող լուսամուտէ մը իւր թոքերն ծանր ու նեխեալ օդ մը կը շընչեն...

Ա՛յս մարդը ցնցոտիներ հագած է, բայց տակաւին Ֆրանսական բանակին նշանները կրնան ճանչցուիլ։ Մէկ ուսէն ուռնցի կտոր մը կախուած է, և մէջքին կապուած է գօտի մը, որմէ ժամանակաւ սուր մը կախուած ըլլալու էր։

Լռութիւնը սոսկալի է. մթութիւնը դրեթէ կատարեալ է և մենութեան սոսկումն կը կրկնապատկէ։

Ցանկարծ երկաթի կռինչ մը կը լսուի։ Դուռը կիսովին կը բացուի, և տակաւին տաք, սակայն նուազ նողկալի օդի յորձանք մը մառանին մէջ կը խուժէ։

Սեւ մարմին մը կ'երեւի, կիսովին ներս կը մնայ, մնով լեցուն աման մը կը դնէ գետինը, կ'առնէ առջի աւուր որուած ամանը, որու չէ դպչուած, մի քանի անհասկանալի բառ կը մրմնջէ, և ապա կ'անհետանայ։

Եւ մութն ու լռութիւնը վերստին կը տիրեն այս առանձնութեան։ Այսպէս պիտի տեւէ դեռ եւս քանի և չորս ժամ...

Սակայն մարդն այս աղմուկը լսելով՝ ցնցուեր էր։ Շարժում մը չէր ըրեր. և դուռը վերստին դոցուելով՝ ինկեր էր այն խոր վհատութեան մէջ, որ անձին լքուածն, յուսահատումն դէպ ի մահ սահիլն է...

Ամէնէն հազիւ տասը տարի առաջ այս մարդը, որ հարուստ ու պատուաւոր էր, կրած անուամբը կը պարծենար, սիրտը համարձակ լի էր հօրն համար և սիրով՝ մօրն համար։ Բարիզեան կեանքէն անցաւ անփոյթ և բնածին բարութեամբ, և ո՛չ չարին կը հաւատար, ո՛չ ալ թշուառութեան։

Զարին ինչո՞ւ հաւատար։

Հայրը, որ ընդհանուր սպայ էր, իւր մատուցած ծառայութեանց օրինաւոր փառքը կը վայելէր։ Իւր մայրը, որ հեզ և պաշտելի արարած մ'էր, սիրոյ և բարութեան վրայ միայն կը մտածէր... Ամէն երիտասարդն ուսկից որ անցնէր՝ համակիր խօսքեր, գովեստից մրմունջներ միայն կը լսէր։

Ցանկարծ չանթի հարուած մը պայթեր էր այս կապոյտ երկինքէ մէջ, ուր փոթորիկն անծանօթ էր։

Իւր հայրն առենակալաց դատարանին առջեւ մատնիչ և մարդասպան կոչուած էր... Բաց յաստի այն հարստութիւնը, որմէ կ'օգտէին թէ՛ կինն և թէ՛ զաւակը, գարշելի կերպիւ գողցուած էր ամենէն սոսկալի ոճիրներու միջոցաւ, վատութեան և մատնութեան ոճիրներ։ Նա ինքզինքը կոմս... Մօրսէրֆի կոմս կը կոչէր. և այս տիտղոսը անուանարկութեան մը արդիւնք էր։ Միլիոններ ունէր։ Այս միլիոններն արեան մէջէն ժողուուած էին... և այս արիւնն իւր բարեբարիւն, իւր երկրորդ հօրն արիւնն էր...

Այժմ Ուարկլայի պետնախոր բանտին մէջ հիւծող մարդն էր Ալպէր տը Մօրսէրֆ, որդին այն ֆրանսայի առենակալին, որ գլխուն մէջ գնդակ մը տեղատուրելով՝ ինքզինքը պատժեր էր... Բայց նա որդին էր նաեւ Մէրսէտէսի, այն կնոջ, զոր իւր սիրեցեալ Ցանթէսէն կորզեր էին... այժմ ծօլիէթ հարիւրապետան էր նա, Ֆիրիկէի դիւցազնաց մին, անօթի, պարտեալ, ոչ ժառապատ, մահուան կ'սպասէր... և կ'ուզէր ինքն ի մահ դիմել, վասն զի մահը շուտ չէր գար։

Իւր տեսողութիւնն ու միտքը մթնցնող դիշերին մէջ՝ Ալպէր, իրր առնչանքէ ազատող մարդ մը, որ կուգայ այցելել այն գերհնի սենեակն, ուր չարչարողք իւր անդամներն խորտակած են, անդադար կը տեսնէր այն սոսկալի տեսարանները յորս իւր ուղեղին ու խղճին բոլոր նեարդները մի առ մի մահուան սոսկումներն զգացեր էին...

Ինքզինքը բարկութենէն և վշտէն խենթեցած կը տեսնէր երբ Մօնթէ-Քրիսթօն ի մարտ հրաւիրեր էր, նորա արեան մէջ լուալու համար հօրն երեսին արձակուած նախատինքը... յետոյ մենամարտութիւնն... ո՜հ, այն հրաւէրին և մենամարտութեան մէջ տեղ ի՜նչ ցաւագին տեսարան մ՚անցեր էր... Ալպէր խնացեր էր որ իւր հայրն յանցաւոր է, թէ անոր վրայ լինկած ամբաստանութիւնը ճշմարիտ էր... և իւր անձնական պատկառութիւնը քաւելու համար մենամարտութեան տեղին եկեր և առ ոչինչ դրելով Բարիզու անմիտ արհամարհանքը, որ կը ծաղրէ ինչ որ մեծ է, Մօնթէ-Քրիսթոյի առջեւ խոնարհեր և ներումն խնդրեր էր անկէ... Դեռ ամենն այս չէր... ապարանք վերադարձեր և հոն սոսկալի պայթիւն մը լսեր էր։

Այն հայրն, որու համար ինքզինքը զոհեր էր, ինքզինքը պատժեր էր։

Դեռ ամենն այս չէր. նա իւր մայրը կը պաշտէր, զիտէր որ բարի և վեհանձն կին մ՚էր նա, և հարկադրուեր էր անոր ըսել.

—Մա՛յր, ալ բան մը չունինք, ո՛չ հարստութիւն և ո՛չ ապաստանարան։ Ձեզի համար չքաւորութիւն, ինձի համար անպատուութիւն է այս։ Եւ սակայն երդուի՛ր ինձ որ պիտի ապրիս և ես ալ կ՚ապրիմ։

Ի՜նչ սրտակեղեք տեսակցութիւն։ Եւ սակայն ի՜նչ գերագոյն մխիթարութիւն էր այս երկու յուսահատելոց համար զգալ որ իրենց սրտերն համաձայն կը բաղխէին։

—Թողէ՛ք որ ձեր ապագայ երջանկութեանը պարապիմ, ըսեր էր Ալպէր, այսպէսով դժուա պիտի կրկնապատկէք։ Ալճէրի պիտի երթամ։ Վեց տարի չանցած կա՛մ սպայ պիտի ըլլամ և կա՛մ պիտի մեռնիմ։ Եթէ սպայ ըլլամ, ձեր վիճակը կ՚ապահովուի, մայր իմ։ Նոր անուն մը պիտի առնում, որով երկուքս ալ պիտի պարծինք... Եթէ մեռնիմ, այն ատեն դուք ալ պիտի մեռնիք, և մեր աղէտք պիտի վերջանան։

Եւ խեղճ մայրն այս վշտագին բաժանման հաւաներ էր։ Իւր հաւանութեամբն ուզեր էր ապագայ մը չինելու վերջին բաղդը թողուլ իւր պաշտեցեալ զաւկին...

Մօրսէրֆի կոմսուհին, վերստին Մէրսէտէս ըլլալով, եկեր էր Մարսիլիոյ խորը թաղուելու։

Զօրականն Ժօլիէթ իւր փառաւոր ապագրէզն սկսեր էր։ Արդարեւ կարծես Աստուծոյ, ցասումն հանդարտեր էր և թէ նորա յաւիտենական արդարութիւնը չէր ուզեր հօրը ոճիրներուն համար որդին հալածել։

Այո՛, Ալպէր յանդգնութեամբ, քաջութեամբ իւր մեղքը քաւեր էր։

Կրակի ատեն միշտ առաջին էր, և ապրելու երանութիւնը վերստին ձեռք ձգելու համար մահն անարդեր էր։

Ամենքը կը սիրէին զինքը և կը հիանային իւր վրայ։ Մի քանի տարուան մէջ ստորին աստիճաններն անցաւ։ Ասկից երեք տարի առաջ Ալպէր կրցեր էր իւր մօրը դրել. «Ալպէր տը Մօրսէրֆ մեռցուած է. Ժօլիէթ հարեւրապետն է որ կ՚ապրի։»

Դեռ աւելին կար։ Թող ծաղրողներն ուսերնին ցընցեն և հեգնեն այն պատուանշանները, զորս ինքեանք չեն կրնար ստանալ. Ալպէր ճանդանէ տուփի մը մէջ դնելով մօրը ղրկեր էր այն պատուանշանը, զոր Ալճէրիի

կառավարիչն իւր կուրծքին վրայ դրեր էր . . .

Սերելի մայրն ուրախութենէն լացեր և ծնրադրեր էր այս պատուանշանին առջեւ , որ անցեալը կը քաւէր և կարծես անպատուութեան դերեզմանին վրայ դրոշմուած կնիք մ՚էր :

Ո՛րքան կը սիրեր այս զաւակն , որ համբերելու դիւցազնութիւնն ունեցեր էր , և իրենց գլխուն եկած աղէտէն վատաբաղ խոյս տալով՝ ինքզինք չէր ապաններ...

Ալպէրը այժմ հարիւրապետ էր , պատուանշան ունէր , և կրնար բարձր ի գլուխ մտնել վերստին այն ընկերութեան մէջ , որ տակաւին հետ լրբութեամբ կը վարուի , իսկ հզօրին առջեւ կ՚սարկանայ . . . քիչ առենէն պիտի վերադառնար , և այն առեն երկուքն ալ պիտի վերակսէին այն կեանքն , որ յանկարծ ընդհատուեր էր :

Վերտոին կ՚ընդունէր այն դեղաճիճաղ , խաղաղ և անամպ ապագայն , զոր կեանքը կը խոստանայ չափաւորներուն . . .

Աւա՛ղ , այս անգամ եւս այս յոյսերուն կոյտը փլեր էր , անգամ մը եւս այս ուրախութիւններն ցնդեր էին այն սեւ և անյատակ երկրին մէջ , ուր պատրանքները կը կորսուին . . .

Ահա այն առեն էր որ Մէրսէտես , վերջին մէկ յոյսը ճնացած ըլլալով , Մոնթէ-Քրիսթոյի գրերը էր այն լակոնական և սրտառուչ նամակը . «Եկէ՛ք , վտեւս կը մեռնիմ :»

Եւ ահա այժմ Թոլիէթի հարիւրապետը կը դոնէնք ճակատագրին ձեռաց տակ ճնշուած , երկաթեայ չղթայի մը կապուած . . . և երբ կը խորհի և կը մտածէ մեռնել , իւր գլուխն ուղղ զգիր ամբոխին արձակած մահուան աղաղակները չլսեր . . .

Ա՛յս անգամ ալ վերջն էր : Կորսուած էր :

Տարօրինակ զուգադիպութիւններ կան :

Ճիշդ այն օրը , որ առանց իւր գիտնալուն իւր տանջանաց օրը պիտի ըլլար , անակնկալ կերպարանափոխութիւն մը տեղի ունեցաւ իւր վրայ :

Երեք ամիս էր որ Ուէստ-Զէլի կերճին մէջ Արաբներն իրենց վրայ յարձակեր էին . իւր քաջ զինակիցները չուրջը ինկեր էին . զինքը բռներ , կապեր և անապատէն անցուցեր էին : Ամէն վայրկեան կը կարծէր թէ մահը պիտի հասնէր : Գիտէր որ այս չոհերը գերի չեն բռներ . տեսած էր որ նոցա հարաղանները իւր զինուորաց վիզը կը ծակէր , տեսեր էր որ թշուառականներն իրենց թամբերուն գունդին կը կապէին նոցա արիւնոտ գլուխներն , որք աւազին վրայ արեան հետքեր կը թողուին :

Իրեն վերապահեալ վիճակին վրայ կրնար տարակոյս ունենալ :

Իբր ճշմարիտ զինուոր , իւր վերջին մտածումը մօրն ու Ֆրանսայի ուղղեր էր :

Ցեղոյ համբերութեամբ սպասեր էր , և պատրաստ էր մեռնիլ , ինչպէս որ պէտք է ըլլայ քաջ զինուոր մը :

Եւ սակայն ժամերը կ՚անցնէին :

Ալպէրը այն հուժկու ձիերէն մէկուն կռնակը կապուած , որք անապատին տօթն առ ոչինչ կը գրեն , մինչ մէջ մտնող պարաններուն յառաջ բերած ցաւէն կըզգար որ ուղեղը տակաւ առ տակաւ կը պղտորէր : Իրեն այնպէս կը թուէր թէ դժոխային թատերդութեան մը մէկ դերակատարն էր : Աչերը քօղարկուեր էին , և երբ

կամաց զօրութեամբ կը բռնադատէր զանոնք որ նային, կը տեսնէր իւր թշնամեաց սեւորակ աստուերներն, որք ուրուականներու կը նմանէին։

Ցետոյ վրայն թմրութիւն եկաւ եր։ Ուղեղն անյաղթելի անզգայութեան մը մէջ ինկաւ եր, և այլեւս ղինքը տանող ցնորական արագութենէն ուրիշ բան չէր զգար։

Վերջապէս ամէն բան անհետացաւ եր։ Նուաղում, թերեւս իսկ մահ էր այս։

Երբ ինքզինքին եկաւ, այն մութ բանտին մէջ էր, ուր գտանք զինքը։ Ոտքերուն չղթայներ անցուցեր էին։ Շուրջը բնաւ աղմուկ մը չէր լսուեր։ Մտածեց թէ արդեօք գերեզման մը չէ՞ր այս։

Բայց ամբողջ քաջութիւնն արթննալով՝ սկսաւ աղաղակել, մարդ կոչել։

Մտածեցէք թէ կրակոտ, հուժկու մարդու մը համար այս մենութիւնն, անշարժութիւնը, լռութիւնը ի՛նչ տանջանք է։ Լա՛ւ. երեք ամսէ ի վեր բնաւ մարդկային ձայն մը չէր հնչած ականջին։ Միայն ամէն առաւօտ սեւ գերին կուգար։ Ալպէր ի զուր փորձեր էր անոր հետ խօսիլ. արարիրէնը բնաւ պատասխան լաւ խօսելով՝ կը յուսար որ կրնայ միտքն լաւ հասկցնել։

Բայց տեսանենք այն մարդուն խօսած լեզուն ա՞յս էր։

Ալպէր ուղեր էր անոր վրայ յարձակիլ և բռնադատել որ իւր հարցմանց պատասխանէ։ Շղթային շատ կարճ ըլլալով՝ չէր կրցած անոր հասնիլ, և վերջապէս հոգւոյն վրայ ինկեր էր՝ ոտքը գերեզման կոտրած։

Սոսկալի չէ՞ր միթէ բան մը չգիտնալ, ո՛չ ուր ըլլալը, ո՛չ իւր գերութեան ո՛րքան տեւելիքը, ո՛չ ալ ո՛ր ձեռք ինկած ըլլալը։ Ո՛չինչ։

Ամենեւին փոփոխութիւն մը եղած չէր։ Այս աղջամուղջին մէջ մնալուն առաջին վայրկեանէն մինչեւ ցայսօր միեւնոյն անկիւնին մէջ, միեւնոյն հողի կտորին վրայ անշարժ կեցած էր՝ միեւնոյն պատին կռթնած, և իւր միակ զուարճութիւնն էր —այս բառը տաժանելի չէ՞ միթէ— չքնորին ծակէն եկած ճառագայթի մը գոյնին հազիւ զգալի տարբերութիւնը, որ կէս օրին աւելի կարմիր և վերջալուսին աւելի դեղին էր։

Բանտարկեալներ կան, որք գոնէ դատաւորաց դէմ վիճած են, որոնք հարցաքննուած, մինչ իսկ չարչարուած են... Բայց վէճը, ցաւը, ատոնք ալ բան մ՛են։ Հոս ոչի՛նչ, մի՛շտ ոչինչ։

Աշխարհի մէջ կա՞ր այնքան հզօր հոգի մը, որ կարենար այս սոսկալի բանտարգելութեան դիմանալ։

Եւ սակայն Ալպէր երկար, շատ երկար ատեն այժաթափ չէր եղեր։ Կը յիշէր որ մայրը խօսած էր երբեմն անանկ մարդու մը վրայ, որ տասնեւչորս տարի Իֆի դղեկին մէկ դեհնափորին մէջ բանտարկուած մնացեր էր։

Բայց յաստի միթէ մարդ կը յուսահատի՞ երբ երեսուն տարեկան է։ Ո՞չ ապաքէն վատութիւն մը, դասալքութիւն մ՛է այս։

Ալպէր բառին բուն նշանակութեամբը քաջ էր, և անգործադրելի, անկարելի բաներն իսկ պաղութեամբ կը դիտէր։

Տասնեւչորս տարի բանտարկուած մնացող մարդը վերջապէս վախեր էր։

Ինչո՞ւ ինքն ալ չփորձէ կրնար փախչիլ, փախչելու խորհուրդը բանտարկելոյն առաջին մխիթարութիւնն է։

դոգցես անով վերստին կը մտնէ իսկական կեանքի մէջ։

Ալպէր իւր դէմ հակառակորդ չէր գտներ, դատաւոր չկար որու դէմ մաքառէր, դահիճ չկար զոր անարգէր։ Արդ այն մթութեան, այն խաւարքարին, այն դերեզմանին պէտք էր յաղթել։

Երբ Ժօլիէթ հարիւրապետան այս գաղափարն յղացաւ, աղջամուղջին ժպտեցաւ։ Իրեն այնպէս կը թուէր թէ այդ աղջամուղջը, լուսաւորուելու էր։ Ալեւտութիւնը որքան ալ որ հեռաւոր ըլլայ, հորիզոնը լուսաւորող վարոսի մը նման է։

—Դործի սկսի՛նք, ըսաւ ինքնին։

Ա՛հ, ո՛րքան դիւրին է հաստատամտութեամբ գինուիլ, ամէն դիմադրութիւն աչք առնել, ամէն արդելք կանխատեսել և բաւել ինքնիրեն. «Դործի սկսի՛նք. ամէն բանէ պիտի յաղթեմ...»

Ինչո՞ւ, վասն զի մարդ նոյն իսկ կռուելու յափշտակութեան կը վստահի։

Բայց երբ մարդ Ժօլիէթ հարիւրապետին նման առջեւ օրէն հասկնայ թէ խաւարքարն այնքան կարծր է որ, պողպատեայ դործիք մ'իսկ չկրնար ծակել զայն, թէ ոտքին դամուած շղթայն այնպէս մը կռուած է որ, մարդկային զօրութիւն մը չկրնար խորտակել զայն, և թէ, եթէ յաջողի իսկ զայն խորտակելու, այնպիսի պատեր պիտի գտնէ դէմին, զորս անկարելի է վերցնել՝ երբ այն միակ լուսամուտն —ուսկից թեթեւս կարելի պիտի ըլլար դուրս ելլել— այնքան բարձր է որ, եթէ տասն հոգի միւսանց օգնեն՝ հազիւ կրնան հասնիլ անոր. երբ բանտապահին հետ ո՛չ վարպետութիւն, ո՛չ կաշառք և ո՛չ բռնութիւն կարելի է գործածել. երբ

մարդ վերջապէս կը հասկնայ թէ միշտ, միշտ միեւնոյն դուռը, միեւնոյն դռինչն հանելով իւր ծխնիին վրայ պիտի դառնայ. երբ մարդ իւր անկարողութեան համզուի կատարեալ, բացարձակ և անժխտելի կերպիւ...

Ա՜յն ատե՛ն, ո՛հ, այն ատեն յուսահատական խորհուրդին մ'արձակելով հողուն վրայ կ'ինայ։ Եղունդներովը կուրծքը կը պատռտէ և արտեւանանց մէջէն խոշոր արցունքներ կը հոսին խոռոչացեալ այտերուն վրայ։

Ժօլիէթ հարիւրապետին ալ այսպէս եղեր էր։

Ոչ ոք կրնար ենթադրել թէ նա դիւրաւ վհատած ըլլար։ Նախ և առաջ բանտարկեալ մը ամենափոքր յոյս մ'իսկ երթէ տեսնէ՝ անոր կը պլլուի։ Բայց յաստի Ալպերը հղօր հոգւոյ, սուր մտաց և ճարտար ուղեղի տէր էր։ Մօրն ու հայրենեաց կրկնակի յիշատակներն այժ կուտային իրեն։ Վերջապէս կենացը տասը տարին սիրով կը զոհեր վրէժ առնելու համար այն վատերէն, որք չհամարձակելով իբր անվնհեր թշնամի անարգել զայն, կը կարծէին թէ բանտարկութեամբ և մենութեամբ կրնան ղինուորի մը քաջութիւնը խորտակել։

Եւ սակայն հակառակ բոլոր այս բաներուն, եղաւ օր մը որ —անկից ի վեր ալ դրեթէ չարաթ մ'է— այսպէս հասկցաւ —այո՛, աներկբայելի կերպիւ հասկցաւ— թէ ամէն ճիչ, ամէն փորձ անօգուտ է։

Անկարելի էր իւր չղթայն խորտակել, մաշեցնել, դալարել... անկարելի էր երկիներէն օղակներէն պատռել... անկարելի էր եղունդներովն պատին վրայէն ամենափոքր քարի կտոր մը ըրջնել... անկարելի էր մինչեւ պատուհան հասնիլ. ամէն բան անկարելի էր։

Երեք ամիս անընդհատ ճգնելէ յետոյ, —և այս ե-

բեք ամուսան մէջ բանտարկեալը վայրկեան մը չէր կրնար ապրած. ամէն բան երեւակայեր, ամէն բան փորձեր էր —այժմ անժխտելի ճշմարտութեան մը դէմ կը գտնուէր, այսինքն թէ ամէն աշխատութիւն, եթէ տասը տարի, հարիւր տարի իսկ տեւէր, անօգուտ էր։

Ուրեմն ի՞նչպէս փախչելու էր. միակ դուռ մը ճաճոցեր էր, այն էր մահը...

Եւ Ալպէր որոշեր էր մեռնիլ...

Ա,յս մասին բացառական ճիգ մը միայն հարկ էր. այս միջոցը կարելի էր։

Մինչեւ այն ատեն կ'ուզէր այժը պահել, մինչեւ իսկ վերջնական պարագային համար կ'ուզէր աւելի եւս զօրանալ։ Ուստի անյագութեամբ կերեր էր ամէն բանտապանին բերած կերակուրն, այսինքն խորոված միս ու քուսքուս։

Ա,յժմ որոշեց այլ եւս չուտել։ Կ'ուզէր անօթութենէն մեռնիլ։

Սոսկալի ու յամր մահ մ'է սա, որ ուրիշ ամէն տեսակ անձնասպանութենէն աւելի կամաց յարատեւութիւն կ'ուզէ։

Եւ ինքը տեսակ մը ուրախութեամբ յանձն առաւ մաքառիլ այն ցաւոց դէմ և համբերութեամբ մտնել ոչնչութեան մէջ։ Իւր քաջութեան վերջին ապացոյցը պիտի ըլլար այս։

Իւր թշնամիք պիտի հասկնային որ ներքինք կ'արհամարհէր, վասն զի ներին ամէն օր անեղծ պիտի դըներ առջի աւուր բերած կերակուրներն։ Ո՞վ գիտէ, թերեւս այսպէսով իւր դահիճները երկնչէին թէ մի գուցէ իրենց գոհը ձեռքերնէն պրծի։ Ո՞վ կրնայ ըսել

թէ տակաւին ի՛նչ գաղափարներ անցան այս ուղիղէն, զոր կը գրգռէին այժմ կարօտութիւնը, անօթութիւնն և այն սոսկալի տենդը, որ պարապ ստամոքսին ճմլուտմը այնքան ցաւառիթ կ'ընէ։

Ա,յս անգամ երբ դուռը փակուեցաւ, Ալպէր գլուխը վեր առաւ։

Տեսակ մ'անդորրութիւն կ'զգար։ Ա'լ ցաւ չէր իմանար. ընդհակառակն ամբողջ մարմնոյն վրայ ընդհանուր ափոփումմ մը եկած էր։ Ելաւ և յաջողեցաւ մէկ ծունգի վրայ կայնիլ։

Մինչեւ իսկ երկու օրէ ի վեր գանգին մէջ տիրող սոսկալի պտոյտը դադրեր էր։

Ժպտեցաւ։ Անշուշտ մահն էր որ կուգար ազատել զինքը։

Ո՞չ ապաքէն բնութիւնը չատ անդամ անուշութեամբ կ'ամոքէ այն անձին ցաւերն, որ առ ինքն պիտի վերադառնայ։

Ալպէր երկու ձեռքերը միացուց և ցած ձայնիւ բսաւ.

—Ով մայր իմ, ներէ՛ ինձ...։ Ընդ հուպ...ընդ հո՛ւպ պիտի գտնենք զիրար...

Ցաջողեցաւ բոլորովին ոտք ելլել և պատին կռթնեցաւ, գոգցես ուղելով իրր զինուոր կանգուն մեռնիլ։

Եւ հոն կեցած էր երկու թեւերը կուրծքին վրայ ծալած, աչերն այն աղջամուղջին յառած, որու մէջէն նոր արշալուսի մը ճառագայթումը կը տեսնէր։

Ոգեւարները սասանկ տեսիլներ կ'ունենան։

Անհուն ծովու մը հորիզոնին նման տարտամ հեռանորութեան մը մէջ կը կարծէր տեսնել մօրն անուշ դէմքը, որ ղինքը կը կոչէր... ձեռքերն իրեն կ'երկընցնէր... ղինքը կը խրախուսէր...

Եւ ահա յանկարծ պատին եռուէն սոսկալի և ժոխ աղմուկներ լսուեցան...

Մարդասպանք մարապուին առաջնորդութեամբ դանանափորը կը մտնէին և կուգային իրենց արիւնկղութիւնը ի գործ դնելու...

Ժօլիէթ հարիւրապետն իր վրայ ձգացած ամբողջ ոյժն ամփոփեց.

Ձանչցաւ այս մահուան աղաղակները, ղրօս պատերազմի առեն յաճախ լսած էր...

Դահիճներն էի՛ն։

Ո՛հ, ուրեմն... պէտք չէ որ Ֆրանսայի պինուոր մը նոցա առջեւ ոտք մը պէս տակառ երեւի։

Կամաց անհաւատալի ճիգ մ'ընելով՝ յաջողեցաւ ոտքի վրայ կենալ։ Արիւնն այտերն ու ուղեղը խուժեցմահուան առջեւ արհամարհոտ պիտի դանէին ղինքը...

Երկաթեայ դրան հարուածներ սկսան տրուիլ, երկաթեայ ցեցերով ու ձողերով կը յարձակէին տակուն վերակերուն դէմ։

Արդեօք պատրա՞նք մ'էր։ Այս խառնաչփոթութեան մէջտեղին Ալպէր յանկարծ դիտուն վրայէն անսովոր աղմուկ մը կը լսէ... կը դառնայ և մարդկային դէմքի մը ձեւը կը տեսնէ հորին բերնէն... և ձայն մը կը դոչէ երեն.

—Հարիւրապե՛տ, հարիւրապե՛տ, պէտք չէ մեռնիլ։

Այս պահուս դուռն յարձակողաց ճիգերէն կը խորտակուի և կատաղեաց ամբոխը դանանափորը կը խուժ։

Ի.

Աւելուած առիւծի դիմ.

Ջորս օրետ երթանք։

Շէպքայի սարտաւաներուն վրայ, որք Ուարկլայէն չուրջ վաթսուն փարսախ հեռու են, ահագին կարաւան մը իջեւանած է։

«Այս սարտաւաներուն նման ախուր բան չկայ, կըսէ Ջօլճնիէօ հրամանատարը։ Գետինը սահուն ու սիւ ժայռերու սալարկ մ'է, որու վրայ ցանուած են կոտրած քարերու կոտրուանք. կարծես լավայի հող մ'է։

Մարդու աչքն անհուն հորիզոնին վրայ դարձած առեն՝ կանաչ առունկ մը չդտներ՝ անոր վրայ հանդչելու համար։ Արեւն իսկ այս թուխ մենութիւնը լուսաւորած առեն կարծես փայլը կը կորնցնէ և ախուր գոյն մը կուտայ դաշտանկարներուն։ Մարդ ինքզինքը մահուան երկրին մէջ կը կարծէ։

Մօնթէ-Քրիսթօ իր վրաններն հոն զետեղած է։

Պօն հասածին պէս նա ինքզինքն առջի մարդն զգացեր էր; այն հին օրերու մարդն, երբ գիւտարութիւնք նորա գործօն կարողութիւնը կը հարիւրապատկէին։ Գիտէր որ հոգւոյն վրայ պատասխանատուութիւն մ'ունէր կատարելու, վասն զի մօր մը —և ի՛նչ մայր— խոստացեր էր որդին դարձնել երեն։

Ժամանակ չկորնցնելը բան մը չէր։ Բայց ժամանակը կը տեսնէր որ իր կամքին հնազանդի, կերպիւ իւիք բռնադատել զայն որ իր կամքին համաձայնի, հորիզոնն հարկադրել որ մօտենայ, հեռաւորութիւնն պզտ

տիկնոջ, ահա այս բաները ընել պէտք էր։

Եւ Մօնթէ-Քրիսթօ իւր եռանդեան և ոսկւոյն պ-
բութեամբ ամէն արդելք բարձեր էր...

Ցաման եկեղեցին իւր հարիւր ժամ անցած էր,
և ահա կարդաւորեալ կառաւան մը ճամբայ կ'ելլէր դէպ
ի անապատն...

Կառաւան բաւածն ի՞նչ է։ Լաւ գիտէ՞ք...

Իւր մարդոց վրայ առելցուցեր էր նաեւ հարիւր
հատառամիտ ձիաւոր, որոց իւրաքանչիւրն երկրորդ
ձի մ'ալ ունէր։ Առնցմէ զատ տիկերուն, ուտեստն-
բուն, ջրոյ, մթերաց փոխադրութեան համար ութ հա
րիւր ուղտ։ Ինքն անձամբ հսկէր էր բոլոր այս պատ
բաստութեանց այն անվրդով հանդարտութեամբ, ո
իւր ոյժն էր, այն յատակ տեսողութեամբ և եռանդու
հրամանատարութեամբ, որու ոչ մարդկէկ կրնային դի
մադրել և ոչ իրք...

Ոմանց ծուլութիւնը զրդռեր, այլոց ընչաքաղցու
թիւնն յափեցուցեր և ամենէն հնազանդութեան եր
դում պահանջեր էր։ Յետոյ մեկնելու նշանը տուե
էր յանդգնութեամբ և արհամարհելով այն անծանօթ
որու կը յանձներ ինքզինքը — և իւր ամենէն թանկա
գին ինչքն, զէնքերնա...

Ինքն առջեւէն կը քալէր քոմպ ունենալով տղայն, ի
վտանգն այս անմեղ մանուկը արդէն չափահաս մարդ
մ'ըրեր էր...

Ցետոյ Պէրթուչիօ, Ժապօլօ, Քուբա... ամենքն
ղայն աչքերնուն չէին հեռացներ և գոգցես եկեղեցա
ցած էին այն պաղարիւնութենէն, որ ամէն վտանգ
գեր ի վեր էր, այն վսեմ հաստատամտութենէն, ո

պատրութիւն չէր գիտեր։

Ո՞ւր կերթար. ո՞ր կողմ կերթային, Ոչ ոք գիտեր...
Միայն ինքն, աչքը հորիզոնին վրայ յառեր և ըսեր
էր. «դէպ ի հարաւ, միշտ դէպ ի հարաւ...»

Ի՞նչ տարօրինակ յայտնութիւն կ'առաջնորդեր զին-
քը։ Ո՞վ կրնար գիտնալ։

Եւ սակայն որդւոյն հետ առանձին գտնուած առեն
անապատին աշխարհացոյցը պարզեր էր նորա առջեւ,
և մատն Ուարկլայի վրայ դնելով՝ ըսեր էր թէ հոն
պէտք էր երթալ։

Ուան դի գիտեր թէ այն աւազներուն խորը Ու-
արկլայի սրբազան քաղաքն, ովասիսներու դէմքին, այն
վերջին որջն էր, ուր մարդասպանութեան դաւերը կը
նիւթուէին։

Եթէ տակաւին վարանելու իսկ ըլլար, միակ բառ
մը բաւական եղած էր գինքը կատարելապէս համոզե-
լու։

Այդ բառը Քուբայի ըսած անունն էր, Մէհմէտ-
ալին-Ալտուլլահ...

Այն մարդուն անունը, որ արդէն անգամ մը Ֆրան-
սացւոց հպատակիլ կեղծած և անոնցմէ թլէմսէնի իշ-
խան տիտղոսն առեր, և յետոյ յանկարծ աներեւու-
թացեր էր...

Ի՞նչպէս չէր հասկցած թէ այս մարդն այն էր, որ
Մալտար անուամբ ներկայացեր էր իրեն...

Վեհանձն ու զթասիրտ ըլլալով, միշտ կը մոռնար
թէ մարդկային հոգին մատնութեամբ թրծուած է։
Հաւատացեր էր թէ տարաբաղդ մ'էր այն, որու պար-
տաւոր էր օգնել. ուստի իրեն ղրկուած հիւրն ընդու-
ներ էր։

Ա.յս լայնաբաձակ և անպայման հիւբրնկալութեան փոխարէն նախասենեակ մը և սպառնալիք մը կ'ընդունէր։

Մալտաբ իւր խցիկը մտնելը, բացերը էր այն անտուկին որու մէջ գանձեր գիզուած էին և արհամարհանօք թողնելը էր Մօնթէ-Քրիսթոյի սա գերագոյն հրաժեշտը, որ անէծք մ'էր։

—Խուանները կը սպասեն ձեզի։

Հոս փոքր ինչ բացատրութիւն հարկ է։

Հնդիկները իրենց թուկերն ունին, իրլանտացիք իրենց Ջէնեանները, Աբաբացիք իրենց խուանները, այսինքն խորհրդաւոր և բազմաճիւղ միաբանութիւն մը, որ մէկ կամք, մէկ նպատակ ունի միայն, օտարները արտաքսել, թշնամիները ջարդել։

Խուանները, կ'ըսէ Շարլը ժպտալով, ևօթը գանգան կարգի կը բաժնուին, որոց իւրաքանչիւրն կը կրէ իւր հինգապրին անունը, որ սուրբ կը համարուի։

Խորթ անուններ են ասոնք, զորս կը խնայենք ընթերցողաց։ Նոցա մէջէն միայն յիշենք Էսասաուանները և Տէրքաուանները։

Նոցա գլխաւորն իշխան կը կոչուի և ծրագրական տիրապետութեան ահմանէն դուրս կ'ապրի ու կ'իշխէ։ Խուաններըը, որք բացարձակ իշխան, թագաւոր և կրօնապետ են, իրենց միացող հաւատացելոց վրայ բացարձակապէս կը տիրեն և մահու կենաց իշխանութիւն ունին։

Խուաններն —ինչպէս բոլոր դասակից— ցեղերու, միաբանութեանց կը բաժնուին։ Նոցա իւրաքանչիւրին գլուխը մեքքաուամ մը կամ մեծաւոր մը կայ։ Իշխանն անոնց թագաւորն է։ Իրենք ալ ցեղերուն թագաւորն

են։ Իրենք իշխանին կը վերաբերին, որ անոնց հետ միայն կը հաղորդակցի, բայց ընդհանուր դատին ծառայել խոստացող մարդիկ իրենց կը հնազանդին, զանոնք միայն կը ճանչնան և երբեք գերագոյն տիրոջ չեն մոտենար։

Եթէ մեծաւորը արգելք մ'ունենայ, նորա պաշտօնը կը կատարէ Ելքիպը, որ տեսակ մը փոխանորդ է։

Ելքան դեսպանին պատգամաւորն է։ Իրեն յանձնուած է գերագոյն տիրոջ հաղորդել այն լուրերն, զորս վառնպատոր է գրի առնուլ անանկ երկրի մը մէջ, ուր Ֆրանսական իշխանութիւնը կը տիրապետէ։

Սա յոյժ վտանգաւոր պաշտօն մ'է։ Ելքան տակաւին դաղտնաց աւանդապահն է և իրը այն նուիրական է յաչս հաւատացելոց։

Ո՛վ որ կ'ուզէ այս միաբանութեան մէջ մտնել, պէտք է նախ մարմինն ու հոգին մաքրէ պահեցողութեամբ և աղօթքով։ Ճետոյ խորհրդաւոր արարողութեամբ մը, որ անապատին խոր երկնից ներքեւ տեղի ունենալուն մէջ կ'ընէ։

—Կ'երդնուիմ ցմահ հետեւիլ անոնց, որք իմ եղբարքս պիտի ըլլան։

Եւ մեծաւորն անոր մտնելով՝ ձեռքէն կը բռնէ և ականջն իւրը կը մրմնջէ սա նուիրական խօսքն. Աստուծմէ զատ Աստուած չկայ։

Եւ կը յայտնէ անոր աստուածութեան գլխաւոր ըստորոգելեաց անուններն, և այդ ստորոգելիք ևօթն երկնից, ևօթն աստուածային լոյսերուն և ծիածանի ևօթն գոյներուն կը համապատասխանեն։

Ա.ին վայրկեանէն սկսեալ պէտք է կուրծքէն հնաչանդի։

Խուանները կ'լսեն։

—Աստուծոյ և մեծաւորացդ ձեռքին մէջ այնպէս եղիր ինչպէս որ է դիակ մը դիալուացի մը ձեռքին մէջ, որ ուզածին պէս աստ և անդ կը դարձնէ զայն։

Ափրիկէի ճիղուխիթուխիւնը, Լոյոլայի դիակի մը նմանն է այս։

Յանմէհետէ ի՛նչ պիտի ըլլայ Խուանին կեանքը։

Ա.ին կանոններն, որոց պէտք է հետեւի, վեց են. աշխարհէ հրաժարիլ, առանձնանալ, հակել, պահեցողութիւն, չարունակ աղօթել, և հասարակաց աղօթք՝ փառաւորելու համար զԱստուած։

Եւ այս կրօնասէրներն օրը մինչեւ երեք հազար անգամ կը կրկնեն։

—Աստուծմէ զատ Աստուած չկայ...

Նոցա վարձատրութիւնն ի՛նչ պիտի ըլլայ։

—Աստուծոյ արահետին մէջ մարանչողներուն համար անհաւ աչուի կոյսեր պիտի փողփողին։

Նոցա առելութիւնն այսպէս արծարծուելով, զըրդըռուելով՝ կատաղութեան կը հասնի։ Նոցա միակ խորհրդաբանն է թշնամիները ջարդել. ամէն տեղ հաղարաւոր Խուաններ պատրաստ են ոտք ելլելու։ Եւ ի՛նչ պէտք է որ Թօմպուքթուէն մինչեւ Ալճէր ամբողջ երկիրը հրոյ լիճ մը դառնայ։

Իշխանին մէկ գլխու նշանը, մեծաւորաց մէկ հրամանը։

Ա.մէնն այդ է... Ո՛չ։

Խուաններէն զատ կան նաեւ Իմէսափէլէննները։

Ասոնք եռանդուն, կատաղի, հնազկու և երիտասարդ մարդիկներ են, որք կեանքերնին զոհած են իրենց երկիրը թշնամւոյն դէմ պաշտպանելու համար։

Երբ Սուրբ մարապուն զիրենք կոչէ, ամէն կողմէ կը վազեն և իրենց մահուան երդումը կը կրկնեն։

Իրենց կեանքը բան մը չէ։ Նոքա իրենց թշնամւոյն կեանքը կուզեն։

Ամէն ոք կը խոնարհի նոցա առջեւ, վասն զի նոքա մահուան հետ դաշնակցած են։ Եթէ դիպուածաւ պատերազմէն ողջ ելլեն, ցմիշտ նուիրական պիտի ըլլան և նոցա ապրուստն առ յաւէտ ապահովեալ է։

Նոքա մարտիկներու ամբոխին չեն խառնուիր։

Պատերազմի օրը ամենէն վտանգաւոր տեղը կ'երթան խանդավառ և արդէն կը տեսնեն որ դրախտը կը բացուի իրենց առջեւ և անմահ կուսանք թեւերնին կ'երկնցնեն իրենց։

Օր մը անոնցմէ հարիւր չիսուն հոգի մարտնչեցան ահագին զօրութեան մը դէմ. և երբ մեր զինուորները ամէն արդելքի յաղթելով՝ անոնց քովը հասան, տեսան որ այս մարդիկ մինչեւ մէջքերնին մերկ էին և ձանգերնուն միմեանց կապուած էին ամուր ճոպաններով, զորս ինքեանք կապած էին՝ ամիպելու համար զիմմանալ որ եղած տեղերնին մեռնին։

Գուչեցին իրենց որ անձնատուր ըլլան. հրացան պարպելով պատասխանեցին այս հրամանին, այս աղաչանաց —վասն զի կը հեռանային նոցա վրայ։— Հարկ եղաւ մինչեւ վերջինն սպաննել զանոնք։

Մօնթէ-Քրիսթօ բոլոր այս բաները դիտեր։ Եւ ահա մինչեւ անապատին խորն եկեր էր, այս թշնամիներն ալ համարհելու։

Սակայն կ'երեւնար թէ ճամբան իւր դէմ եղնող չըպիտի ըլլար։

Եւ այն պահուն որ կը գտնենք զինքը Շէպքայի սառոտինեբուն վրայ, Ուարկլայէն չորս աւուր ճամբայ հեռու, կ'սկսի յուսալ...

Գիշերը մօտ էր։ Ընդհանուր հանգստութիւն հրամայուած էր։

Մօնթէ-Քրիսթօ վրանին տակ քաշուեր էր Էսբերանսի հետ, որու եռանդը կ'աւելնար՝ ցորչափ վտանգը կը մօտենար։

Կոմսն իւր մտածմանց մէջ ընկղմած՝ Հայտէի կը դիտէր։

Ամէն օր սուրհանդակ մը ճամբայ կ'ելլէր դէպի Հիւսիս՝ Եւրոպա երթալու համար։

Բայց աւա՛ղ, տակաւին չէր կրցած դրկել այն մի քանի բառերն, որք մայրական բերկրութիւն մը պիտի շնորհէին Մէրսէդէսի։

Տղայն, ցերեկուան տաքութենէն եւ յոգնութենէն խանձած՝ քնացեր էր։

Նորա թուխ գլուխը երկն անկողնի տեղ ծառայող առիւծի մորթին վրայ ինկեր էր։

Երբ որ Մօնթէ-Քրիսթօ դրկէր վեր առնելով՝ գիրը կ'ընդհատեր եւ զայն կը դիտէր։

Ա՛հ, այս սէրուն եւ գանգրահեր գլխուն վրայ ո՛րքան երազներ եւ յոյսեր հիմնուած էին։

Ա՛յն հզօր մարդն այժմ կարծես կը տկարանար, կը մտածէր թէ եթէ այսօրուան պէս հայր եղած ըլլար, վէլֆօրի վրէժը կնոջմէն եւ զաւկէն պիտի առնէր արդեօք։

Ա՛յժմ աւելի լաւ կը հասկնար Մօրսերֆի եւ Մէրսէ-

տեսի կրնել տուած տանջանքներն, եւ դործէն կը վախնար։

Երկեօք օր մը այս պատիժներն Էսբերանսի գլխուն վրայ չպիտի իյնային...

Վասն զի տառնով Տանթէս առանձին էր։ Զկար սէր մը որ տրտիալ տար նորա սիրտն, որ ցաւօք կարծրացեր էր։ Ա՛յսօր իւր անձին լաւագոյն կտորը, հոգւոյն կէսը, —ինչպէս կ'ըսէ Ովրատիոս —զաւկին տուեր էր։

Եւ իւր կարգէն աւելի հզօր ձգողութեան մը հնազանդելով՝ կիսովին ծնրադրեց եւ շրթունքը քնացող Էսբերանսի մազերուն կպցնելով՝ կը մրմնջէր։

—Ո՛հ, ո՛րքան կը սիրեմ զձեզ...

Ցանկարծ Էսբերանս քունին մէջ աղաղակ մ'արձակեց, յետոյ տագնապելով կ'ըսէր։

—Ո՛չ, ո՛չ... թողէ՛ք զիս... Հա՛յր, հասի՛ր... պիտի տանին... հասի՛ր...

Մօնթէ-Քրիսթօ դեղնած եւ գրեթէ ահաբեկ՝ մեկ ոտքի ելեր էր։

Երազն —վասն զի անշուշտ երազ մ'էր— այնքան տագնապալի եղած էր որ, Էսբերանս յանկարծ արթննալով՝ անոր թեւէն բռնեց, զայն աւ ինքն քաշեց եւ նորա կուրծքին վարեցաւ՝ տակաւին կրկնելով։

—Պաշտպանէ՛ զիս...

—Ի՞նչ ունիս, տղայս, հարցուց Մօնթէ-Քրիսթօ, որու ձայնը կը դողար տակաւին ակամայ։ Ինչուշտ տագնապալի երազ մը...

—Ո՛հ, այո՛... հա՛յր, ներէ՛... Ըսել է երա՞զ էր...

—Մոռցա՞ր, ի՞նչ կը տեսնէիր։

—Կեցի՛ր որ ըսեմ, հա՛յր։ Ո՛հ, բոլոր տանդ մնացս

ներկայ են իրրու թէ այս տեղ, այս վրանին մէջ տեղի ունեցած բլլային։

—Խօսէ՛, քեզ մտիկ կ՚ընեմ...

Եւ Մօնթէ-Քրիսթօ բռնապետական ժպտով մը յարեց.

—Դիտես որ երաշխերը սուտ են...

—Ո՛հ, յաճախ ըսած ես ինձ, հայր... և սակայն։

Տղայն խօսքն ընդհատեց մռայլոտ և աչերը վրանին մէկ անկիւնն յառեց։

—Ինչո՞ւ համար աչերդ այդ տեղ կը յառես, հարցուց կոմսը։

—Տարօրինակ բան, ըսաւ Էսբէրանս դլուխը ցնցելով։ Արդեօք իրաւունք կը քնանայի՞... կը տեսնե՞ս վրանին սա անկիւնն, հայր. ինչպէս որ այս վայրկենիս պրոշակի կը տեսնեմ դքեզ, այնպէս ալ քիչ մ՚առաջ ոբոշակի տեսայ որ վրանին կտաւը վերէն ի վար բացուեցաւ և սեւ ու սպիտակներ դէմքեր մը երեւցան...

—Այդ բանը ե՞րբ տեղի ունեցաւ։

—Սեղանին առջեւէն եկնելով՝ քովս եկած ատենդիդ...

—Բսեր է այդ չարժուճն ընելս տեսար... Ուրեմն չէիր քնանար...

Եւ Մօնթէ-Քրիսթօ ինքն ալ վրանին անկիւնը կը նայէր։

—Շիտակը չե՛մ դիտեր. ինձ այնպէս կը թուի թէ այն տեղն կիսովին արթուն էի... Եւ սակայն ինձ այնպէս կ՚երեւի թէ այս բանը տեսնալէս վերջը նորէն խորունկ քնացայ... Բայց այս սկսուած տեսարանը քունիս մէջ չ՚ընդհատեցաւ... վրանը նորէն բացուեցաւ, և այս անգամ սեւ գոյնով, կմախքի մը դէմքին պէս նիհար դէմքով երկու հոգի —երկու սոսկալի էակներ—

սողալով առ իս եկան...

«Ո՛հ, հայր, գգացածս երկիւղ չէր... բայց տեղ մը կարդացած եմ որ ահաբեկ թռչուններն ի զուր կը ջանան փախչիլ, թէ օդին մէջ կը դառնան և կուգան ինքեանք անձնասպան կ՚ըլլան զգիր օձին, որու կարմիր որկորը կ՚սպառնայ իրենց...

«Ձիշդ ես ալ այսպէս էի, բոլոր անդամներս չլսեալ էին։

«Ի զուր կ՚ուզէի կանգնիլ, մնքառիլ... տեղս գամուած էի... և երկու մարդիկ միշտ կը մօտենային... վերջապէս նոցա բազուկներն առ իս երկնցան... զգացի որ նոցա ձեռքերն ինձ դպան, գիս բռնեցին... ու կը քաշէին... Աչն առեն սոսկալի անձկութեամբ մը աղաղակելով՝ արթնցայ...

Եւ Էսբէրանս Մօնթէ-Քրիսթոյի բազկաց մէջ նետուելով՝ գլուխն անոր կուրծքին կռթնցուց և մրմնջեց.

—Հայր, մեռնելէն չեմ վախնար... բայց քենէ զատուելէս կը վախնամ...

Մօնթէ-Քրիսթօ չրթներն Էսբէրանսի մազերուն վրայ դրեր էր...

Ցնծանօթ զգացում մը տակաւ առ տակաւ իւր հոգին կը ընար...

Արդեօք ինքն ալ կը վախնար, ինքը՛, Ցանթէ՛ն, որ առանձինն մարտնչած էր ամենուն և ամէն բանի դէմ։

Ի՞նչ էր ուրեմն կուրծքին վրայ ծանրացող այս յանկարծական ճնշումն...

Որդին իրմէ բաժնուի՛... ի՛նչ անմտութիւն։ երազ մ՚էր այս, քնոյ այն պատրանքներէն մին, զորս առաւօտեան չունչն ի բաց կը վանէ... և սակայն այժմ ինչ

քըն ալ աչերն յառեր էր վրանին այն անկիւնը, ուր Խաբէբանս այն գժնդակ երեւոյթը տեսեր էր...

—Զատա՛կս, բսաւ վերջապէս, ո՛չ ոք կրնայ գիշերուան մեսայի սոսկալիներէն զերծ ըլլալ։ Հանգիստ եղիր, ես կը հսկեմ քու վրադ։ Վերտուն քնացիր... այսօր շատ ճամբայ ըրինք... հրաշէղ արեւն ինկաւ գլխուդ վրայ... քիչ մը տենդ կայ վրադ... բան մը չէ... պառկէ՛, սիրելի՛ զաւակս... և բանէ մը մի՛ վախնար, հայրդ հոս է... և ամէն տեսակ զազափար ի բաց վանելու համար, քնացած տեղեդ մօրդ անուշ անունը արտասանէ։

Խաբէբանս այժմ կը ժպտէր. արիւնը կը գունատուրէր վերտուն իւր այտերն, որք պահ մը ժժգուներ էին։

Ա՜յս սիրալիր և հզօր ձայնն իւր սրտին մէջ քաջութիւն և անդորրութիւն կը հեղուր...

Եւ այն սիրեցեալ ձայնէն օրօրուելով՝ Խաբէբանս առաւծի մարթին վրայ տարածուեր էր, մինչդեռ Մօնթէ-Քրիսթօ ծռելով՝ նորա գլուխը թեւին վրայ կը կրեր։

Պատանւոյն աչերը կը գոցուէին և Մօնթէ-Քրիսթօ կաթոգին կը դիտեր զայն. ո՜րքան գեղեցիկ, քաջ և անուշ էր միանգամայն։

Մօնթէ-Քրիսթօ այսպէս կեցաւ քանի մը վայրկեան։

Խաբէբանսի չքմուռնքը քանիցս թոթովեր էին։ Մա՛յր իմ։

Ցեղոյ քիչ քիչ աչերը գոցուեր էին և իւր հանդարտ շնչառութիւնն իւր կանոնաւորութիւնն առացեր էր...

Ա՜յն առեն Մօնթէ-Քրիսթոյի ճակտին վրայ կնճիռ

մը ձեւացաւ։ Մեղմիւ, այնքան մեղմիւ որ քնացողը չզգաց, քաշեց այն թեւն, որու վրայ Խաբէբանս հանգչած էր...

Եւ Մօնթէ-Քրիսթօ անմիջապէս գնաց վրանին այն անկիւնը, որ ցոյց տուած էր իրեն։

Վրանը հատու տեսակ կտաւէ մը չինուած էր, որ հովանի և անձրեւին կը դիմադրեր. և կը նմաներ այն կտաւին, զոր Անկլիոյ զինուորք կը գործածեն Հընդկաստանի մէջ։

Մօնթէ-Քրիսթօ ձեռքը դէպ ի երկայն ծալքերէն մին երկնցուց... և ամրողջ մարմնով ցնցուեցաւ...

Ո՛չ, Խաբէբանս բոլորովին պատրանքի մը խաղալիկ եղած չէր։

Կերպասը վերէն ի վար ճեղքուած էր ածելիի նման սուր դանակի մը միակ հարուածով, գիծն այնքան ուղիղ էր որ, ոտապնդին թիկերէն և ոչ մին գուրս ելեր էր։

Ո՞վ ըրեր էր զայս։ Ո՞վ համարձակեր էր, ո՞վ, եթէ ոչ այն եռանդուն, անողոք և անտեսանելի թշնամին, որ առելութիւն երդուած էր Ֆրանսացւոց դէմ, առելութիւն մանաւանդ այն մարդուն դէմ, որ կուգար անապատն անարգելով՝ որուն երկիւ յարուցանել։ Եւ ի՞նչ նպատակաւ...

Զի՛նքը, Մօնթէ-Քրիսթօն սպաննելու համար։ Ինչո՞ւ թշուառականը մարմին առ մարմին իւր վրայ չէր յարձակեր։

Հապա եթէ դիտաւորութիւնն այս չէր. եթէ վտանգն Խաբէբանսի կ՛սպառնար...

Սոսկալի դեղնութիւն մը սիրեց կոմսին դէմքին և բրտանց խուշտր կաթիլներ ճակտին վրայ հոսեցան։

Ա՜հ, չէր ուզեր այս բանին հաւատալ. և սակայն այն երազը...

Ո՞չ ապաքէն հոգեբանութեան գալանեաց մէջ ապագային կանխազգացումներն երբեմն երազի ձև կ՚առնեն։ Ո՞չ ապաքէն դէպքերը իրենցմէ առաջ լոյս մը կ՚արձակեն, ինչպէս որ աստղերը ճառագայթ մը կ՚արձակեն իրենցմէ առաջ, որ նոցա ներկայութիւնը կ՚ճանչնէ, երբ տակաւին նոցա ծիրը հորիզոնին վրայ չէ երեւցած։

Մօնթէ-Քրիսթօ գլուխը վրանէն դուրս երկնցնելով կը դիտէր։

Իւր առջեւ կը տարածուէին սեւ քարերը, որոց վրայ լուսնի լոյսն ապիտակ բիծեր կը ձեւացնէր, երեւոյթ վրայ կաթած արծաթի կաթիլներու նման։

Մեծ և միանգամայն սոսկալի էր այս։

Սուր անկիւններ ձեւացնող միակտուր քարերը ահագին սանդուղք մը կամ ամփիթատրոնի մը աստիճաններուն նման իրարու վրայ կը բարձրանային, վասն զի կիսաբոլորակ մը կը ձեւացնէին և երկու եզք, երկու նեղ ճեղք միայն կը թողուին, որոցմէ կարելի էր մտնել այս քարերուն կրկէսին մէջ։

Մօնթէ-Քրիսթօ իւր սուր աչօք բոլոր խորշերը կը դիտէր։

Ոտքը չէր կրնար ողորդ քարին վրայ հետք թողուլ։ Եւ սակայն մարդիկ եկեր էին մինչեւ իւր վրանն և իւր վարժ ականջն նոցա ստրոկելուն ամենաւոքը մեկ աբաժակը չէր լսած։

Եւ Մօնթէ-Քրիսթօ չեմ դիտեր ի՛նչ տարակոյս ըլլադաց յինքեան։

Մարտնչած էր քաղաքակրթութեան կլուզակներուն դէմ, Տանկլարի դէմ, որու հետ կարելի էր մարտնչիլ միլիոններով, Վիլֆօրի դէմ, զոր իւր ոճիրներուն ներքեւ կարելի էր չախչախել, Մօրսերֆի դէմ, զոր անպատուութեամբ կարելի էր սպաննել, —և վերջերն ալ բռնաւորաց դէմ, զորս լուսահեղ ազատութիւնն ի բաց կը վանէր, ինչպէս լոյսն ի փախուստ կը մատնէ գիշերային թռչուններըը։

Բայց հոս թշնամին անշոշափելի էր։ Այս ապայներն կարծես չինուած էին անապատին աւազէն, որ կը ցրուի, կը վիրաւորէ և զոր անկարելի է բռնել, հովէն՝ որ կ՚սպաննէ ու կանցնի...։ Ի՞նչպէս մարտնչելու էր...

Լաբերանախ դարձաւ, որ միշտ կը քնանար։

Արդարեւ կ՚ուզէր համոզուիլ որ բոլոր ատոնք երազ էին։

Բայց նիւթական և անժխտելի բան մը կար...

Դաշոյն մը վրանէն կտուր պատուեր էր...

Ընել է անկից մարդ մը —անապատի վայրենեաց մին— ատելութեամբ և սպառնալեօք լի նայուածքը պատանւոյն վրայ յառեր էր...

—Օ՜ն, Տանթէ՛ս, մրմնջեց Մօնթէ-Քրիսթօ, ինքզինքիդ տէր եղիր... Ա՜հ... այժմ վտանգը մի միայն քեզ չ՚սպասեր... մարդ կը տկարանայ՝ երբ հայր ըլլայ. և սակայն իւր այժն ի՞նչ օգուտ ունի երեն, եթէ չկարենայ պաշտպանել այն անձինքն, որք իւր ամբողջ կեանքն են...

Եւ չակուելով՝ անմիջապէս վրանէն ճեղքը դոցեց։

Պողպատեայ թեւի մը միջոցաւ մեկ վայրկեան մէջ

կերպասին երկու մասերն իրար միացուց։ Ձեռոյ վրանին կարասեաց մին գոցուած ճեղքին առջեւ բերաւ։ Բաց յատուկ այս զգուշութիւնք ի՞նչ օգուտ ունէին. պէտք էր անդուլ անդադար հսկել։

Ո՞չ ապաքէն Հայաստ իւր որդւոյն կ՚սպասէր։ Եւ ի՞նչ պիտի ըսէր իրեն, եթէ ինքը, որ իւր քաջութեան վրայ յանձնուած այս ցաւագին ծոհոզութեան ենթարկեր էր խեղճ մայրն, առանձին վերադառնար...

Ոչ միայն պիտի յուսահատեր, այլ և պիտի արհամարհէր այն մարդը, որ կարծես ինքզինքը միւս մարդոցմէ գերի ի վեր կը համարէր, այն մարդը, որու անհուն հպարտութիւնն իւր զաւկին մահուան պատճառ եղած պիտի ըլլար...

Եւ Մօնթէ-Քրիսթօ ձեռքը վեր առաւ և երդուաւ մեռնիլ ու այս սոսկալի ցաւը չպատճառել խեղճ մօրը։

Կը մտածէր և ամբողջ փորձառութիւնը ժողովելով՝ պատերազմելու միջոցներ կը հնարէր, և վերջապէս ինքզինքն առաջնորդող պէս յանդուգն ու ապահով կը դառնար, երբ յանկարծ...

Դրսէն սոսկալի աղմուկներ լսուեցան...

Եւ միանգամայն մարդկային աղաղակներէն առնլի բարձր ձայն մը լսուեցաւ։

Ա՛հ, նա որ անապատին մէջ, երբ ամէն ինչ լուռ ու անշարժ է, չէ լսած այս ծանր ու հզօր մռնչիւնը, այս ի մահ կոչումն, որ կարծես ի միասին հնչող հարիւր վագի ձայնն է, նա որու հոգին ու ականջն յանկարծ չէն լցուած առիւծին ահռելի ապառնալիօքն, նա չըկրնար հասկնալ ինչ որ այն առեն տեղի ունեցաւ Մօնթէ-Քրիսթօյի հոգւոյն մէջ։

փոքրիկ հայրիկն ո՛ւր է։

Մէճէ այս խօսքը լսեց, և գլուխն եռի տանելով, մինչդեռ դռգռոց մարը մռնող արեւուն մէկ ճառագայթովը ոսկեզօծեալ դէմքը մահացու դեղնութիւն մը կ՚գծար, թեւերը դէպի հարաւ երկնցուց և ըսաւ,

—Փոքրիկ հայրիկը (միայն այս երկու բառերը Ֆրանսերէն էին) հո՛ն է... հողուն տակ... դէմոյ քաղքին գետնափորներուն մէջ...

Մօնթէ-Քրիսթօ նորա խօսքն ընդմիջեց։

—Ժօլիեթ հարիւրապետին համա՞ր կ՚ըսես...

—Ա՛յո՛։

—Եւ դէմոյ քաղաքը... խորհրդաւոր քաղաքը, Ուարկլան չէ՞։

Թեթեւ դող մը նորատի աղջիկը ցնցեց և պատասխանեց։

—Ա՛յո՛, Ուարկլա... Հո՛ն է որ կը չարչարուի... հո՛ն է որ պիտի սպաննեն զինքը...

Մօնթէ-Քրիսթօ նշանացի հեռացուց բոլոր անոնք, որք հետաքրքրութենէ մղուած՝ շատ մօտէն մտիկ կ՚ընէին նորատի աղջկան խօսքերը։ Արարներն կը հասկնային, Ով գիտէ թէ նոցա մէջ մատնիչ մը չկար։

—Եւ դու ինչո՞ւ հոս եկեր ես, ըսաւ առնա հակելով։

—Ֆեղ կը ընտռէի...

—Զի՛ս... ի՞նչ կ՚ըսես. դու զիս կը ճանչնա՞ս...

—Ո՛չ...

—Գոնէ մէկն իմ անունս ըսա՞ծ է քեզ...

—Ոչ ոք...

—Ուրեմն այդ խօսքն ի՞նչ կը նշանակէ։ Ի՞նչպէս կրնայիր ընտռել զիս։

Մէճէ, ըսաւ որուն այս էր իւր անունը, ծռեցաւ Մօնթէ-Քրիսթօյի առջեւ, նորա ձեռքը բռնեց և համբուրեց։

—Քեզ... ամէն բան պիտի ըսեմ... դու իմ կամացս տէրն ես... բայց այս մարդոց առջեւ չեմ կրնար խօսիլ...

Մօնթէ-Քրիսթօ ուշի ուշով կը դիտէր զայն։ Եւ զարմանալի նշան մը իւր ուշը գրաւեր էր։

Մէճէի դէմքին վրայ մարմնանկարուած էին վեց ճառագայթով երկու աստղ, որք նորա այտերուն ներքեւ թուխ ոսկւոյ գոյն տարօրինակ գոհարեղէն մը կը ձեւացնէին։

—Հե՛տս եկուր, ըսաւ անոր։

Երբ Աբրահներուն քովը եկաւ, սոքա սկսան կեցցէ՛ աղաղակել։ առւծ մը սպաննող մարդը նոցա համար դիւցազն մ՚է, մանաւանդ նորա այս գերեզման գործին պաղարիւնութիւնը երբեք չէին տեսած։

—Քաւքո՛ւ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, այս մարդոց հետ գնա՛ Պերթուչիոյի դիակը վերցուր։ Աբեւը ծագելուն պէս հոս կը թաղենք զայն։

—Խե՛ղճ Պերթուչիօ, հեծեց զուավը։ Լաւ ընկեր մ՚էր։

—Անձնուէր մարդ մ՚էր, ըսաւ կոմսը պարզապէս։ Այս միջոցին պզտ որ կծու տպաւորութիւն մը սիրտը կը ճզմէր։

Էսբէրանսը մոռցեր էր կառուցյ միջոցին։ Արդեօք առիթ մը պատահի՞ր էր անոր։

Ոչ, ծագօրօյի քով տեսաւ զայն... և պատանին հայրը տեսնելով՝ թեւերը բացաւ և առ նա վազեց։

—Հա՛յր, հա՛յր... քեզ հնազանդեցայ...։ Բայց լինչո՞ւ չուզեցիր զիս ալ հետդ տանիլ...

—Զաւա՛կս, մտածէ՛ որ թշնամին առիւծ մ՚էր...

—Դու չէիր վախնար անկից։ Ես լինչո՞ւ պիտի վախնայի։

Մօնթէ-Քրիսթօ չըմեռնէր անոր ճակտին դրաւ։ Բայց Էսբէրանս այս միջոցին Մէճէին տեսաւ, որ իրեն կը ժըպտէր։

Մատովը զայն հօրը ցոյց տուաւ։

—Բարեկամուհի մ՚է նա, զաւակս։ Ձեռքդ երկընցո՛ւր անոր...

Էսբէրանս իւր բաց ձեռքն առկէզօրէն Մէճէի կարկառեց։

Մէճէ խոնարհեցաւ և այն ձեռքը չըմեռնցը տարաւ։

—Որդե՛դ այնորիկ որ առիւծները կ՚ազատենէ, ըսաւ, Աստուած հօրդ քեզ Աստուած համբոյրներուն չափ տարիներ չնորհէ քեզ...

Մօնթէ-Քրիսթօ իւր թեւեն Էսբէրանսի ուսերուն անցուցեր էր և Մէճէի հետ դէպ ի վրանը կերթար, երբ յանկարծ Աբրահներէն մին, որ ցայն վայր մէկ կողմ կեցած էր, դէպ ի խմբակը վազեց և կարծես անոր ճամբան գոցելու նպատակաւ բազուկն երկնցնելով՝

—Տէ՛ր, գոչեց, վնս մտիկ ըրէ՛. այս կինը բանակին մէջ մի՛ ընդունիր...

—Ինչո՞ւ, ի՞նչ ըսել կ՚ուզես։

—Դէմքին վրայ անիծուց նշանը չտեսա՞ր...

Մէճէ ակամայ չարժմամբ մը ձեռքերը երիտասարդներուն տարեր էր։

—Տէ՛ր, անիծեալ կին մ՚է նա. վհուկ մ՚է. մարդերն ու ուզտերը պիտի դիւթէ։ Զգուշացիր... ա-

մենք ալ քեզ պիտի թողունք...

—Ուրեմն թողէ՛ք զիս, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ ծանրութեամբ, վասն զի ես առ իս եկողը երբեք չեմ վռնտեր:

Եւ որովհետեւ Մէճէ իրեն վարեր էր և սոսկումէն կը դողար՝

—Մի՛ դողար այդպէս, ըսաւ. այնպիսի անուն մը առուր, որ գքեզ նուիրական կ'ընէ ինձ համար: Իսկ դու, յարեց խօսքն Աբբային ուղղելով, եթէ քու կողմանէդ կը խօսիս, ազատ ես... քեզ պիտի վճարեմ ու վռնտեմ...: եթէ ընկերացդ կողմէ կը խօսիս, դնա ըսէ իրենց թէ Մօնթէ-Քրիսթօ, որ առիւծին յաղթեց, մարդոցմէ բնաւ չվախնար...: Անապատին մէջ թողէ՛ք զիս... առանց դլուխս խակ ետիս դարձնելու՝ ճամբայս պիտի շարունակեմ... և եթէ առիւծը ձեր վրայ յարձակի՝ ինքզինքնիդ պաշտպանեցէք... ահա՛ այսչափ. գացէ՛ք...

Մինչ Աբբայներն ալ մտեցեր և լսեր էին: Տակաւին նոցա խանդը չէր մարած: Ծափահարեցին ղայն ղոր Տէր-Առիւծ կը կոչէին:

Բայց այն Աբբայը որ խօսեր էր, ձեռքն երկնցուց և ըսաւ.

—Տուէ՛ք ինձ որոշուած գինը... ես վճուկին դըտնուած տեղը չեմ կենար...

—Ժապաւօ՛, այս մարդուն պահանջքին կրկինը տուր... և ըսէ՛ իրեն թէ Ֆրանսայի դեղեցիկ երկինքին տակ մենք վճուկներու չենք հաւատար... թէ ղԱստուած կը պաշտենք, բայց սատանայն կ'արհամարհենք...

Եւ իւր յանդգնութեամբն ու անվրդովութեամբն

այս խաժամուժին իշխելով՝ հանդիսական կերպիւ դէպ ի վրանը եկաւ:

—Իսբէրա՛նս, ըսաւ, ալ մի՛ վախնար... ես հոս քովդ պիտի կենամ... և հիմայ դո՛ւ որ Մէճէ կը կոչուիս, խօսէ՛... կամ լաւ եւս նախ հարցմանցս պատասխանէ՛...

Նորատի աղջիկը խոնարհեցաւ ի նշան հնազանդութեան.

—Ըսել է Ժօլիէթի հարիւրապետը կը ճանչնա՞ս...

—Նա իմ կեանքս փրկեց... ես ալ այդ կեանքն իրեն նուիրեցի...

—Գիտե՞ս թէ որո՞ւ ձեռքն էնկաւ...

—Գիտեմ, նոքա իմ ցեղիս... քու ցեղիդ թշնամիներն են. վասն զի գիտեմ որ դու զիս յովազին ճիրաններէն ազատողին ցեղէն ես...

—Բայց այդ թշնամեաց անունը գիտե՞ս... անշուշտ զօրաւոր ցեղ մ'է...

Մէճէ ամբողջ մարմնովը սարսռաց ու ըսաւ.

—Զօրաւոր... այո՛... գերբնական զօրութեամբ մը օժտեալ..., Էսսաուանէրն են...: Ա,յս մարդիկ բանէ մը չեն վախնար...: Նոքա բնութեան յաղթեցին... կարմրացած երկաթներու վրայ կը կոխեն... նոցա ծնօտներըը դաշոյնի նման սուր փուշերով կակաոսը կը կարեն... նոքա կուրծքերնին կը յօշոտեն... արիւնին կը վազէ, և չեն դողար... իրենց մարմիններըը կիղիչ հրոյն կը յանձնեն... և ձայներնին կ'երդէ...

—Ուարկլան անոնց ձե՞ռքն է...

—Տէ՛ր, պէտք է որ ամբողջ պատմութիւնս պատմեմ քեզ... հասկերող եղի՛ր ինչպէս որ զօրաւոր ես...

—Բայց գոնէ երդուի՛ր ինձ որ Ժօլիէթի հարուածը վրիժելու համար անմիջապէս ճամբայ ելլելը հարկ չէ...

—Ի՞նչ կ՚ըսես, դու որ ամէն բան գիտես... չե՞ս գիտեր որ գիշեր առանց մարդոցդ և ո՛չ մէն կուգայ հետդ։

—Առանց անոնց չե՞մ կրնար երթալ։

—Ո՛հ, ո՛չ, վասն զի հոն կռուիլ... մարտնչիլ պէտք պիտի ըլլայ...

—Բան մ՚ալ ըսեմ... Ուրնմն կը հաւատա՞ս թէ Ժօլիէթի հարուածը կենդանի է...

—Կենդանի է, այո՛, կ՚երդնում. բայց... կը տառապի, կը չարչարուի... Ո՛հ, եթէ գիտնայիր, ա՛ր... Ուարվլայի պալատին անլոյս և անօդ գաղիր բանտերէն մէկուն մէջ փակուած է... ինքը՛, ինքը՛ որ այնքան բարի, այնքան քաջ և այնքան վեհանձն է... Ա՛հ, կեանքս կուտայի որ նա ցաւ մը չքաշէ։

Նորա արեւելեան բանաստեղծութեամբ տոգորեալ լեզուաւն՝ իւր ցաւերը, վիշտերը աւելի խոր և աւելի արտայայտութիւն մը կ՚առանային։

Մօնթէ-Քրիսթօ ուշի ուշով կը դիտէր զայն։ Չէր մոռնար թէ նա աներեւոյթ եղած էր ճիշդ այն օրը որ Ժօլիէթի հարուածը մեհներ էր այն արշաւանաց համար, որու մէջ իւր ազատութիւնը պիտի կորնչնէր։ Ասդեօք իւր դէմն ելնողը երաւցնէ դաշնակցութի՞ւն էր, թէ իւր թշնամիներէն գՄէճէ իրը գործիք մը կը գործածէին։

Ո՛չ, այս բանին չէր կրնար հաւատալ. այս նուրբ և միանգամայն վայրի գեղեցկութեան մէջ անանկ անկեղծութիւն մը, անանկ սիրավառ խանդ մը կար որ, կեղծ չէին կրնար ըլլալ...

—Ժօլիէթի հարուածը կը սիրե՞ս, հարցուց յանկարծ։

—Եթէ անզօր տղեկը կը սիրէ զայն, որ իւր քայլերուն նեցուկ կ՚ըլլայ, եթէ տրտնջի չիւղը գինքը պահպանող բարձր արմաւենին կը սիրէ... այո՛, ես ալ կը սիրեմ ըսած անձդ։

—Ինչո՞ւ համար քիչ մ՚առաջ այն Ա֊րաբը մերժեց քու գանուած տեղդ կենալ, ինչո՞ւ առսկալի աղանդէ մը նշանը կը կրես դէմքիդ վրայ...

—Ի՞նչ, տէ՛ր, գիտե՞ս...

Եւ նորատի աղջիկը աչերը խոնարհեց ու խոշոր արցունքներ արտեւանունքը մէջ կը գլորէին։

—Գիտեմ որ, չարունակեց Մօնթէ-Քրիսթօ, մարդասպաններու ընկերութիւն մը կայ... թէ այդ աստղը նոցա միացման նշանն է... դու որ կ՚ըսես թէ եղբարցս մէն կը սիրես, ի՞նչպէս կրնայ որ խուռներու նշանը կը կրես։

Մէճէ եղունգներուն այտերը կը ճանկռտէր, իբրու թէ այն նշանը կ՚ուզէր բառնալ անկից։

—Չես մոռիկ ըրէ ուրնմն, ըսաւ, և յետոյ դառնալով։ Ո՛հ, պէտք է որ խօսքիս հաւատաս... պէտք է վստահութիւն ունենաս իմ վրայս... փրկելու համար այն մարդը, զոր եղբայրդ կը կոչես...

Եւ ձայնը ցածցնելով և ձեռքը երկնցնելով դէպ ի նսբերանս որ կը քնանար՝ յարեց։

—Զայն ալ փրկելու համար...

Մօնթէ-Քրիսթօ սարսռաց։

—Խօսէ՛ ուրեմն, ըսաւ. խօսքդ չպիտի ընդմիջեմ։

«Հայրս, սկսաւ ըսել Մէճէ, հզօր ցեղապետ մ՚էր ... Իւր ցեղը Բապելի լերանց մէջ կը բնակէր, և հոն անմատոյց ժայռի մը վրայ ամրացեալ գիւղ մ՚ունէր ... Իւր շուրջը կը գտնուէր աշխատասէր, քաջ և գործօն ցեղ մը ... Հայրս խմաստուն մարդ մ՚էր, և ամենքն իւր խօսքին անհնազանդութեամբ մտիկ կ՚ընէին ...

«Ծրանագիրը —կարծեմ քու երկրի մարդիկդ,— մեր նախնեաց նուիրական հողուն վրայ ոտք կոխեցին։ Հայրս իւր բարեկամներն ու ծառայներն իդէն կոչեց և առանց տակտրանալու մարտնչեցաւ ... մինչեւ այն օրը որ հետեւեալ դէպքը տեղի ունեցաւ։

«Մէթիճայի մէջ էր ... Եւրոպական զինուորաց և հօրս ցեղին միջեւ կռիւ մը տեղի կունենար։ Յանկարծ սոսկման ընդհանուր աղաղակ մը լսուեցաւ ... Հայրս պաշարուած էր։ Մի քանի թշուառականներու մատնութեամբն՝ թշնամին —ասիպուած եմ այսպէս կոչել— ցայն վայր անմատոյց կէրճերէն անցեր էր, և հայրս կորսուած էր ...

«Աղդէն ամէն կողմանէ հրացաններ կ՚արձակուէին և հօրս գունդը ձեւացնող հարիւր մարդոց թիւն ամէն վայրկեան կը նուազէր։

«Փրկութեան յոյս չկար ... ո՛հ, չեմ ըսեր թէ այն մարդիկ վատ էին ... բայց քաջութիւնն ի՞նչ կրնայ ընել տասնապատիկ աւելի զօրութեան մը դէմ։ Սակայն կը մերժէին անձնատուր ըլլալ ... Յանկարծ այն գազաթին վրայ, ուր ապաստանած էին, անոնցմէ մէկ քանին ժայռի կոյտերէ ձեւացած բնական քարայրի մը մուտքը գտան ...

«Նոցա մէջ գտնուող մարապետ մը գոչեց թէ Աստուած իրենց աղօթքը լսեր էր, թէ գետնափոր մ՚էր այս, ուսկից պիտի կարենային թշնամեաց ձեռքէն պրծիլ։

«Եւ հակառակ հօրս հրամանին՝ ամենքը խուժեցին դէպի այն մուտքը, որ կը կարծէին թէ գիրենք պիտի փրկէր ...

«Մարապետն հօրս քով վազեր և երդում ըրեր էր որ այս գաղտնի անցքը շատոնց ծանօթ էր իրեն ... Հայրս համոզուեցաւ, և սուլող գնդակներուն մէջէն իւր վոքրիկ գունդը ներս մտաւ և ամենէն վերջն ալ ինք մտաւ այն գետնափորը։

«Այնատեն ի՞նչ եղաւ. արդեօք մարապետն նչա՞ն մ՚ըրաւ հակընդդէմ հրամայելու համար ծրանագրոց թէ այս մարդիկ իրենց ձեռքն էին ... Հաւիւ թէ նոքա աներեւութացեր էին, զինուորներն ակսան լեռնէն վեր մագլցիլ ... և քարայրին մուտքին առջեւ պատերազմի կարգաւ շարուեցան ...

«Զօրապետաց մին գոչեց.

«—Ընձեռնատուր եղէք ...

«Պատասխան չկայ, բայց գետնափորին մէջ տեղի ունեցած անցքը սոսկալի էր։ Մարդիկ խեղթի պէս վազեր էին մութին մէջ և կ՚աճապարէին հասնիլ միւս ծայրը, որ կը կարծէին թէ իրենց լոյս ... կեանք, ապաւէնութիւն պիտի պարգեւէ ...

«Դիահէ՛ք այս գետնափորին ծայրն ո՞ւր կելլէր ...

«Այս նրբուղին յանկարծ կը լայնար, և անոր ծայրը այնքան խոր անդունդ մը կաց որ, նոցա խորը գըտնուած ժայռերն հազիւ տեսանելի էին ...

«Ամենէն առաջ հասնողները մխաներէն հրուելով՝ զառիվարին վրայ մղուեր և վար գահավիժուեր էին... Սոսկալի բան մ'էր. ահռելի անդունդին եղերքին վրայ կը կառչէին, ինքզինքնին բռնել կ'ուզէին, և ուռուէն եկողները, որք գործին ի՛նչ ըլլալը չէին գիտեր, միշտ դիրար կը հրէին, կը հրէին՝ աւելի շուտ հասնելու համար այս տեղն, ուսկից կը կարծէին թէ պիտի կարենան փախչիլ, մինչդեռ այդ տեղը մահուան տանող սոսկալի դուռ մ'էր...

«Կառապի կռիւներ տեղի կ'ունենային. եղունդնեերըն, ակռայները, ղէնքերը, ամէն ինչ արեամբ կը կարմրէր... և մարմինները մի առ մի անդունդը կ'իյնային գառնալով և խաւաքարերէն հերձուելով, մինչդեռ դիշատիչ թռչուններ կ'սկսէին օդին մէջ պտտիլ...

«Դունդին կէսը կորսուեր էր արդէն, երբ վերջապէս ամենուն խելքը դլուխն եկաւ... Բայց ի՛նչ կըրնային ընել. այս կողմէն սոսկալի անկումէ մը և ժայռերու վրայ չախչախուելէ ուրիշ ելք չկար... մնաց կողմն ալ հրացաններըը լեցուած ու պատրաստ էին երեւան ելնողը սպաննելու...

«Ա.յն առեն հայրս քարայրին մթութեան մէջ խօսքն ուղղելով իւր շուրջը ծնացողներուն, ըսաւ որ իւր վրայ վատահին և մանաւանդ անխոհեմութիւն մը չդործեն։

«Եւ հանդարտութեամբ ու յամր քայլերով, որք երթալով կը ծանրանային —վասն զի տասնէ աւելի վէրք առած էր— դէպ ի գետնափորին բերանն եկաւ։

«Չինուորները աչերնին այս ելքին վրայ յառած էին։ Կը վախնային թէ մի՛ դուցէ թակարդ մ'եղած ըլլայ։

«Հայրս բարձրահասակ և վեհափառ ծերունի մ'էր դրեթէ...

«Առանձին, անզէն և ձեռքը վեր վերցուցած երեսաց քարայրին բերանը...

«Ի՞նչպէս եղաւ... սպաննութեան հրամանն ո՞վ տուաւ... եղբարդ ի՞նչ սոսկալի սխալմանէ զէնք քաշեցին անզէն թշնամւոյ մը վրայ..., երակ աղաղակն հնչեց և գնդակներն անոր շուրջը սուլեցին...

«Այդ գնդակներէն մին հայրս զարկաւ... խեղճ ծերունին լինկաւ...

«Բայց անմիջապէս կանգնեցաւ և ճակատն արիւնաներկ և ձեռքն ի նշան խաղաղութեան մինչ վեր վերցուցած՝ նորէն սկսաւ քալել...

«Սպայներն յառաջ վազեր էին հրաձակութիւնը դադրեցնելու համար...

«Նոցա մին, որ մեծերնին ըլլալու էր, ըսաւ.

«—Դու որ քալ ես, ի՞նչ կ'ուզես...

«—Ջինուորացս կեանքը կ'ուզեմ...

«—Փոխարէն ի՞նչ կուտաս...

«—Իմ կեանքս... և երդումս...

«—Ի՞նչ երդում։

«—Երբ թշնամին վեհանձն է, պատերազմէն վերջն անոր հետ դաշնակցիլը անպատուութիւն չհամարուիր։ եթէ զինուորացս կեանքը խնայէք, ես ձեր դերին կ'ըլլամ։ Ես բաց յաստի կերդնում Աստուած թէ Պէն-Ալի-Սմահի ցեղէն մարդ մը երբէք զէնք չպիտի վերցնէ Ֆրանսայի դէմ...

«—Գիտե՞ս որ, յարեց սպան, հրացանի պիտի բըռնես...

«—Գիտեմ... Սրդէն ըսի ձեզ. զաւակացս կեանց փոխարէն իմ կեանքս կուտամ ձեզ։

«—Կ'ընդունիմ, ըսաւ Ֆրանսացին։ Բայց զգուշացիր. եթէ մարդոցմէդ մին հրացանի միակ հարուած մը քաշէ, զանոնք մինչեւ վերջինը պիտի սպաննենք...

«Սակայն չէք գիտեր, չէք կրնար հասկնալ թէ հօրս կուրծքին մէջ դնդակ մը կար, մարմնոյն բոլոր վերքերէն արիւն կը հոսէր, և սակայն կանգուն կեցած էր...

«Ցաւոց և մահուան դէմ մաքառելով, յնութիւնն ամփոփելով որ իրեն հնազանդի, դէպի քարայրին բերանը վերադարձաւ և հոն բարձր ու յստակ ձայնով բացականչեց խօսիլ...

«Կը հրամայէր որ մարդիկը դուրս ելլեն և զէնքերնին իրեն յանձնեն...

«Եւ այնպէս եղաւ։ Իւրաքանչիւրը մուտքին բերանը կուգար, հայրս անոր զէնքերը կ'առնէր և Ֆրանսացւոց կուտար։ Տակաւին յիսուն երկու հոգի էին, երկար տեւեց, վասն զի մի առ մի դուրս կ'ելլէին քարայրէն...

«Եւ երբ վերջինն երեւաց, երբ վերջինն ալ իր զէնքերը յանձնեց, հայրս ժայռին կռթնեցաւ, թեւերը ծալլեց, գլուխը վեր առաւ և ըսաւ.

«—Եղբա՛րք, երդումի ըրի Ֆրանսացւոց որ ձեռնէ և ոչ մին այլ եւս զէնք չպիտի բառնայ իրենց դէմ... երդումս պիտի պահէ՞ք։

«Ամենքն ալ երդուան։ Այն առեն հայրս գլուխը դէպի սպայն դարձնելով յարեց.

«—Խոստումս պահեցի... քու խօսքիդ ալ վստահ եմ... հիմայ մարդոցդ ըսէ՛ որ կրակ ընեն...

«Ֆրանսացի սպայն աղեխառնուրթ մարդ մ'էր, չօրս ձեռքը բռնեց.

«—Ֆրանսա բարեկամները կ'ուզէ ունենալ, չէ թէ դերևները, և անկեղծութեամբ իւր բարեկամութիւնը խնդրող անզէն թշնամւոյն չզարներ։ Մեր դաշնակիցն եղիր...

«Եւ այն օրէն յետոյ Պէն-Ալի-Սմահի ցեղէն մարդ մը երբեք զէնք չվերուց քու երկրիդ դէմ..., Բայց տակաւին մնիկ ըրէ՛ և պիտի տեսնես թէ այս երդումն ո՛րքան սուղ նստաւ մեզ...

«Հայրս իւր վերքերէն դժուարաւ ապաքինած էր։ Յամառ հետեւ իւր բոլոր ճգանց նպատակն եղած էր իւր և քու Եւրոպացի եղբարցդ մէջեւ կնքեալ բարեկամութեան դաշն յարատեւ ընել...

«Տակաւին կը յիշեմ որ, երբ տակաւին յոյժ վոգը էի, հայրս զիս ծնգանցը վրայ կ'առնէր ու կ'ըսէր.

«—Մէճէ՛, բոլոր մարդիկ Աստուծոյ որդի են։ Այս բանը մի՛ մոռնար բնաւ։ Իր նմանին կեանքը փրկող մարդը նուիրական է։ Ֆրանսացիք հայրդ սպաննելու իրաւունք ունէին և խնայեցին անոր։ Ուստի նոքա մեզի հետ միեւնոյն արիւնէ կը համարուին։

«Մայրս, որ անուշ և պաշտելի կին մ'էր, միեւնոյն դասը կուտար ինձ...

«Սակայն ես տակաւին յոյժ վոգը ըլլալով, չէի կըրնար նշմարել թէ հօրս դէմ ատելութիւնք կը կուտեին. անապատի որդիք զայն մատնիչ և ուրացող համարեր էին, և խուանները, մարդասպաններու այն սոսկալի ցեղն, որք արեան հեղեղներ թափելով կը կարծեն թէ իրենց երկիրը կը պաշտպանեն, չատոց է վեր որոշած էին զայն իրենց պոհ ընել։

«Ասկից հինգ տարի առաջ օր մը բարեկամացդ մե-

ջէն նշանաւոր Ֆրանսացի հրամանատար մը հօրս այցելութեան եկաւ։ Ամբողջ ցեղին մէջ հանդէս կար, և մեր երիտասարդներն սքանչելի ձիախաղութիւն մը կատարեցին։ Ան ատեն տասներկու տարեկան էի, և տակաւին կը յիշեմ մեր ծաղկազարդ տուները, ժապաւինեալ ձիերը։ Ես ալ սպիտակ պարեգօտի մը մէջ պըլլուած արմաւներ տարի զօրապետին, որը մեր ժայռերուն եղերքէն ժողուուած էին։

«Քու եղբարդդ ու մեր միջեւ եղբայրական յարաբերութեան նշան մ'էր այս։

«Մշակութեան համար իրենց ունեցած գաղտնիքներն ուսուցեր էին մեզ, և Պէն-Ալի-Սմահներու գիւղն ամենէն հարուստ գիւղը էր։ Նորա մէջ այլ եւս մէկ աղքատ մ'իսկ չկար։

«Երբ մուրճն սկսաւ կոխել՝ Ֆրանսացի հրամանատարը մեկնեցաւ, և մինչեւ մեր սահմանագլուխն իրեն ընկերացան մեր պատերազմիկները, որք ի նշան պատուոյ և ուրախութեան զէնք կը պարպէին։

«Ցեղոյ մուրճը տիրեր էր գիւղին վրայ։ Բունն ամենուն աչերը դողեր էր։

«Ցանկարծ կէս գիշերուն սոսկալի աղաղակներէ արթընցանք։ Ի սկզբան չհասկցայ։ Ահագին կարմիր լոյսեր երկինքը կը լուսաւորէին, պայթիւններ, ահաբեկ աղաղակներ, խորդիւններ կը լսուէին...

«Ցանկարծ այն սենեկին դուռն, ուր կը ննջէի մօրս հետ, ոյժգին բացուեցաւ։

«Հայրս ներս մտաւ ոժգոյն և արիւնաթաթաւ։ Ուզեց գիս բազկացը մէջ առնել, խօսիլ, բայց չկրցաւ։ Ա,յս անգամ մահն իրեն յաղթեր էր։

«Երկու ձեռքն օդին մէջ տարածեց և կռնկի վրայ լինկաւ միակ բառ մը արտասանելով։

«—Խուանն՛ը։

«Եւ հազիւ թէ հեծկլտալով անոր մարմնոյն վրայ լինկեր էինք, սոսկալի մարդիկ մեր սենեակը խուժեցին և մեզ բռնեցին։

«Ո՛հ, չեմ գիտեր այն ատեն ի՛նչ եղաւ... գիս ձիու մը գաւակին կապեցին և անապատին մէջէն քառաչաւ տարին։ Մարդ մը կար որ ձայնով ու մտրակով կենդանին կը գրգռէր, և չուրջս կը տեսնէի անասնոց ձիաւորներ, որոց ձիերուն գաւակներուն վրայ ալ գերիներ կային։ Ընտանեաց մէն մեր քովէն անցաւ և լսեցի որ սիրեցեալ ձայն մը անունս կ'աղաղակէր։

«Մայրս էր. նա ալ ինձ նման գերի էր...

«Մեզ այսպէս օրեր կը տանէին, խոր նուաղման մը մէջ լինկած էի, և սակայն ցաւերս ու յուսահատութիւնս կ'զգայի։

«Վերջապէս կանգ առին ովասիսի մը մէջ, որ լքեալ դամբարանի մը աւերակները կը ծածկէր։

«Հոն —ո՛հ, չեմ գիտեր թէ ի՞նչպէս եղաւ որ չմեռայ— սոսկալի տեսարան մը տեղի ունեցաւ։

«Բոլոր Պէն-Ալի-Սմահներու կոտորածէն վերջը ողջ ձգուած մի քանի գերիներն ի միասին կապելով երկու կարգի շարեցին... յետոյ, մինչդեռ կանայք ձողերու կապուած՝ բռնադատեալ էին այս սոսկալի տեսարանը դիտելու— այն խուանները պարելով, սոսկալի շարժուձեր ընելով անոնց վրայ յարձակեցան և եաթաղանի հարուածներով նոցա անդամներն ու դէմքը յօշոտեցին...

«Այս դահիճները տանջանաց դիտութեան հմուտ էին . . .

«Կը գարնէին , յետոյ դառնալով կը հեռանային՝ իբրու թէ իրենց որսը կը թողուին , բայց ապա նորէն նոտի նման արագութեամբ կուգային գարնել և վերատին կը հեռանային :

«Այս միջոցին ոմանք ալ , դժոխային կատաղութեան մը մատնուած , կարմրցած երկաթի բիրերը կը խածնէին , իրենց ակռայներովը ապակիի կտորներ կը փշրէին , բիբերնուն ներքեւ պողպատի սայրեր մղելով՝ աչքերնին ակնակապիճներէն դուրս կը հանէին . . .

«Կարծես մեռնողներուն աղաղակներն , անէծքները նոցա զրկիրը կաւելցնէր :

«Յետոյ տակաւ առ տակաւ լռութիւնը տիրեց . բոլոր արք մեռեր էին . . .

«Պահ մը դադար տրուեցաւ . . . ապա կարգը կանանց եկաւ .

«Ո՛հ , մի՛ պահանջէք որ նոցա կրած անլուր տանջանքները նկարագրեմ . . . Մայրս , խեղճ մայրս . . . քանի ցեղապետի մ՚արժանի կի՛ն , բերնէն դանդաո մը չըհանեց . . .

«Եւ երբ վերջապէս այժմեսպառ բնութիւնն յաղթուեցաւ , երբ իւր վերքերէն հոսող արեան լճին մէջ ինկաւ , սա վերջին խօսքն ըսաւ ինձ . . .

«—Մէճէ՛ , մեր վրէժն ա՛ռ . Մէճէ՛ , հօրդ երդումն յիշէ՛ . . .

«Ես ալ կիսամեռ էի : Սոսկումը կ՚ապաներ զիս : Եւ մահն ու տանջանքները տեսակ մը փրկութիւն կը թուէին ինձ . . . վերջապէս դահիճներն սկսան ինձ մեռնել . . . վասն զի ես ամենէն վերջը ծնացեր էի :

«Բայց երբ նոցա երկաթեայ կարթերու նման ժանեւոր ձեռքերն առ իս կ՚երկննային , մարդ մը , խուանութեան մեծաւորներէն մին , յառաջ նետուեցաւ . . . Ձեռքը բռնած էր հրաշէկ երկաթի ձող մը . . . և միւսներըզիս չբռնած՝ դէմքիս վրայ սոսկալի ցաւ մ՚զգացի և ձայն մը գոչեց .

«—Յանուն Աստուծոյ կ՚արգելում ձեզ այս կուսին դպչիլ . նա արքոյ նշանը կը կրէ :

«Ամենքը կանգ առին , և մեծաւ զարմացմամբ ու սոսկմամբ տեսայ որ իմ առջիս կը խոնարհէին :

«Այս բանն ընող մարդը զիս փրկեր էր : Բայց ինչո՞ . . .

«Շատ օրեր անցան մինչեւ որ ասոր պատճառը կըրցի հասկնալ . խուանները զիս առնելով ճամբայ ելան : Զարմանալի յարգանք մը ցոյց կուտային ինձ :

«Կը սոսկայի , վասն զի կը դուշակէի թէ ասոր տակ հրեշային բան մը կար , զոր չէի հասկնար . . .

«Զիս պատաս կանանց յանձնեցին , որք անդադար աստուածային պաշտօնիս վրայ կը խօսէին ինձ . ես Աբրահամի դրօշը բառնալու սահմանուած էի : Ցետոյ առանց պատճառը դիտնալու , երբեմն վրայս տարօրինակ արբշռութիւն մը կ՚զգայի , ամբողջ մարմինս կը շարժէր այնպիսի ջղաձգութիւններով , զորս չէի կրնար զսպել . . .

«Կը խօսէի , կ՚աղաղակէի . . . զիրար չբռնող խօսքեր կ՚ելլէին բերնէս :

«Այս տագնապներու միջոցին ես կէս քնոյ մէջ ընկղմած էի , որով արտաքին դէպքերը չէի կրնար տես-

նել. կարծես յորձանք մը կը տանէր դիս... և ինձ այնպէս կը թուէր թէ այտերուս խարանները դիս կ'...էին, երբու թէ հրաշէկ երկաթը տակաւին մարթիս վրայ եղած ըլլար։

«Ցետոյ կատարեալ անզգայութեան մը մէջ կ'ինկայի, և արթնցած ատենս կ'զգայի որ մարմինս ցաւագին յոգնութեամբ մը խորտակուած էր։

«Վերջէն իմացայ որ չուրջս գտնուող թշուառական կանայք գինովցնող դեղերը կը խառնէին կերակուրներուս։

«Եւ չուրջս ամենուն յարգանքը օր ըստ օրէ կ'աւելնար։ Վհուկ մ'էի ես. Աստուծոյ ոգին կար իմ վրայս։ Խուանններու եղեռնական արշաւանաց առջի օրն միշտ այսպէս կը գինովցայի։ Եւ այս մարդ ասպանները բերնէս ելած կցկտուր խօսքերն յաղթութեան գուշակութիւն կը համարէին...

«Բայց աւելի ևս սոսկալի վիճակ մը վերապահուած էր ինձ...

«Ամէն բան պարտաւոր եմ ըսել քեզ, տէր իմ, և կը խնդրեմ որ աղախինդ չդատապարտես՝ մինչեւ որ խօսքը չաւարտէ...

«Սոսկալի և կատաղի արիւր մը ներշնչած էի այն մարդուն, որ այտերուս վրայ վեց ճառագայթով աստղը դրոշմելով՝ դիս մահուընէ աղատեր էր։

«Երբ տանեւվեց տարեկան եղայ՝ իմ վրանս եկաւ, ուր կը գտնուէի պահակներուս հետ։

«Ի՞նչ ըսաւ ինձ։ Ի՞նչ պահանջեց... չեմ ուզեր յիշել զայն... Ո՛հ, հայր իմ։ Ո՛հ, մայր իմ։ Ձեր սպանիչը կ'ենթադրեր թէ ձեր աղջիկն այնքան վատ պիտի ըլլար որ պիտի մտնար...

Նա մարդոց վրայ կը մտածէր, և ահա կենդանին կը յարձակէր իւր վրայ...

Մօնթէ-Քրիսթօ մէկ ոստմամբ Էսբերանսի քով վազեց և զայն թեւատը մէջ առաւ։

Գիտէր որ պէտք էր վրանէն դուրս նետուիլ սոսկալի կռիւ մ'ընելու համար, և չէր ուզեր զԷսբերանս հոն թողուլ առանձին և անպաշտպան...

Մէկ ձեռքը հրացանը բռնած, միւս ձեռքն Էսբերանսը գրկած, որ այս ցնցումէն արթնցեր էր, անմիջապէս դուրս ելաւ...

Բանակը չուարեր էր։ Ուղտերն ելեր էին և կը փախչէին։ Աւրաբացիք թեւերնին յերկինս երկնցնելով՝ ամէն կողմ կը վազէին։

Մխիւնոյն ձայնն աւելի սոսկալի, աւելի սպառնալի և աւելի մօտէն հնչեց...

—Կեցի՛ք, գոչեց Մօնթէ-Քրիսթօ իւր որոտագին ձայնիւ, ոչ ոք տեղէն թող չշարժի. ես ամենուդ կենաց պատասխանատու եմ...

—Ես ալ, գոչեց Ռուքու՝ Մօնթէ-Քրիսթօյի քով կանգնելով։ Լսեցի՞ք, տէր, առիւծ մ'է...

—Կեանքս ուզեցիք ինձմէ, ըսաւ ժպտօրօ՝ ինքն ալ կամին քով վազելով, նշան մ'ընէ՛ք և այդ կեանքը ձերն է։

—Շնորհակա՛լ եմ, շնորհակա՛լ եմ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ։ Դուք մարդիկը ժողուելու աշխատեցէք, մա վատերը համախմբեցէք... ըսէք իրենց թէ Մօնթէ-Քրիսթօ հոս է և վրանին կը հսկէ...

Աչերն Էսբերանսի վրայ դարձան։

—Ժպտօրօ՛, Ռուքո՛ւ, ըսաւ, ես առիւծին դէմ պիտի երթամ և որդիս ձեզ կը վստահիմ... ձեր կեանքերնուն համար ինծի պատասխանատու կ'ելլաք...

քովը պատասխանատո՛ւ էք անոր . . .

—Ո՛հ , հանգիստ եղիք , տէր· բայց մէկ հոգին կը բաւէ . . . ժագօքօ թող անոր քով երթայ . Ես Միտին կը ճանչնամ , ինչպէս որ կ՛ըսեն Արաբները . . . և կ՛ուզեմ հետերնիդ գալ . . .

—Լա՛ւ , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ· Բայց չըլլայ որ մէկն ինձմէ առաջ զէնք պարպէ . . . եթէ ես չյաջողիմ այն առիւծը զարնել (և զայս ըսած ատեն թեթեւ ժպիտ մ՛անցաւ շրթանցը վրայէն) , այն ատեն կրակ ըրէք . . .

Ա.յս միջոցին մի քանի հետաքրքիր և սարսափահար Արաբներ անոնց շուրջը խմբուեր էին·

Մօնթէ-Քրիսթօ արաբերէն լեզուաւ ալ բացատրաբար արդիւնց կրակ ընել· Ցետոյ հարցուց թէ առիւծն ո՛ւր է . . .

Սոսկալի մռնչիւնն մ՛օդը թնդացնելով՝ իրեն պատասխան տուաւ . . .

Եւ միանգամայն քիչ հեռուէն հրացանի հարուած մը լսուեցաւ . . .

—Ա՛հ , այդ թշուառականն ո՞վ է , դոչից Մօնթէ-Քրիսթօ·

Իր ճամբուն վրայ գտնուողները մէկդի ընելով՝ մէկ ոտքնամբ վազեց այն կողմն , ուսկից գաղանին մռնչման պատասխան տրուած էր սոսկալի , բայց թեթեւս անկարող կերպիւ . . .

Գիշերը պայծառ էր· Հանդարտ ու խոր երկնքէն ինկող սպիտակ լոյս մը ածխային քարերուն վրայ պարզուած պատանքներու նման գծեր կը ձեւացնէր·

Եւ Մօնթէ-Քրիսթօ իրմէ մի քանի մեթր հեռուն տեսաւ առիւծը , որ իրեն պատուանդան եղող քարին

վրայ նստած էր . . .

Հանդարտ , ահագին գլուխը տնկած , բաշերն ալեծածան , կոկորդը կիսաբաց և ծանր ծանր կը մռնչէր . . .

Եւ առիւծին ծանր թաթին ներքեւ մութ մարմին մը կար . . .

Ա.յս մարմինը մարդու մը մարմինն էր . . . որ տապալած էր , և այն սոսկալի բեռը կը կրէր ուսին վրայ . . .

Բազկացը մին քարէն վար կախուած էր , և տակաւին ձեռքը բռներ էր պարպուած հրացանը . . .

Եկողները սարսափած և լուռ մնացին·

Մօնթէ-Քրիսթօ այն մահացու ճիրանին ներքեւ ճընշուողը ճանչցեր էր·

Պէրթուչիօն էր , Վիլֆօրի նախկին գոնը , Պէնեւեթթօյի հայրապետը , այն անձնուէր տնտեսը որ իր երկարամեայ ուղղամտութեամբն առջի ցասումները քաւեր էր·

Մեռած էր արդեօք· Արդեօք կենաց չունչ մը կար տակաւին իր վրայ·

Մօնթէ-Քրիսթօ ձեռօքը մէկդի ըրաւ իրեն հետեւողները·

Բառ մը չըսաւ· Ամէնքը հասկցան կ՛ուզէր և պէտք էր առանձինն գործել . . .

Մարդն ու առիւծը դէմ առ դէմ եկած՝ զիրար կը դիտէին·

Մօնթէ-Քրիսթօ նորա լուսաշող բիբերուն վրայ կը յառէր իր սեւ աչերն , ուսկից ճառագայթ մը կ՛արձակուէր . . .

Առիւծը միշտ կը մռնչէր . . . եթէ կատաղութեան չարժում մ՛ընէր , ճիրաններուն մէջ բռնած մարմինը

կը յօշոտէր, և մէկ ոտտմամբ կրնար խոյանալ երկն ըսպառնացողին վրայ։

Մօնթէ-Քրիսթօ հրացանը ծռած և միշտ առիւծը դիտելով կը յառաջանար...

Վատն ալ ոտկալի բան մը տեսեր էր։

Առիւծը բարձր տեղ մ'էր, ինքը վարն էր...

Եւ անպայացեալ Պէրթուչիոյի մարմինը ճիշդ հրանշանին ուղղութեան մէջն էր...

Պէտք էր ճիշդ դանդին զարնել. մէկ հարուածով կեանքն ու շարժումը պէտք էր սպաննել...

Եւ Պէրթուչիօ հարկ եղած միակ կէտը ծածկեր էր...

Մօնթէ-Քրիսթօ այս բանները տեսաւ և դէմքին մէկ ջիղն իսկ չշարժեցաւ։

Նա ինքզինքը պտեր էր, իր սրտին բաբաղումանց և երակաց թնդումն ալ կը լսէր։

Նպատակը դիտէր և առանց աճապարելու կ'երթար։

Միշտ հաւասար քայլերով կը յառաջանար դէպի սեւ խառաքարէ ամբարտակ մը, որ հազիւ երեք մեթր հեռաւորութեամբ բաժնուած էր առիւծէն... գառի վերը բոլորովին ցից էր և սակայն նա դիւրաւ վեր կ'ելլէր և կարծես դերապոյն այժ մը կը վերցնէր զինքը...

Եւ մարդուն նայուածքն ու անշարժ առիւծին նայուածքը միշտ իրարմէ չէին զատուեր։

Մեայն թէ մռնչիւնները աւելի կը կարճնային և մերթ ընդ մերթ կ'ընդհատուէին այն խոր չնչառութեամբ, որ մենութիւնները կ'ահաբեկէ։

Մօնթէ-Քրիսթօ միշտ վեր կ'ելլէր։

Վերջապէս խառաքարին վրայ ելլելով՝ կանգնեցաւ։ Կարծես երկու ախոյեաններ էին նոքա, ղորս վիպայք պէ-

տեղած էին անդ ցմահ մենամարտի մը համար։

Առիւծը ելաւ և ցատկելու համար ծռունկները ծռեց թաթերուն վրայ, որոց մին անշարժ մարդը կը ճզմէր միշտ... Մօնթէ-Քրիսթոյի ուզածն ալ այս էր...

Մօնթէ-Քրիսթօ այժմ անշարժ կեցած էր զէն ի ձեռին...

Ըսինք թէ զանոնք երարմէ բաժնող հեռաւորութիւնն առ առաւելն երեք մեթր էր. առիւծը մէկ ոտտմամբ տասը մեթրէն աւելի տեղ կրնայ ցատկել։

Ցատկեց... և նորա ահռելի մարմնոյն օդին մէջէն սուրալը տեսնուեցաւ...

Պայթիւն մը լսուեցաւ...

Եւ առիւծը —որ թռած ատենը զարնուած էր— ինքն իր վրայ դարձաւ անանկ չղաձգութեամբ մը, որ ողնայարները կրճտեցուց և խառաքարի երկու ժայռերուն մէջտեղ ինկաւ։

Արդէն Մօնթէ-Քրիսթօ Պէրթուչիոյի քովն էր։

Թշնաւառը չէր չարժեր... երկու ուսերուն մէջ տեղ, ճիշդ վզին սկիզբը հագուստին պատռուած քներուն տակէն կը տեսնուէին այն երկաթի մագիներուն արիւնալի հետքերը։

Կամաց յիշելով բոլոր այն կռիւներն, որոց երեն հետայս մարդն ալ դիմադրաւեր էր, սրտին մէջ խոր այլայլութիւն մ'զգաց և վերուց Պէրթուչիօն, որու տրժգոյն դլուխն իր ծունգին կռթնեցաւ։

Իրենց տակը տակաւին առիւծին վերջին խորխիւնները կը լսուէին։

Ոչ ոք կը մտտենար։ Մօնթէ-Քրիսթօ և Պէրթուչիօ առանձին էին...

—Բարեկա՛մ, ըսաւ կոմսը, ձայնս կը լսե՞ս...

Մարդն անձայն մնաց։ Աբբեանալի փրփուր մը նորա շրթները կը կարմրցնէր։

Ան ատեն Մոնթէ-Քրիսթօ հանեց ծոցէն այն սըրուակը, զոր բնաւ քովէն չէր հեռացներ։

Ա՜հ, արդէն ո՛րքան բարիք ըրած էր սա խեղճ աբբայ Ֆարիան, որ արդէն շատոնց ի վեր ուղեղին ուժմբ մը կապուած գացեր էր այն սոսկալի ճամբային, որու ծայրը Տանթէս ապառաժին գոռը էր։

Մոնթէ-Քրիսթօ դաշոյնին ծայրովը մահամերձին սեղմուած ակռաները բացաւ և կենաց հեղուկէն մի քանի կաթիլ լեցուց։

Պէրթուչիոյի ամբողջ մարմինը ցնցուեցաւ։ Ա՜հ, Մոնթէ-Քրիսթօ կը յիշէր այս ցնցուածը. նա այն ցնցուածն էր որ Ֆարիայի բոլոր կիղերը շարժեր էր, երբ արդէն մահն իր ձեռքը դրեր էր անոր վրայ։

Ո՛ւան դի մահն արդէն իր գործը տեսեր էր։

Հրաշալի հեղուկն հազիւ կրնար կենաց վերջին կայծերը կեդրոնացնել և զարթուցանել։

Պէրթուչիո, որու գլուխը յետս տապալած էր, աչքերը բացեր էր։

Իր կանաչ և քօղարկեալ բիբերը Մոնթէ-Քրիսթօյի վրայ յառեցան։ Եւ յանկարծ անպատում ուրախութեան արտայայտութիւն մը տեսնուեցաւ դէմքին վրայ։

—Ո՛հ, տէ՛ր, մրմնջեց։

Ա՛յժմ կոմսը իր ձեռացմէ մէկ բռներ էր մահամերձին ձեռքերը, որք կը պաղէին։

Ան հզօր մարդը, որ թշուառականներու հազար տանջանք կրելը տեսած էր՝ առանց դէմքին վրայ կընճիռ մը ձեւանալու, այժմ այնպիսի յուզմունք մը կըզգար, որու յաղթելու իսկ չէր աշխատեր։

—Պէրթուչիո՛, ըսաւ անոր, դիս ճանչցա՞ր։

—Ա՛յո՛, այո՛... ո՛հ, կը տառապի՛մ, կը մեռնի՛մ... առիւծին ճիրանները դաշոյններու պէս կուրծքս մտան. բայց... դուք եկաք... չնորհակա՛լ եմ։

—Բայց չկրցի դքեզ փրկե՛լ։ Ո՛հ, ափսո՛ս...

—Քանի որ դուք հոս էք... ըսելէ առիւծը մեռաւ...

—Ա՛յո՛, ոդեւարի մէջ կը տապլտկի... բայց, Պէրթուչիո, դու ինձ ըսելիք մը չունի՞ս... բան մը չե՞ս ուզեր... դիս կը ճանչնաս... փափաքդ ի՞նչ որ ալ ըլլայ... այս գերագոյն ժամուս...

Պէրթուչիո կիսովին եղաւ։

—Մտի՛կ ըրէք... ո՛չ... քիչ մը վերջը իմ վրայս կը խօսիմ ձեզ... բայց դուք... Էսբէրանս...։ Ո՛հ, տակաւին մեռնիլ չեմ ուզեր... չո՛ւր...

Մոնթէ-Քրիսթօ կարմրորակ հեղուկը պարունակող սրուակն անոր ձեռքը տուաւ։

—Խմէ՛, ըսաւ։

Պէրթուչիո սրուակը կիսովին պարպեց։ Ա՛յս անգամ արիւնը գլուխը խուժեց։ Գրգռեալ բնութեան վերջին ճիգն էր այս գոգցես։

—Տէ՛ր, ըսաւ գերագոյն ճիգ մ՛ընելով, զգուշացէք... թշնամիները... ես զանոնք տեսայ և զերեզնք կը հալածէի... երբ դէմ առ դէմ գտնուեցայ... առիւծին հետ...

—Թշնամինե՞ր ըսիր...։ Ո՛հ, Աստուածդ սիրոյն, խօսէ...։ Քանի՞ հոգի էին...

—Երկու։

—Երկո՛ւ, կրկնեց Մոնթէ-Քրիսթօ՝ էսբէրանսին ը-սած֊ը յիշելով։

—Տեսայ որ... վրանին շուրջը կը յածէին... գեղ֊ըրի... ձեղի խնդց տալու էի... բայց... զձեզ շատ սի-րելուս... կը փափաքէի... ապացուցանել ձեզ թէ... ես ձեղի համար... պարզ ծառայ մը չեմ միայն... էսբէրանսն ալ... ո՛րքան կը սիրէի...

—Ո՛հ, բարեկա՛մ, բարեկա՛մ... ըսաւ կոմսը շըր-թանցը տանելով նորա ձեռքը, որ վար կկիտար։ Ա՛յն թշնամիները չէ՞ս ճանչնար...

—Անարժանը են... կարծեմ էսպասուանները են... Քանի անգամ ցուցուց ինձ... դգուշացի՛ր... ո՛հ, էսբէրանսի վրայ լաւ հսկեցէք։

—Ա՛յո՛, պիտի հսկեմ. բայց դո՛ւ, դո՛ւ. քու վեր-ջին խղճերդ յայտնէ՛ ինձ...

—Ե՛ս, ո՛հ... եթէ համարձակէի՛...

—Պէրթուչիո, դրեթէ քանի տարի է որ դու ինձ համար անձնուէր և պարկեշտ ծառայ մ՚եղար... հա-րիւր անգամ օգնեցիր ինձ ի գլուխ հանելու ինչ որ այլք հրաշք կը համարէին... խօսէ՛... և պատուոյս վրայ կ՚երդնում որ այս պահուս դու ես որ կը հրա-մայես... և հրամանդ ի՛նչ որ ալ ըլլայ՝ պիտի հնազան-դիմ...

—Բայց... խնդիրը թշուառականի մը վրայ է։

—Թշուառականի՞ մի. ի՞նչ ըսել կ՚ուզես։

—Գիտեմ որ յիմարութիւն է... այո՛, գիտեմ, քա-նի որ ես իսկ ուզեցի ապաննել զայն... եթէ դուք բազուկս չբռնէիք, նորա գլուխը պիտի չախչախէի...

—Ի՛նչ. արդեօք...

—Ա՛յն մարդուն վրայ կը խօսիմ, որ չարութեամբ և չարութեան համար ծնած է... այո՛... Ո՛հ, կը զար-մանաք, տէ՛ր... ի՞նչ ընեմ... մարդ երբ մահուան դատապարտուած խեղճ փոքրիկ արարած մը թեւերուն մէջ առած է միանգամ...

Ա՛յժմ Պէրթուչիո կը խանդավառէր, և այս վերջին ճիգին մէջ բառերը տարօրինակ արագութեամբ մը շրթներէն դուրս կ՚ելլէին։

—Կը յիշեմ որ... անուանարկ վիլֆօրն ապաննելու եկած էի... և ահա դուռ այն տղայն, զոր կենդանութեան պիտի թաղէր...։ Ա՛րդ, ես այն տղայն սիրեցի, այո՛, և խորոց սրտէ սիրեցի։ Ա՛յս բաւած անմեղութիւն է, վասն զի նա ոճիրներ միայն պարծեց...։ Խեղճ Ասսուն-թաս ապաննեց, որ թեւոցը մէջ օրեր էր զայն, որ նո-ցա մայրն եղեր էր...։ Դրամանենգութիւն ըրաւ, գո-ղութիւն ըրաւ... Քառասուը, կարի կամուրջին պան-դոկապետն ապաննեց...։ Ո՛հ, այն պանդո՛կը. կարծես ճակտիս վրայ տակաւին արեան քրտինք կ՚զգամ...

Կը դողար։ Ակռաները իրար կը զարնուէին։ Մահը կ՚աճապարէր։

—Եւ այն թշուառականն, ըսաւ Մոնթէ-Քրիսթօ, այն անամօթն, —վերջապէս պէնեֆէթթօ...

—Ա՛յո՛... պէնեֆէթթօ...։ Ո՛հ, ներեցէք...

—Ձայն կը սիրե՞ս միշտ...

—Ա՛յո՛։

Մոնթէ-Քրիսթօ աչերն յերկինս բարձրացուց։ Ա՛հա մարդ մը, որ կեանքին մէջ բարի գործ մը ըրած էր, որ կրնար եղերերգական կերպիւ գտած տղայն ճամբուն

վրայ Թողուլ, բայց կը պահէ, կը խնամէ, նորա մեծնալը կը տեսնէ ... Տղային կը մեծնայ, լկտի և անգութ կ'ըլլայ ... իւր բարերարը կը չարչարէ ...

Եւ այս բարերարը տակաւին կը սիրէ զայն, միշտ կը սիրէ՛ ...

—Չիս մի՛ անիծէր, կը մրմնջէր Պէրթուչչիօ. ըսիր որ խօսիմ ... ես ալ հնազանդեցայ։

—Պէրթուչչիօ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, ըսածդ կը հասկնամ ... և այդ գերադոյն յիմարութեանդ կը հիանամ ... և հիմայ, ծեացած այժդ ամփոփէ՛ ... և ըսէ, թէ ի՞նչ կ'ուզես ինձմէ։

—Ո՛հ, կ'աղաչեմ ... երբ ... նա ձեր ճամբուն վրայ դէմերնիդ ելլէ ... մի՛ սպաննէք զայն ... չեմ ուզեր որ ... ձեր ձեռքէն ... մեռնի ... Ա՛հ։

Ա՛յս վերջին աղաղակը խորդուբորդ մ'էր։

Մօնթէ-Քրիսթօ Պէրթուչիօն թեւերուն մէջ առեր էր։

—Իմ և զաւկիս կենացը վրայ ... կ'երդնուս որ, եթէ Պէրթուչիօ իմ կենացս իսկ սպառնայ՝ չպիտի ըսպաննեմ զայն։

—Ո՛հ, հնարհակա՛լ եմ ... տէ՛ր ... կը մեռնիմ ... օրհնեցէ՛ք զիս. այդ օրհնութիւնը ներում մը պիտի ըլլայ ինձ համար ...

Մօնթէ-Քրիսթօ առ նա հակեցաւ և չրթունքն անոր ճակտին դրաւ։

Երանութեան ժպիտ մը մահամերձին կարկամած դէմքը լուսաւորեց։

—Տէ՛ր, տէ՛ր ... Ա՛հ, ո՛րքան սիրեցի զձեզ։

Եւ Պէրթուչիօ վերստին լնկաւ ... մեռած էր ...

Մօնթէ-Քրիսթօ ծնրադրեց։

—Աստուած ներէ՛ քեզ, ըսաւ։ Օրհնեցա՛լ ըլլաս դու որ զաւակս պաշտպանելու համար մեռար ...

Կանգնեցաւ և յամրաքայլ վար իջաւ խստաքարի զառիվերէն, որու վրայ Պէրթուչիօի մարմինը տարածուած էր։

Ստորոտը կեցած էր առիւծին դիակը ... և երբ Մօնթէ-Քրիսթօ անոր կը մօտենար՝ ապահով ըլլալու համար թէ կենդանին վերջին շունչը տուած էր ...

Սեւ քարակոյտին կռթնած սպիտակ մարմին մը տեսաւ կանգուն ...

Եւ անուշ ձայն մը անապատին ցեղերուն բարբառովն ըսաւ իրեն։

—Առիւծն առիւծին յաղթեց ... քեզ կը բնաւէր ... և գտայ։

ԻԱ։

ՄԱՀ։

Ա՛յս տարօրինակ խօսքերն արտասանողը լայն ու սպիտակ պարեգօտի մը մէջ պլլուած էր։ գլուխը ծածկուած էր հաստ քօղի մը տակ, որու ներքեւէն երկու սեւ բիւրերու լայն հալիւ կը գուշակուէր։

Մօնթէ-Քրիսթօ կանգ առեր էր։ Արդարեւ տարօրինակ տեսարան մ'էր այս եթերային, գրեթէ մտացածին արարածն առիւծին տակաւին ահռելի դիակին քով կանգուն տեսնել։

—Ո՞վ ես դու, հարցուց հզօր ձայնիւ։

—Ես այն աղջիկն եմ, որ ընտանիք չունի, վասն զի ընտանիքը չարչարեց զինքը. նա որ հայրենիք չունի, վասն զի հայրենիքն արտաքսեց զինքը. նա որ բարեկամ չունի, վասն զի իւր բարեկամը թշնամիներուն ձեռքըն է...

Մօնթէ-Ֆրիսթօյի մարքիզն յանկարծական փայլակ մը անցաւ։

—Անուն՝ Մէճէ չէ՞.

—Մէճէ՛, կրկնեց աղջիկը տեսակ մը հպարտութեամբ։

Եւ ծանր շարժմամբ մը ետին նետեց իւր դէմքը ծածկող երկար քօղը։

Մօնթէ-Ֆրիսթօ դժուարաւ կրցաւ զարմանքը բռնել։

Անապատի այս աղջիկը հիանալի և ասպօրինակ կերպիւ գեղանի էր։

Վերին ցոլքերով լուսաւորեալ դիշերուան նշոյլներուն ակդ և համարձակ կ'երեւնար նա նման այն փառաւոր արձանիկներուն միոյն, զորս երբեմն ամենէն մեծ արհեստաւորք հաճոյք կ'ղգան չինել իրենց փափուկ մատներով։ Հաղուագիւտ կանոնաւորութիւն մ'ունեցող դէմքը ախորժելի կերպիւ անուշ էր. բերանն այնքան փոքր էր որ, արաբական առածին ըսածին պէս, կեռաս մ'իւր կուռովը չէր կրնար մտնել անոր մէջ։

Խոշոր և մետաքսեայ թարթիչներով աչերն անհուն անուշութիւն մ'ունէին։

Մօնթէ-Ֆրիսթօն չրջապատողներն անոր մտածելով, ըսուքս որ —կարդապահութեան հաւատարիմ— կըռնուն չէր միջամտած, ամենէն առաջ տեսաւ նորատի աղջիկն ու ըսաւ.

—Մէճէ՛ն է, տէ՛ր, Մէճէ՛ն է... Հարցուցէք թէ

«Իւր բոլոր խօսքերուն բացարձակ մերժմամբ պատասխանեցի... զինքը նախատեցի... վռնտեցի... հանդարձակեցաւ վրայս ձեռք վերցնել... Ան ատեն դաշոյն մը յափշտակեցի և ինքզինքս զարկի...»

Եւ Մէճէ վսեմ վստահութեամբ լի չարժումով մը՝ պարեգօտը բացաւ...՝

Մօնթէ-Ֆրիսթօ վզին տակ դանակի հարուածի մը վարդագոյն սպին տեսաւ... վախցաւ։

«Ինձի կը հաւատային. խուանները յիմարական պաշարմունք մը կը տածէին ինձ նկատմամբ։ Եթէ վայրագ կատակերգութիւն մը ներկայացնելով՝ ցնորք մը կեղծէի և զիս նախատողը ցոյց տայի անոնց հարուածոց, զայն կտոր կտոր կ'ընէին...

«Ինքը գիտէր զայս, ուստի կատաղութիւնը կեղծելով՝ զիս առանձին թողուց...

«Ան օրէն որոշումս տուի։ Կ'ուզէի փախչիլ...

«Բայց չաթաթներ անցան մինչեւ որ նպաստաւոր պարագայ մը ներկայացաւ...

«Վերջապէս դիշեր մը բանակին մէջ չփոթութիւն ինկաւ։ Խուանները ուրիշ ցեղ մը թշնամանուեր էր։ Նահապետներուն վրայ ինկան և սոսկալի պատերազմ մը եկաւ։

«Հրդեհին լուսով, սուլող գնդակներուն միջտեղէն՝ փախայ...

«Բայց ոչխով և վատահ էի, և կը յիշէի որ հայրս շատ անգամ խօսած էր ինձ իւր բարեկամներուն վրայ, որք Ալբիկէի հիւսիսային կողմն էին։

«Ո՞ւր կ'երթայի։ Ամենապատկն մէջ էի։ Երկնից նայե-

ցայ և աչքս աստղի մը վրայ յառած՝ քալեցի... ճամբան երկար և դժնդակ եղաւ։ Բայց երդում ըրած էի որ կա՛մ մեռնիմ և կա՛մ հասնիմ...

«Օր մը կերճի մը մէջ յովազ մը վրայս յարձակեցաւ...

«Մարդ մը իւր կեանքը վտանգի դրաւ և փրկեց զիս... Նա ալ քեզի պէս Ֆրանսացի մ'էր, ասէ՛ր, նա ալ մարդն էր, ըոր դու Ժօլիէթ հարիւրապետ կը կոչես... ըոր ես կը սիրեմ և ըոր դու պիտի փրկես...

«Ո՜հ, աւո՛ւրք երջանկութեան և անպորրութեան. զիս իրենց քաղաքը տարին, և հոն երջանիկ եղայ... ա՛ո՛, շատ երջանի՛կ։

«Ժօլիէթ հարիւրապետան —ինչպէս որ կը կոչէք զայն, ըոր ես հայրս կ'անուանեմ— ո՛րքան բարի էր իւր գերուհւոյն նկատմամբ։ կ'ուզէի որ զիս ամենածանր աշխատութեանց ենթարկէ, կ'ուզէի ձեռքս հարթել նորա քալած ճամբայները. տակաւին այս իսկ մեծ բարեբաղդութիւն էր ինձ համար։ Բայց նա իրը իւր քոյրը, իրը իւր աղջիկը կը վարուէր հետս. ո՛րքան կը մեծարէր զիս, Թշուա՜ռս, որ բնաւ իրաւունք չունէի մեծարուելու... և կ'ըսէր որ ինձ ներշնչած հիացումն ամէն օր կ'աւելնար...

«Երբեմն երեկոյին վրանին տակ կ'աշխատէր իւր լեզուն սովրեցնել ինձ կամ իմ լեզուս հասկնալ։ Մի քանի բառ վոխանակելով ամէն բանէ վրայ կը խօսէինք։ կը նկարագրէր ինձ իւր հայրենիքն, ուր մարդ-իկ աղատ, վեհանձն, պատուաւոր և անկեղծ էին իրեն պէս։

«Ես ալ կը փորձէի նկարագրել իրեն անապատը, նորա ընդարձակ մենութիւններն, որք լի են դաղնոց կատաղութեամբ և մարդոց ատելութեամբ։ Դարձեալ երբեմն, բայց շատ ցանցառ կերպիւ, արբշռութեան մը մէջ կիյնայի. այն ատեն լուսաշող հորիզոնի մը մէջ կը տեսնէի քարէ մեծամեծ քաղաքներ՝ դալարեաց գօտւով մը չրջապատուած... անանկ մեղեդիներ կը լսէի, որոց դոյութիւնն իսկ չէի գիտեր մինչեւ այն ատեն։

«Բայց այս վաղանցիկ տեսիլներու միջոցին ուղեղս անցեալն ասկալի անցքերն ալ կը յիշէր։ Ահաբեկ աղաղակ մը կ'արձակէի, յետոյ կ'արթննայի...

«Նա քովս էր և ձեռքերս իւր ձեռաց մէջ բռնած էր։

«Եւ այն անուշ նայուածքով, որ իրեն միայն յատուկ է, կ'ըսէր.

«—Մէճէ՛, մի՛ վախնար. ես հոս եմ...

«Նորէն աչերս կը փակէի, և այն ատեն անուշ քուն մը կուգար վրայս, որ լի էր երջանկութեան երազներով։ Ի՞նչ էին այդ երազները. չեմ գիտեր. ի՞նչ կըրնայի ըզձալ։ Իմ ուզածս սա էր որ ինձմէ չբաժնուէր, զիս չվռնտէր, զիս անապատին մէջ չնետէր։

«Ըսած էր ինձ թէ մայր մ'ունէր, և այս բառն արտասանած ատեն աչացը մէջ արտասուք կը տեսնէի։ Ո՛րքան կ'ուզէի այն կինը տեսնել. ո՛րքան պիտի սիրէի զայն...

«Շատ անգամ ուրիշ սպայներ ալ կուգային վրանը։ Նոքա ալ քաջ, համարձակ և սէգ ձիաւորներ էին։ Ինչո՛ւ համար անոնց նայուածքէն կը վախնայի։ Ոչ ոք իմ աղատարարիս հրապուրիչ բարութիւնն ունէր։

«Մէկ մ'ալ զինուոր մը կար —ըոր Քուքու կը կոչէին և որ քիչ մ'առաջ անունս տուաւ։ Նա զուարթ մարդ

մ՛էը, որ գիս կը խնդացնէր։ Իբր տղու մը հետ կը խաղար հետս։ Իրմէ չէի վախնար։ Նա բարի էր, և կը տեսնէի որ Ժօլիէթի հարուածները կը սիրէր։

«Օրերը կ՛անցնէին և շատ սուղ կը թուէին իմ երջանկութեանս համար...

«Աւա՛ղ, թշուառութիւնը կ՛ապահէր ինձ...

«Գիշեր մ՛ընդոստ արթնցայ։ Ինձ այնպէս կը թուէր թէ քովս մարդ մը կար, թէ հրաշէկ նայուածքները կը ծանրանային վրաս։ Յանկարծ աչերս բացեր և տեսեր էի —արդեօք պատրա՞նք մ՛էր— սեւ մարմին մը, որ կարծես վրանիս միջնորմէն կ՛անցնէր։

«Ի սկզբան ուզեցի օգնութիւն կոչել։ Ցետոյ վախցայ որ երկչոտութեանս համար վրաս կը խնդան։ Հաճատած էի թէ երազ մը խաղալիկ եղած էի...

«Սակայն ոտք եկայ և վազեցի այն կողմն, ուսկից աստուերն անհետացած եղեր էր։ անթացատրելի սոսկմամբ մը տեսայ որ վրանին կառքը մեկ հարուածով մը վերէն ի վար պատռեր էր...

«Ըսելէ երթա՛ էր։ մեկը մտեր էր քովս...

Մէճէ այս խօսքերն ըսած ատեն Մօնթէ-Քրիսթօ սարսռացեր էր։ Էսթերան ալ այսպէս կէս երազի մէջ խորհրդաւոր էակներ տեսեր էր, որք վրանը կը մտնէին։ Ինքն ալ նոյնպէս տեսեր էր որ վրանին կատարը սուր դանակով մը կտրուեր էր։

Ականջ աչերը դարձուց վրանին այն կողմն, ուր Էսթերան կը քնանար առանձին մարթի մը վրայ տարածուած։ կարծես կը վախնար որ ցայն հոն չգտներ։ Երեսարդը խոր քնոյ մէջ ընկղմած էր, և կանոնաւոր չնչառութիւնը կ՛ապացուցաներ թէ բնաւ անձկութիւն

մը նորա երակները չէր վրդովեր։

Մօնթէ-Քրիսթօ ձեռքը ճակտին տարաւ՝ գոցցես ծանր դաղափար մը վանելու համար անկից։

—Շարունակէ՛, ըսաւ Մէճէի, որ նորա խոհերն չվրդովելու համար լռեր էր։

Նորատի Արաբուհին յարեց։

—Ա՛լ չքնացայ։ Ամբողջ գիշերն հսկեցի և ամենափոքր աղմուկին ուշադրութիւն ըրի։ Միտքս դրած էի որ լոյսնալուն պէս ամէն բան խոստովանիմ հարուբապետին...

«Բայց ինչպէս եղաւ որ լոյսը ծագելուն պէս, վերըստին սկսայ վարանիլ։ Սենեկէս դուրս եղած պահուս տեսայ որ հարուբապետը մեկնելու վրայ էր։ Հետը քանի չափ գինուորներ կային և մեկնելու նշան կուտար։ Անոր քովՎազեցի, վիզը նետուեցայ, լացի, սակայն չէի համարձակեր խօսիլ, չէի համարձակեր ըսել իրեն թէ գիշերն ինչ անձկութիւնը քունս վրդոված էին։ Միայն պաղատեցայ որ չհեռանայ, գիս չթողու...

«Ինքը, որ միշտ բարի, միշտ ներողամիտ էր, գիս թեւերուն մէջ սեղմեց։ բայց գիս միխիթարելով հանդերձ կը կրկներ թէ գինուոր մը իր երկրին կը վերաբերի, թէ հրամաններ ընդուներ էր, զորս պարտաւոր էր դործադրել...

«Ո՛հ, անմի՛տս, մեղաւո՛րս... չեմ գիտեր ի՛նչ տարօրինակ աղդեցութիւն կը ծանրանար վրաս։ Զըհամարձակեցայ ամբողջ ճշմարտութիւնն ըսել իրեն։ Եւ ճակտես համբուրելէ յետոյ, Յառաջ գոչեց։ տեսայ որ մեկնեցաւ և հոն ծնցայ յուսահատ, մտա-

խոհ, և աղէտ մը կը կանխազգայի...

«Եւ այդ աղէտը չուշացաւ...

«Երեկոյին երբ վայրկեան մը հեռացեր էի դիտելու համար այն ճամբան, ուսկից հեռացեր էր, յանկարծ զիս բռնեցին ու կապեցին։ Գայլ մը շրթներս խցեց։ Ձիու մը վրայ նետեցին զիս, որու կառապի ընթացքն առաւ տարաւ զիս հեռուի յայնմանէ, զոր կը սիրէի և որ ամբողջ կեանքս էր...

«Ի զուր կը տապլտկէի. ի զուր կը չանայի ինքզինքս գետին ձգել՝ ձիուդ ոտից ներքև չանջախուխճ աչք առնելով։ Անդամներս սեղմող կապերը մսիս մէջ կը մտնէին և կը ցաւցնէին։

«Եւ լսեցի որ ձայն մը—ձայն մը որ ծանօթ ակռաց կը հեգուց զիս— ականջիս կը մրմնջէր.

»Մէջէ՛, այս անգամ ա՛լ ձեռքէս չպիտի ազատիս

... և պիտի տանջուիս հնազանդիլ ինձ...

«Երեք օր, երեք գիշեր ձիերն արշաւեցին։

«Թանձր քօղ մը դէմքս կը ծածկէր և բան մը չէի զանազաներ։ Միայն թէ, որովհետեւ ա՛լ եւս աղաղակելէս չէին վախնար, գայլը բերնէս վերուցեր էին։

«Ձեմ կրնար ըսել թէ ի՛նչպէս եղաւ որ չմեռայ։

«Երբ սթափեցայ՝ Ուարկլայի մէջ էի։ Ո՛հ, սոսկալի քաղաք։ ո՛հ, արիւնաթոյր քաղաք։ Քառապահի աշտարակները մէկուն մէջ բանտարկուեցայ։ վերատին չզջացուցած էին Աստուծոյ որդւոց զբմաւհին ընել զիս։

«Ոտքերս ծանր էին դիմադրել, մեռնիլ։ Բայց ամէն զգուշութիւն ձեռք առնուած էր, ամէն չարժմանցս կը հսկէին, և եթէ ամենափոքր վտանգ մ՚ընէի՝ անմիջապէս պիտի սպանէին զիս։

«Չէի յուսահատեր։ Անծանօթ քաջասրտութիւն մը կ՚ոգեւորէր զիս։ Ձեմ գիտեր ի՛նչ բնազդումէ կ՚ըսէր ինձ թէ մինչեւ վերջը պէտք էր մարտնչէի և թէ թերեւս յաջողէի անգամ մը եւս ազատել զիս կաչկանդող ձեռքերէն։

«Այս միջոցին ամբողջ մտածումս մահուան վրայ կեդրոնացած էր. անկից ուրիշ հնարաւոր փրկութիւն չկար։

«Բայց յանկարծ երկու պարագայ դաշտիարներս փոխեցին։

«Աչտարակին մէջ փակուելէս ի վեր հազիւ երկու օր եղեր էր, երբ կառապի ազաղակներ լսելով՝ ճամբայն վանդակապատ պատուհանէն, ուսկից ներսուած էր ինձ երկնից լոյսը տեսնել։

«Եւ տեսայ... այս բանը, տեսած առնես կարծեցի թէ ամբողջ մարմնովս հոգւոյն վրայ պիտի լինամ... բայց պահն կռթնեցայ, կ՚ուզէի կանգուն մնալ... տեսայ որ ծառի ճիւղերէ չկնուած պատգարակի մը վրայ մարդ մը դրեր կը բերէին... և այն մա՛րդը։ Ա՛հ, սիրտս ու աչերս միանգամայն ճանչցան զայն... ինքն էր, հայրս էր, ժօլիէթի հարուրապետն էր... ժպտուն, արիւնաներկ, նուաղած էր...

«Մռնչիւն մ՚արձակեցի և երկաթեայ ձողերը ցնցելի, իրրու թէ իմ ուժգր ձեռքերս կարող ըլլային զանոնք խորտակել և ճամբայ բանալ ինձ...

«Զգացի որ զիս պժով մը եռի քաշեցին...

«Եւ նա որ արդէն համարձակեր էր սիրոյ վրայ խօսիլ ինձ, այն վայրը, որ կը կարծէր թէ ցեղիս ուխտը դրժելու, մայրս չարչարող և սպաննողներուն առջեւ

էրը գերվի խոնարհելու չափ ցած եմ, այն մարդն ըսաւ ինձ.

«—Մէճէ, տեսա՛ր... քեզ մենէ յափշտակող մարդը մեր ձեռքն էնկաւ...

«—Եւ դուք զայն պիտի սպաննէ՛ք, թշուառականներ, վատե՛ր։

«Էսսաուան սոսկալի կերպիւ ժպտեցաւ.

«—Ձինքն սպաննե՛նք, մե՛նք... դեռ ո՛չ... ուզեցիր տեսնել, Մէճէ՛. լա՛ւ, տե՛ս։

«Դաստակէս բռնեց և վերստին պատուհանին առջեւ տարաւ զիս...

«Սոսկալի խումբը երկաթեայ ցած դրան մը առջեւ կանգ առաւ։

«—Չէս լա՛ւ մոխիկ ըրե՛, յարեց։ Դուռը կը բացուի, այնպէս չէ՞. ժանգոտ ծխնիներուն կռինչը կը լսես, բայց այդ աղմուկէն յառաջ եկած երկար և դժնդակ արձագանգն ալ կը լսե՞ս... Այն արձագանգը երկրի խորութեանց մէջ կը կորսուի... վասն զի հո՛ն, քու տակդ, ահագին խորութեամբ ընդարձակ դեռնախորհներ փորուած են, ուր ո՛չ օդ և ո՛չ լոյս կը մտնէ երբեք... Հոն այնքան մութ, այնքան խաւարին բանտեր կան որ, երբեք մարդկային աղաղակ մը չհասնիր հոն ...տե՛ս։ Ահա՛ խումբը կը մտնէ այն գառխվերն, ուսկից այն դեռնափորները կ'ելլնուի... Ահա՛ թշնամին— այն մարդը զոր կ'ատես— կ'աներեւութանայ... ո՛չ. զինքը չպիտի սպաննեն... բայց անթիւ օրերը —որք երեսնաւ դիւերներէն տարբերութիւն չպիտի ունենան— այս մարդը պիտի հեծէ այն բանտին մէջ, որ իր վերայէն պիտի փակուի։ Ո՛չ, զինքը չպիտի սպաննեն,

վասն զի ամէն օր գերվի մը ուտեստ պիտի տանի անոր, որպէս զի ոյժ առնէ... և այս մարդը ծանր ծանր, ամէն յոյս, ամենէն յիմարական պատրանքները փորձելէ յետոյ՝ կատաղութենէն խենթենալով պիտի մեռնի... եւ հիմայ, Մէճէ, կը կարծե՞ս որ տակաւին պիտի կարենաս դիմադրել ինձ։

«Մոխիկ ըրած էի, լսած էի։ Սրտիս վրայ սոսկալի այրուածք մը կ'զգայի գոգցես... կորսուա՛ծ էր, կորսուա՛ծ։

«Եւ ի՛նչ մեղ։ յամր տառապա՛նք, անընդհատ անձկութիւն...

«Ճանկարծ դարձայ դէպ ի այն մարդը որ խօսեր էր...

«Աչերը կը փայլատակէին, չրթունքը կատաղութենէն կը դողային։

«—Եւ ի՛նչ կը պահանջես ինձմէ, ըսի, որպէս զի ձեր ձեռքն էնկող այս զոհն այդ տանջանքները չքաշէ։

«Ամբողջ մարմնովը ցնցուեցաւ և ըսաւ.

«—Զքե՛զ...

«—Ի՞նչ կ'ուզես. կ'ուզե՞ս որ գերիդ, շունդ, գերեզման մտնեմ, ըզր ծեծես ու չարչարես... պատրաստ եմ...

«—Ո՛չ, ո՛չ, գոչեց աչխուժով։ Իմ ուզածս քու աչացդ փայլակը, չրթանցդ ժպիտը, ամբողջ մարմնոյդ ցնցումն է... կ'ուզեմ որ դու ամբողջ իմս ըլլաս...

«Ո՛հ, զիս մի՛ մեղադրեք, մի՛ անիծէք... այն պահուն ինքզինքս մոռցայ... միայն զինքը մտածեցի։ Աչս մարդուն պահանջածը կը հասկնայի, կամ մանաւանդ կը զուչակէի։ Չէս չրչապատող անուանարկ պա-

ռաւնեըն յաջողեը էին տպիտուԹիւնս փառասէլ... այո՛, պիտէի ԹԷ այս Թշուառականը կ'ուզեը...

«Բայց կրնայի՞ Թողուլ որ այն բարի և անուշ մարդը, որ ինձ ժպտած, զիս պաշտպանած ու սիրած էր, այն սոսկալի բանտին խորը մնայ... կրնայի՞ Թողուլ որ ժամերուն հետ մի առ մի հաշուէը նաեւ իւր անբերելի ցաւերն... ո՛չ, ես ինքզինքիս չէի վերաբերեը... կեանքս անոնն էր. պէտք էր ինքզինքս ծախելով՝ գնէի զինքը...

«Շրթներս սեղմեցի որ ժպտին և Էսասուսին ըսի.

«—Դու ալ զիս լաւ մտիկ ըրէ՛: ՍակարկուԹիւն մը կ'առաջարկես ինձ: Կ'ուզեմ ես ալ իմ պայմաններս դնել:

«—Հրամայէ՛, գոչեց, ես իմ ցեղիս մեծն եմ, դու ալ Թագուհին պիտի ըլլաս... հարուստ եմ, և բոլոր ինչքս քուկդ պիտի ըլլայ...

«—Ո՛չ, ըսի անոր, ես հոն մնալովին ազատուԹիւնը կ'ուզեմ:

«Եւ մատովս ցոյց տուի այն սոսկալի դուռն, ուսկից ժօլիէԹի հարիւրապետն անհետացեր էր:

«—Կը չնորհեմ քեզ...

«—Ամէնն այս չէ: Զինքը դու մատնեցիր Խուանեբու կատաղուԹեանն... բանտէն ելնելով՝ քու արբանեակներուդ ձեռքը պիտի էյնայ... Կ'ուզեմ որ իրեն պահակներ տաս, որք մինչեւ իւր քաղքին սահմանը տանին զինքը...

«Դէմքը կարկամեցաւ: Ան ատեն ա՛լ չտարակուսեցայ: Կ'ուզէր դիւրահաւանուԹենէս օգտել և իւր ազատուԹիւնն յապեցնել: Բայց ես իմ խնդիրս կըրկնեցի վէճուԹեամբ, բարկուԹեամբ... վասն զի կըզգայի որ այժմ ես կ'իշխեի իւր վրայ... և ստիպեցի զինքը որ խուանեբու երդումն ընէ...

«—Դու ալ երդում ըրէ՛ որ, ըսաւ, խա պիտի ըլլաս:

«Ո՛հ, այն ատեն աչերս յերկինս բարձրացուցի, և բոլոր ամբիծց, բոլոր զղուանաց զօրն մատուցանելով այն անձանօթ Աստուծոյն, որու վրայ կը խօսէը ինձ երբեմն Ֆրանսացի հայրս, ձեռքս վեր առի և երդուայ:

«Էսասուան ոտքս ինկաւ. բայց ես ետ քաշուեցայ և՝

«—Գնա՛, ըսի իրեն, և երբ դու քու խօսքդ պահես, այն ատեն ես ալ իմ երդումս կը կատարեմ:

«Ի նշան հնազանդուԹեան խնդարհեցաւ և դուրս ելաւ:

«Ո՛հ, այն ժամն ո՛րքան երկար և ցաւագին երեւեցաւ ինձ:

«ԱնհամբերուԹեամբ կ'սպասէի որ գայ ըսել ինձ ԹԷ ժօլիէԹի հարիւրապետն ազատ Թողուած էր, և միանգամայն կը սոսկայի՝ երբ կը յիշէի ԹԷ երդմամբս զինեալ պիտի դար:

«Ժամանակը կ'անցնէը. դէմքս երկաԹի ձողերուն դրած, աչերս անիծեալ դրան յառած կը կենայի: Եւ նա չէը բացուեը: Արդեօք ուրիշ դուռ մ'ալ կա՞ր: Պահակներուս հարցուցի: Այդ գետնափորին դիրուԹիւնն իսկ չէին գիտեր:

«Եւ գիշեր եղաւ: Ի՜նչ, այն մարդը ատե՞ր էր, զիս խաբե՞ր էր:

«Ո՛չ, անկարելի էր այս: Վասն զի իւր երդած երեկոյեան, բարկուԹեամբ... վասն զի կըզգայի որ այժմ ես կ'իշխեի իւր վրայ... և ստիպեցի զինքը որ խուանեբու երդումն ընէ...

«—Դու ալ երդում ըրէ՛ որ, ըսաւ, խա պիտի ըլլաս:

«Ո՛հ, այն ատեն աչերս յերկինս բարձրացուցի, և բոլոր ամբիծց, բոլոր զղուանաց զօրն մատուցանելով այն անձանօթ Աստուծոյն, որու վրայ կը խօսէը ինձ երբեմն Ֆրանսացի հայրս, ձեռքս վեր առի և երդուայ:

«Էսասուան ոտքս ինկաւ. բայց ես ետ քաշուեցայ և՝

«—Գնա՛, ըսի իրեն, և երբ դու քու խօսքդ պահես, այն ատեն ես ալ իմ երդումս կը կատարեմ:

«Ի նշան հնազանդուԹեան խնդարհեցաւ և դուրս ելաւ:

«Ո՛հ, այն ժամն ո՛րքան երկար և ցաւագին երեւեցաւ ինձ:

«ԱնհամբերուԹեամբ կ'սպասէի որ գայ ըսել ինձ ԹԷ ժօլիէԹի հարիւրապետն ազատ Թողուած էր, և միանգամայն կը սոսկայի՝ երբ կը յիշէի ԹԷ երդմամբս զինեալ պիտի դար:

«Ժամանակը կ'անցնէը. դէմքս երկաԹի ձողերուն դրած, աչերս անիծեալ դրան յառած կը կենայի: Եւ նա չէը բացուեը: Արդեօք ուրիշ դուռ մ'ալ կա՞ր: Պահակներուս հարցուցի: Այդ գետնափորին դիրուԹիւնն իսկ չէին գիտեր:

«Եւ գիշեր եղաւ: Ի՜նչ, այն մարդը ատե՞ր էր, զիս խաբե՞ր էր:

«Ո՛չ, անկարելի էր այս: Վասն զի իւր երդած եր-

դուռն — և մեր մէջ ամենէն վատերն իսկ երդումը կը յարգեն— կ'ատիպեր գինքը որ դործէ, եւ բաց յատուկ անշուշտ անհամբեր էր իրեն խոստացուած վարձատրութիւնը գալ առնելու։

«Ժամերը մի առ մի կ'անցնէին, Աստղերն երեւցեր էին յերկինս. և գիշերուան կապուտակ լուսոյն աչերս չէի զատեր այն աղիտաբեր դէմնէն, որ յանառութեամբ գոց կը մնար։

«Եւ հետեւեալ օրն ալ ամբողջ անցաւ, ապա օր մը եւս, ուրիշ մ'ալ...

«Զորրորդ օրը միայն կրցի սոսկալի ճշմարտութիւնը հասկնալ...

«Նա զոր ատիպուած եմ պաշտպանս կոչել, —քանի որ խայտառակ խոստմամբ մ'անոր օգնութիւնը դրեր էի,— բանտը մտնել ուզած մէջոցին բռնուեր էր...

«Մեծաւորն —որ ինքն ալ դործիք էր ուրիշ խորհրդաւոր անձի մը, որու վերադարձին կ'սպասէին— բանտարկեալոց արձակումն արդիլած էր։

«Երկու կողմանէ դիմադրութիւն, կռիւ տեղի ունեցեր էր... Նա որու ծախեր էի հոդիս՝ մեռեր էր...

«Եւ —տարօրինակ բան— այս մարդը գիս չէր մատնած, չէր ըսած թէ ի՛նչ երդմամբ կապուած էր ինձ ... իւր մոլեռանդութեամբն, զոր տրիփը կը հարուբրապատակէը, այն բանտարկելոյն փրկութիւնը պահանջէն ես ըլլալս չըսելու աղնուութիւնն ունեցեր էր...

«Եւ սակայն չանթի հարուած մ'եղաւ այս ինձ համար։

«Ամէն բան զոհելու յանձնառու եղեր էի և այս զոհողութիւնն իսկ ապարդիւն կ'ըլլար։

«Միայն մեռնողն իմ գաղտնիքս գիտեր։ Այլոց համար ես մէկէն, վհուկը, ներշնչեալ էակ մ'էի... Ան առեն ուղեղիս մէջ յանդուգն գաղափար մը ծնաւ։ Եթէ իմ կարծեցեալ զօրութեամբս յաջողէի կոշնակիցներ գտնել, եթէ կարենայի զիրենք համոզել թէ Աստուած բանտարկելոց փրկութիւնը կ'ուզէր...

«Աւա՛ղ, ամէն ճիդ անօգուտ եղաւ...

«Եւ սպասած անձս ահռելի գետնափորին դռնէն դուրս չելլելէն զատ, ընդհակառակն այդ դուռն ամէն օր նորանոր զոհեր կուլ կուտար...

«Խուանները լազմաթիւ արշաւանքներ կ'ընէին, տեսակ մը մարդկային որսորդութեան կ'աչխատէին։

«Եւ շաբաթ մը չէր անցներ որ նոր բանտարկեալ մը չբերուէր ի Քասպահ և համր գետնափորներուն մէջ չը նետուէր։

«Վերջապէս սոսկալի աղմուկ մը հասաւ մինչեւ ականջս։

«Մարապուն մը անմիջական կոտորած կը քարոզէր։ Արդեօք հարիւրապետը տակաւին կենդանի՞ էր։ Չէի համարձակեր հաւատալ այս բանին, և սակայն երբ այս աղմուկը մինչեւ ականջս հասաւ, ինձ այնպէս թուեցաւ թէ սիրտս կը բրցնէին։ Վասն զի գիտեմ թէ մահն ի՛նչ է այս կատաղեաց ձեռքն, որք տանջանօք կը հարիւրապատկեն զայն...

«Հիմայ ի՞նչպէս բացատրեմ ձեզ ինչ որ տեղի ունեցաւ յիս...

«Ըսի ձեզ թէ երբեմն —բաց ի այն կեղծիքներէն, զորս վհուկն դերս կ'ատիպեր զիս ընել— իրական դերդերմանց մէջ կինայի, որոց մէջ ո՛չ արբեցուցիչ ըմ-

պելլին և ո՛չ կամքս դործ ունէին...

«Եւ դոյութեանս այս փոփոխութեանց միջոցին լինէ այնպէս թուեցաւ թէ անապատին մէջն էի։ Ձայն մը կը դոչէր լինէ. Քալէ՛, քալէ՛ տակաւին. քալէ՛ միշտ... և պիտի դանեմ այն մարդը, որ սիրելիդ պիտի վրկէ..., Առիւծին յաղթողը չարեաց ալ պիտի յաղթէ...

«Երբ սթափեցայ, այն ձայնը տակաւին կը հնչէր ականջիս... և այն աստիճան տաղտկացուց զիս որ, կարծեցի թէ յանկարծ Աստուած կը միջամտէր այս դործին մէջ...

«Ի սկզբան շուրջս դտնուած հսկողութիւնը թուեցեր էր...

«Ուարկլայի մէջ երթեւեկելու ազատ էի. ճամբուս վրայ ժողովուրդը կը խոնարհէր. ոմանք ալ զիս տեսածնուն պէս կը փախչէին, վախնալով որ աչացս փայլակը չի շանթահարէ զիրենք...

«Որոշեցի այս յիմարական դաղափարներէն օդտիլ...

«Եւ իրիկուն մը դէպ ի դոներէն մին դացի...; Մութը կը շրջապատէր զիս, և պարեդօտս աղջամուղջին մէջ սպիտակ բիծ մը կը ձեւացնէր...

«Պահակը զիս տեսաւ և սկսաւ դողալ։

«Ուղղակի անոր մօտեցայ և բարձրաձայն քանի մը այլանդակ խօսքեր արտասանեցի, զորս հարիւր անդամ կրկնած էի Թովչութեանցս միջոցին...

«Մարդը զէնքերը ձդեց ու փախաւ...

«Ա՜յն տեղն հասատատմութեամբ Ուրակլայէն դուրս ելայ, ովասիսին սահմանն անցայ... Աստուած առաջնորդեց զիս... և առիւծին յաղթելդ տեսայ, ա՛ր... Ասոր համար ըսի քեզ թէ՝ Քեզ կը բնառէի։

Մէջէ իւր երկար պատմութիւնն աւարտելով Մօնթէ-Քրիսթոյի ոտից առջեւ խոնարհեցաւ։

—Տղա՛յ, մի՛ կարծեր թէ դերբնական զօրութիւն մը զքեզ առ իս առաջնորդած ըլլայ, ըսաւ։ Այդ լսած ձայնդ քու անձնուէր սրտիդ ձայնն էր։ Անդիմադրելի ձգումմը քեզ առ իս կը քաշէր։ Եկա՛ր։ Շատ լաւ։

—Եւ դինքը պիտի փրկես, այնպէս չէ՞։

—Ո՛հ, երթէ Աստուած թողու լինէ այն ոյժը, զոր մինչեւ ցարդ չնորհած է լինէ, կ'երդնում...

—Ուրեմն այսօր իսկ... արեւը ծագելուն պէս... պէտք է մեկնիլ...

—Պիտի մեկնիմ։ Բայց դո՞ւ...

—Ես քեզ առաջնորդ պիտի ըլլամ։ Բայց կ'աղաչեմ վայրկեան մը մի՛ կորսնցներ...։ Հարկ եղած հրամանները տուր, որպէս զի մարդիկդ պատրաստ ըլլան քեզ հետեւելու...

Մօնթէ-Քրիսթօ վրանէն դուրս ելաւ և ծագօրօն կոչելով՝ արագ հրամաններ տուաւ անոր...

—Բոլոր զէնքերը լեցուին։ Վառօդը թող հեռանայ։ Թո՛ղ քաջերը միայն ձիան մեզի հետ։

—Ըսել է պիտի կռուի՞նք, ըսաւ Քուքու։ Կրո՛ղ չտանց է որ ձեռքս զէնք դործածել կ'ուղէ։

Եւ ճիշդ այդ, վայրկենին —կարծես թէ Քուքուի համար բաւական եղած ըլլար իզձ մը յայտնել, որպէս զի այդ իզձն անմիջապէս դործադրուի— հրազէնի հարուածները լսուեցան, որոց կը խառնուէին այն վայրի աղաղակները, զորս կ'արձակէին Արաբք իրենց յան-

կարծական յարձակման միջոցին ...

Մօնթէ- Բրիսթօ յառաջ նետուեր էր ծուքուլի և ժեռնի չափ մարդոց հետ ...

Կարծես անապատին խորէն եկած թաթիւ մը բանակին վրայ կը խոյանար։

Ձիոց սմբակները սեւ քարերուն զարնուելով հազարաւոր կայծեր կ'արձակէին, որք ոյն տեսարանին դրեթէ մռայածին երեւոյթ մը կուտային։

Գնահակաները կը սուլէին։

Յարձակում մը կար։ Թերեւս բանակը պաշարուած էր։ Հարկ էր մարտնչիլ ...

Մօնթէ-Բրիսթօ իւր հզօր ձայնին, որ հրացաններու պայթիւններէն աւելի բարձր կ'ելլէր, հրամաններ կուտար։ Յետոյ ամէնքը, մաներնին հրացանին ըլթակին վրայ, դէպ ի չոչապատը դիմեցին ...

Բայց այն ատեն տարօրինակ դէպք մը պատահեցաւ։

Պաշարողներու գունդը յանկարծ կանգ առաւ ...

Ցետոյ վայրի գազանի մռնչման նման աղաղակ մը լսուեցաւ։

Եւ այս սուր աղաղակը ոսկալի ձիձաղով մը արտասեցաւ ...

Եւ իրրու թէ կանխաւ որոշուած նշան մ'ըլլար պա, ձիաւորք ետ դարձան, և այս տողերը գրելու չափ ժամանակ չանցած՝ այն մթին խումբը կ'անհետեւութենար ...

Մօնթէ-Բրիսթօ զարմանօք կանգ առեր էր։

Ինչպէ՞ս, այս ապառնալի թշնամիք տակաւին իրենց դէմ հրացան մ'իսկ չպարպուած կը փախչէի՞ն ...

Ասոր տակ անհասկնալի գաղտնիք մը կար ...

Մօնթէ-Բրիսթօ պահ մը մտախոհ մնաց ...

Ցետոյ սոսկալի աղաղակ մ'ելաւ կուրծքէն ...

Կը կարծէր թէ կը հասկնար ... հասկցեր էր ...

Եւ անէծք ի չրթունս՝ մէկ ոտքամբ դէպ ի վրան եկաւ ...

Անոր դուռն եղող կտաւը չբացաւ, այլ պատռեց ու ներս մտաւ ...

Անէ՛ծք ... անկողինը պարապ էր, Էսբէրանս անետրեւութացեր էր ...

Էսբէրա՛նս, Էսբէրա՛նս, իւր սիրեցեալ զաւա՛կը։

Ո՛հ, խենթեւնալու բան էր ...

Եւ արդարեւ այս միջոցին Մօնթէ-Բրիսթօ տեսնդը պիտի կարծէր թէ յանկարծ խելքը կորուսեր էր, կատաղութենէն և յուսահատութենէն կ'ոռնար։ այլ եւս այն ընդվզնքին տէր մարդը չէր, որ իւր ցաւոց կը հրամայէր։ յիմարաբար կը վազէր, դէմն եղնջները մէկդի կ'ընկեր և ցաւագին կատաղութեամբ մը կը գոչէր։

—Էսբէրա՛նս, Էսբէրա՛նս ...

Ժայռերն ի վեր կը մագլցէր, նոցա կատարին վրայ կը կանգնէր, յետոյ դէտին կը ցատկէր ... արտասուալիր ձայնիւ կը կոչէր ... և ոչի՛նչ, ոչի՛նչ ...

Ա՛յո՛, այժմ ամէն ինչ աւիներու էր։

Ա՛յս յարձակումը կեղծ էր, ձիաւորը վրանէն հեռացընելու պատրուակ մ'էր միայն։ Եւ վատը, աւազակները այս վայրկենին կ'ապահէին իրենց անարգ յափրշտակութիւնն ի գործ դնելու համար ...

Բոլոր այս տեսարանը մի քանի վայրկեանի մէջ տեղի ունեցեր էր։

Մոնթէ-Քրիսթօ պահ մը անշարժ կեցաւ և դլուխը ձեռացը վրայ խոնարհեց։

Եւ այն հզօր մարդն արտասուեց։ Ա՜յո՛, երեսուն տարի կար որ արցունք մ'անոր ցամքած արտեւանունքը չէր թրջած... Ծանրապէս լացաւ...

Երբ ձեռքերուն թրջիլը տեսաւ՝ զարմանօք ցնցուեցաւ և ղանոնք դիտեց։ Արտասուե՞լ, ի՞նքը։ Օ՛ն անգը...

Դլուխը վեր առաւ և մտիկը թռթռուեց՝ ինչպէս կ'ընէ արթնցող առիւծը։

Ծեռայ որոտագին ձայնիւ՝

—Չի հեծէ՛ք, ձի հեծէ՛ք, գոչեց։ ՑՈւարկլա՛...

Իբ.

Պետք չի մեռնիլ։

Ժօլիէթ հարիւրապետը թողուցինք այն պահուն որ մարդասպաններու ամբոխը Ուարկլայի Քասպահին դեռնափորները կը խուժէր։

Միանգամայն այս սոսկալի բանտին մէջ վահուելէն վեր առաջին անգամ ըլլալով մարդկային ձայն մը ընթուր ֆրանսերէնով կը գոչէր երեն։

—Հարիւրապե՛տ, պետք չէ մեռնիլ։

Իրաւ է որ այս խորհուրդն յոյժ դործնական էր և անբաւական է որ հարիւրապետ, եթէ ուրիշ ո՛և է աղագայի մէջ եղած ըլլար, պիտի չմտար քան ամէնն հեռուիլ անոր։

Ա՛հ, եթէ բանտարկեալն իր չարչարանաց երկար և յաւիտենական դիշերներու միջոցին քալաերութիւն մը ընդունած ըլլար։ եթէ կարենար յուսացած ըլլալ թէ տեղ մը կենդանի արարած մը կար, որ ղինքը կը խորհէր, ո՛րքան հեռանդեամբ պիտի ողջուներ այդ յոյսն՝ որքան ալ որ թեթեւ եղած ըլլար։

Բայց նոյն իսկ այս աղաղակն իր ականջին հասած վայրկենին՝ ֆրանսացի գինուորին պարտականութիւնն էր այլ եւս մեռնելու և բարւոք մեռնելու վրայ խորհիլ։

Եւ երբ թշուառականը դաշոյններով և եարաղանեներով գինեալ՝ բանտը մտան, ղինքը ոտքի վրայ կանգնած գտան՝ հպարտ և թեւերը ծալլած կուրծքին վրայ, ըղը պաշտպանելու փորձ իսկ չէր ըներ։

Սակայն սպայակներու այս ջոկը —ուրիշ ի՞նչ անուն կրնանք տալ անոր— իր վրայ խուժեր էր։ Քանան ձեռքեր գինքը բռներ էին։

Դրան երկաթի վեղկը կտորեր էր և սեմին վրայ կայնած էր մարապետն, որ թեւերն յերկինս բարձրացուցած՝ այն մարդասպաններն կատղած կը դրդռէր։

Բայց այն մթին կեդրոնին մէջ չէր որ որոշուած էր զայն սպաննել։

Նոքա ո՛չ միայն սպաննել կուզէին, այլ կուզէին զայն հերոս տառապանքը տեսնել...

Գեռնափորներու աստիճաններէն վեր կ'ելլէին։

Եւ ցորչափ կը բարձրանային, Ալպեր կ'պատրաստուէր կենսատեսութ օդ մը կը մտնէր թոքերուն մէջ. մանուկ ըղյս մը —արեւուն ըղյսը, ըղը դրեթէ մոռցեր էր— աչքերը կը լեցնէր։

Ա.յս բոլորովին ֆիզիքական տպաւորութիւնը այն աստիճան կը գրաւէին զինքը որ, պահ մը մոռցաւ թէ պատրաստուած ողբերգութեան մէջ ի՛նչ տեսակի դեր պիտի կատարէր։

Ամենէն տեսակի անձկութեանց մէջ իսկ կան վայրկեաններ, յորս մարդուս էութիւնը տեսակ մը նիւթական յարութիւն կ՛առնայ։

Նոյն իսկ դատապարտեալին կրած ծայրայեղ տանջանքները տեսակ մը սրտութիւն կուտան զինքը պաշտպող և գրեթէ զինուիցնող նորանոր զգացմանց։

Սրեւը տեսնել, կեանք տեսնել, երկրորդ ծնընդեան նման բան մ՛է այս։

Եւ Ալպէր այլ եւս չէր զգար զինքը կաշկանդող գպիրը ճերմանները. իրեն տրուած հարուածներուն անընդդիմայ էր։ Տեսակ մը քնեցածութեան մէջ ինկած էր և քաղցր տեսիլ մը կ՛երեւէր իր աչաց. կը կարծէր թէ տակաւին Մարսիլիոյ մէջ էր, և իր սիրեցեալ մայրը հրաժեշտի համբոյրը կը դրոշմէր ճակտին վրայ։

Յարձակողաց վայրենութեամբը կարմրորակ բիծերով աբեւնատած դէմքին վրայ երանութիւն մը կը ճառագայթէր։ Անշուշտ այսպէս կը վայելէին նահատակայ նահատանքն, երբ կատարեալ գալանամարտով զանոնք մը-ծին բանտերէն հանելով՝ լուսաշող կրկէսին մէջ կը մըէին։

Տարօրինակ բան. այն վերջին բառերն —որք երկար տեւնէ ի վեր լսած առաջին բառերն էին. պէտք չէ ըսել, միօրինակ յարատեւութեամբ մը, հրաշալի տակութեամբ մը կը հնչէին ուղեղին մէջ։

Եւ այն բառերը չդիմանցը վրայ նկեր էին։ Նախ

մտովին կը կրկնէր զանոնք, յետոյ ցած ձայնիւ — այնքան ցած որ ոչ ոք կրնար լսել...

—Պէտք չէ մեռնիլ...

Գետնափորին երկար ճամբայներէն անցեր էին, յետոյ յանկարծ սոսկալի աղաղակ մը պայթեր էր։

Քահանային դրան առջեւ խռնուած Արաբացւոց ամբոխը տեսեր էր դատապարտեալը, որ կուգար մըժբոխը տեսեր էր դատապարտեալը, որ կուգար մըժդոյն, արիւնաներկ, բայց գեղեցիկ իւր անձնաթողութեան և ոգեւարի հպարտութեան մէջ, և աղաղակները կ՛արձակէին այս քաջասրտութեան դէմ։

—Ի մահ, ի մահ, կ՛ուռնար ամբոխը։

Եւ հպարտաւոր բազուկներ կը բարձրանային ու ընչանի մը կ՛սպասէին միայն։

Ո՛վ պիտի տար այդ նշանը, բայց յաւտի ի՞նչ հարկ կար այդ նշանին։ Ջարնելը բաւ էր...

Սակայն նոյն այն մարապուն, որ Ուարիլլայի դրանց առջեւ օտարականներն սպաննել կը քարոզէր, հզօր ձայնիւ սա խօսքն արտասաներ էր։

—Աստուծմէ զատ Աստուած չկայ։

Եւ երբ ամբոխը լսեց այս բառերն —աղաղակները դադրեցան, բազուկները վար իջան...

Մարապուն իւր երկար ու վախտ չեռքը հարիւրապետին դլխուն վրայ դրեր էր, եւ բոլոր անոնք, որ զայն բռնած էին, մեկդի քաշուեցան։

Մարապուն մի քանի խօսք եւս ըսաւ, եւ ամբոխը ճեղքուելով՝ յառաջ եկան այնքան տարօրինակ և սոսկալի էակներ որ, նոյնիսկ մարդկային ցեղէ ըլլալուն կասկած կրելի էր տարակուսիլ։

Ուղտի տեւէ երկայն պուրնուկներ հագած էին։

—Թշնամի՛դ Աստուծոյ, ըսաւ Խուանը կոկորդային ձայնով մը, պէտք է որ ոճիրդ արեամբդ քաւես. Պատրաստ ես մեռնելու...

Հարիւրապետն անոր երեսը նայեցաւ և պատասխանեց.

—Քանի որ Արաբաց մէջ կան այնպիսի վատ մարդասպանները, որք անզէն մարդ մը կ'ապաննեն, պատրաստ եմ, կեցցե՛ Ֆրանսա...

Ամէնուն կուրծքէն բարկութեան աղաղակ մ'ելաւ։ Բայց Խուանը հրամայական շարժմամբ մը լռութիւն պատուիրեց։

Յեսոյ ըսաւ։

—Վատ կ'ըսե՛ս..., Ջե՞ս գիտեր որ մեր եղբարք անմեղ կը տոկան այնպիսի տանջանաց, զորս երէկ դուն կրեցիր ըլլաս՝ ցաւէդ կ'ոռնայիր...

—Բոլոր ապացոյք ձեւեր են։

—Ա՛նպէ՞ս կը կարծես, ըսաւ Խուանը հեգնելով։

Յեսոյ խումբին դառնալով յարեց.

—Այս մարդը չ'սպաննուած, սպացուցէք երեն թէ չկայ տանջանք մը որմէ երկնչիք։ Եւ երբ Աստուած հարցաքննէ զինքը, պիտի ըսէ թէ նորա երկիւղածները, լ՛նչեր կը քաշեն իւր դատը պաշտպանելու համար։

Ան տուն Խուաններէն մին յառաջ եկաւ և հարբուխապետին դէմը կայնելով՝ պարնուկը վար ձգեց. ը

Ալպէր սոսկումէն, գրեթէ կարեկցութենէն սարս

սըռաց։

Ծռանասուց մը սկրսը մինչ իսկ իւր ամենէն կա

տաղի թշնամին կը գթայ։

Այս բարձրահասակ և սոսկալի կերպիւ նիհար խո

անկին երանգն, ուսերը, անուժները դաշոյնով ծակ ծակ եղած էին, և եղերքները բորբոքած կարմիր վերքերէն սեւ արեան կաթիլներ կը հոսէին։

Խուանն, առանց դիմաց մէկ ջիղը շարժելու, դաշոյնները մէկուն երախակալէն բռնեց և երկաթը կամաց կամաց դուրս հլաւ սոսկալի վերքէն։

Դաշոյնը ոզոցի ձեւ ունէր։ Ոսկորին քսուելով հանած ձայնը կը լսուէր, միսը պատռելը կը տեսնուէր։ Եւ արիւնն աւելի շուտ կը վազէր։ Թովչի մը խարդախութիւն չէր այս։ Ա՛յ, այս մոլեռանդը կուրծքը կը ճեղքէր, աղիքները կը պատռէր, և քաշած ցաւերն աչքերէն միայն կը հասկցուէին, որոց բերանը ջղաձգօրէն կը շարժէին։

Մեծաւորն այս մարդուն մօտեցաւ, ուսին մէջ մխեաւ դաշոյններէն մին ոյժով մը քաշեց։ Մարդը չշարժեցաւ իսկ։

Ա՛յն ատեն մեծաւորն արիւնակաթ ղէնքն Ալպերի երկնցուց և ըսաւ։

—Դուն որ զմեզ վատ կը կոչես, չհամարձակի՞ս ինքդ ղէնքդ զարնել...

Ալպէրը արհամարհանօք ժպտեցաւ։

—Ոչ ոք իրաւունք ունի ինքզինքը զարնելու, ըսաւ։ Ես իմ երկրիս կը վերաբերիմ, և չեմ ուզեր ինձ վերապահած տանջանքներդ կարճցնել։

—Ա՛յսինքն թէ կը վախնաս... կրակը երկաթէն նամակաճա՞ր կը հասնիս։ Նայէ՛։

Ան նշան մ՛ըրաւ։ ուրիշ Խուան մը զատուեցաւ խմբէն։ վառ ածուխներով լի կրակարան մը բերին անոր առջեւ։

Մարդը պուրնուզը հանելով կրակներէն մին բռնեց և ճակտին վրայ դրաւ։ Սոսկալի յան էր։ Միսը կ՛այրըէր և քանձի հոտ մը կը բուրէր։ Եւ այսպէս այրեց թեւերը, ձիստերը, կուրծքը։ վերջապէս տեսակ մը դիւահարութիւն գալով վրան՝ երկու ոտքով ցատկեց կրակներուն վրայ և սկսաւ կոխոտել զանոնք։

Ալպէրը անտարբեր կը կենար, թէև իր ամբողջ էութիւնն այս զոհը տեսարանէն կը գարշէր։

Մեծաւորն անոր թեւէն բռնեց և դէպ ի կրակը քաշելով

—Եթէ վատ չես, ըսաւ, ձեռքդ սա կրակին վրայ դի՛ր...

—Եթէ ձեռքս վատութիւն մը գործած ըլլար, ըսաւ ժոլիէթի հարիւրապետը պաղութեամբ, չվիտի վառնէի զայն պատժելու։ բայց նա պատուաւոր կերպիւ մարտնչեցաւ քու մարդոցդ դէմ. ուստի կը մերժեմ։

Ցետոյ Խուաններուն դառնալով՝

—Դուք ամենքդ, դուչեց, որ այս տեսակ գարշելի և ծաղրելի արարքներով կը կարծէք հաճելի ըլլալ Աստուծոյ, կ՛ուզեմ ապացուցանել ձեզ թէ ես ձեզի պէս աւելի ճշմարիտ քաջութիւն ունիմ։ Ջենք մը, եթարաղամը, դաշոյն մը տուէք ինձ, և դուք ամենքդ չէք կրնար ցմահ կռուիլ ինձ հետ... Ա՛յն ատեն պիտի տեսնէք թէ ի՛նչպէս կրնայ ընել այն մարդը որ կը յարգէ իր անունն ու հայրենեացն անունը, որու զաւակն լինելը պատիւ կը համարի երբեմն...

Ջայրագին աղաղակներ պատասխանեցին երեսն։

—Ի մա՛հ. ի մա՛հ...

—Հիմայ տեսա՛ք որ, շարունակեց հարիւրապետն

դուք մարդ-ասպանները էք...

—Մեռնիլ կուզես, գոչեց Խուանները մեծաւորը. լա՛ւ, թող ուղածիդ պէս ըլլայ... բայց լաւ գիտցիր թէ այդ մահն այնքան ծանր, այնքան ահռելի պիտի ըլլայ որ, չնո՛րհ պիտի աղաղակես։

Ալպէրը առանց պատասխանելու ուսերը ցնցելով բաւականացաւ։

—Եւ կ'ուզեմ որ գիտնաս թէ այդ տանջաքներն ու չարչարանքները ի՛նչ պիտի ըլլան...

Մեծաւորը թեւը վեր առաւ և սուր ձայնով մը՝

—Մխա՛ս բանտարկեալներն ալ բերէ՛ք, գոչեց։

Ալպէրը դողաց և դառն ցաւ մը ամբողջ մարմինը գրաւեց։

Ի՛նչ, ըսել է ինքը մինակ չէր։ Ըսել է ուրիշ մարդկային էակներ, եղբայրներ, անշուշտ զինուորներ իրեն պէս սոսկալի բանտերու մէջ կը հեծէին։

Եւ զանոնք պիտի տանջէի՛ն։ Ա՛յ, թշուառական հալեռանդն իրաւունք ունէր։ Աակից աւելի սոսկալի բան չէին կրնար պատճառել իրեն։

Սակայն ամբոխը վերսաին դէպ ի քաստահ խուժեր

Ալպէրը այժմ կապուած էր ձողի մը։ Ծայրայեղ վայրենութեամբ դլուխը այնպէս մը գետեղուած էր որ, նկարելի էր իրեն պատրաստուած գարշելի տեսարան տեսնել։

Խե՛ղճ, խե՛ղճ Մէրսէդէս, թերեւս այս ժամուն նա յաէն քովը էր։ Երկուքն ալ իրենց զաւակաց վրայ խօսէին, Մօնթէ-Քրիսթօն յիշելով՝ ամէն երկիւղ ի ց կը վանէին... և ասդին Ալպէրը պիտի մեռնէր, իսկ

էսբէրանս ո՞ւր էր...

Գեռնադոտներուն դէմները բացուեր էին։

Եւ հարիւրապետը մարդկային ձեւեր տեսաւ, որք մութէն դուրս կ'ելլէին։

Երեսունէ աւելի էին։ Ամէնքն ալ Ֆրանսացի։ Բայց ա՛հ, ի՞նչ վիճակի մէջ։

Մեծաւ մասամբ գինուորներ էին, որոց վրայ հագուստ կոտոր կոտոր եղած համազգեստ մը կը տեսնուէր։

Սեղմ կապուած ըլլալով՝ հագուստ կրնային քալել և նոցա ժպտուն դէմքին վրայ խեղճերուն կրած ամէն տառապանաց հետքերը կը տեսնուէին։

Եւ սակայն, ինչպէս պահ մ'առաջ ծօլիէթ հարիւրապետը, նոքա եւս գերագոյն ճիգ մը կ'ընէին չակըռելու և դիրնք ճնշող ցաւոց բեռին տակ ծռած չըմնալու համար։

Կային նաեւ հոդագործներ, գործաւորներ, խեղճ գաղթականներ, զորս իրենց աշխատութենէն կորզած էին, զորս կ'արտասուէին կանայք և զաւակունք, որք այլ եւս զանոնք չպիտի տեսնէին։

Եւ բոլոր այս մարդիկ, զգալով որ այս պահուս իրենք Ֆրանսական մեծ հայրենիքը կը ներկայացնէին թշնամեաց առջեւ, քաջութիւն ցոյց կուտային։

Բնաւ տկարութիւն չէին յայտներ, գիտութիւն չէին հայցեր։ Հարկ էր մեռնիլ, պատրաստ էին։

Մեծաւորը զանոնք անցընել տուաւ այն ձողին առջեւէն, որու կապուած էր Ալպէրը։

Զինուորները ուսնոցները ճանչցան և զինուորական կերպիւ բարեւելով՝ կեցցէ՛ Ֆրանսա գոչեցին...

Ալպէրը նայուածքով միայն կրնար չնորհակալ ըլ

լալ անոնց։ Բայց աչացը մէջ ի՜նչ սիրոյ փայլակ մը կար այս մարդոց համար, որք ցաւօք և դիւցազնութեամբ իւր եղբարքն էին։

Բայց յանկարծ իւր ուշը դրաւեց բառական տարօրինակ անձ մը, որ այս տխուր թափորին ամենէն ծայրը կը դանուէր։

Ա.յլոց պէս նորա ձեռքերն ալ կռնակը կապուած էին, բայց վանմ հպարտութեամբ մը կը քալէր։ Բայց յատուկ իւր կերպարանքը միւսներուն չէր նմանէր։

Կարճ կերպիւ նկարագրելու համար բանք թէ այն ժամանակուան նորաձեւ երիտասարդաց պէս հադուած էր։

Սկովտիական քառակուսինեերով առնադգեստ, մուտաքէ բաճկոն, ոսկի կոճակներով կապոյտ թիկնոց։ վերջապէս երկու մանրամասնութիւնք զարմանալի կերպիւ կ'ամբողջացնէին այս զարդարանքը, որ չիսահին բսեվով, պարագային յարմար չէր։ վայլուն կօշիկներ հագած և կէս թիրոլական կէս պօլիվիական այլանդակ ձեւով գլխարկ մը դրած էր։ Ի մի բան 1848ի վերջին նորաձեւութիւնն էր։

Իրաւ է որ բոլոր ասոնք նոր չէին, սակայն ձևն ու այլանդակութիւնը կը տեսնուէր որ այս դիղեցիկ բաներու տէրը յուսահատութեամբ մարտնչած էր այնպիսի արկածներու յարաձիգ դէպքերու դէմ, որք պէտք է խոստովանիլ թէ հանդերձի պահպանութեան յարմար չէին։

Բայց յատուկ այս մարդն ալ իւր հանդերձներէն աւելի պայանդակ չէր։

Հասակն յոյժ բարձր, չափազանց վոխտ, դէմքը երկայն, զոյգ մը ահագին պեխեր, փոքր, դորշագոյն և սուր աչքեր, մեծ և հեղնոտ բերան։ այնպիսի արթնութիւն մ'էր սա, որ մարդուս ուշը կը դրաւեր և հետաքրքրութիւնը կը չարժէր։

Իրաւ է որ միւսներուն պէս սա եւս բնաւ տրամադիր չէր երեւնալ ամենափոքր տկարութիւն մը ցոյց տալու Ուարկլացի մելեագանդներուն առջեւ, մինչ իսկ անոր վրայ այնպիսի բան մը կար, որմէ զուրկ էին իւրաքանչիւր ընկերներն։ այն է հեգնական և միանգամայն լերդ կերպարանք մը, որմէ կը հասկցուէր թէ արտասովոր քաջասրտութեան տէր էր։

Մեծաւորին առջեւէն անցած ատեն՝

—Բնդ չդարեւելուս ներբ՛, ծերուկ չարաճճի՛, ըսաւ։

Միւսը, որ Ֆրանսերէնն քիչ գիտեր, անշուշտ չհասկըցաւ։

Մալրարանին հեգնութիւնը վրայ գնաց, բայց երբ հարիւրապետին մօտեցաւ՝ դէմքը յանկարծ կնճռոտեցաւ։ անպատուական տխրութեան արտայայտութիւն մը տարածուեցաւ կերպարանքին վրայ։

Ա.յլերը, այնպիսի համակրութիւնն մ'ղգալով՝ որուն պատճառը չէր հասկնար, աչքերն լրմէ չէր զատեր։

Մարդը գլխովը նշան մ'ընելով՝ անոր ուշադրութիւնն հրաւիրեց և շուտ մը ըսաւ։

—Հարիւրապետ, բոլոր սատանայից, դրախտի բոլոր սրբոց վրայ կ'երդնում որ պէտք չէ մեռնիլ։

—Ի՜նչ, դուշեց հարիւրապետը, դո՞ւք էիք...

—Ա.յո՛, ե՛ս, կրկնեց նկէ, խմբապետը... որ ձեր բանտարկեալն՝ պ. սը Պօշանի բարեկամն եմ... կրո՛ղ... այն

օրը մեզի պէտք է... եթէ կրնան՝ թող վաղն ապաննեն մեզ... ուշադրութիւն ըրէք... վարպետութիւն մը դանենք... մեռնելու չէ՛, մեռնելու չէ՛։

Բոլոր այս խօսքերն հրաշալի արագութեամբ մ'ըսուեցան, վասն զի նախ որ շուտ կը քալէին, երկրորդ՝ հարկ էր որ օտար ականջները այս խօսքերուն իմաստը չհասկնային։ Այդ օտարներէ չհասկցուելու լաւագոյն միջոցը դիտեցին որ կարելի եղածին չափ շուտ խօսիլն է։

Ալպերը գլխովը վհատութեան նշան մ'ըրած էր։

Մեռնելու չէ՛. բանը դիւրին էր։ Իրաւ է թէ այս յուսոյ խօսքը ո՛րքան ալ որ անճշմարտանման և յիմարական էր, վազի մը պէս հնչեր էր հարիւրապետին հոգւոյն մէջ. բայց ի՞նչ կրնար ընել... ի՞նչ կրնար փորձել...

Կրամիկնէ՝ միշտ բարձրագլուխ և հաստատաքայլ՝ անցեր գացեր էր։

Ցոյս, կ'ըսէինք, Ալպ յոյսը ի՞նչ որ ալ ըլլար, հիմնաւոր կամ խաղաւոր, շուտ պիտի ցնդէր։

Վասն զի քանի մը վայրկեան վերջը կատաղի ազաղակներ կը լսուէին։

Մարապուն յիմարական շարժուձեւներ ընելով՝ նշան մը տուեր էր խուռներամին։

Ամբոխ ալ առաջին երկաթ բանտարկեալները բռներ կ'երթար...

Գարշելի՛ տեսարան. մարդուս դրկէն կը մերժէ դրել իր սոսկալի տանջանքներն, որոց ենթարկուած էին այս դժբաղդները։ Խուլ մռնչիւններ կը լսուէին, զէնքեր ալ կը պատրաստէին, բայց բնութիւնն ամենայն ձայն կը բռնադատէր։ Կատարող սկսողներու աղմուկը կը լսուէր. այրող ներու հառաչը յօդս կը բարձրանար։

Մարդկային սպանդն սկսեր էր։

Ամէն անգամ որ պողպատը միսը կը ճեղքէր, ամէն անգամ որ զոհ մը դատին ինկնալով՝ երկար ոռնեւարի մը մէջ կը դալարէր, ժողովուրդը կը ծափահարէր...

Վասն զի խուռներամը չարչարելու մէջ վարժ էին։ Սոսկալի մոլեռանդութեամբ մը խթիչ դիպուածներն իրենց անձին վրայ փորձած էին։ Մարդկային ցաւերն այնպիսի դաչնամուր մ'էին, զոր կատարելապէս կը ճանչնային։

Եւ այս չարչարուող Ֆրանսացւոց և ո՛չ մին կը զիջաներ ազատել։

Ամենքը հպարտութեամբ կը դիտէին մահը, և մարդու ձեւով անբանները կ'արհամարհէին։

Իրաւ է որ ազգային դպացումն յարդելի է, և իրենց նախկին ազատութեան վրայ ոգեացող Արաբք կրնան խոհական անձանց համակրութեան արժանանալ. Ապտէլ-Քաաեռի հակառակորդները համարում ունէին իւրեանց։ Բայց երբ դիմադրութիւնը, վրէժխնդրութիւնն այս հրեշային ձեւերը կ'առնան, երբ մարդկէ երկնց վայրենութեամբ հայրենեաց անունը կ'անպատուեն, այն ատեն իրաւունքը յաղթողինն է, վասն զի քաղաքակրթութեան և մարդասիրութեան ներկայացուցիչն է։

Մեր մեծ և սիրելի Ալէքսանդր Տիւմայի վիպասարդ, և անոր մէջն ալ սոսկալի վայրենութեան տեսարանները պիտի տեսնէք։

Նոյն իսկ այս տողերը գրած ժամանակիս ո՛չ ապագէն իրու թէ երկնց երկիրը ձեռք անցնելու աշխատող այս մարդկէ սոսկալի և արիւնահեղ կերպիւ կ'ան

դամասանն մեր վինուորներն։

Անապատին արեւէն այրած, աւազէն ցամքած այս ցեղերու բարկութիւնն ու անգթութիւնը գերմարդկային ոյժ մը կ'ստանան։ Վայրի կենդանին է, բարենին է որ կ'երեւի իր վատութեամբն ու կատաղութեամբն, անապատի գազանն է որ իր որսը կը գիշատէ և նորա յօշոտուած անդամոց արիւնովն զգալով անպատում ուրախութիւն մը կ'ինամնայ։

Հարիւրապետը աչերը բացած կը դիտէր։ Նորա զբաղանքը տեսակ մը արբշռութեան փոխուեր էր։ Ա.յժմ ինքզինքը երազի մը մէջ կը կարծէր...

Մարդիկ յառաջ մղուելով՝ մի առ մի սպաննողաց շրջանակին մէջ կը մնանէին։

Խուանները սկսկլական զառանցանաց ենթակայ կը թուէին։

Կը պարէին, կ'առնային, կենդանի մսերուն վրայ կը կոխոտէին...

Եւ սոցա ամենուն վրայ կ'եչխէր երը դամբանական զանգակի մը հնչիւնն՝ Աստուծոյ անունը, զոր Մարապան կ'արտասանէր սուր ձայնիւ, մինչդեռ խուաններու զբաղաղրը թեւերը կուրծքին վրայ ծալած, աչերը տեսակ մը յափշտակութեամբ յերկինս յառած՝ կարծես մարդկային պատարագ մը կը մատուցանէր իր աստուծոյն։

Բանտարկեալց թիւն երթալով կը նուազէր։

Տասը, քսան, երեսուն հոգի մնացեր էին։

Մարդասպանք արեան մէջ կը քալէին, և այդ ամենն այնքան բաւական կը ժայթքէր որ, ծիրանի պատճառ մը կը ձեւացնէր նոցա մարմնոյն վրայ։

Եւ Ալպէր միշտ կը տեսնէր այն մարդուն բարձր հասակն, որ անմիտ յոյս մը ներշնչած էր իրեն, այն խրճիթապրելն, նոյն կրաթխկեչէլ, որու անունն առաջին անգամ ըլլալով կը լսէր և որ սակայն վաղեմի բարեկամի մ'անունը կը թուէր իրեն։

Դիպուածը այնպէս բերած էր որ էնբաթսիալի խմբագիրը վերջին կարգին մէջ կայնած էր։

Բայց այս բանն առաւելութիւն մ'էր, մինչ ընդհակառակն աւելի ազէկ չէր շուտ սպաննուիլ, քան թէ հասպառնալ այնպիսի սոսկալի սպաննութեանց ականատես ըլլալ։

Հատ մ'ալ ինկաւ։ Հատ մ'ալ։ Հատ մ'ալ...

Հինգ հոգի մնացեր էին... և կարգը կրաթխկեչէլինն էր։

Ա.յս միջոցին տարօրինակ դէպք մը պատահեցաւ։

Ալպէր թէ և բաւական հեռու էր զոհերու խումբէն, սակայն նոցա դիրքը յոյժ լաւ կը տեսնէր։ Մէն մի քայլ, որ զանոնք մահուան կը մօտեցնէր, իրեն համալ սոսկալի ազդարարութիւն մ'էր։

Ցանկարծ կրաթխկեչ իր բոլոր ուժովն բարձրութեամբ գետին ինկաւ։

Ո՞վ զարկեր էր զայն. կ'երեւնար թէ դահիճներն իրմէ բաւական հեռու ըլլալով՝ չէին կրնար զինքը զարկած ըլլալ։

Հրացանի ձայն չէր լսուած։

Բայց այն վայրկենին, մինչդեռ տակաւին Ալպէրի պղտոր ուղեղն այս անհեթեթ պարագային ուրիշ մեկնութիւն չէր կրցած տալ, բայց եթէ սա թէ խմբագիրն

պլայլուԹիւնէն, Թերեւս վախէն մեռած էր — քաղ.ին մէջ տակալէ աղաղակները լսուեցան։

Եւ հարիւրապետը զարմանօք տեսաւ որ խուռներնը տակաւին ողջ մնացողները միակ հարուածով մ'ապտակեցին, յետոյ իրենց արիւնաԹուրմ ղէնքերը ճօճելով տարատակին վրայ վազեցին, ամբոխն ալ նոցա Հետեւէնն։ Մարապուն, մեծաւորը մոռնալով որ իրենց դէմառոր զօհը տակաւին ողջ էր, նետուեցան վայրի ամբոխին մէջ, որ իւր կատաղի աղաղակներովն օդը կը ԹնդացնէրԱմենքը զէրար հրեղով հրմշակելով՝ մէկ վայրկեանի մէջ Քաապահի հրապարակը պարպուեցաւ։

Արեւը մարը կը մտնէր և Ալպէր վերջալուսոյ ապտակ լուսով Ուարկլայի դէմառոր փողոցին մէջ Թափոր մը տեսաւ որ կը յառաջանար։

Ձիաւոր մարդ մը իւր բարձր հասակաւն կը տիրէր ամբոխին վրայ։

Ո՞վ էր այս մարդը։

Եւ զայն մտածած առեն՝ Ալպէրի ականջին կը հնչէր տակաւին այն ձայնը, որ «պէտք չէ մեռնիլ» ըսեր էր։

Սա այն մարդն էր որ Ադկիսց շագինաւով Մէջերկրականն անցեր էր։ Նա որ սպառնական հրաժեշտ մը Թողեր էր ՄօնԹէ-Քրիսթոյի, նա որ Մալտար անուամբ ատրապերը էր, որ Հարուստ ըսել է, և որ իրապէս Մ էհմէտ-Պէն-Ապտուլլահ կը կոչուէր։

Կոմսին Պօշանի հետ ունեցած խօսակցութենէն և Քուքուի ըսածներէն հասկցանք Թէ ի՛նչ դեր կը կատարէր այս մարդը, որ անողոք առԹլութիւն մը երդուած էր Եւրոպացւոց։

Խորամանգ էր։ Ի սկզբան յաջողեր էր Ֆրանսացւոց

վստահութիւնը գրաւել, որք անմիջապէս Թէնեսէնի կառավարիչ անուանած էին զինքը։

Նորա չողոքորդութիւնը զերեզնք խաբեր էր և պահ մը կարծուեր էր Թէ Ֆրանսա իրմէ աւելի անձնուէր և օգտակար դաշնակից չունէր։ Պատրա՛նք։

Մինչդեռ Մալտար (մենք այս անուամբ պիտի կոչենք զայն) մէկ կողմանէ բարեկամութիւնը կը ջանար ապացուցանել այն առատ այլաբանութեամբք և բանաստեղծական օրինակներով, որք շատ անգամ ճչմանեն Ֆրանսացւոց կեանքին և իշխանութեան դէմ արտադին դաւ մը կը նկատէր։

Առ ինքն կոչեր էր խուռներու ազնատաբեր միաբանութիւնն և յաջողեր էր իրեն կողմնակից ընել զանոնք, որք բնաւ ոճրի մ'առջեւ չէին ընկրկեր։

Նոքա այժմ զինքը մոխիկ կ'ընէին. նորա խօսքերն, որք խուռներու վայրագ բնազդութիւնները կը գրգռէին՝ իրը խռովութեան նշան կը տարածուէին հեռուն։

Մալտար այն խուռները խստիւ յանդիմանեց։

Ա.յժմ ամենքը կը դողային ահաբեկ։

Ա.յս վտառերը որ պահ մ'առաջ իրենց անզէն թըշնամիները կը զարնէին, կը դողային այժմ այս տիրոջ առջեւ, որ իւր բարկութեամբը կը ջախջախեր զանոնք։

Նշանացի վռնտեց զանոնք և Մարապուին ու մեծաւորին հետ առանձին մնաց։

Ա.յն առեն իւր բովանդակ դժգոհութիւնն երեւան հանեց։

—Ուրեմն չհասկցա՛ք Թէ, կ'ըսէր անոնց, Աստուած ի՛նչ յատակագիծ ներշնչեց ինձ։ Ես այն անիծեալ ժո-

ղովրդեան հետ երկար առեն ապրելով՝ անոնց բնութիւնը հասկցայ։ Մեզի համար անողոք են, բայց ինքզինքնուն համ իրենց սիրելեաց համար չարունակ կ'երկընչին։ Բաղմաթիւ պատանդներ պէտք են մեզ, այնպիսի բարձրաստիճան և կարեւորութիւն ունեցող պատանդներ որ, նոցա կեանքը ծրանագրոց դէմ երաշխաւորութիւն մը, պրաւական մը ըլլայ մեր ձեռքը։ Սպառնալով որ ձեռքերնիս գտնուած գերիները կ'ըսպանենք, նոքա մեզ պիտի հնազանդին, ծունգերնին պիտի խոնարհեն և կանանց պէս պիտի արտասուեն... Դուք չհնազանդեցաք ինձ, որով մեր երկրին փրկութիւնը ետ ձգեցիք...

Եւ երբ Խուանները ինքզինքնին կ'արդարացնէին՝

—Ողջ չ'ուզե՛ր, ըսաւ խստիւ։ Եղածը եղած է։ Այժմ ինձ անկ է ձեր գործած վնասը գտմանել...

Վայրկեան մը խորհեցաւ, յետոյ՝

—Հո՛ս բերէք, ըսաւ, այն երիտասարդ գերին, ղոր իմ հետաքրքրիմ մարդիկս բռնեցին։

Երկու Խուանները ողջունեցին և դուրս ելան։

Վայրկեան մը վերջը դուռը նորէն կը բացուէր, և Էսբէրանս պահակներու հետ նորս կը մտնէր։

Էսբէրանս Խուաններու ձեռքն ինկեր էր այն կէզծ յարձակման միջոցին, յորում հայրը, որ այժմ յուսահատ էր, երմէ հեռացեր էր։

Տղան գժգոյն էր, բայց իւր սեւ նայուածքին մէջ վարվռուն կրակ մը կար։

Մալտաք իւր սպառնալի աչերն անոր վրայ յառեց։

—Մօտեցի՛ր, ըսաւ անոր, և անունդ ըսէ՛ ինձ...

Տղան գլուխ վեր առաւ և երկու թեւեր կուրծքին

վրայ ժողվելով՝ պատասխանեց։

—Ի՞նչ իրաւամբ կը հարցաքննես զիս...

Մալտաք բարկութենէն դողաց, բայց անմիջապէս ինքզինքը զսպեց։

—Ջօրութեան իրաւամբ, ըսաւ ահռելիները սեղմելով՝ քու երկիրդ դէմ վրէժխնդրութեան իրաւամբ...

—Իմ երկիրս Ֆրանսան է, պատասխանեց տղան, ազգութեան հայրենիքն է այն...

—Բա՛ւ է, գոչեց Մալտաք։ Նորէն կը հրամայեմ քեզ որ պատասխանես։ Անունդ ի՞նչ է...

—Բայց ինչո՞ւ պահեմ. անունս Էսբէրանս (յոյս) է։

—Քիչ մը վերջը ծուսահատութեան պիտի փոխուի այն։ Հօրդ անունն ալ պիտի ըսե՛ս...

—Հօրս անո՛ւնը, ըսաւ Էսբէրանս գերագոյն հպարտութեամբ մը։ Այդ անունը հարցուր չարիք ընողին, ոճիր գործողին, անողոք պատուհասին առջեւ դողացողին... այո՛, այդ անունը պիտի ըսեմ քեզ, և զայն լսած առենդ պիտի ժպտունիս, վասն զի պատժուած օրդ ալ այդ անունը պիտի հնչէ ականջիդ... Հօրս անունը Մոնթէ-Քրիսթոյի կոմս է։

Անկարելի է բացատրել թէ Էսբէրանս այս յարգելի անունն ի՞նչ հպարտութեամբ արտասաներ էր։

Մալտաք ժպտեցաւ։

—Ա՛յո՛, այո՛, գիտեմ, ըսաւ։ Քու հայրդ այն մարդոցմէ է, որք կը կարծէին թէ ամէն բան իրենց զօրութեան տակ առած են և կ'երեւակային թէ ամէն բան պէտք է խոնարհի իրենց առջեւ... Ես իւր սխալը պիտի հասկցնեմ իրեն։ Բայց ըսէ՛ ինձ թէ քու հայրդ՝ Մոնթէ-Քրիսթոյի կոմսն իւր երկրին մէջ ի՞նչ աստի-

ճան ունի։ Անշուշտ ամենէն հզօրաւագանեաց մին է...

—Չեմ հասկնար թէ ի՛նչ կ'ըսես...

—Կ'ուզեմ հասկնալ թէ Ֆրանսական կառավարութեան մէջ ի՞նչ պաշտօն ունի... Բանակի հրամանատա՞ր է... դիտեմ որ ձեր Հասարակապետութեան մէջ (կարծեմ թէ ձեր կառավարութիւնն այսպէս կը կոչուի) թագաւոր չկայ... բայց ձեր դինուորներուն և նաւատորմիղին հրամայող մարդիկ կան... հայրդ ալ անոնցմէ՞ է...

—Հայրս, ըսաւ Էսթերհան, իւր իրաւունքէն ուրիշ իրաւունք չի ճանչնար... Բնաւ մէկէ մը ախոյեան կամ հրաման չ'ակնկալեր... Թագաւոր չէ... ո՛չ, բայց ամենուն կը հրամայէ... Ի՞նչ պէտք է իրեն ախոյեան մը։ Հայրս ամենէն գերիվեր է. ահա իմ գիտցածս այս է։

Մալտար մեծաւորին մօտեցաւ և ցած ձայնով ըսաւ.

—Ահա մեզի ասանկ պատանդները պէտք են։ Այն մարդը այս տղան ձեռք անցնելու համար ի՛նչ զոհողութիւն չըներ...

Ձեռայ խօսքը վերատին Էսթերհանի ուղղելով.

—Հայրդ հարո՞ւստ է, ըսաւ, շատ հարո՞ւստ է...

Այս վերջին պահանջէն մին Մալտարի անունն արտասանելով՝ Էսթերհան լսեց։

Ձեռքը դէպ ի մեծաւորն երկնցուց.

—Դու գիտնալու ես, ըսաւ, դու որ գողի մը պես անոր անունը մտար։

Մալտար կատաղութեան աղաղակ մ'արձակեց։ Այս բառը խարազանի հարուածի մը պէս իջեր էր երեսին։

Իջեր ոտտամբ տղուն վրայ յարձակեցաւ և եաթաղանին ծայրն անոր կուրծքին կռթնցուց։ Էսթերհան

չարժում մ'իսկ չըրաւ։ Երեսներէն մրմունջ մը չելաւ։

Միայն թէ պաղ քրտանց փոքրիկ կաթիլներ ապտակ ճակտին վրայ մարդարտի պէս կը շարուէին։

Մարդուն կարկամեալ դէմքն ու տղուն հանդարտ կերպարանքը տարօրինակ հակապատկեր մը կ'ընէին։

Սակայն Մալտար չզարկաւ։

—Քա՛յ ես, ըսաւ։ Հայրդ անշուշտ շատ կը սիրէ զքեզ։

Էսթերհան չպատասխանեց։ Միայն թէ հօրն անունը լսած ատեն այտերը թեթեւակի կարմրեցաւ։

Եւ Մալտար կը մրմնջէր.

—Ո՛հ, ես այդ հպարտութիւնը կը կոտրեմ... Եւ քու հո՛րդ, Մոնթէ-Քրիսթոյի կոմսին քաջութիւնն ալ պիտի ջախջախեմ, յարեց դիդուելով... կ'ուզեմ որ, կը լսե՞ս, կ'ուզեմ որ արտասուելով և հեծկլտով առջեւս խոնարհի... կ'ուզեմ որ պաղատի ինձ, որ կը յանդգնի անարգել և ես ալ իւր աղաչանաց արհամարհանօք պիտի պատասխանեմ...

Ծանկարծ մտքէն խորհուրդ մ'անցաւ, և մեծաւորին դառնալով՝

—Ուրեմն, յարեց բարկութեամբ, բոլոր այն անիծեալ Ֆրանսացիք սպանուեցա՛ն... անոնցմէ և ոչ մին չազատեցա՞։

Մեծաւորը գլուխը ծռեց։

—Կը սխալիք, ըսաւ այն ատեն Մարապուն. կարծեմ անոնց մին տակաւին ձողին կապուած էր, երբ...

—Ատուած վկայ, ճշմարիտ կ'ըսես... Նա տակաւին իւր տանչանաց կ'սպասէ...

—Ձորս ես միայն կրնամ հրամայել, ընդմիջեց Մալ

ոաբ յօնքերը պռատելով։ Այդ բանտարկեալը ո՞վ է։

—Ֆրանսացի սպայ մ՚է, զոր մեր Խուան Հղբարց մին առնած էր որ մեռաւ...

—Այդ սպային անունն ի՞նչ է...

—Բանակին մէջ Ժօլիէթի հարիւրապետ անուամբ հանչցուած էր...

Էսբէրանս այս բառերը լսած ատեն՝ ցաւագին ղողմանաց աղաղակ մ՚արձակեց։

Այս անունը լսած էր արդէն հօրմէն։ Մօնթէ-Քրիսթօ զայն փրկելու համար էր որ անապատին վտանգներն առ ոչինչ դրեր էր։

Ու հարիւրապետը դեռ կենդանի՛ էր։

Մալտար ալ այս անունը լսած էր, ինքն ալ գիտեր թէ Մօնթէ-Քրիսթօ ի՛նչ հոգածութիւն ունէր անոր վրայ։ Հեղնական ժպիտ մը նորա շրթունքը կարկամեց։

—Ժօլիէթի հարիւրապե՛տ։ Աստուած վկայ, շատ աղէկ եղեր է որ զայն չէք սպաններ։ Դու որ Էսբէրանս կը կոչուիս, յարեց խօսքը պատանւոյն ուղղելով, հիմայ պիտի հասկնաս թէ Մալտար ի՛նչպէս վրէժ կը լուծէ զինքը արհամարհողներէն։

Ապա մեծաւորին ըսաւ։

—Գացէք այն բանտարկեալն առէք և անմիջապէս հոս բերէք։

Մեծաւորն դուրս ելաւ։

Մալտար սրահին մէջ մեծաքայլ կը շրջէր։

—Վերջապէ՛ս, կ՚ըսէր, պատերազմը պիտի սկսի։ Ո՛վ պիտի կարենայ դիմադրել ինձ։ Ո՛վ օտարազգիդ, պիտի վանեմ զձեզ որ մինչ ի ծով, կու պիտի տայ զձեզ։

Ձեռայ դրպանէն մադաղաթներ հանելով՝ սեղանին

վրայ դրաւ և տենդային ուշադրութեամբ մ՚ուսումնասիրեց զանոնք։

Էսբէրանս միշտ անշարժ կեցած կ՚սպասէր։

Ֆա՛ջ տղայ։ Ա՛հ, ո՛րքան արժանի էր իւր հօրն։

Սեւ-ժայռերու վրանէն յափշտակուելէն ի վեր բնաւ բերնէն դանդատ մը հանելով՝ քաշած ցաւերը չէր յայտնած։

Գիտէր որ դատապարտուած էր, և առնական քաջութեամբ ու առանց վարանելու կը դիտէր մահը։

—Տէ՛ր, տէ՛ր, գոչեց մեծաւորը՝ շտապաւ սրահը մտնելով։

—Ի՞նչ կայ։

—Ժօլիէթի հարիւրապետը...

—Ի՞նչ է եղեր...

—Անուր կաչկանդուած և ձողի մը կապուած էր...

—Վ՛երջը...

—Կապերը կտրուեր են. աներեւութացեր է...

—Աներեւութացե՛ր է, գոչեց Մալտար կատաղութեամբ. ա՛հ, թշուառական մտանչնե՛ր... ձեր վատութիւններուը սուղի պիտի նստեցնեմ ձեզի... Ըսել է այն ատեն ձեռքէս կը պրծի՛։ Բայց ո՛չ, անկարելի է... Լաւագոյն ձիաւորներէն տասն հոգի Ուարկլայի շուրջն ամէն կողմ թո՛ղ վազեն։ Անկարելի է որ այն թշուառական Ֆրանսացին տակաւին կարողացած ըլլայ վախչիլ։ Գացէ՛ք, գացէ՛ք... և երթէ մինչեւ ժամ մը այն մարդը բռնելով Քասպահին մէջ չյանձնարակէք, այն ատեն վա՛յ ձեզ...

Մալտարի ձայնն այնքան հրամայական էր, աչացը մէջ անանկ կատաղութիւն մը կը փայլէր որ, մեծաւորը

դուրս նետուեցաւ՝ վախնալով որ հրամանին գործադրութիւնն ուշ կը ձգեայ։

—Գալով ասոր, ըսաւ Լաբէբրանսը ցոյց տալով, պզին երկաթի սենեկին մէջ փակեցէ՛ք։

ԻԳ։

Փախուստ։

Ո՞նչ եղեր էր և Ալպէր ի՞նչ հրաշքով փախեր էր...

Զայս բացատրելու համար՝ հարկ է որ ժամ մը ետ դառնանք, և դանք այն վայրկեանն յորում Աբաբայիք Ասուածոյ առաքեալը՝ Մալտաբը դիմաւորելու կը վազէին։

Ընդհատողը մոռցած չէ որ կրաթխէյ յօդուածագիրը հրապարակին պարպուելէն վայրկեան մ'առաջ արեան ճահիճին մէջ ինկեր էր։

Կոտորածը երկար տեւեր էր, և արդէն արեան հոտն առնելով եկող գիշակեր թռչունք դիակներուն վրայ կը խոյանային։

Տեսարանը սոսկալի էր. այս ծայրատեաց մարմնոց, ոչնչացրի դերագոյն ցաւոց մէջ գալարեալ անդամոց շղթայը դեռեւին մոացածին երեւոյթ մ'ունէր։ Գիշերը կոխեր էր, և աստեղաց տմոյն լուսոյն այն ապանութեան դաշտն աւելի եւս սոսկալի կերեւէր։

Եւ անապատի թռչունք կը դառնային, միշտ կը դառնային, և իրենց առատ կերը խոստացող անշարժութենէն համարձակութիւն առնելով՝ տակաւ առ տակաւ վար կ'իջնէին։

Անապատի այս լերկպլուխ, արիւնկոտոր և սուր ճիրաններով զազանները կը նմանէին առասպելներու այլանդակ ճիւաղներուն կամ կնատէմ անգղերուն, որք տղայ ժողովրդոց երեւակայութեան մէջ կ'ապրին։

Նոցա բիւրատ ազազակն՝ թշնամի մը տեսնող և մռնչելու սկսող շան մը հաչիւնին կը նմանէր։

Վերջապէս ամենէն յանդուգնը եղաւ և երբ թեւերը պարզեց վերստին թռչելու համար, կտուցովը մարդկային մսի կտոր մը բռնած էր։ Ապա ուրիշ մ'ալ. սոսկալի խնջոյքը կ'սկսէր։

Ծանկարծ թռչնոց մէկուն գլխուն սոսկալի հարուած մ'իջաւ և ձայն մը գոչեց։

—Է՛, կեցէ՛ք, բարեկամ... և գքեզ կերակուրի հրաւիրեցի՛...

Եւ կրաթխէյ անմիջապէս ցատկելով՝ ելաւ կայնեցաւ։

Կենդանի էր, այո՛, կատարելապէս կենդանի։ Եւ նորա բարձր հասակն մթնշաղին մէջ կանգուն տեսնելով՝ զազիր չոկն սկսաւ վախչել։

—Կ'երեւի որ մեզ հանգիստ կը թողուն, յարեց խմբապետն։ Ուրեմն յառա՛ջ...

Եւ թոթռուելով՝ վազեց Ալպէրի քով, որ այն սոսկալի աւուր ցաւերէն դժուասպառ՝ իւր կապերուն մէջ կքեր էր տեսակ մը թմրութեան մէջ ինկած։

—Է՛, հարիւրապե՛տ, ըսաւ կրաթխէյ անոր ձեռքերը բռնելով։

—Ա՛հ, մա՛հ, մրմնջեց Ալպէր։ Բարի եկար։

—Կրո՛ղ, մահն ի՞նչ է... ես ձեզի ի՞նչ ըսեր էի, հարիւրապետ... պէտք չէ մեռնիլ։ Կը տեսնէք որ ես կենդանի եմ...

—Դո՛ւք... բայց ի՛նչ հրաշքով...

—Հրաշք չկայ։ Շատ պարզ բան է այս։ այն արեան գինովներն խառն ի խուռն կը զարնէին, Ալ աչքերնին դարձեր էր... ես ալ գետնի վրայ պառկեցայ... Նոքա չնչահատեցին իսկ... և խոհեմութեամբ քիթս արիւնէն դուրս չհանեցի։ Իրաւ է որ մուշկի հոտ չուներ. բայց առանց քիչ մը նեղուելու բան մը չվաստակուիր. և կեանքը կ՚արժէ որ մարդ պահ մը առանց անուշ հոտի ձեպ... Անիծա՜ծ... վրաս ալ դանակ չունիմ։

Այս վերջին բացագանչութեան պատճառն այն էր որ քաջասիրտն Կրաթիկէ Ալպերի կապերը քակելու դժուարութիւն կը քաշէր։

Մէկ կողմանէ կը ճգնէր, միւս կողմանէ խօսքը կը շարունակէր։

—Նախ ինքզինքս ներկայացնեմ... Կրաթիկէ... նմմանուէլ... երեսուն երեք տարեկան, որ Փրիստոսի տարիքն է... արհեստով խմբագիր... Պ. ար Պօշանի բարեկամ, ինչպէս որ ըսի ձեզ... բայց յաստի սատանի նման կրակոտ ու եռանդուն, կաչաղակի մը պէս շատախօս, արտայայտի մը պէս հետաքրքիր... իւր հաճոյքին համար Ալճէրիի մէջ կը պտտի. կ՚ուզէ ամէն բան հասկնալովնիբարսխալի համար յօդուած պատրաստել... կիսաբոլորակին մէջ սա Պէտուէններուն ձեռքն ինկաւ... հոգի մը մէջ դրուեցաւ... իմացաւ որ դուք ալ իրեն դրացի էք... և արդէն վախչելու սքանչելի յատակագիծ մը պատրաստեր էր... և կուգար ձեզի

ալ իմաց տալու, առանց կանխաւ ապրարարելու մեզ անդիմի աշխարհ ղրկելու պէտք զգացին... Ի մի բան կրաթիկէ, որ ըսաւ ձեզ թէ մինչեւ վերջին վայրկեանը պէտք է դիմադրել... և որ կ՚ազատէ ձեզ... Օ՛ն... սա բարի կրաթիկէի երեսին մէկ մը ժպտեցէ՛ք...

Կը չաղակրատէ՛ր, կը չաղակրատէ՛ր. արդարեւ ծխածաղն մարդուս չրթանց դամուած ըլլալու է որ տակաւին կատակելու այժ ունենայ, երբ մի քանի վայրկեան առաջ ապահով է որ մարդասպաններու եաթաղանին ներքեւ անշնչացեալ պիտի իյնար։

—Ա՛, եղաւ, դուչեց վերջին կապն ալ քակելով։ կրո՛ղ... չուանները ալ ի՜նչպէս կը կապեն... է՛, ինձի նայէ՛...

Այս վերջին աղաղակն, որ կատարեալ Բարիզցիի մ՚արտասանութեամբ արձակուած էր, Ալպերի ուղեալ էր, որ ազատութիւնը գանելով՝ այժմապատ էր և հապճեպ կրնար կանգուն կենալ իւր կիթոզ ծնգանց վրայ դեղեւելով...

—Օ՛ն, կծիկը դնելու է և չուտո՛վ, ըսաւ կրաթիկէ.

—Ո՛հ, պարո՛ն, մրմնջեց Ալպերը, ո՛րքան երախտապարտ եմ ձեզ... բայց կ՚զգամ թէ չպիտի կարենամ ձեր անձնուիրութենէն օգտիլ...

—Հի՛, հի՛, տղայական խօսքեր չ՚ուզեր... Ի՜նչպէս, այսքան հեռուէն վերադառնալ և առիթէն չ՚օգտի՛լ... Մանաւանդ Փըրրա՞նացի պիտուր մը։ Օ՛ն, քիչ մը քաջութիւն։

—Բայց... չէք գիտեր որ... քառասուն ժամ է որ բան չեմ կերած... կ՚ուզեմ անօթութենէս մեռնիլ...

—Անօթութենէ՛, Ա՛ռ քեզի յիմարութիւն մ՚ալ...

եկուր տե՛ս որ քովս ալ պիճիկ մը չունիմ...

Ծանկարծ ձեռքը ճակտին դարկաւ.

—Կեցէ՛ք դոչեց։

Մալտարի դանուած մղկիթը չջնապատող ամբոխին աղաղակները հեռուէն կը լսուէին։

—Չեմ դիտեր թէ հոն ի՛նչ կ՚ընեն, մեղսաց կրաթիկնէ, բայց կարծեմ թէ աղէկ կ՚ընենք եթէ առնենք քալենք։

Վաղելով դիակներուն քով վերադարձեր էր։ Եւ հոն պրպտելով, դրպանները դարձնելով, ձեռքը թանձրացեալ արեան մէջ մխելով... կը բնաւէր... ի՞նչ...

Ոչինչ։ Կրաթիկնէի սկզբունքը սա էր թէ՝ կենաց մեծագոյն վարպետը դիպուածն է։ Երբեք չէր յուսահատեր։ Ասոր վորձն ալ տուեր էր։ Գլուխը դանակին ներքեւ եղած ատեն իսկ կ՚ըսեր. Քանի որ տակաւին վայրկեան մը ժամանակ կայ, կրնայ անակնկալ բան մը պատահիլ։ Դահիճս կրնայ չանթահար լինալ։ Ո՞վ գիտէ...

Եւ արդարեւ նա որ չվհատիր՝ միշտ բրկուելեան յոյս մ՚ունի։

Ա՛յս անգամ ալ դիպուածը քալ լաբեներին իրաւունք տուաւ։

Սպանուած գինուորի մը դրպանին մէջ կտոր մը միս գտաւ, և ուրիշի մը գօտիին մէջ սրուակ մը, որ երկու դատաթի չափ րոմ կը պարունակէր։

—Դորձդ եղաւ, դոչեց ուրախութեամբ Ալպերի քովէ վազելով։

Հաբիւրապետը, որ վերատին ապրիլ կ՚ուղէր, կը փորձեր կանդնիլ։

Ջորին կոթներ էր։ Բայց բնութիւնն այնքան տկարացած էր որ՝ ծունդերը կը դողային։

—Սա խմեցէ՛ք, ըսաւ կրաթիկնէ րոմի սրուակն անոր ներկայացնելով։ Չեմ ըսեր թէ անօթի փորանց րոմ խմելը շատ առողջապահական է։ Բայց պատերազմի մէջ ասանկ բաներու չնայուիր։ Եթէ ժամ մ՚ետք այժ առնէք ասով՝ բաւական է, քովերնիս ալ բժիշկ չկայ որ զմեզ յանդիմանէ։

Ալպերը աչխուժիւ սրուակն առաւ և շրթանցը տարաւ։

Գինեագին նորա կոկորդը այրեց։ Բայց այնքան բուռն դրդիռ մը տուաւ որ չտկուեցաւ։

—Պատրաստ եմ, ըսաւ։ Քալե՛նք։

—Կեցցե՛ս, ըսաւ կրաթիկնէ, կրո՛ղ, գալուս շատ գոհ եմ...

Ալպերը չկրցաւ ծիծաղը բռնել.

—Պէտք է խոստովանիլ որ, ըսաւ, ձեզ գոհ ընելը դիւրին է։

—Ա՛հ, կը ծաղրէք զիս։ լա՛ւ. այո՛, գալուս գոհ եմ, վասն զի յիշատակներս կը շատցնեմ։ Ի՞նչ օգուտ. բաղդատ մէջ միշտ միւսնոյն բանն է. նոր, տարօրինակ բան չկայ... մինչդեռ հոս... ի՛նչ յօդուածներ կան դրուելու, հարիւրապետ... Բայց դէպ ի ո՛ր կողմ պիտի ուղղենք մեր քայլերն, ինչպէս որ կ՚ըսեն ողբերգուներուն մէջ...

—Ի՞նչ, քաղաքը չէ՞ք դիտեր...

—Ա՛ս աղէկ. ըսել է նորէն ստիպուած ենք յոյսերնիս դիպուածին, երանաւետ դիպուածին վրայ դնել։ Նախ առաջարկութիւնն մ՚ընեմ։ Սա յարգի աւազակները ալ կողմը դառնալով՝ մենք դէպ ի ձախ երթալու ենք...

—Ա,յդ բանը խոհեմութիւն կ'երեւի ինձ . . .
—Օ՛ն ուրեմն . . . բայց գիտէ՞ք որ մութ է . . .
—Ըսա թէ այսքան լոյսն ալ շատ է . . . կրնայ ըլլալ որ մեզ տեսնեն . . .
—Դո՛ւն , կարծեմ թէ հիմայ անոնք ուրիշ բանի զբաղած են . . . թշուառակա՛ն . . .
Կրաթիւնէ իւր հայհոյութիւնը վնասուրական կ'երեւի պիս չնշաւոր էր :
Բայց հայհոյելու ալ տեղն էր : Ա.ճապարելէն՝ շուտ շուտ յառաջացեր էր և յանկարծ առջը պարապը կուգար :
Հրապարակը յանկարծ առեղի կ'աւարտէր , և խըճուղին մի քանի մեթր բարձրութենէ վար կ'իջնէր : Բարեբաղդաբար հողը դիւրափշուր ըլլալով՝ կրաթիւնէն պատռտուր էր , որով անկումը մեղմացեր էր :
Բայց , ո՛վ դժբաղդութիւն , յաղթական ձեւով դէպ ի կամուրջը , որ արդէն այնքան վտանգաւոր քայլեր էր , անկարելութեամբ դէպի վախերը էր և ոտոռտալով կը նայէր , և պայն բռնելու յոյս չկար :
—Ա.ս ճշմարիտ ձախորդութիւն մ'է , բաւ կրաթիւնէն եկ կառքերը չհիւծով . բայց դէպ ի քաղաքը չեմ ալիր : Պէտուէնները պիտի կարծեն թէ գիւղէնք կը բարեւեմ . . . բայց նայինք բաղդն ղմեզ ո՛ր ձգեր է . . .

ՎԵՐՋ Գ . ՀԱՏՈՐՈՑ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՈ-ՄՍՀ
Ա. ՄՇԱՆՑԻՆԱՆ ԱՆՎ.

2067
2068
2069

2013

22 Ազգային գրադարան
NL1803208